Պ. Հակոբյան

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ «ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՎԵՊԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

891.99(09)[Աբովյան] 26806
Յ-17 | Յակոբյան, Գ.
...Աբովյանի „Վերք
...անի" վեպը... Եր. 30թ.
...57 | 6/4
6/4
6/4
...4

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ им. М. Х. АБЕГЯНА

П. АКОПЯН

ТВОРЧЕСКАЯ ИСТОРИЯ РОМАНА ХАЧАТУРА АБОВЯНА „РАНЫ АРМЕНИИ“

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

ЕРЕВАН 1955

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

891.99.092 [Աբովյան] -17

Փ. ՀԱԿՈԲՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ «ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՎԵՊԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

26806
А II 31496

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1955

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների
ակադեմիայի խմբագրական-հրատարակչական
խորհրդի որոշմամբ։

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]



Խ. ԱԲՈՎՅԱՆ (գործ անհայտ նկարչի)։

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ կուլտուրայի ոսկե ֆոնդը մտած՝ դարագլուխ կազմող գրական հուշարձանների ստեղծագործական պատմության ուսումնասիրումը սովետահայ գրականագիտության կարևոր խնդիրներից է։ Դա կպարզի ոչ միայն հայ ժողովրդի անցյալ պատմության այլևս չկրկնվող էտապներն արտացոլող գեղարվեստական երկերի ստեղծման հանգամանքները, նրանց պատմա-ճանաչողական արժանիքներն ու էությունը, ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական կարևոր իրադարձությունների և գաղափարական տենդենցների արձագանքները նրանց մեջ, այլև կհեշտացնի անցյալի գրական անմեռ կոթողներն ըստ արժանվույն գնահատելու և հետազոտելու գործը, ըմբռնելի կդարձնի մեզ՝ մեր գրականության մեծ երախտավորների որոնումներն ու ոգորումները, ստեղծագործական փորձը, նրանց անցած վարպետության դպրոցը։

Հայ կուլտուրայի նմանօրինակ ուսումնասիրության արժանի հուշարձաններից է «Վերք Հայաստանի»՝ անմահ Աբովյանի ստեղծագործությունը, որի երևան գալը խոշոր նշանակություն ունեցավ հայ նոր գրականության և հասարակական մտքի զարգացման համար։

«Վերք Հայաստանի» եղավ ժխտումը կղերա-ավատական գրականության ու գաղափարախոսության և փառաբանումը ժողովրդի ստեղծագործ ուժերի կատարած հրաշագործությունների։ Նա հանդիսացավ մեր նոր գրականության հիմնաքարը։ «Վերք Հայաստանի» իշխել է մարդկանց մտքերի ու զգաց-

մունքների վրա հարյուր տարուց ավելի ու դեռ այսօր էլ պահպանել է իր գրավչությունն ու թարմությունը. նրանից են ստեղծագործական ազդակ՝ զարկ ու շունչ առացել հայ դասական գրողների մեծ մասը՝ Պռոշյանը, Աղայանը, Պատկանյանը, ապա Թումանյանը, Իսահակյանը և ուրիշներ։

Թեև «Վերք Հայաստանին» ստեղծվել է 1841 թվին ու հաջորդ տարիներին և լույս աշխարհ եկել միայն 1858 թվի երկրորդ կեսին[1], բայց այդ ժամանակամիջոցում նա անծանոթ չի եղել մեր գրական հասարակայնությանը։ Վեպի հառաջաբանից տեղեկանում ենք, որ «Վերք Հայաստանիի» առաջին էջերին ու մտահղացմանը ծանոթ է եղել Աբովյանի մանկության ընկեր Աղաթոն Սմբատյանը։ Հեղինակի մի գրավոր վկայությունից հայտնի է դառնում, որ նա վեպի տետրակները 1841 թվից կարդացել է նախ իր պանսիոնի աշակերտների և, ապա, գնդապետ Գևորգ Սմբատյանի մոտ և նրանցից քաջալերանքի խոսքեր լսել[2]։ Նույն վավերականից երևում է նաև, որ «Վերք Հայաստանիի» չափածո հատվածներից Աբովյանը կարդացել է գերմանացի հայտնի բանաստեղծ Ֆ. Բոդենշտեդի և արևելագետ Գ. Ռոզենի համար, 1844 թվի գարնանը, Երևանում, Թարխանովների տանը[3]։ «Վերք Հայաստանիին»

---

[1] «Մեղու Հայաստանի» (լրագիր), 1858, օգոստոսի 2, № 31։

[2] ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարան, Խաչատուր Աբովյանի արխիվ (այսուհետև կրճատ՝ ԱԱԱ) № 65։

[3] Հետագայում, Ֆ. Բոդենշտեդի համար կատարած ինքնուրույն բանաստեղծությունների գերմաներեն թարգմանությանը կցած բացատրականում, որն ամբողջությամբ վերաբերում է «Վերք Հայաստանիի» ստեղծման հանգամանքներին, Աղասու հայտնի խաղի կապակցությամբ, Աբովյանը գրում է. «Անշուշտ դուք հիշում եք, երբ մեր բարեկամ դոկտոր Ռոզենի հետ նստել էինք Թարխանովների տանը, թախտի վրա և առաջարկեցիք ոտանավորներիցս արտասանել։ Ո՜հ, երջանիկ ժամանակներ։ Ես վախվխելով հազիվ առաջին բառերն էի թոթովել, երբ դուք ինձ համար այնքան շոյող դիտողություններ արիք. «Այսպես է սկսել Շեքսպիրը չի-

ծանոթ են եղել նաև Սայաթ-Նովայի առաջին գիտնական ուսումնասիրող Գեորգ Ախվերդյանը և ականավոր հրապարակախոս Ստ. Նազարյանցը[1]: Վեպի ձեռագրի արտագրության վրա գիշերներ են լուսացրել Դորպատի հայ ուսանողները[2]: 1856 թվին «Վերք Հայաստանիի» չափածո կտորները երևում են ազգային երգարաններում[3], իսկ 1857 թվից՝ Պոլսի «Մեղվում»[4]: Գրականության և արվեստի թանգարանում այժմ էլ պահվում է «Վերք Հայաստանիի» ձեռագրից արտագրված մի օրինակ (պակասավոր)[5], որ գրված է մինչև վեպի լույս աշխարհ գալը (1858): Այս բոլորը հաստատում են, որ Աբովյանի հռչակավոր վեպը դեռ ձեռագիր վիճակում ընթերցվել է մեր գրական հասարակայնության կողմից և կատարել է իր դերը. նա տվել է հայ երիտասարդությանը պայքարի ու հերոսացման օրինակներ ու նվիրական գաղափարներ:

«Վերք Հայաստանին» առաջին իսկական, խորապես ժողովրդային ու գեղարվեստական ստեղծագործությունն է մեզանում՝ 19-րդ դարում: Մինչև այդ վեպը, ու նրանից հետո հաջորդ տասնամյակին էլ, հայ գրականությունը չգիտե մի այլ գործ՝ ժողովրդի կյանքի ու մտածողության ճշմարտացի վերարտադրմամբ, գաղափարական հարստությամբ ու նպատակասլացությամբ, կենդանի ու բազմազան կերպարներով,

---

տեմ իր ոտանավորներից որը. և տասված գիտի, ինչ տպավորություն կտանեն մարդ, երբ բանաստեղծությունը կարդա և բանաստեղծին չտեսնի, իսկ այժմ դուք տեսնում եք նրան ձեզ մոտ նստած: Այժմ լսեցեք, թե ո՞վ է եղել Աղասին...» և այլն: ԱԿԱ № 65:

[1] Ժամանակակիցները Աբովյանի մասին, կազմեց Հր. Մուրադյան, Երևան, 1941, էջ 118—119:

[2] Լ. Տ ի գ ր ա ն յ ա ն, Գերմանական Դորպատ համալսարանը և նրա հայ ուսանողները, «Լումա» հանդես, 1903, № 3, էջեր 67—69:

[3] Ազգային երգարան հայոց, Աշխատասիրյալ Գամառ Քաթիպա, Ս. Պետերբուրգ, 1856, էջեր 157—158. ընդամենը 8 քառյակ:

[4] «Մեղու» (Կ. Պոլիս), 1857, հուլիսի 15:

[5] ԱԿԱ № 3:

հարուստ ու ճկուն լեզվով և ոճով, վերջապես՝ ջերմությամբ, թարմությամբ ու վարակող հայրենասիրությամբ առլեցուն։

«Վերք Հայաստանի» նորություն էր ո՛չ միայն իր արտացոլած իրականությամբ, կերպարներով, լեզվով, այլև իր արծարծած հարցերով։ Այստեղ, որպես կիզակետի մեջ, Աբովյանը խտացրել է այն բոլոր գաղափարներն ու հույզերը, որոնք փոթորկել են 19-րդ դարի առաջին կեսի հայկական իրականությունը։ Նա աշխատել է «Վերք Հայաստանիի» միջոցով պատասխաններ տալ պատմական հանգամանքների բերումով հայ ժողովրդի առաջ ծառացած բազմաթիվ հարցերի, օգնել ու օժանդակել հայ ժողովրդի ֆիզիկական ու հոգևոր ուժերի համախմբմանն ու ինքնաճանաչմանը, ցույց տալ այն ուղիները, որոնցով պիտի ընթանար այնուհետև հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական զարգացումը, մերկացնել ու արմատախիլ անել այն խոցերը, խութերն ու արգելքները, որոնք ընկած էին այդ ճանապարհին՝ ժողովրդի առաջընթացին ընդդեմ։ Աբովյանն իր վեպով ջանացել է մատնանշել սկզբնավորվող հայ նոր ռեալիստական գրականության համար՝ թեմաներ, գաղափարներ, հերոսներ։ Նա առաջադրել է նաև հայ պատմագրության համար՝ հետազոտության հարցեր և սկզբունքներ։

«Վերք Հայաստանի» այն անմեռ գրական-պատմական հուշարձանն է, որը հավերժացնում է հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքում, անցյալ դարի առաջին 40-ամյակին կատարված տեղաշարժերը և չգերազանցված ուժով ու խանդավառությամբ պատկերում Հայաստանի նոր պատմության մեջ տեղի ունեցած խոշորագույն շրջադարձերից մեկը՝ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և հայ ժողովրդի մի խոշոր հատվածի ազատագրումը խանական Պարսկաստանի և բարբարոսական սուլթանական Թյուրքիայի արյունոտ լծից։

Ակադեմիկոս-բանաստեղծ Ավ. Իսահակյանի բառերով

ասած՝ «Վերք Հայաստանին» նաև մեր բողոքի, մեր ըմբոստության, մեր գոտեմարտերի հերոսավեպն է։ Նա մեր դարի շողշողուն էպոսն է, մեր սխրագործությունների դյուցազնավեպը պարսից ոսոխների դեմ։ Նա ռուս մեծագույն ժողովրդի հետ մեր սրտագին դաշնագիրն է կյանքի և մահվան հակատամարտերում նվիրականացած»[1]։

«Վերք Հայաստանին» իր վրա է բևեռել շատերի ուշադրությունը դեռևս անցյալում։ Նրա մասին արտահայտվել են խորիմաստ, ծանրակշիռ մտքեր, որոնք հետնորդների ձեռքին դարձել են բանալի «Վերք Հայաստանիի» գաղտնարանների դռները բացելու համար, ինչպես մեծ գրող. ու մտածող Միքայել Նալբանդյանինը, գրվել են գաղափարական թշնամանքից բխած, «ոչնչացնող» հոդվածիկներ, ինչպես հետադիմակղերամիտ քննադատ Հայկունունը (Եղիշե քահանա Գեղամյան), եղել են Աբովյանի անձն ու գործը փառաբանող գեղագիտական զեղումներ, ինչպես Կ. Կուսիկյանի «Հանճարեղ սիրտը», հրատարակվել են, վերջապես, բազմաթիվ ուրիշ հոդվածներ, բայց այդ ամենի մեջ գրեթե չեն շոշափվել Աբովյանի անմահ վեպի ստեղծագործական պատմության առընչվող հարցերը։

Անցյալում, հայ ժողովրդի մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանը ձեռնարկած է եղել «Վերք Հայաստանիի» մասին գրական-պատմական ուսումնասիրություն գրելու, ուր պիտի պարզաբանվեր Աբովյանի վեպում վերարտադրվող դեպքերի ու դեմքերի պատմական հավաստիությունը, բայց, ցավոք, նրանից մնացել են միայն առանձին բեկորներ (որոնցում տրվում է վեպի ընդհանուր գնահատականը) և պատմական աղբյուրներից կատարված բազմաքանակ քաղվածքներ, իսկ գործն ամբողջությամբ, ինչպես երևում է, չի գրվել։

---

[1] Ա. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատոր չորրորդ, Երևան, 1951, էջեր 118—119։

Մեր օրերում աբովյանագիտությունը բարձրացավ նոր աստիճանի։ Մեծ լուսավորչի մասին ոչ միայն շատ գրվեց, այլև նրա շատ ու շատ երկերը տպվեցին ու վերահրատարակվեցին։ Միայն «Վերք Հայաստանին» ունեցավ երեք հայերեն ու մի ռուսերեն լրիվ հրատարակություն, դրանց ավելացրած նաև վեպի մի տարօրինակ, կրճատված խմբագրություն, որն իբրև թե «բեռնաթափված էր ավելորդություններից»։ Վերջապես իրականացվեց վեպի ակադեմիական հրատարակությունը։ Ժամանակակից գրականագետները հանգամանորեն խոսելով Աբովյանի ժառանգության այլևայլ պրոբլեմների մասին, գրեթե չեն անդրադարձել ողջ 19-րդ դարը փոթորկող անմահ վեպի ստեղծագործական պատմության հիմնական հարցերին՝ «Վերք Հայաստանիի» վարիանտները մինչև օրս համեմատական ձևով չեն ուսումնասիրվել։

Իհարկե, Աբովյանով զբաղվող ժամանակակից գրականագետների ու լեզվաբանների մոտ երբեմն կարելի է հանդիպել ակնարկների ու դիտողությունների՝ «Վերք Հայաստանիի» սևագիր և մաքրագիր վարիանտների առանձին կտորների մասին[1]։

«Վերք Հայաստանիի» ինքնագրերի մասին որոշ գաղափար են տալիս վեպի ակադեմիական հրատարակությանը կցված ծանոթագրություններն ու անձնանունների բառարա-

[1] Խ. Աբովյան, Ընտիր երկեր, Հ. առաջին, Երևան, 1939, էջ 334 (Ռ. Զարյանի ծանոթությունները)։ Ա. Ղանալանյան, Աբովյանը և ժողովրդական բանահյուսությունը, Երևան, 1941, էջեր 57—58։ Պրոֆ. Հ. Ղանալանյան, Խաչատուր Աբովյան, Երևան, 1948, էջեր 55—56։ «Տեղեկագիր» ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի (Հասարակական գիտություններ), Երևան, 1948, № 9, էջ 65 (Ա. Գրիգորյանի «Աբովյանի ոճը և ոճական ձևերը» հոդվածը)։ Վ. Փարթիզունի, Խաչատուր Աբովյան, Երևան, 1952, էջեր 79 և 218։ Սովետական գրականություն, 1942, № 5—6, էջեր 219—220 («Վերքի» գիտական հրատարակության շուրջը)։

նը[1], որոնք պատկանում են գրականագետ Հր. Մուրադյանի գրչին։ Նրանցում համառոտ տեղեկություններ կան միայն առանձին դիպվածների ու կերպարների մասին, կան նաև մի քանի դիտողություններ վեպի հեղինակային ինքնագրերի մասին՝ տեքստաբանական առումով։ Այս բոլորը, սակայն, շատ ու շատ հեռու են Աբովյանի երկի գաղափարական-գեղարվեստական աստիճանական կատարելագործման պատկերը տալուց. ավելին, նրանք այդպիսի հարց չեն էլ դրել իրենց առաջ։

Նախորդների և ժամանակակիցների թողած այդ բացն է, որ այս ուսումնասիրությունը գալիս է լրացնելու։

«Վերք Հայաստանիի» ստեղծագործական պատմությանը նվիրված սույն ուսումնասիրության նպատակն է վերջնականապես ճշտել երկի գրության թվականը, որոշել վեպի վարիանտների քանակն ու ստեղծման հանգամանքները, պարզել, թե ովքե՞ր են հանդիսացել վեպի կերպարների համար նախատիպեր, ի՞նչ իրական դեպքեր են Աբովյանի ուշադրության կենտրոնում եղել և ի՞նչպես է կարողացել հեղինակն այդ ամենը վերարտադրել իր ստեղծագործության մեջ, ցույց տալ հասարակական-քաղաքական-գրական այն մթնոլորտը, որի մեջ խմորվել են «Վերք Հայաստանիի» հիմնական գաղափարներն ու հանգուցակետերը, դրան զուգահեռ գծելով վերելքներով ու վայրէջքներով հարուստ այն երկարատև ուղին, որը հասցրեց Աբովյանին՝ իր անմահ երկի ստեղծագործմանը։ Ընդարձակ գլուխներ նվիրելով վեպի նախափորձերի կամ վարիանտների համեմատական ուսումնասիրությանը, նպատակ ենք հետապնդել ցուցադրելու գաղափարական, գեղար-

---

[1] Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, Հրատարակություն ՀՍՍՌ Գիտ. ակադեմիայի, երրորդ հատոր, Երևան, 1948, էջեր 377—390 և 393—401։ Հետագա բոլոր մեջբերումները արվում են այս հրատարակությունից, կրճատ նշելով ԽԱ, ԵԼԺ, համապատասխան հատորը և էջը (հ. I լույս է տեսել 1948 թվին, հ. II—1948, հ. IV—1947, հ. V—1950)։

վեստական ու լեզվաոճական տեսակետից «Վերք Հայաստանիի» աստիճանական կատարելագործման պատկերը, դրանով միաժամանակ ըմբռնելի դարձնելով Աբովյանի գրական-ստեղծագործական աշխատանքի փորձը և անցած վարպետության դպրոցը։

Աշխատության համար աղբյուր են ծառայել՝ «Վերք Հայաստանիի» հեղինակային ինքնագրերը, Աբովյանի հարուստ արխիվի և այլ ձեռագիր ու տպագիր հավաքածուների նյութերը, երբեմն էլ մեմուարային բնույթի երկերը։

ԻՆՉՊԵՍ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵՑ «ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ»

«Վերք Հայաստանի» Աբովյանի երկարամյա դիտողությունների և ստեղծագործական որոնումների արդյունքն է։ Նրա մեջ նկարագրվող դեպքերն ու դեմքերը, այնտեղ ամփոփված տենչերն ու խորհրդածությունները հեղինակի ուշադրության կենտրոնում՝ սրտում ու մտքում են եղել տարիներ շարունակ. շատ կերպարների կենդանի զուգահեռների (նախատիպերի) Աբովյանը կյանքում ճանաչել է, շատ ու շատ դեպքերի՝ ականատես ու մասնակից եղել։

Ձեռնարկելով «Վերք Հայաստանի» ստեղծմանը, Աբովյանը մտովի վերապրում էր իր մանկության ու պատանեկության տարիները՝ հայրենի Քանաքեռում, Էջմիածնի վանքում, կամ էլ պատերազմների թոհուբոհի մեջ, երբ ամեն օր, գրեթե, տեսնում էր օտար բռնակալների կամայականություններն ու սանձարձակությունները, պարսից խաներից ու հարստահարիչներից իր ժողովրդի կրած անասելի չարչարանքները, հայրենի երկրի ու հայրենակիցների կոտորածն ու ունեզրկումը, տանջանքներն ու խոշտանգումները և ատելության հուրը սրտում՝ հայացքը Հյուսիս հառած, սպասում հայ ժողովրդի փրկության ավետաբերներին։

Աբովյանը երջանիկ մանկություն չի ունեցել։ Գյուղում անցած տարիներից նա պահել է հուշեր, որոնք լի են ահով, սարսափով և արյունով. «Էս օր էլ, որ մտածում եմ՝ թե Զանգվի կարմնջի վրովը, յա բազարի մեջտեղովն անց կենալիս, ինչպես էր իմ լուսահոգի հերը ինձ ոտով, ձեռով անում, չունքի

լեզվով խոսալն էլ դադարի էր բերում, որ թեզ անց կենանք, մեզ թուրք չտեսնի, որ մտածում եմ, թե քանի քանի անգամ հենց մեր այգումը յա մենք ենք գլլրաշ յարալու արել, յա նրանք մեզ, ջանս վրես սրսռում ա, միսս վեր թափում[1],— գրել է Աբովյանը տասնամյակներ հետո, «Վերք Հայաստանի» վերջին խմբագրության վրա աշխատելիս։

Աբովյանի մտքում դառը հիշողություններ են թողել նաև պարսիկ հարկահանները, որոնք չունեին խիղճ ու զգացմունք, որոնց համար չկար օրենք ու դատաստան. Նրանք տանում էին հայ գյուղացու վերջին թելը՝ առանց խնայելու, առանց կարեկցելու։ Իր մանկապատանեկան հիշողությունների մեջ ահա ինչ է պատմում. «(Քանաքեռ) գյուղում մենք ամեն տարի տեսնում էինք մի այդպիսի սարբյարի (հարկահանի — Գ. Հ.), որն ամառը գալիս էր հացահատիկից վերցվող նահանգական հարկը հավաքելու։ Այս հասարակ և քիչ ժամանակ պահանջող գործի համար նա, սովորաբար, մնում էր գյուղում երեքից մինչև չորս ամիս... Գյուղական ծառան (գզիրը — Գ. Հ.) ամեն օր տնից տուն էր ընկնում՝ խնդրանքով կամ հարկադրանքով պահանջելով այն (հարկերը — Գ. Հ.)։ Մեծ մասամբ նրա հետ գնում էր նաև սարբյարի ծառան՝ մի ահավոր մտրակ ձեռքին... Եվ երբ տանտերը հրաժարվում էր պահանջածը դուրս բերել, իսկ եկողներն իրենց բավականաչափ ուժեղ էին զգում, ապա այդ մարդը գազանային կատաղությամբ և բռնությամբ ներս էր խուժում տուն, ամեն ինչ ջարդ ու փշուր անում և ծեծում ու դաժանորեն վարվում՝ ով տանը կհանդիպեր, առանց նկատի առնելու տարիք ու սեռ։ Եվ սա դեռ ծառան կամ ստորադրյալն էր, պատկերացրեք, թե ի՞նչ կլիներ տերը... Վայն եկել էր, եթե նրա զայրույթը բռնկվեր. մտրակ, թուր, դաշույն, կամ ինչ ձեռքն ընկներ,

---

[1] ԽԱ, ԵԼԺ, III, 58։ Այս հատորից սկսած մեջբերումների համապատասխան էջը այսուհետև կնշենք աշխատության բուն տեքստում, փակագծերի մեջ։

կցորդագրեր՝ առանց խնայելու[1]։ Եվ այն ժամանակ, երբ հացահատիկից առնում էին տասնորդը, հարկահանը դրանով չբավականանալով՝ տանում էր գրեթե գյուղացու ամբողջ վաստակը։

Աբովյանի մտքում անհավոր ու մռայլ հիշողություններ են թողել նաև պարսկական բռնապետության բերած մյուս աղետները՝ հայ մատաղահաս աղջիկների ու տղաների բռնի հափշտակման դեպքերը։ Հետագայում, իր վեպի հիմքում ընկած իրական դեպքերի մասին խոսելիս, նա գրել է. «Այն բարբարոսական շրջանում, երբ Հայաստանն իր վերջին շնչում էր գտնվում, այն էլ իրեն՝ խեղճ ժողովրդին չէր պատկանում, իմիջիայլոց, շատ հաճախ Երևանի պարսից սարդարի հարեմի համար բռնությամբ քաշում էին հայ մատաղահաս աղջիկներին, թուրքացնում, որի ժամանակ այդ հերոսուհիներից շատերը, արհամարհելով փարթամությունն ու շքեղ կյանքը, գերադասում էին նահատակի պսակ ընդունել, քան թե գոհ դառնալ անասնական կրքերին»[2]։

Վավերականները մեզ պատմում են նման բազմաթիվ դեպքերի մասին, որոնցից շատերին գուցե թե Աբովյանը տեղյակ չլիներ, բայց առանձնապես մի երկուսը չէին կարող նրա ուշադրությունը չգրավել. դրանցից մեկը կատարվել է Քանաքեռում։

Մատենադարանի վավերագրերը պատմում են. «Յամի տեառն 1811, Քանաքեռցի Յօհաննէս տանուտէրն ունէր քառասուն թուման պարտք և երկու որդի՝ Ահարոն և Կարապետն

¹ August Freihern von Haxthausen. Transkaukasia. Erste Teil. Leipzig. 1856, s. s. 194—196.

² ՄՆՄ № 65. Աբովյանի այս խոսքերը հաստատվում են Հաքստհաուզենից առաջ բերվող վկայությամբ. «Նախկին սարդարները և պարսից այլ բարձրաստիճան պաշտոնյաները սովորություն ունեին, երբ լսում էին որևէ արտակարգ գեղեցիկ հայ աղջկա մասին, հրամայում էին բռնությամբ վերջիններին քաշել բերել իրենց հարեմները...»։ Haxthausen. Transkaukasia. I, s. 239.

բերեալ ի փողոցն Երևանայ, կամէր վաճառել։ Իսկ սոյն Քանաքեռ գիւղացիք եկեալ յԱթոռն աղաղակեցին, թէ տանուտէր Յօհաննէսն վաճառէ որդիքն 60 թումանի։ Վասն որոյ իսկոյն սրբազան Ներսէս արքեպիսկոպոսն առաքեաց 40 թուման առ Աստուած <տուր> արքեպիսկոպոսն ի յԱնապատն Երևանու գնել զայն տղայքն Ահարօն և Կարապետն. քսան թուման ևս զանձապետ Գրիգոր եպիսկոպոսն առաքեաց՝ որ եդև 60 թուման, տուեալ և ազատեալ բերաք յէջմիածին և արարք հոգևորական. յետ երկու ամսոց մայրն խնդրեալ էր որդիքն ի տեսութիւն. և առաքեն ի տես մօրն. խաբէութեամ՞բ տանին սարտարի հարեմխանեն Ահարօնն, ի մէջ գիշերի յանկարծ ի ննջման ժամու թլպատեն զնա, և անունն դնեն Այապկիար, և ապա լսել մեր գնացեալ խնդրեցաք սարտարին, թէ մեր գնեալ գերին է այժմ յանկարծ տաճկացուցեալ են. նա ևս հրամայեաց ետ տան և ոչ տուին. ըստ որում բռնաւորք էին և մահմեդականք[1]։ Նույն այս ընտանիքի գլխին հասնում է և ուրիշ դժբախտություն. պարսիկները բռնությամբ քաշում ու թուրքացնում են նաև տանուտեր Հոհաննեսի մյուս երեխաներին[2], նաև աղջկան[3]։

Հայրենի գյուղում կատարված այս սրտակեղեք դեպքերը, հարկավ, ցնցել են մանուկ Աբովյանի հոգաշխարհը, և շա-

---

[1] Մատենադարան, կաթողիկոսական դիվան № 59/406 գ. գրված է Հովսեփ վարդապետ Վեհապետյանի ձեռքով, 1828 թվի օգոստոսի 27-ին և ուղղված «Առ պօլիցայն Հայաստանի» (ուղղագրությունը թողել ենք անփոփոխ)։

[2] Նույն տեղում, № 59/509. գրված է 1828 թվի նոյեմբերի 17-ին և ուղղված էջմիածնի Սինոդին։ Հայկական նահանգային վարչությունը գրանով հայտնում է, որ եթե քանաքեռցի հանգուցյալ Հոհաննեսի որդի Ահարոնը ցանկանում է Պարսկաստան գնալ, իրենք չեն կարող արգելել, ինչպես նաև մահմեդականացված նրա մյուս եղբայրներին, եթե նրանք նույնպես ցանկություն հայտնեն։

[3] Նույն տեղում, № 59/286, գ. և.։ Սրանց մեջ խոսվում է քանաքեռցի Յօհաննէսին դստեր մասին, որին, «յաւուրս պարսից բռնութեամբ և խաբէութեամբ տարեալ տաճկացուցեալ են»։



Զանգուի կամուրջը և Երևանի բերդի պարիսպները։

[illegible]
Տ. Ի. ԳԱՍՊԱՐԵԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

տանտիկին չէ, որ տանուտեր Հովհաննեսին, ահավոր դժբախտություն պատած այդ մարդուն, նա հետագայում դարձրել «Վերք Հայաստանի» կերպարներից մեկը։ Այստեղ դարձյալ նա իբրև Քանաքեռի տանուտեր է հանդես գալիս, դարձյալ կրում է Օհաննես անունը, այն տարբերությամբ միայն, որ եթե խրախճանում նա տարել է մահմեդական դարձված իր երեխաների ողբերգությունն ու կորուստը, վերջում տանջվում է մահվան երախը նետված որդու (Աղասու) ցավով։

Մի ուրիշ դեպք կատարվել է Երևանի վերջին սարդար Հուսեին-Ղուլի-խանի օրերում։ Այդ մասին հիշում են և Մ. Վագները և Ա. Հաքստհաուզենը[1], ընդ որում Հաքստհաուզենի հիմքը Աբովյանի հորեղբոր՝ Հարությունի պատմածն է եղել, որ իսկ թարգմանել է Աբովյանը։

Այդ դեպքը հետևյալն է. սարդարը տեսնելով մի արտակարգ գեղեցիկ հայ աղջկա և ոչ մի ուշադրություն չդարձնելով նրա նշանված լինելուն ու ծնողների թախանձանքին, բռնությամբ քաշում, տանում է իր հարեմը։ Սարդարի բոլոր մեքենայությունները ապարդյուն են անցնում. աղջիկը նրան անձնատուր չի լինում։ Մի գիշեր էլ, աղջիկը բերդի պատի տակից լսելով իր սիրած տղայի երգի տխուր ձայնը, բաց է անում պատուհանը և իրեն ներքև նետում։ Բարեբախտաբար նա միայն վիրավորվում է։ Աղջկան ու տղային բռնում են ու բերում դազգաված սարդարի առաջ։ Եվ ճակատագրի ինչպիսի ծաղր. Հուսեին խան սարդարը «ներում» է նրանց և հաշմանդամ դարձած աղջկան հանձնելով տղային՝ ճանապարհ դնում։

Պարսից հարկահանությունը, ինչպես և հայ տղաների ու աղջիկների բռնությամբ քաշելու՝ մահմեդականացնելու այս և համանման մյուս դեպքերը, որ, ինչպես նշեցինք, Աբովյանի ուշադրությունն են գրավել դեռ մանկապատանեկան տարի-

---

[1] Haxthausen, Transkaukasia, *I*, s. s. *239—240*. Moriz Wagner Reise nach dem Ararat und dem Hochlande Armenien, Stutgart, *1848*, s. s. *75—76*.

ներից, պարսկական տիրապետության շրջանում հայ ժողովրդի ապրած սարսափով ու հարստահարության զրկանքներով լի կյանքի էությունն էին կազմում։ Հետագայում, «Վերք Հայաստանի» մեջ այդ մռայլ ժամանակաշրջանին Աբովյանը տվեց այսպիսի բնութագիր. «Դատաստան չկար, իրավունք չկար... Աղջիկն ասես՝ քաշում էին՝ տղեն ասես՝ տանում, շատ անգամ թուրքացնում, հավատից հանում, շատ անգամ էլ գլուխը կտրում, էրում, նահատակում։ Ո՛չ տունն էր իրանը, ո՛չ մալը, ո՛չ ապրանքը, ո՛չ ջանը, ո՛չ օղլուշաղը» (38)։

Վաղ մանկության տարիներին Աբովյանի միտքը կլանվել է և այլ տպավորություններով։ Նա ագահությամբ լսել է թափառիկ գուսանների երգն ու սազը, ժողովրդական զրույցներն ու ավանդությունները՝ երկնային լուսատուների, յոթ գլխանի վիշապների, աննման գեղեցկուհուն փախցնող դևերի, բազմագույն ծիածանի հրաշագործ ազդեցության, պտուղների բուժիչ հատկության, օձեր ծնող արևածագի, ծովից ջուր խմող վիշապ ամպերի, լույս աշխարհի ճանապարհը բացող բարի ուժերի և այլոց մասին,— պատմություններ, որոնք «Վերք Հայաստանի» նախնական վարիանտն ստեղծելիս դարձան Աբովյանի համար ժողովրդի մտածողությունն ու պատկերացումները վերարտադրելու անսպառ նյութ։

Երբ տարին նոր բոլորած Աբովյանը կտրվում է հայրենական հարկից և փակվում Էջմիածնում՝ վանական խցում։ Այս մռայլ ու անհրապույր աշխարհում էլ նա տեսավ գարշելի սովորություններ, դավեր ու կեղծիք՝ պարսից բռնապետության այլանդակությունները։ Վանքում Աբովյանն ապրեց մինչև 1821 թվի աշունը։ Այստեղ են սարդար-խաների կամայականություններն իրենց ասպարեզն ունեին։ «Ես տեսել ու հիշում եմ,— պատմում է Աբովյանը,— ո՛չ միայն Երևանի սարդարը, այլև նրա բազմաթիվ աննշան խաներն ու բեգերը, հենց որ ցանկանային, գալիս էին քեֆ անելու և վանքի հաշվին իրենց գրպանները լցնելու։ Նրանց ընդունելությունը, հյուրա-

սիրությունը և ճամփու դնելը ամեն անգամ աղմկալի, հան-
դիսավոր ու բազմամարդ էր լինում: Քրիստոնեական դրոշակ-
ներով, խաչերով ու սրբապատկերներով, զանգահարությամբ,
եկեղեցական երգեցողության հնչյունների տակ և հարուստ
նվերներով էր տեղի ունենում նրանց դիմավորումը, բայց այ-
նուամենայնիվ, շատ անգամ էր պատահում այդ դեպքերի ներ-
կայությամբ թափելու և՛ արցունք, և՛ արյուն[1]:

Գյուղից վանք բերված կրակոտ ու աշխույժ մանկան երե-
վակայության վրա անջնջելի տպավորություն են թողնում նաև
բարբարոսների տիրապետության տարիներին «վանքի կյանքն
ու հրապույրը» կազմող «համարյա ամեն ամիս աշխարհի
ամենահեռավոր երկրներից եկող ուխտավորների խուռն բազ-

---

[1] Х. Абовян. Поездка к развалинам Ани. ԱԵԱ № 23, թերթ 5. Համեմատիր «Վերք Հայաստանի» հետևյալ պարբերության հետ. «Ամեն մեկ բեկ, մեկ խան սուրբ Էջմիածին գալիս, մեկ կրակն ա գնում, երում, չարխի պես պտտում. Ո՛չ հաց ու ջուրն ա նրանց փորը կշտացնում, ո՛չ պատիվն ու փեշքեշները նրանց աչքը բռնում... Սարդարն ու Հասան-խանը գալիս հո՛ երկինքը մեր գլխին փուլ ա գալիս... Քչիցը, շատիցը, ամեն մեկը գալիս՝ չորս, հինգ հարյուր մարդ եդևիցն բերած՝ տուն են թա-փում, ո՛մ առաջը բռնես... Ինչ օր որ նրանց ոտը մեկ մոտ պետք է մտնի, հացըներս էլ ա հարամ լինում, աժդըներս էլ։ Սաղ օրը յա ժամի ծերին, յա ճամփի մեջտեղը չոքում, անձրևում, թողում պիտի կանգնենք, մեկի տանը, որ նրանք գան ինեն, չորս եպիսկոպոս պտին առաջը գնալ։ Բոլոր միաբանությունը դուս ա գալիս, մեկ վերստաչափ տեղ էլ՝ գլխա-բաց, խաչով, խաչվառով, շուրջառով, բուրվառով, խնկով, մոմով առաջ գնում ու շարական ասելով, վազելով, ձիանուց առաջին-քաշ ու քոշինք-ները կոխած՝ նրանց ներս բերում։ Շատ անգամ վանքի դուռը մտնելիս՝ պետք է դառ ճոթից, զունաչից, խասից փիանգյաղ քցած՝ որ էս անօրեն-ների ոտը խերով լինի... փիանդազը ֆառաշների փայն ա, դե արի՛, նրանց սիրտը շահի...

Էնպես՝ մեյդա ասեն՝ ղարաչի, բյամանչի, սազանդար՝ սաղ գիշերը՝ որը պար ա գալիս, որը ֆալ բաց անում, որը բերնին զոռ տալիս, որը գինին... Մենք էլ ձեռըներս դոշըներիս՝ սաղ գիշերը նրանց առաջին յա պետք է չոքենք, յա կանգնենք, որ քեֆըները թամամ լինի։ Շատ անգամ վարդապետ էլ ա թրատվում, յարալու լինում...» (ԽԱ, ԵԺ, III, 83—4).

մությունը, իրենց բազմազան հանդերձանքով, տեսքով ու կենցաղով... և՛ եպիսկոպոսների կամ աբեղաների ձեռնադրության, և՛ մեռոնօրհնության, և՛ կաթողիկոսի անվանակոչության, սուրբ Գրիգորի տոնի, կամ էլ հենց իր՝ վանքի հիմնադրման առթիվ՝ ջերմեռանդությամբ ողողված մարդկանցով, անթիվ զանգերի և բազմաձայն, բարձր, բայց վհատ երգերի հնչյուններով ուղեկցվող արարողությունները... Հսկայական, բազմամարդ, բայց միստիկական հացկերույթը, որին այն ժամանակ հաճախ հետևում էին վանքի երիտասարդ միաբանների վրա մանրադրամներ ածելը, երաժշտությունը, երգերը, պարերը, նույնիսկ ձիարշավները, հրացանաձգությունը և, հատկապես բարեկենդանին՝ գոմշի և ուղտի կռիվները, վերջապես մեծ պասից առաջ, մի ամբողջ շաբաթ տևող, ծաղրաթափորը (карнавал)» և այլն[1]։

Էջմիածնում սկսվում է նաև Աբովյանի առաջին ծանոթությունը գրի ու գրականության հետ։ Հայրենի գյուղում լսած ժողովրդական երգերին ու զրույցներին այստեղ ավելանում են (շատ հաճախ, Փալախկայի ու ծեծի ուղեկցությամբ) աբեղա ուսուցիչներից լսած պատմությունները՝ բիբլիական նահապետների, հանուն եկեղեցու նահատակված սրբերի, պարսկական և բյուզանդական զավթիչների դեմ ազատագրական կռիվ եղած հայ հերոսներ Վարդան ու Վահան Մամիկոնյանների ու այլոց մասին։

Աբովյանի՝ Էջմիածնում անցկացրած տարիները ուշագրավ էին նաև նրանով, որ այդ շրջանում մեծ ծավալ էին ստացել հայ ժողովրդի ազատագրական շարժումները՝ ընդդեմ պարսկա-թյուրքական լծի։ Ժողովրդական վրիժառուները՝ Քանաքեռցի Ազատու, կամ Արծաթենցի Մանուկի նման, իրենց փոքրաթիվ խմբերի գլուխն անցած, անսպասելի հայտնվում էին այս ու այնտեղ, անակնկալի բերում թշնամուն, ջարդում ու ցրում նրա ուժերը։ Այդ տարիներին դեռ թարմ էին Ցիցիանո-

[1] ԱնԱ № 23, թ. 7։

մի (1804 թ.) և Գուդովիչի (1808 թ.) գլխավորությամբ ռուսական զորքերի Երևանյան արշավանքների տպավորությունները, որոնք հայ ժողովրդին թևավորել էին մոտալուտ ազատության հույսով և որոնց հայերը ցույց էին տվել այնքա՜ն օգնություն ու աջակցություն։

Վերևում թվարկված բազմաթիվ ու բազմատեսակ դեպքերն ու տպավորությունները նույնպես «Վերք Հայաստանին» ստեղծելու պահերին արթնացան ու կանգնեցին Աբովյանի ուշադրության կենտրոնում։ Էջմիածնից ստացած տպավորություններին Աբովյանը նախ առանձին կետեր է հատկացնում վեպի ծրագրային նշումների թերթիկում. «Փաշտոններից նվիրակութենն. փող շող տալը. միաբաններից կեցությունը օտարաց հետ և յուրյանոց. բարեկենդանի ձնթափը. Գեղարդի և մատանց հանելը և ման ածել. գոմշի ուղտի կռիվը...» և այլն [1], իսկ հետո ընդարձակ ձևով պատմում երկրորդ գլխում։ Ժողովրդական վրիժառուների պարտիզանական կռիվներից մեկը գրեթե ժամանակագրական ճշտությամբ նկարագրում է վեպի երրորդ գլխում (1821 թվի հուլիսի 23-ին, Անիում, Աղասուց ու ընկերներից Հասան խանի կրած ջարդը և խայտառակ փախուստը) և այլն։

1821 թվի վերջերից 1826 թվի կեսերը Աբովյանի կյանքն անցել է Հաղպատի ու Սանահինի վանքերում և Թիֆլիսում՝ նախ Տափի Թաղի Պողոս վարդապետի դպրոցում և ապա՝ Ներսիսյան դպրոցում՝ հայրենի բնաշխարհից հեռու։ Մնայուն տպավորություններ ու ազնվորդ հուշեր այս վայրերից էլ քաղել է նա, բայց դրանցից քչերն են առնչվում «Վերք Հայաստանի» ստեղծագործման պատմությանը։ Հետաքրքիր են, օրինակ, Աբովյանի հաննիբալյան երդումը՝ մինչև մահ հայրենիքին ու հայ ժողովրդին ծառայելու մասին (այս գաղափարը հետո կարմիր թելի նման անցավ «Վերք Հայաստա-

[1] ԱԿՆ № 150։

նով»), ինչպես նաև հանդիպումը ազգականի ու համագյուղացու, իր ապագա վեպի կենտրոնական հերոսի՝ Աղասու հետ (ամենայն հավանականությամբ՝ 1825 թվին), որը միշտ կենդանի ու անմոռաց է մնացել նրա հիշողության մեջ։

Աբովյանը այդ ժամանակ Ներսիսյան դպրոցի աշակերտ էր։ Պարսից զորքերի դեմ տարած մի շարք փայլուն հաղթանակները տարածել էին Աղասու հռչակը. շատերն էին ոգևորված նրանով։ Եվ այդ Աղասին գալիս էր Թիֆլիս. «Երևելի իշխանի որդի չէ՞ր՝ որ նրան մեծ փառքով ներս բերեին. բայց ո՞վ նրա արածը իմացել էր, ուզում էր տանները ջուր անի խմի։ Մեկ թղթի միջում ծալած իրա ոսկորները՝ քսան անգամ հենց ինձ ա ցույց ավել, որ դանդաղան տեղ կախիմներումը կտրել հանել էին» (176),— պատմում է այդ հանդիպման մասին հետագայում Աբովյանը «Վերք Հայաստանիում»։

1826 թվի հուլիսին բռնկվեց ռուս-պարսկական պատերազմը։ Աբովյանը անձնապես կրեց պատերազմի ողջ դաժանություններն ու հազիվ ազատվեց մահից։ Մոտ երեք ամիս, գաղթականի պես, անտուն ու կարոտյալ, պարսիկ հրոսակների գնդակների տակ, նա թափառեց Լոռվա սարերում ու ձորերում։

Ու այդ օրերին Աբովյանը ականատես եղավ հայ ժողովրդի օրհասին։ Նրա աչքի առաջ մորթվում էին երեխաներ ու ծերեր, անարգվում կանայք ու աղջիկներ, անդահան էր լինում մի հին ու ստեղծագործ ժողովուրդ։ Այս ամենը ատելության հուր վառեց նրա սրտում՝ պարսկական բռնապետության նկատմամբ։ Այդ դժոխքի մեջ նա տեսավ բռնության դեմ զենք բարձրացրած հայ ժողովրդի հերոս զավակներին՝ վերջինների սխրագործությունն ու անձնազոհությունը, տեսավ եզակի օրինակ չհանդիսացող Աղասու ու նրա ըմբոստ ընկերների հերոսական գոտեմարտը, եղբեկոպտական վեհարը զենը շպրտած և իր ժողովրդի փրկության համար ռազմադաշտ իջած Մանուչարյան Գրիգորին, հայրենիքի ազատագրության

համար մղվող կռվում մեռնելը անձնական անվտանգությունից գերադասող շուրավերցի Մոսին ու Հոհանջանին, հայկական աշխարհազորի մարտիկներին, որոնք թևավորեցին նրան: Աբովյանը տեսավ նաև հայերին փրկություն բերող ռուս մեծ ժողովրդի հերոս զավակներին, որոնց նա իր հայրենակիցների հետ միասին սպասում էր տարիներ շարունակ: Ռուսական զենքերի հաղթական արշավանքների հետևանքով, մեկը մյուսի ետևից, նվաճվում էին Հայաստանի շեներն ու ավանները, խորտակվում՝ պարսից բռնության հենակետերը: 1827 թվի հոկտեմբերի 1-ին ընկավ Երևանի բերդը, հասավ վաղուց սպասված փրկության ժամը, իրականություն դարձավ հայ ժողովրդի փայփայած երազանքը: Այժմ ռուսներն էին ամենուր: Ամեն անկյունից նրանց շնորհակալության խոսքեր էին մրմնջում, մանուկներն անգամ նրանց ողջույն էին թոթովում ռուսերեն լեզվով:

Եվ այս ամենից ստացած թարմ տպավորությունները, «էս խաբար, դառը ակնկոծյալ ժամանակին» (126) ճաշակած դառնությունները ու ուրախությունը Աբովյանը փորձեց արտահայտել ռուսական հույզի ու խոսքի միջոցով:

Մեզ են հասել այդ օրերին նրա գրած մի քանի սևագիր ու անավարտ ոտանավորները[1], ինչպես նաև «Ծնդամբու ցնծացմունք երախտագէտ Հայկազին յազատութիւն հայրենեաց իւրոյ» ներբողը, ուր մեծարված է ռուս ժողովուրդը և վերարտադրված Հայաստանի ազատագրության առաջ բերած համաժողովրդական ոգևորությունը.

[1] «Նոր ի՞նչ են այս ցայգ մեր Հայաստանի...», այստեղ գովերգվում է «շնորհաշուք մայրն Ռուսաստանի», որի շնորհիվ «ծագել զՀայաստան զերթ հին դարս մեր» (ԵԼԼ, ՆԼԺ, 1, 330): Իսկ «Մտածմունք ի տեսիլ Հայրենեաց» ոտանավորում ասված է.

«Մրրկոյն Ռուսիոյ գալակք բաշաշան
Կրկին կանգնեսցեն զմեր բակ աւերակ
Արծուոյն հիւսիսոյ ընդ թեւօք տիրական
Կրկին զօրասցուք որդիքս Հարապատոյ» (նույն տեղում, էջ 216):

«Ձեր սանձմամբ՝ զաւեր, զանապատ, զխոռոչ և զայր
Մեզ ճաշակելոցս արար հանգստեան տեղի և զադար...
Իբրև ծագեցաւ առաւօտ կենաց մերոյս փրկութեան՝
Հանգեան, լռեցան ի մերոց սրտից լալիք ու կական...
Երթան, անցանեն, հաշին, խորտակին ամք և ժամանակք,
Այլ ոչ ի մերոց սրտից անցանեն ձեր քաղցր յիշատակք»[1]։

Այս տողերի մեջ դժվար չէ նկատել «Վերք Հայաստանի» կարևոր գաղափարներից մեկի նախնական արտահայտությունը։ «Դրանց (ռուսների — Գ. Հ.) ոտքը որտեղ որ մտնի, էնտեղ բախտավորություն ու խաղաղություն պետք է ըլի... Հայք ե՞րբ կարեն Ռուսաց արածը մոռանալ, քանի որ շունչ ունին» (180)։

Ռուս-պարսկական պատերազմի և Հայաստանի ազատագրության թեմայով գրված Աբովյանի այս, ինչպես և 20-ական թվականների մյուս ստեղծագործությունները, որոնց մեջ երևան են գալիս ձևերի ու գաղափարների մի շարք համընկնումներ «Վերք Հայաստանի» հետ, պետք է դիտել որպես վերջինի գաղափարական-գեղարվեստական նախապատրաստման սկզբնական աստիճաններ։

«Վերք Հայաստանի» նախապատրաստմանը նպաստել է նաև ժամանակի գեղարվեստական գրականությունը (որքան էլ այն աղքատիկ լիներ)։ Աբովյանը վկայում է, որ դեռ 20-ական թվերին տարածվել են բազմաթիվ ժողովրդական երգեր, նվիրված ռուս-պարսկական պատերազմում աչքի ընկած և հերոսական մահով զոհված ժողովրդական հերոսներին և ռուսական հաղթական զենքին։ Նման մի երգ բառացի մեջ է բերված «Վերք Հայաստանի» երրորդ գլխում (էջեր 177—8, «Սար ու ձոր սասանեիչ էլան, զարմացան»), մի երկրորդը, ադրբեջաներեն լեզվով և գերմաներեն տողացի թարգմանությամբ, գտնվում է Աբովյանի հավաքած ժողովրդական երգերի

---

[1] ԽԱ, ԵԼԺ, I, 22։

տետրակում[1], վերջապես, ժամանակակիցները վկայել են, որ մինչև 1880-ական թվերն են հասել Աղասու անձի շուրջ հյուսված և սերբական հերոսական ասքերին հիշեցնող ժողովրդական երգերը[2]։ Չենք կասկածում, որ վերջինների մեջ Աբովյանը նկատի է առել «Վերք Հայաստանին» ստեղծելիս։

Այսպիսով, իրականությունից առնված բազմաթիվ ու բազմատեսակ տպավորությունները, անձամբ մասնակցած ու ականատես եղած դեպքերը, ռուս-պարսկական պատերազմի ժողովրդական հերոս Աղասու անձն ու գործը և նրա սխրագործությունները պատմող ժողովրդական երգերը, պարսկական լծից Հայաստանի ազատագրության թեմայով գրած իր իսկ բանաստեղծությունները, Աբովյանին ինքնաբերաբար բերում էին այդ ամենը գեղարվեստորեն ընդհանրացնելու գաղափարին։

Ինչպես հայտնի է դառնում Գաբրիել Պատկանյանի վկայությունից, Դորպատ մեկնելու ճանապարհին (1830 թիվ, Հուլիս) Նոր-Նախիջևանում հանդիպելով ու զրուցելով վերջինի հետ, Աբովյանն ասել է, թե մտադրություն ունի գրելու «մեկ բան, «Աղասի» անունով, որու մեջ պիտի ստորագրեմ մեր ազգի (այն ժամանակի) մեցենատներու որպիսությունը...»[3]։ Պատկանյանը ասում է, որ հանրահայտ «Վերք Հայաստանին», որի մեջ պատկերվել, հետագայում, Աղասու կյանքն ու գործը, իր բովանդակությամբ տարբերվում է Աբովյանի նախ-

---

[1] ԱնԱ № 62, 13—16։ Հայերեն թարգմանությունը տպված է՝ Դիվան Խաչատուր Աբովյանի, հ. 1, Երևան, 1940, էջ 327։

[2] Сборник материалов для описания местностей и племен Кавказа, Выпуск четвертый, Тифлис, 1884, стр. 38, (այսուհետև կրճատ՝ СМОМПК, IV)։ Այստեղ խոսվում է Աղասու մասին հորինված ժողովրդական երգերի մասին, որոնց սյուժեն, ինչպես նաև մանրամասները շատ ընդհանրություններ ունեն սերբերի յունակական երգերի հետ։

[3] «Հյուսիս», 1863, № 14 (օգտագործել ենք Գ. Պատկանյանի «Վերք Հայաստանի» հոդվածը)։

նական մտադրությունից, իբրև վեպի առանցքը ավելի արդիական հարցերը պիտի լինեին։ 30-ական թվականներին իր գաղափարների ու գեղագիտական հայացքների մեջ հակասական զարգացում ապրող Աբովյանը, ինարկե, չէր կարող տառացիորեն նույնությամբ իրականություն դարձնել Աղասու մասին գրելիքը։ Նրա գրական-ստեղծագործական փորձը թելադրում էր նոր ուղիներ ընտրել... Բայց Պատկանյանի հաղորդածի մեջ կարևորն այն է, որ արդեն 1830 թվի սկզբին Աբովյանն եկել էր հաստատ վճռի՝ Աղասու մասին գեղարվեստական երկ գրելու, որտեղ մանրամասներեն պիտի խոսվեր նաև այն ժամանակվա Հայաստանի իրական վիճակի և հայ մեծատունների բացասական գործունեության (Հայաստանի կյանքի ցավոտ կողմերի) մասին։ Իսկ այդ դեռևս մտադրություն լինելով հանդերձ, «Վերք Հայաստանիի» ստեղծման ուղղությամբ Աբովյանի կատարած առաջին նախապատրաստական լուրջ քայլը պիտի համարել. հեղինակը արդեն գտել էր թեման, գտել էր գլխավոր հերոսին։

1830 թվի սեպտեմբերին Աբովյանը Դորպատում էր. նրա կյանքում սկսվում է նոր շրջան, որին բնորոշ են գործունեության փայլուն ծրագրեր, ապագա հեռանկարներ, ստեղծագործական մտահղացումներ, վերջապես, անդադրում կերպով օգտակար գիտությունների ու արհեստների ուսումնասիրումը, դրանք հայրենակիցների մեջ տարածելու համար։

Դորպատյան տարիները մի քանի ուշագրավ փաստեր են տալիս «Վերք Հայաստանիի» ստեղծագործական պատմության համար։ Երևում է, որ Աբովյանի միտքը շարունակ զբաղված է 20-ական թվականների Հայաստանի կյանքի իրական վիճակը վերարտադրելու, հայկական կյանքի վերքերը ցուցադրելու հարցով. շարունակ փոխվում են մտադրությունն իրականություն դարձնելու ձևերը, բայց հարցը նրա տեսադաշտից դուրս չի գալիս։

1831 թվի սկզբին Աբովյանը որոշում է գրի առնել իր հի-

շողությունները կամ ինքնակենսագրությունը, (որը պիտի ընդգրկեր նրա տեսածն ու լսածը անցած քառամյակին — 1810—1830 թթ.) և անձնական տպավորությունների ու կենսագրական փաստերի միջոցով մերկացնելու հայ հոգևորականության գործունեության ստվերոտ կողմերը։ Այդ առթիվ նա խորհուրդ է հարցրել Մ. Սալլանթյանցից (1831 թվի ապրիլի 1-ին), որը, սակայն, խելքի մոտ չի համարել, ասելով. «Միտալիս և ևս բազմօք ի գիտողութիւնս, ի կամելդ նորոգել կամ ուղղել զանբարի վարս ոմանց եկեղեցականաց մերոց, ո՛չ ընտրելով զարժանաւոր միջոցս ի հասանել նպատակիդ, խորհիս տպել զվարսդ և հրատարակել զմեղս Մարուքեան Հովսէփին կամ այլոց և համարիս, թէ օգուտ և եթ ձայն քո գրոլոր Գերմանիա կամ զԵւրոպիա իսկ յարուցէ յօգնութիւն Հայաստանի»[1] և այլն։

Կարևորն այստեղ այն չէ, թե Սալլանթյանցը անիմաստ էր համարում Աբովյանի ցանկությունը, այլ այն, որ հայտնի է դառնում մեզ Աբովյանի ստեղծագործական նոր ծրագիրը։ Թեպետ փոխվում է կենտրոնական անձնավորությունը, բայց նույնն է մնում արտացոլվող էպոխան։ Այս անգամ էլ 1810—20-ական թվերի դեպքերը պիտի լինեին Աբովյանի ուշադրության կենտրոնում։ Ժամանակավորապես մի կողմ թողնելով Աղասուն, Աբովյանը առաջնությունը տալիս էր իր հիշողություններին, որովհետև անձամբ տեսածի ու լսածի նկարագրելը ավելի ճշմարտապատում կլիներ, քան վիպական կերպարդարձվող անձնավորության քաջագործությունները՝ ինչպիսին Աղասին էր։ Ուշագրավ է մի ուրիշ հանգամանք. Հիշատակարանում կամ Աբովյանի ինքնակենսագրության մեջ մեծ տեղ պիտի հատկացվեր հայ հոգևորականության խոտելի գործունեության քննադատությանը, այսինքն՝ այն խնդրին, որն հետո այնքան բազմակողմանիորեն շոշափվեց Հանրահայտ «Վերք Հայաստանիի» մեջ։

[1] Դիվան Խաչատուր Աբովյանի, հ. II, Երևան, 1948, էջեր 93—94։

Իրականացրե՞ց Աբովյանն արդյոք իր այս մտադրությունը։ Ինչպես Դորպատում նա գրել է իր մանկության օրերի հիշատակարանը, որ 1843 թվին նվիրեց գերմանացի ճանապարհորդ Ա. Հաքստհաուզենին[1]։ Այն սակավաթիվ հատվածները, որ Հաքստհաուզենը մեջ է բերել իր «Անդրկովկասյան երկիր» գրքում, ցույց են տալիս, որ Աբովյանի հուշերի բովանդակությունն են կազմել պարսկական բարբարոսական տիրապետության շրջանում հայ ժողովրդի կրած հարստահարումները և նահապետական գյուղի առօրյան, այսինքն՝ այն բոլորը, որոնք «Վերք Հայաստանիի» նախնական վարիանտի բովանդակությունը կազմեցին[2], և որոնք Աբովյանը հետո կոչեց վերք Հայաստանի։

Դորպատյան տարիներին Աբովյանը սովորություն է ունեցել օրագրեր պահելու։ Վերջիններիս մեջ կան արձանագրված մի շարք դեպքեր ու դիպվածներ, որոնց մեկնաբանման ձևն ու եղանակը հիշեցնում է «Վերք Հայաստանին»։ Դրանցից կարծես սկիզբ է առնում «Վերք Հայաստանիի» գաղափարական բովանդակության հենքը։ Վերցնենք 1834 թվի հուլիս ամսվա գրանցումները, ուր խոսվում է մերձբալթյան գյուղացիության կյանքի վատթար պայմանների ու աղքատության մասին։ Աբովյանը բողոքում է գյուղացիության հարստահարման դեմ, որի հետևանքով վերջինները «պատառները մատն վաստակից խլաց, ոչ իրենին վայելել»[3]։ Իսկ հակադրելով

---

[1] Haxthausen, Transkaukasia, I, s. 191. «Աբովյանը Դորպատում մի տետրակ էր կազմել իր մանկական օրերի հիշողություններից, որոնք պարունակում են մի շարք հետաքրքրական գծեր այն ժամանակվա ժողովրդի կյանքից։ Նա նվիրեց այն ինձ՝ օգտագործելու համար»։

[2] Մեր ասածը հաստատելու համար բավական է ընթերցողի ուշադրությունը հրավիրել «Աղասու խաղի» 121—123 էջերի և Հաքստհաուզենի գրքի 204—205 էջերի վրա, ուր գրեթե բառացիորեն կրկնված է Աբովի ուխտագնացության նկարագրությունը։

[3] ԱԲԱ № 16ա, էջ 179։

գյուղն ու քաղաքը, նա գերապատվությունը տալիս է առաջինին, քանի մարդ «ի խաղաղ խրճիթին երկրագործաց գտանէ հանգստութիւն վասն վաստակեալ անդամոց իւրոց, որ գերապատիկ թուի նմա, քան ի պալատս հոյակապս»[1], ինչպես նաև կարող է «առնուլ զընական ճաշակ հանգստեան, գիտել զվիճակ աղքատաց, վաստակելոց»[2]: Աբովյանը ընդգծում է նաև բնության ուսումնասիրության, բնությունից գիտելիքներ քաղելու անհրաժեշտությունը, ի հակադրություն քարացած վարժապետական քարոզների. «Լայնատարած դաշտք, զուարճալի երկինք, մրմունջ, ջանադրութիւնք երկրագործաց իբրև գիրք լի բիւրազգի ուսմամբք»,— որոնց մեջ ուսումնասիրողը «գտանի հարուստ նիւթս քննութեան և գիտութեան... նա բարեկամանայ ընդ բնութեան, ցաւի և կարեկցի ընդ ողորմելի մարդկութեան և փոքր ինչ մասն հիւրընկալութեան և մարդասիրութեան, բարձրացուցանէ, ածէ զհոգին նորա յանտես աշխարհին անպատմելի: Նա ուսանի զշնորհակալութիւն, ուսանի զկարեկցութիւն. ուսանի զատել և կշռել զաշխարհ և զվիճակ մարդկութեան և առանց վարժարանի է նա նոյնպէս կրթեալ փիլիսոփայ»[3]: Քաղաքի և գյուղի հակադրության, ինչպես և բնության մեծ ու ուսուցող դերի մասին Աբովյանի արած այս դատողությունների մեջ արդեն, առկա են նույն հարցերի առնչությամբ «Վերք Հայաստանի» մեջ ընդարձակորեն շարադրված խորհրդածությունների սաղմերը:

Դորպատյան թղթերից իմանում ենք նաև որոշ «մանրուքներ». Աբովյանը հաճախ է հիշել իր բաժանումը մորից, որն այնքան սրտաշարժ է եղել[4]: Իսկ մի օր, երբ Պարրոտի կինը օրոր է երգել նորածնի վրա, Աբովյանը հիշելով մորն ու մանկությունը, խիստ զգացվել է[5]: Նրա վրա խոր ազդեցություն են

1 ԱԽԱ № 16ա, էջ 172:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում, էջ 170:

4 ԱԽԱ № 16, 1832 թվի հուլիսի 5-ի գրանցումը:

5 Նույն տեղում, 1831 թվի հոկտեմբերի 2-ի գրանցումը:

թողել ծնողներից ստացած նամակները, որոնց մեջ հայրն ու մայրը գրել են մանուկ Խաչատուրի տնկած ծառերի նկատմամբ տարած իրենց ամենօրյա խնամքի մասին։ Մի նամակում կարդում ենք. «Յաղի ցօղս հեղումք՝ իբրև ընդ աչօք աիմ զզրտնաշխատ տունկս քո՝ զի անխին մեզ զօրն՝ յոր զմիմեանս գգուէաք, հովանի է ա՜ր ի վերայ այնոցիկ և խնամս մեր յերերեալ սիրոյդ յաղագս քաղցր որդեկիդ. մեր վասն որոյ միամիտ լեր,— գորովալիր Մայր քո վասն անդին կենացդ անդադար յաղօթս գոլով փափագի համբուրման զաւակիդ»[1]։ Իր այս կարոտն ու հույզերը Աբովյանը հետագայում վերարտադրեց Աղասու հայանի երգի մեջ, իսկ ծնողներից ստացած նամակները նախօրինակ հանդիսացան Աղասու մոր նամակը շարադրելու համար։

Դորպատյան թղթերի մեջ երևում է նվիրված հայրենասերի կերպարը, որն ուխտել է «մինչև ցել շնչել լինել օգտի հպատակ ազգին, կեալ և մեռանել իբրև Հայկազուն վասն Հայաստանի»[2], որը գիշեր ու ցերեկ զբաղված է բազմապիսի խորհրդածություններով հայրենի ժողովրդի վիճակի բարվոքման մասին, որին չափազանց վշտացնում է, որ հայ ժողովրդի դարավոր կուլտուրան ու ցեղուն ամեմիայն... արադայից ու կրոնասրբաց մնացին, որք արհամարհելով զկեանս և զաշխարհ, արհամարհեցին և անարգեցին զայն ամենայն՝ որ բնական է մարդոյ և աշխարհին»[3]։ Աբովյանին ցավ է պատճառում, որ հայ աշխարհիկ գրականության զարգացման համար չի արվում ոչ մի փորձ, որ բանաստեղծական ոգևորության ու թռիչքի աղբյուր հանդիսացող այնպիսի թեմաներ, որպիսիք են՝ «Հայերի կյանքը, նրանց մտածելակերպը, նրանց պատմությունը, նրանց վիճակը»[4],— մշակման չեն ենթարկ-

[1] Դիվան..., հ. I, էջ 285։

[2] Նույն տեղում, հ. II, էջ 19։

[3] Նույն տեղում, հ. I, էջ 45։

[4] Նույն տեղում, էջ 49։

վում, որ ժողովրդի ընդերքից դուրս եկած հարյուրավոր անանուն հերոսների կյանքը, մարդկանց, որոնք ապրել են ու մեռել հայրենիքի համար և կարող են նոր սերունդին հայրենասիրության և անձնուրացության ոգով դաստիարակելու գործում մեծ դեր խաղալ, գրականության նյութ չի դարձվում. «Իսկ Հայաստանը քի՞չ արտակարգ մարդիկ է ստեղծել, որոնց գործերը և կենսապատկերը մի թիզ հողով է ծածկված, որովհետև այնտեղ ոչ ոք չի եղել, որ հավերժացներ նրանց անունները ապագա սերունդների համար։ Որքա՜ն ընկճում է ինձ այս միտքը։ Իսկապես չգիտեմ, թե ինչո՞վ կարող եմ իմ ազգի երիտասարդ սրտերը կենդանացնել և ոգեշնչել առաքինության և հիշյալ նախատիպերին նախանձախնդիր լինելու իմաստով»[1],— գրում է նա 1835 թվի հունվարին Վ. Ժուկովսկուն։ Աբովյանին հուզում էր և այն, որ բազմաթիվ եվրոպացիներ անհոգի և զրպարտչական հարձակումներ են գործում հայ ժողովրդի վրա, չցանկանալով տեսնել նրա աշխատասիրությունը, առաքինությունը և հերոսական ոգին։ Այս և բազմաթիվ այլ մտքերի զարգացումը կամ իրագործումը հետագայում տեսնում ենք «Վերք Հայաստանիի» հայտնի հառաջաբանի, հեղինակի դատողությունների, ինչպես նաև Աղասու և մյուս կերպարների մեջ։

«Վերք Հայաստանիի» ստեղծագործումը դորպատյան տարիներին չէր հասունանում միայն խոհերի ու խորհրդածությունների, կամ էլ գաղափարական առանձին առկայծումների միջոցով։ Դորպատում Աբովյանը գրել է «Պարսկաստանի և Ռուսաստանի միջև ծագած պատերազմի նախապահին» գերմաներեն աշխատությունը, որը պատմագիտական առումով նախապատրաստում էր «Վերք Հայաստանին», դառնալով վերջինի ստեղծման ուղղությամբ նրա կատարած հաջորդ հաստատուն քայլը։

---

1 Դիվան..., հ. II, էջ 37։

Ինչի՞ մասին է խոսվում այս աշխատության մեջ։ Այստեղ նախ բնութագրվում է պատերազմը, որ բերում է «Կարիք, չքավորություն, ամեն տեսակ դժբախտություններ» և որից ամենից ավելի տուժում է «ժողովրդի աշխատավոր, արտադրող դասակարգը»։ Հեղինակն, այնուհետև, անցնում է ռուս-պարսկական պատերազմի առաջին ամիսներին, արևմտյան ռազմաճակատում (Փամբակ, Լոռի...) ծավալված դեպքերի նկարագրությանը, որոնց ինքն եղել է ականատես ու մասնակից։ «Թե ինչ է կատարվել Աբբաս-Միրզայի բանակի զորքաների ձեռքով Կասպից ծովից այս կողմ ընկած և Թիֆլիսի արևելյան նահանգներում, այդ բոլորը բերանացի է մեզ հաղորդել, և ես շատ քիչ բան կարող եմ ասել, իսկ ընդհակառակը, Հասան-խանի ռազմիկների ձեռքով կատարված սարսափելի արարքները բնակիչների նկատմամբ, Փամբակի նահանգում և անմիջապես դրանց հետևանքով առաջացած ցավերը այնքան թարմ են իմ հիշողության մեջ, որ ես թույլ կտամ ինձ որոշ բաներ այդ մասին հաղորդել...»¹։ Եվ իսկապես, շարունակության մեջ, մանրամասներով ու ճշմարտացիորեն, տրվում են Եկղարաքիլիսայի կողոպուտի, Լոռվա սարերին ու ձորերին ապաստանված գաղթական ժողովրդի անապահով ու վտանգված վիճակի և պարսից հրոսակների օղակի մեջ գտնվող՝ պաշարված Ղարաքիլիսայի նկարագրությունները, պատկերներ, որոնք հիմնական գծերով կան նաև «Վերք Հայաստանիում»։

«Պարսկաստանի և Ռուսաստանի միջև ծագած պատերազմի նախապատճառին» երկում, հանդիպում են նաև պատերազմի անցուդարձերի վերլուծման ու գնահատման փորձեր, որոնք նույնպես, գրեթե անփոփոխ, կրկնվում են «Վերք Հայաստանիում»։ Ահա զուգահեռաբար մի երկու օրինակ։

---

¹ Անձ. № 39։

«Պարսկաստանի և Ռուսաստանի միջև ծագած պատերազմի նախապահին».

«Մի բան հաստատ է. դա այն է, որ Պարսկաստանը անպատժորեն պատռեց խաղաղության դաշնագիրը և, Անդրկովկասյան երկրի գլխավոր հրամանատարը իր փոքրաթիվ զորքերը դեռևս ինքնապաշտպանության չհանած, անցավ սահմանն ու գլխավորապես երկու կողմից գրոհեց թշնամական երկրի վրա, գրավեց այն և մեծ մասը ավերեց...

«Նրան կարևոր ծառայություն մատուցեցին երկրի ներսում գտնվող թյուրքական ցեղերը, որոնք կամ առաջուց նրա հետ կապ էին հաստատել ու իրենց աջակցությունը խոստացել, կամ էլ՝ պարսիկների երևալուն պես, միացել նրանց, բնակարան ու պատսպարան տվել և, որպես զինակիցներ, ուղեկցել նրանց՝ լավագույն ճանապարհներով... վերջինները, շատ ցեղերում, անչափ հանդուգն ու լպիրշ էին, որ միևնույն գյուղում ապրող իրենց քրիստոնյա հարևանների և ծանոթների անասուններն ու ամեն տեսակ ունեցվածքը սեփականացնում էին այն պատրվակով, թե հայերը պետք է այդ բոլորը վերջ ի վերջո հանձնեն երկիրը ներխուժող պարսիկներին, ուրեմն և, ավելի լավ կանեին, որ բարյացակամորեն իրենց զիջեին...

«Վերք Հայաստանի»

«Ո՞վ չգիտի, որ էս Հաղաղին, ինչ ժամանակ Հասան-խանը արևմուտից, Աբաս-Միրզեն արևելքից՝ ավազակի պես հանկարծ էկան, մեր սահմանը (սինոր) կոխեցին, մեր կողմը ամենևին խաբար չունեին։ Ընչանք Ռուսք իրանց զորքը կհավաքեին, Ղզլբաշը կարող էր սաղ Վրաստան ոտի տակ տալ... (121)։

«Բոլոր Ղազախ, Բորչալու գոնմից էր էկել, շատ եսիր սրանք էին բռնում, իրանց միջիցը ու Ղզլբաշի ձեռը տալիս. համիշա տես, վերազգություն ասես՝ սրանք էին անում, ու թշնամուն կամ իրանց մեջը բերում, կամ իրանք խեղճ Հայերի տունն ու տեղը թալանում։ Շատ անգամ էն մարդի, որի հետ որ ամբողջ բարաղան մուղարար տարիներով հետները նստել, վեր էին կացել, հացը կերել, հարևանություն արել, գալիս էին ափաշկարա օրը ճաշին տունը կտրում, ունեցած չունեցածը վերցնում ու հետո էլ ասում, որ ամենք տանենք լավ ա, քանց թշնամին, մենք մեր դոսթն ենք, մենք ունենք ձեր մալը, թե չէ՞ թշնամին կգա, կտանի...» (90)։

«Մի քանի ամսվա ընթացքում արևելքից պարսկական թագաժառանգ Աբաս-Միրզային հաջողվեց առաջ խաղալ Գանձակից այս կողմ, մինչև Շամքորի հարթավայրը և արևմուտքից պարսկական բանակի պետ չարաբաստիկ Հասան-խանին մինչև գերմանական կոլոնիաները, և այսպիսով, Թիֆլիսը, Անդրկովկասյան երկրի մայրաքաղաքը վտանգի մեջ էր և ենթակա նույն ճակատագրին, որին ենթարկվեց այն երբեմն Աղա-Մամադ-Ղուլի խանի կողմից, եթե միայն թշնամու աշխատարքեր առաջխաղացումը չկասեցվեր փոքրաթիվ քաջարի բազուկներով, ինչպես և Վրաստանի Գերագույն հրամանատար, փառապանծ Երմոլովի հայրենասիրությամբ ու արիությամբ, Մադաթովի հզորությամբ և ռուսական հերոսազորի ընտրված ջոկատներով...»։

«Անտարվում էր ու լսին էր տալիս՝ որ իշխանն և քաջահաղթ գեներալ-մայոր Մադաթովն վեր կացավ, Շամքորա գլխին մտիկ արեց... որ թշնամին հանկարծ վրա չտա... Զորքը զորդ ա շատ քիչ էր, ամա Մադաթովն էր նրանց գլխին.... Ղզլբաշի զորքն Գյանջա, Ղարաբաղ էս կողմիցն էր առել, ոտնատակ տվել, Փամբակ, Շորագյալ էն, էս կողմից Աբաս-Միրզեն, էն կողմիցը Հասան-խանը քանդելով ավերելով՝ էկել հասել էին Թիֆլիզ՝.... ինչպես որ տեսանք, սհաթե սհաթ աչքը կթած ուներ, — թե Աղա Մամադ-խանի կրակը ողջիանց որ ա էլ կրկին իր գլխին կթափի։ Երմոլովն ինչ հնար ճարտարություն ուներ, զորք գըրեց, Մադաթովը պետք էր Վրաստանու փրկիչը լիներ...» (174)։

Ռուս-պարսկական պատերազմի սկզբնական օրերին ծավալված դեպքերի այս մեկնաբանումը, որ չնչին տարբերությամբ պատմագրական հոդվածից փոխանցվել է «Վերք Հայաստանիին», հիմք է տալիս եզրակացնելու, որ դորպատյան տարիներին Աբովյանի համար արդեն պարզվել էր ապագա վեպի հիմքում դրվող դեպքերին ու մի երկու դեմքերին (Երմոլով, Մադաթով) ցույց տվելիք վերաբերմունքը և վերջիններին ցուցադրելու կոնկրետ հանգամանքները։ Ոչ պատահական չէ, որ թե՛ վեպում և թե՛ այս հոդվածում և՛ Երմոլովը, և՛ Մադաթովը հիշվում են պարսից զորքի առաջխաղացումը կասեցնելու առնչությամբ։

1834 թվի վերջերին, Դորպատում Աբովյանի համար պարզվում է մի ուրիշ խնդիր ևս. նա արդեն գիտակցում է աշխարհաբար լեզվով գրելու անհրաժեշտությունը։ Եթե մինչև այդ գրաբարի հանդեպ նա որոշակի վերաբերմունք չուներ, տեսնելով հանդերձ, որ գրաբարը ժողովրդի կողմից չի հասկացվում, վճռականորեն հարց չէր դնում՝ այն աշխարհաբարով փոխարինելու, նրան թվում էր, որ ժողովրդին լուսավորելու գործում գրաբարը կարելի կլիներ վերստին հասկանալի դարձնել, ապա այսուհետև հստակորեն ըմբռնելով, որ հայ ժողովրդին կարելի է լուսավորել միայն ու միայն աշխարհաբարը գրականության և դպրոցական լեզու դարձնելու միջոցով, ձեռնարկում է մի շարք աշխարհաբար գործեր գրելու, երբեմն դրանց համար օգտագործելով ռուսական ժողովրդական երգերի ոճն ու հնարանքները, կամ էլ վերամշակելով անցյալում գրածները. Նկատի ունենք՝ «Տաղ ի գույն Не шей ты мне матушка», «Տաղ հրաժարական», «Իմ կյանքս ու արևս ես քեզ զոհ կտամ», «Ջանումս ջան չի մնաց, որ...» և ուրիշ գողտրիկ բանաստեղծությունները, որոնք առավել հեշտացնում էին աշխարհաբար լեզվով մեծ կտավի երկի ստեղծումը։

1836 թվի կեսերին Աբովյանը վերադարձավ հայրենիք։ Նա եկել էր գործունեության փայլուն ծրագրերով, ստեղծագործական հղացումներով, գիտելիքների անսպառ պաշարով,— այդ բոլորը հայրենի գրականության ու կուլտուրայի զարգացման, հայ ժողովրդի տնտեսական վիճակը բարվոքելու ու թեթևացնելու գործին ծառայեցնելու, նա եկել էր մինչև իսկ նախազգացվող դժվարություններից ու հնարավոր անախորժություններից նախապատրաստված, բայց բոլորովին ուրիշ բան ստացվեց։ Ամենայն հայոց կաթողիկոս Հովհաննես Կարբեցին չցանկացավ ժողովրդական ուսուցիչներ պատրաստելու նպատակով Աբովյանի նախագծած դպրոցի համար մի-

ջոցներ տրամադրել. շարժադրանքեցին նաև հայ ունևորները[1]: Ոգևորված Աբովյանը, որ մի տարի առաջ կարծում էր, թե հանգանակության միջոցով անգամ կկարողանա իր ծրագրերն իրականացնել, այժմ ինքն էր ծայրահեղ կարիքի մեջ ընկել, դառնալով օրվա հացի կարոտ: Նա զգում է, որ կղերա-ավատական խավարամոլների գերիշխանության պայմաններում հնարավոր չէ ազատ ու անկաշկանդ գործունեություն ծավալել, դեմոկրատական-լուսավորական ծրագրեր իրականացնել, նա զգում էր, թե ցարիզմի տիրապետության պայմաններում որքան ողբերգական է միջոցներից ու աստիճանից զուրկ, սակայն ազնիվ նպատակներ ու ձգտումներ ունեցող մարդու վիճակը: Բայց այս բոլորը մազաչափ անգամ չշեղեցին նրան ընտրած ուղուց, բուն նպատակից, որն անուղղակիորեն տանում էր «Վերք Հայաստանի» ստեղծագործմանը:

«Վերք Հայաստանի» ստեղծման շարժառիթների մասին խոսելիս, Աբովյանը մատնանշել է. «Սկսած այն պահից, երբ հայրենիքիս պատանեկության կրթելն իմ կյանքի նպատակն եմ դարձրել, իմ նվիրական գաղափարներից մեկն է եղել հայոց ժողովրդական լեզուն (աշխարհաբարը — Գ. Հ.) դարձնել գրականության լեզու և մտցնել դպրոցները»[2]: Այնուհետև շարադրել է, թե մինչև «Վերք Հայաստանին», այդ ճանապարհին ի՞նչ արգելքների է հանդիպել ինքը: Ահա ինչու, այժմ և այսուհետև, առանձին ուշադրություն ենք դարձնելու Աբովյանի գրական-մանկավարժական գործունեության վրա, որի մակընթացության ու տեղատվությունների մեջ նաև թաքնված է «Վերք Հայաստանի» ստեղծագործման գաղտնիքը:

1837 թվի փետրվարին (12) Աբովյանը մտնում է պետական ծառայության՝ Թիֆլիսի գավառական դպրոցում, միա-

[1] Այս խնդրի վրա նոր լույս է սփռում Աբովյանի գերմաներեն ճառը, արտասանված 1835 թ. սկզբին, Պետերբուրգում: Մանրամասնությունները տե՛ս. Սովետական մանկավարժ, 1955, № 1, էջեր 45—51:

[2] ԱԵԱ № 65:

ժամանակ հիմնելով մասնավոր պանսիոն, որի նպատակն էր պատրաստել ժողովրդական ուսուցիչներ և իր լուսավորական-դեմոկրատական ծրագրերն իրականացնել նրանց միջոցով։ Պանսիոնում Աբովյանը նախապես դասավանդում էր ձրի։ Նա աշխույժ գործունեություն է ծավալում աշխարհաբարը դպրոցի ու գրականության լեզու դարձնելու համար. սկսում է կազմել «Նախաշավիղը», գրում է աշխարհաբար բանաստեղծություններ («Սուգ հարազատ և ծնողասեր որդվո», «Գերության ծնողաց առ հնազանդ որդիս» և այլն)։ Աբովյանի բանաստեղծական երևակայության մեջ կրկին փայլատակում է Աղասու կերպարը («Ո՞ւր ես գնում Նազլու ջան»), որը սակայն նրա համար դեռևս միայն հույզերով ու զգացմունքներով հարուստ անձնավորություն էր. Աբովյանի վերարտադրության առարկան դեռևս Աղասու սիրո տվայտանքներն էին։

Հաջորդ տարվա մայիս-հունիս ամիսներին Աբովյանը շըրջագայել է Հայաստանում, որի ընթացքում նրա ուշադրությանը գրաված դեպքերն ու իրադարձությունները մեծապես կապվում են «Վերք Հայաստանիում» արտացոլվող ժամանակաշրջանի հետ։ Նա գրանցել է այդ օրերից ստացած տպավորությունները (գրաբար լեզվով), որոնց շատ էջեր լեզվաոճական աննշան փոփոխություններով ու աշխարհաբար շարադրանքով հետագայում փոխանցվեցին «Վերք Հայաստանիին»։

Ճանապարհորդության ժամանակ անցնելով Ծուղավերով Աբովյանը հիշում է պարսից բարբարոսական տիրապետության շրջանը, երբ թյուրք ու պարսիկ հրոսակները հափշտակում ու գերի էին վարում անպաշտպան ժողովրդին, սպանում կամ վաճառում նրանց։ Հաղպատի ու Սանահինի վանքերը նրա միտքը թռցնում են դեպի անցյալը, երբ Լոռվա լեռնաշխարհում իշխում էր Հայաստանի վերջին անկախ թագավորությունը։ Ուշադիր դիտելով ժողովրդի վիճակը նա նկատում էր, որ «Հայոց աշխատասեր շինականները» ապրում են

ծայրահեղ թշվառ վիճակում, որ «երկրացի հայը գրեթե մեռնում է աղքատության մեջ»։ Հետին, վերջապես, մտաբերել է տալիս Աբովյանին ռուս-պարսկական պատերազմի օրերին կրած տառապանքները և տեսած զարհուրելի պատկերները՝ հար ու նման այն հուշերի, որ արթնացան նրա գլխում «Վերք Հայաստանին» ստեղծելու պահերին։ Ահա դրանցից մեկը.

Ճամփորդական նոթեր (1838 թ.)

«Վերջապէս Լօռի հովտաւ է արժանայիշատակ՝ զի ի 1825 (sic! 1826) թուին բոլոր բնակիչք Փամբակի թափուեցան աստ, թողեալ զբոլոր կայս իւրեանց եկին և բնակեցան անդ։ Չի՛ք այլ քարափ, այր, ձոր, ուր ո՛չ լինէին ողորմելի ընտանիք։ Ո՛վ ես ինքնին ներկայ էի և ականատես յայնժամ՝ թէ ողորմելի ժողովուրդս այս զո՞րքան տառապանս կրեաց։ Սովն ի միոյ կողմանէ, ցուրտն, հիւանդութիւնք ի միւսոյն, այն զի բազումք չունէին և զծածկոց կամ հանդերձ ինչ և ցամաք հացի եւ կարօտ լինելով, այն ինչ ոմանք յանձն առեալ զմահ՝ գնային ճարել զապրուստ վասն զաւակաց իւրեանց. անողորմ պարսիկք կամ տաճիկք, կամ սպանանէին կամ գերի առնէին զնոսա։ Բազում անգամ առաջի աչաց մերոց յափշտակէին նոցա զանասունս, զխաշինս, այրէին զգիւղօրայս, զմարդիկս։ Սուգ և շիւան պատեալ էր ամենայն ուրեք։ Կէս ժողովուրդ՝ համարեա՛ թէ՝ աստ մեռան մի-

«Վերք Հայաստանի» (1841 թ.)

«Բարեխնամ կառավարությունը տեսնելով՝ որ աշխարհքն էսպես սոփ սաղ ընկավ, հրամայեց, որ Փամբակ, Շորագյալ քոչեն. գան Լոռի, որ իրանց պրծացնեն... Անօրեն Պարսիկքն ու Թուրքերը ձորից, սարից՝ օրը ցերեկով, մեր աչքի առաջին՝ մեկ թվանքի մանզ-զիլ տեղ՝ վրա էին տալիս դագանի պես ու սավար, մարդ եսիր անում, կամ սպանում, կամ գլուխը կտրում։ Ո՛չ ցերեկն ունեինք քուն, ո՛չ գիշերը... Լացի, աղի ձենը երկինքն էր հասել, լսողի, տեսնողի սիրտը էրում, փոթոթում։ Խալխը սար ու ձոր լցվել, իրար վրա էր թափել. ո՛չ տուն կար, ո՛չ տեղ, ո՛չ հաց, ո՛չ ապրուստ... Սարերումն՝ էլ բանջար, խոտ չէր մնացել քաղել, կերել էին... Շատ հեր, շատ ախպեր իրանց օղլուշաղի, քասիբ էրեխեքանց ձենին չդիմանալով, տանով, քանով, հավարվում, գլխներըը փեշերներն էին դնում, էլ էդ թարաֆն Փամբակ գնում, որ հաց բերեն, բայց ո՞ւր, որը եսիր էր ընկնում, որը գլուխը

միայն ի սովոյ և ի խռնաուսթենէ։ Քանի՞ ողորմելի է ազգն՝ որ ո՛չ փույթ տանի պահպանել զանձն և զերկիր իւր»[1]։

թշնամուն տալիս, իր տունը քանդում։ Զմեռն էլ էկավ, վրա հասավ։ Մարդ, անասուն սովի, ցրտի ձեռիցը աղար ընկավ... Կարոտ էինք մնացել, որ ցամաք հացըն էլ ա կուշտ փորով ուտենք... Էսպես հազարավորք մեռան, սովամահ էլան...» (124—126)։

«Վա՜յ է՛ն խալխին՝ որ ինքն իր կյանքն, աշխարքը չի՛ պահպանիլ, ու հարամու ձեռ կտա...» (51)։

Աբովյանի ուշադրությունն են գրավում Ղղարաքիլիսայի ավերակներն էլ, որոնք ինքնաբերաբար թելադրում էին գրի առնելու նաև վերջինների հետ կապված արտակեղծ հուշերը։ Սրանք էլ մանրամասների տեսակետից չեն տարբերվում «Վերք Հայաստանիից»։

Առ թափեաց զանազգոյն թոյն ցառնութեան իւրոյ արիւնարբու կռասկալն Երևանի Հասան-խան ի 1825 (sic! 1826) ամին։ Զե՛ ևս սկսեալ պատերազմին Պարսից, նա եկեալ էր յամաւան յԱպարան հանդերձ զօրօք իւրովք. նա մտադրեալ գոլով աւերել գիւղս զայս, սպասէր յաջող ժամանակի։ Հայազգի Երևանցիք յայտնեալ էին Ղղարաքիլիսի բնակչաց՝ զգուշանալ. և սոքա հաւաքեալ զբոլոր կայս իւրեանց, շինեալ էին ի սայլից պարիսպ մի առաջի գեղջն. առ ի պահպանել զանձինս իւրեանց։

(Հասան-խանը) «իր սարդարներովը, զոնջունովը գնաց Ապարան՝ որ Փամբակու վրովը՝ փոսանդ ճարածին պես՝ Ռուսի սահմանը անց կենա... Փամբակու իշխող՝ մեծավոր, իշխանն և զորապետն Սալարզամիրզա՝ ո՛չինչ կասկած չէ՛ր տանում...։ Բայց Հայ էլ՝ որ Երևանիցը իր բարեկամներիցը գիր էր ստանում ու գիտեր՝ թե բանի զորությունն ի՞նչ ա, ձեն հանելիս՝ Ղարաքիլիսումը վրեն ծիծաղում, սրին խփում էին ու վախլուկ Հայ կանչում... Էլի Փամբակու Հայերը Պարսից խորամանկությունը լավ

[1] Անն № 20 (հաջորդ երեք քաղվածքների համար աղբյուրը չենք նշի. նույնն է)։

Յառաւօտու միում նախ քան զծագել արեգական, զօրքն Թշնամեաց յարձակին. այլ Հայք անձնարին քաջութեամբ պատերազմին ընդ նոսա և ժամս չորս Թշնամիք ոչ համարձակին ձեռնամուխ լինել ի բերդս։

Յայսմ միջոցի գունդ մի զօրաց գայ ի Գիւմրէ՝ յօգնութիւն նոցա։ Հայք ժողովին առ նոսա բոլոր ընտանեօք իւրեանց, բայց զօրապետն խաբեալ ի Տաճկաց՝ յանկարծ վերադառնայ։ Ո՜հ, ով կարէ պատմել զողորմելեաց զվիճակ։ Արք և կանայք, աղջիկք և մանկունք մնան անօգնական ի դաշտին։ Պարսիկք սրախողխող արարեալ զբոլոր ծերունիս, այրեալ զամենայն տունս, առեալ առնել զամենայն կայս և գեղահասակսն, զամենայն Թուով իբրև 200 վարեն ի գերութիւն։ Զբազում ծնողս առաջի որդւոց իւրեանց, բազում մանկունս առաջի ծնողաց իւրեանց մատնեն ի սուր սուսերի։ Սակաւք փախչին և ապրեցուցանեն զանձինս իւրեանց, մոռացեալ զծնողս, զորդիս և զընտանիս։ Գալարքին ասէր ի լանջն զաղետապատում վիճակ ողորմելեացս այսոցիկ։

իմանալով և իրանց քաշած դառն օրերը միտք բերելով՝ ամեն տեղ պատրաստություն էին տեսել... Ուզղարաքիլիսեն բերդ ու էր չունենալով՝ սելեր ու քուԹան իրար վրա էին դրել, սանգար կապել, ունեցած չունեցած էնղեզ ղայիմացրել՝ գեղարենքն էլ իրանց մեջ առել...

Արեգակը կրակ դառած՝ Ակրագյաղի կողմերը բարձրացավ... Բայց Ուզղարաքիլիսեն՝ էն խավարն էր բանել, էն շամանդաղն էր պատել, որ աչքը իր առաջը բանեց էր տեսնում... Հարյուր անգամ Պարսից անազունց զորքը դուռ արին, երեք քաշեցին, ամեն անգամ էլ հարյուրով կոտորվեցան. իրանց իրանց լաշերի վրովը էլ ետ փախան....։

Գյումրու ցցերը Բոնի բալաբան, քաղ սողդաԹների գասան, կապիտանն՝ Արծվի պես հասան, Թշնամուն մեջ առան։ Թոփը մեկ կողմիցն, Թուրը մյուսիցն, մինը առաջիցն, մինը ետևիցն՝ հնձեցին Թշվառ Թշնամու զորքը, չարդեցին.... Որդի ու ծնող իրար ձեռով ընկան, ինչ որ մնացին՝ առան ու էկան՝ որ Թոփի տակին սալզամԹի մոտին հավաքվին՝ որ էլ վեռա չըտեսնին, մինչև Թշնամին գնան ու կորչին....

Բոշալվի Թուրքերը կապիտանին գլխից հանեցին՝ Թե զգլուշը Գյումրու բերդը կանոնի, Թոփ ու Թոփխանա հեղինեքը առան, ետ դառան, չըստար ողորմելի խալխը մնաց չոլումը ոչխարի պես սա-

ռած, ոտը ո՛չ առաջ կարաց փոխել, ո՛չ ետը. որը ձի ունէր, էլ ո՛չ թարեքամի մտիկ արեց, ո՛չ ազգականի, վեր էկավ. փախավ Գյումրի...

Ա՜խ՝ սիրտս կտրատվում ա. լեզուս ի՞նչ ա, որ բառով կարողանա՝ էն սարսափելի տեսարանը պատմել...» և այլն (90—91, 99, 103, 106, 110)։

Ուշագրավ է նաև ճամփորդական նոթերի այն էջը, որտեղ նկարագրված են Անիի ավերակները. այստեղ ևս վեպի հետ նմանությունն անհերքելի է.

«Ի լայնատարած դաշտի միում բարձրանան մի գլխի միոյ եկեղեցիք, ապարանք, ամրոցք, աշտարակք։ Դու զմայլիս, հիանաս, յապշիս, կարծելով թե բազմամարդ է տեղին և անպատմելի ժողովուրդ փարթամ և իշխանք հոյակապք բնակին աստ, բայց այս ամենայն բոլորովին պատրանք են աչաց...»։ Կամ՝ «Ու սուրբն Անառնոյ ոչ պատկառեցաւ կարդալ զանէծս ի վերայ Հայրենի ազգին և քաղաքին։ Նվ ապարինշն գթած մերոյ և եթ առն բարկութեան ի զոհ մատնեաց քաղաք մի բազմամարդ» և այլն։

«Մեկ տափարակ դուզ տեղ բաց ա ըլում հանկարծ տեսնողի առաջին՝ մեկ մեծ դաշտ.... Մեկ տեղից ահագին բերդի պարիսպն ա քեղ խարում, մեկ տեղից զարմանալի եկեղեցյաց գմբեթը ու մեծությունը, մյուս տեղից բարձր մինարեթքը, քոշք ու սարայի գըլխըները։ Մտքումդ ասում ես՝ թե էս տեսածդ մեկ մեծ, զորեղ թագավորի թախտ պետք է ըլի» (158)։ Կամ. «Աստված էնքան իր գութը Հայերիցը պակասեցրեց, որ էնքան անմեղ հոգիքը, էնքան միլիոնավոր մարդիք մեկ ահաթումը՝ մեկ սատրպի խաղով ջնջեց, Հայոց Տոսփը քանդեց» և այլն (159)։

Աբովյանը լինում է նաև Երևանում։ Վերջինին նվիրված էջերում էլ «Վերք Հայաստանիին» հիշեցնող շատ բան կա, բայց բավականանանք միայն Զանգի գետի նկարագրությունը վեպի համապատասխան հատվածի հետ համադրելով.

«Աստ անցանէ կատաղածոյն Զանգի ահագնալուր թնդմամբ և գալարմամբ յանձուկս խորին ձորոյ երկուստեք շրջապատեալ սեպացեալ ապառաժօք, գոռոզացեալ ի բիւրաւոր արգելս, զորս պատահանն ջուրք նորա, զորս մեծամեծ առուօք տարեալ ի բազում տեղիս քաղաքին և գաւառաց, ո՛չ թողուն զկաթիլ ինչ խառնել ընդ Երասխ գետոյ, ուր է մուտն նորա»։

(Զանգին) «հազար պտույտ ու արգելքներ տալով, բաշխելով, ճամփին մոլորում, կորչում ու չի՛ կարում իր սիրուն քվորն էլ ա Արազին մեկ խաբար տանի, չունքի Երևանու թամարդու, կարոտ բնակիչքը նրա ճամփեն բռնում, նրան սիրով խտտում, իրանց մեջը, իրանց հանդն են տանում, որ նրա սուրբ կաթնահամ ջրովը՝ իրանց էրված սրտը հովացնեն, իրանց դառը քրտինքը նրանով լվանան ու նրա տված պտղովը իրանց գլուխը պահեն...» (53—54)։

Այս և վերևի մյուս համադրումները բերում են այն եզրակացության, որ արդեն 1838 թվին Աբովյանի երևակայության մեջ ուրվագծվում էին վեպի այս ու այն դրվագը, գրի էին առնվում հետագայում «Վերք Հայաստանի» բաղադրիչ մասերը հանդիսացող այս կամ այն տեսարանները. այնպես որ 1841 թվին, երբ նա գրում էր իր անմահ պատմվածքը, որոշ դեպքեր իրենց բնական ընթացքով, առանձին ձևակերպումներ՝ ճամփորդական նոթերի գույնով ու երանգով, փոխադրվեցին այնտեղ։

Աբովյանը այցելում է նաև Սևանա լճի շրջակա գյուղերը։ Թեպետ փոքր ինչ առաջ էին ճնշվել ցարիզմի հարկային քաղաքականության դեմ ուղղված գյուղացիական հուզումները, բայց ժողովուրդը դեռ չէր հանդարտվել։ Ինչպես հաղորդում են (պատմական վավերագրերը), մինչև այդ այցելությունը՝ ժողովրդի ներկայացուցիչները աղերսագրեր են ներկայացրել կառավարությանը, խնդրելով ազատել հարկերից և թեթևացնել իրենց վիճակը, բայց բավարարություն չեն ստացել։ Դրանից հետո է, որ Բայազետում հավաքված ամբոխը որոշում է հրաժարվել պետական հարկերը վճարելուց և պարտավորությունները կատարելուց։ Գեներալ Բեհբուտովը Անդր-

կովկասի կառավարչապետին ուղղված իր զեկուցագրի մեջ ասում է. «Կառավարության ոչ մի պահանջ նրանք չեն կատարում. նահանգապետից նրանց տարված հրամանները պատառոտվում են, իսկ ուղարկված մարդիկ՝ ծեծվելով դուրս վռնդվում»։ Հայկական մարզի կառավարիչը ցանկացել է հանգստեցնել գյուղացիներին, սակայն ամեն րոպե, ապստամբվելու առիթ փնտրող մոլեգնած ամբոխը բացագանչել է. «Մենք չե՛նք ուզում մելիքներին, տանուտերներին, նահանգապետին, մինչև իսկ կառավարությանը»[1]։ Գյուղացիները չեն վճարել նաև Էջմիածնի տուրքերը (Տավարատեղի)[2]։ Ցարական կառավարությունը այս ըմբոստ ելույթը ճնշում է ռազմական ուժով։ Բայազետ են ուղարկվում եգերական վաշտեր՝ թնդանոթով. ապստամբների գլխավորները բանտարկվում են, իսկ առավել հանդուգն գյուղացիները՝ դաժանորեն ծեծվում։ Ժողովրդական անկազմակերպ ելույթը խեղդվում է։

Իր ճամփորդական նոթերի մեջ Աբովյանը համակրանքով է խոսում ապստամբների ու նրանց բանտարկված գլխավորներից՝ Բարսեղ Արծրունու մասին, միաժամանակ նշում, որ այս պատերազմասեր, քաջարի ժողովուրդը ապրում է ծայրահեղ թշվառ վիճակում, որ «ողորմելի բնակիչք տեղւոյս... անկեալ կան՝ ի վերջին չքաւորութեան»։ Բայազետի գյուղացիական շարժումների հեռավոր արձագանքը տեսնում ենք նաև «Վերք Հայաստանիում»։ Վերջինիս երրորդ գլխում նա գովասանքով է հիշատակում Բարսեղ Արծրունու անունը, որին կառավարությունը (1838 թվից) զրկել էր բոլոր արտոնություններից։ Բացի այդ, իբրև հակադրելով բայազետցիների՝ ռուսական զորքին մատուցած մեծ ծառայությունները (ռուս-պարսկական պատերազմի ժամանակ) և այժմյան թշվառ վի-

[1] Крестьянское движенце в Армении в XIX веке, изд. АН Арм. ССР, Ереван, 1948, стр. 27.

[2] Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթապանակ № 90, վավերագիր № 40։

ճակը, Աբովյանը խուլ ձևով ակնարկում է, որ նրանք իրենց գոյությունը պահելու համար թափվել են Թիֆլիս և մշակություն են անում («էն օր էլ ողորմելիքը Թիֆլիզումը մշակություն անելիս...»—123)։

1838 թվի վերջերին Խ. Աբովյանը տպագրության հանձնեց «Նախաշավիղը», որը հանդիսանում էր կենսական թեմաների ընտրման և դրանք կենդանի ձևերով մարմնավորելու նոր արտահայտություն։ Դասագիրքն ամբողջությամբ վերցրած, որի պիտանիությունը ստուգված էր փորձով, աշխարհաբար լեզվով ժողովրդի պահանջներին համապատասխան գրականություն ստեղծելու ուղղությամբ կատարված նշանակալից առաջընթաց էր։ Նրանով ո՛չ միայն աշխարհաբարը դարձվում էր դպրոցական լեզու, այլև տրվում էր աշխարհաբար գրականության ճաշակ։ «Նախաշավիղը» վերացնում էր «Վերք Հայաստանիի» ստեղծագործման ճանապարհին ընկած մի շարք խոչընդոտներ։ Բացի այդ. «Նախաշավիղի» մեջ տպագրվել են «Վերք Հայաստանիին» առնչվող երկու գործ. «Վախլուկ շուն» չափածո առակը (որը արձակ վերապատումով հետագայում տեղավորվեց «Վերք Հայաստանիի» սևագիր վարիանտում)[1],

[1] Խուսափելով ավելորդ կրկնություններից՝ բերում ենք կողք-կողքի «Վախլուկ շուն» առակի տեքստը ըստ «Նախաշավիղի» ու «Վերք Հայաստանիի» (սևագիր)։

«Նախաշավիղ» (1838)

Առակ է ասած, աչքը վախեցած
Մարդը չալ բոզիցն էլ ունի կասկած.
Շատ անգամ մենք ենք մեղավորը, որ
Էնպես ենք տալիս մեր գլուխը, մեր օր
Թշնամու ձեռքը, նրան գերի դառնամ,
Որ նա ոտն էլ ա մեր գլխին դնում,

«Վերք Հայաստանի» (1841)

«...Բաս քեզ ի՞նչ էլավ, ընչի՞ էս կուչ էկել։ Դու էլ մի քո հոնարը ցույց տուր, քո մեջքը չի՛ կտրվի, ձեռներդ փչով չի՛ ուտում։ Ա՞խ, ի՞նչ անեմ։

Դե, գն կա՛ց, մեկ մասալա ասեմ։ Մեկ շուն ամեն գիշեր գելի ձեն լսելիս, գալիս տան էր պրծնում։ Դանակն էկավ ոտքունց բոզաղին հասավ, չարին կարվեց, չէր

և «Սեր, բարեկամություն» բանաստեղծությունը։ Վերջինս Աղասու կերպարի վերարտադրության նոր փորձ է. հերոսի բնավորության գծերից այստեղ շեշտվում են՝ հաստատակամությունը, ընկերասիրությունը և հավատարմությունը։ Թեպետ Աղասին դեռևս չի դիտվում որպես ազատասեր հայ ժողովրդի հոգևոր ու ֆիզիկական ուժերի կրող, այնուամենայնիվ Աբովյանը առավել ընդարձակել է այստեղ նրա կերպարի ըմբռնումը. Աղասին հակադրված է բռնությանը, և հրապարակ է իջել վերացնելու այն։ Ինչ խոսք, որ կերպարի այսպիսի ըմբռնումը մոտիկ է «Վերք Հայաստանիին»։

Մեր գլուխը կտրում, միրուքը սանրում,
Ու մեզ վրա միշտ իր ձին խաղացնում։
Օրհնվիս դու՝ ձեռդ հո վրդով չի՞ ուտում.
Դու էլ ունիս ուժ, ու խելք էլ հետը,
Էլ ի՞նչ ես դողում, կոտրում քո սիրտը
Լսի՛ր առակը, թե սուտ եմ ասում,
Ինչ կուզես, մտածիր, քո լավն եմ ուզում։
Մեկ տանուտեր մեկ շուն ուներ շատ ղոչաղ,
Բայց գիլիցն էնպես էր նրա սիրտն ընկել վախ,
Որ համեշա՝ հենց մութը գետինը չէր բռնում,
Անճար շունը կապը կտրում, տուն էր ընկնում,
Դուռը չանգռում, ու կռնձկռնձում, գլուխ պակում,
Ու իր տիրոջ քունն էլ, երազն էլ կտրում։
Տիրոջ ճարը կտրեց, տարավ, կոճղը կապեց,

ուզում՝ որ անի. ամա տրեց, ու շունը տան կոխը կապեց։ Գելը որ էլի էկավ, շունն էլ փախչելու տեղ չունենալով, ճարսաղ վրա թռավ, գելի բկիցը բռնեց, տակը գցեց, վրեն նստեց, ու չէր իմանում՝ թե սատկել ա, դողդողալով, վրթվըրթալով մնացել էր նստած, միտքն էն էր՝ որ իրան վնաս չտա։ Լուսացավ. տերը զարմացավ՝ որ էն գիշերը հանգիստ էր քնել, ու գելի ձեն չէ՛ր լսել. գնաց դուրս՝ որ տեսնի՝ թե շունը հո փախել չի։ Աչքը բացի՛ն տեսնի, ինչ ծա տեսավ։ Շան կապը եղ արեց, գլխին ձեռը քսեց, գելի լաշը գեն քցեց թե չէ, շունը մեկ գազ ծուռ էկավ-ընկի՞-ոչինչ—հիմար վախկոտ շունը էնպես կարծում էր, թե գելը սաղ ա, ու իրան կուտի։ Ի՞նչ ես կարծում. մեր բանն էլ էսպե՞ս չի» (251—252)։

Հայտնի է, որ Կազանի համալսարանի հայոց լեզվի ամբիոնի պրոֆեսորությունն ստանալու համար (1839 թ.) Աբովյանը ներկայացրեց պատրաստի աշխատություններից երկուսը՝ դրանցից մեկին՝ «Նախաշավիղին» կցելով մի գերմաներեն բացատրական։ «Նախաշավիղի» բացատրականը իր մեջ արծարծված շատ մտքերով առնչվում է «Վերք Հայաստանիի» գաղափարական բովանդակությանը։ Այստեղ առաջադրված շատ խնդիրներ իրենց հետագա պարզաբանումն ու զարգացումն ստացան Աբովյանի անմահ վեպում։

Ճշտորեն ըմբռնելով լեզվի էությունը՝ իբրև հաղորդակցման կարևորագույն միջոցի, մաքուր հայելու, որի մեջ ցոլանում են ժողովրդի կյանքի առանձնահատկությունները, կու-

---

Ու ժնգըլով, թավլամեխով ղայիմացրեց,
Որ կամ գեյը ուտի նրան, ինքը պրծնի
Կամ թե շունը իրան գլուխը ինքը պահի։
Գիշերվա մեկ վախտին հանկարծ հարամին
Եկը, տամ լավ սրած, էկավ շան վրա պրծավ,
Չպահներ իր գլուխը, գեյն իրան կուտեր,
Հենց վրա թռավ, որ շանը խեղդեր,
Շունն իր վախենալը լավ մտածելով,
Էնպես վրա հասավ, ու բռնեց շուտով
Գեյի բոգիցը ու գցրեց տակը,
Որ նրա հոգին թռավ կատիկը։
Էնպես թաթլըկումն նա բռնած ունեը,
Գեյի հո վաղուց ջանը հանել էր։
Որ տերն, առավոտն էկավ, թե տեսնի,
Շանը տատկել ա, թե գեա շանչ ունի,
Հենց խեղդած գեյի ջամդաքը հանեց,
Ու ձեռը քսելով շանը, գեն քցեց.
Շանը գոզալով մեկ գաղ ու կես էլ
Նոր ծլունց էլավ, է՛նքան էր վախել.
Մարդի աչք մեկ որ բանից ա՛հ է ընկնում,
Իրան համարը էլ եղ միտք չանում.
Էնպես է կարծում, թե գիմացի մարդն
Ասլան ա, իրան սաղ սաղ կուտի ջալդ։
(Խ. Աբովյան, Նախաշավիղ, էջ 89—90, Թիֆլիս, 1838)։

տուրան, քաղաքական վիճակը, որը գտնվում է անընդհատ զարգացման ու փոխազդեցությունների մեջ, բացատրականում Աբովյանն առաջարկում է, ի հակադրություն գրաբարի, որն արդեն դադարել էր գոյություն ունենալուց և փաստորեն արգելակում էր ժողովրդի կուլտուրական առաջընթացին, աշխարհաբարը դարձնել գրականության ու դպրոցի լեզու։

Աբովյանը խստորեն քննադատում է հայ հոգևորականների մատենագրական գործունեությունը, հոգևորականներ, որոնք հալածել են աշխարհիկ տրամադրություններն ու գրականությունը, չեն ստեղծել ժամանակի ոգուն ու պահանջներին համապատասխան երկեր. «Չափից շատ բարձր կարծիք ունենալով իրենց դասի առավելությունների մասին,— ասում է նա,— հոգևորականները գրել և մշակել են այնպիսի բաներ, որ ոչ մի կապ չունի ժողովրդի և ժամանակի ոգու հետ։ Նրանց ամբողջ հոգևոր գործունեության ուղն ու ծուծը կազմում են աստվածաբանական մտքերը, նույնիսկ պատմության գրքերում կամ այլ բովանդակության երկերում նրանք ամեն ինչ փորձում են վերածել աստվածաբանության»[1]։ Այս նույն միտքն էր պաշտպանում ու հիմնավորում «Վերք Հայաստանի» հառաջաբանում Աբովյանը, երբ գրում էր, թե մինչև այժմ եղած մատենագրության մեջ չկան մարդու սիրտ-գրավող և կենսական թեմաներով գրված երկեր, որ «ինչ կա՝ եկեղեցու վրա ա, Աստծու ու սրբերի» (3)։

Բարձր գնահատելով ժողովրդական բանահյուսությունը և նրա դերը հայ նոր գրականության զարգացման գործում, բացատրականում Աբովյանը անհրաժեշտ է գտնում հավաքել, հրատարակել ու ուսումնասիրել այն, «Գրականության տեսակետից առհասարակ մի թանկագին գանձ կլիներ, եթե մարդ ազատ ժամանակ ու միջոցներ ունենար ի մի հավաքելու այն բոլոր երգերը, պատմվածքները, անեկդոտները և ասաց-

---

1 ԽԱ, ԵԼԺ, V, 46։

վածքները, որոնք տարածված են... հասարակ ժողովրդի մեջ»[1]։ Այս նույն ցանկությունն էր արտահայտում նա, երբ «Վերք Հայաստանիում» գրում էր, թե «մուրազս հենց էն ա էլել՝ որ... գիշեր ցերեկ ընկնիմ գեղե գեղ ու մեր ազգի արած բաները հավաքեմ, գրեմ» (6), երբ մեծարում էր աշուղներ՝ Քյոր-Օղլուն և Քեշիշ-Օղլուն։

«Նախաշավիղի» բացատրականում իրավացիորեն նկատելով, որ հայոց լեզվի քերականական կառուցվածքի ու բառային կազմի կրած լուրջ փոփոխությունները հետևանք են դարեր շարունակ թյուրքական ժողովուրդների ազդեցության տակ լինելու, և արտաքին ճնշման տակ կռացած լինելու, ուսման և ամենատարրական իմացություններից զրկված լինելու, Աբովյանը առաջարկում է լեզուն մաքրել օտար բառերից ու դարձվածքներից. «Կարելի է լեզուն մաքրել դրանցից և լեզվին այնպիսի հաստատուն տեսք տալ, որ գրաբարից շատ չշեղվի, որ հասարակ մարդու համար իսկ հասկանալի մնա»[2]։ Նույնն էր ասում Աբովյանը, երբ «Վերք Հայաստանիում» գրում էր. «Մեր բախտիցը ժամանակն էնպես ծռվել էր մինչև հիմա, որ մարդ իր գլուխը չէ՛ր կարում պահել, ո՞ւր մնա լեզվի դարդը քաշել։ Էս ա պատճառը՝ որ մեր նոր լեզվի կեսը Թուրքի ու Պարսից բառ ա։ Բայց սրա դեղն էլ հեշտ ա, քիչ քիչ կարելի ա խոսակել...» (64)։

Աբովյանի կյանքի ու գործունեության 1839—1840 թվերը նմանապես կարևոր փաստեր են տալիս «Վերք Հայաստանիի» ստեղծագործման պատմության ուսումնասիրության համար։ Նախորդ տարիների նման, այս թվերին էլ նա ստեղծում է բազմաթիվ ինքնուրույն ու թարգմանական գործեր՝ աշխարհաբար լեզվով, գրում է առակներ, զրույցներ, փոքրիկ պատմություններ, որոնց մի մասը հետագայում հավաքվեց «Պա-

[1] ԽԱ, ԵԺ, II, 47։

[2] Նույն տեղում, էջ 48։

բաց վախտի խաղալիքի» մեջ, մի մասն էլ կարճ ու զվարճալի պատմությունների հավաքածու տետրակում: Անուրանալի է այդ երկերի դերը գրականությունը ժողովրդին մոտեցնելու և նրա մեջ ժողովրդական շունչ ու հոգի ներարկելու գործում: Խոսելով «Վերք Հայաստանի» ուղղությամբ տարիներ շարունակ կատարած իր նախապատրաստական աշխատանքների, Աղասու պատմությունը գրելու վճռին գալուց հետո իրեն պաշարած երկմտանքի մասին, Աբովյանը վկայում է. «...Իմ ունեցած ամենամեծ դժվարությունը կապված էր աշխարհաբար լեզվի հետ: Այս ոճով, մինչև հիմա այս ձևով (վիպական ժանր—Գ. Հ.), ոչ մի վանկ չէր գրված, առավել ևս՝ տպագրված: Ինչպե՞ս պետք է ես առաջին անգամ այն բանաստեղծորեն մշակեի: Մի որոշ ժամանակ ես գրում էի «բազմաթիվ չափածո հեքիաթներ և առակներ՝ ժողովրդի բերանից առնված: Այդ փորձերը դուր էին գալիս շատերին, անգամ մի քանի գրող, հիմար կիսատ-պռատ գիտնականների...»[1]: 1839—40 թվերին գրած չափածո գրույցները, հեքիաթներն ու առակները, այսպիսով, հաղթահարում էին գեղարվեստական մեծածավալ երկ ստեղծելու դժվարությունները, նախ և առաջ լեզվի տեսակետից: Բայց ոչ միայն լեզվի: Նրանց արվեստը շատ է հիշեցնում ժողովրդական հեքիաթի ու առակի կառուցվածքն ու հնարները, ինչպես հայտնի է՝ «Վերք Հայաստանին» նույնպես հարուստ է ժողովրդական բանահյուսության հնարների օգտագործումով: Նրանց գաղափարական բովանդակության առանցքը արդիական խնդիրներն են և լուսավորական գաղափարների մասսայականացումը: Իրենց պատմական կեղևով հանդերձ այդպիսին են նաև «Վերք Հայաստանի» շատ գաղափարներ:

Վերցնենք այդ գործերից ամենաբնորոշը՝ «Հազարփեշեն» պոեմը, որի հիմնական տենդենցը եվրոպական քաղաքակրթության հոռի կողմերի և ցարական բյուրոկրատիայի քննա-

[1] ԱԵԺ № 65:

դատությունն է. նույն բանը կա նաև «Վերք Հայաստանիի» մեջ։ «Հազարփեշենը» պոեմում անդրադառնալով անդրկովկասյան ժողովուրդների կյանքին ու կենցաղին Աբովյանն առանձնապես սիրով է նկարագրել հասարակ մարդկանց բնավորության այն գծերը՝ ազնվություն, հյուրասիրություն, անհիշաչարություն, որ աղճատվում էին եվրոպական իրականության մեջ։ Նույնը տեսնում ենք «Վերք Հայաստանիի» մեջ։ Հայ գյուղացու կյանքի ու կենցաղի դրական կողմերի գովատումն այստեղ ևս մասամբ եվրոպական քաղաքակրթությանը հակադրվելու նպատակով է արված։ «Հազարփեշենը» պոեմում Աբովյանը կոչ է անում անդրկովկասյան ժողովուրդներին՝ համախմբել իրենց ուժերը, թույլ չտալ, որ ցարական պաշտոնեությունը սանձահարի նրանց իրավունքները, նույն քարոզը կա նաև «Վերք Հայաստանիում»։ Դառնանք «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուին։ Այստեղ ևս կարելի է «Վերք Հայաստանիի» գաղափարներին համահունչ շատ բան ցույց տալ՝ ժողովրդին հասկանալի լեզվով գրելու անհրաժեշտության գիտակցում, սոցիալական բողոքի արտահայտություններ, կղերա-ավատական գաղափարների քննադատություն, կենցաղային արատների մերկացում և այլն։

«Վերք Հայաստանի» վեպին նախորդող Աբովյանի երկերից արժե անդրադառնալ նաև «Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին» («Ein Blick über das Leben der in Tiflis wohnenden Armenier und ihrer Hochzeitsgebrauche insbesondere») գերմաներեն գրական-ազգագրական ուսումնասիրությանը։

Նպատակ ունենալով պատկերացում տալ ժողովրդի կյանքի, մտածելակերպի և տնտեսին-ընտանեկան հարաբերությունների մասին, Աբովյանն այստեղ վերցրել է հայ ժողովրդի կենցաղից մի բնագավառ և այն ցուցադրել ամենայն մանրամասնություններով։ «Մեզ մոտ վեպեր չեն գրում,— ասում

է նա,— իսկ եթե ուզում ես մի ինքնատիպ բան ունենալ, ապա պետք ասել այն, ինչ որ կա, բայց ոչ հնարել[1]։

Այս երկում Աբովյանն, իրար հանդիպեցնելով ժողովրդական խավերի ներկայացուցիչներին, նրանց բերանով, քննադատում է վաշխառությունը, մատնանշում դրամի գործած ավերածությունները բարքերի ու ընտանեկան-կենցաղային հարաբերությունների մեջ։ Նրա հերոսները թունոտ խոսքեր են ասում հոգևորականների հասցեին, որոնք առևտրական վաշխառուների նման գործում են, հարստահարում և կրոնական սրբությունները ոտնահարում։ Նրա ծաղրի սլաքները ծակում են նաև ցարական աստիճանավորությանը։ Մատնանշած բոլոր հարցերում Աբովյանի բնորոշումներն ու արտահայտությունները գրեթե բառացի համընկնում են «Վերք Հայաստանի» հետ։ Բերում ենք այդ շատ համընկնումներից մի քանիսը կողք-կողքի։

«Ակնարկ...»

«Ո՛չ հավատ է մնացել, ո՛չ սեր, ո՛չ հույս։ Մարդու կոպեկով են ծախում... Երեխան հորը չի ճանաչում։ Կովը բարձրացնում են, որ տեսնեն տակին հորթ կա՞... Սատկած ձիու նալի են ման գալիս, որ քաշեն...»։ Կամ. «Թագավորականությունն այնքան ընկել է, սերն ու համերաշխությունը միանգամայն չքացել... գերիշխում են ապերախտությունը, խարդախությունը... Հարազատ եղբայրներն անգամ միմյանց ոչնչացնել են աշխատում, հայրերն ու որդիները միմյանց կործանել ուզում»։

«Վերք Հայաստանի»

«Է՛յ գիդի ժամանակ հա. ո՞վ էր տեսել, կամ լսել... էսպես բաներ... Հըմիկ կովը վեր են քաշում՝ որ տեսնին՝ թե տակին յարար ֆորթ կա՞, թե չէ։ Սատկած ձիու նալի են ման գալիս, էլ ո՞ւմ ասես գարդը։ Հերը որդին չի՛ ճանաչում, որդին՝ հերը, ախպերն՝ ախպորը, լավ ա՝ որ քարը քարի վրա կանգնած մնում ա» (23), և այլն։

[1] ԱԵԺ № 39։ Հենվելով սույն երկի՝ «Մի՛ տաս տարի առաջ Թիֆլիսը տեսել է...» արտահայտության վրա, ենթադրում ենք, որ այն գրված է մոտավորապես 1840 թվին։

«...Ո՞չ երեսներին ամոթ կա, ո՞չ էլ սրտներում պատվի զգացում։ Ճների համար չափչփում են գանձ-գյուղ, հենց որ մի տեղ հոտ առան, խսկույն կկպչեն, գուքը որ փակեն, յուսամասից նրա կճոչեն։ Ամեն մեկը յոթ մարդու չափ է ուտում. գրասդ է, որ ասում են. «Մար ու ձոր, ամբարների փոր» (հիանալի բնութագիր)։ Ճների չափ շատացել են ու քիչ է մնում, մարդ ուտեն։ Թող յզրանց ձեռնադրողի աչք չորանա...»։

...«Մեր արքեպիսկոպոսն[1] էլ հո հոգու փրկիչ չէ. խղճալան բիչ գրչուծ է։ Փողերը գիգում է խալիչաների տակ, փոնչիներին էլ ամբակք է չինում... Էնքան է չաղացել, որ յոթ եզ էլ նրա չափ միս չեն ունենա։ Երբ խեղճ ազգաները երևում են նրա դռանը, փնտով ու ուշանալով ետ է բշում։ Դրանց ձեռքն է պակաս, որ մեր ողնուծուծը ծծում, մեր միսն ուտում են։ Մակ ատակարի պես, որ ատա տարի էլ լցնես, էլի կասեն. «Բերեք, ավեք», ու դարձյալ չեն լցվի։ Ի՞նչ են ավել մեզ, որ չեն կարողանում ետ վերցնել։ Տարեկան մի անգամ պատարագ է անում, ամենացած չունեցածդ պիտի բերես տաս։ Զինգալին գրպանն է գնում, համախ մի քանի անգամ դողդողալով հաշվում... Երեկ էլ մի ցամաքած կին էր մնացել. մեկ, երկ «Ամենք հո ամենք, իլյան՞իմ մեր տեր Մարկոսը, որ առավոտից մինչև բերանի փրփուրն ուտին բյած, փոխանը վեր քաշելով... քաչերը չափչփելով. մեկ մեռել կամ կնունք, չիլափիլավ, կամ մատաղ պատահելիս՝ մեկ էլ էն են անեում, որ հաղալով, փռշտալով՝ ատին. գլխին անեցով՝ գանները ցարգելով, կոտրատելով՝ ափալ թափալ նրա բեհում. հաղեաս հրեշտակի պես էկավ թռնդրի դրուզը կրաքեց. խրախ խրան նստեց, աղաց մազա ուզեց ու հենց խմանա՝ թե մեռելի կեն հոգին խերն ա ուզում հանել. Դեռ պատանք չկարած, չլվացած, շատով թաղամեկերն ու կողոպուտն ա ուզում... Մեկ հացկերույթ ըլելիս՝ ասոփրի գլխին խերն ա նստում. հենց մարդի զզար հաց ուտում, տեր հոռ անելիս, փորը գլխյոց բռնում... Մար ու ձոր, ամբարների փոր. ի՞նչ զորդ են ասել՝ է՞... քիչ ա մնացել՝ որ մեզ ողջ ողջ ուտեն...» (14)։

«Ի՞նչ են ավել, որ մեզանից չե՞ն կարում եդ առնել... մեկ հոտ ու չհոտ պատահելիս հո՝ ուզում են՝ մեր տանը քանդեն։ Տո թե տասը կարճ ա, չի՞ հանում, փո՞ղն ու երկարացնում... Քյահ՞յան ձեռն փրա խրանք են նստում, խաս ու զումաչ խրանց հագին ա. զարբյու փլյավ ու հազար տեսակ անուշ կերակուրներ, խմիչք խրանք գարծ ածում.

[1] Խոսքը Կարապետ Արքեպիսկոպոսի մասին է, որ Վրաստանի Հայոց առաջնորդն էր (1837—47 թթ.)։

յնու, երբ և արքեպիսկոպոսը վրա հասավ։ Դավազանը ձեռքին, վեղարը գլխին՝ մինչև աչքերը քաշած, կամաց կամաց ներս մտավ։ Երբ աչքերը գործնում է, քիչ է մնում փախչի հավքեր։ Հագած գլուխը՝ գեռ սարքավոր հայրը էլ տասում են, կարծես երկնքից ընկած լինի։ Թող դրանք իրենց սրբությունը իրենց գլուխը լցնեն, աշխարհը նրանցով չինվել է, նրանցով էլ պիտի քանդվի։ Երբ սևագլխի (հոգևորականի) չեմ տեսնում, կարծես սատանայի եմ տեսնում։ Դրանց բերանից լույս է թափվում, իսկ արտերում օձեր են բույն դրել։ Վա՜յ նրան, ով էր անապատականների ձեռքը կընկնի։ Ով հոգին էլ ծախելու լինի, էլ դրանց ձեռքից չի պրծնի։ Դրանց ձեռքին է և՛ դժոխքի, և՛ արքայության բանալին։ Մեղսավոր կհոգին, ուզենան՝ բաց կթողնեն,—ո՞վ կհամարձակվի նրանց ձեռքը բռնել։

«Վրացին կամ հայը, եթե ոչինչ չունի, ապա չի խմում, կամ եթե խմի էլ, նա հարբած չէ, այլ զվարթ ու կայտառ։ Երբեք չեք տեսնի այստեղ, նույնիսկ հասարակ մարդկանց մեջ, որ փողոցում պառկած լինեն, բայց ընդհակառակը, որքան հաճախակի կպատահեք քաղաքակիրթ երկրներում այնպիսի մարդկանց, որոնք չգիտեն նույնիսկ, թե որտեղ է իրենց գլուխը և ոտքերը՝ իրենց կոշիկները։ Ես այդ բանն ասում եմ ի զգաստության այն հիրավի մեծա-

քանդող կուչած ընկած վախից՝ ասում են՝ թե գիժից վեր ընկան... Տեր Աստված փող պետք է տամ, որ հոգիս դրախտը գնա՜... Հազար որ նրանց տանը պահես, պատիվ տա՛ս, մեկ որ ատամները ու ընկնում, մեկ սատոր ջրի էլ չարժող չե՞ն անում...» (24—25)։

Խաթա, բալա ու է՛լի. մեկ որ յախեն ձեռ ու ընկնում, էլ չեն ուզում, թե պրծան... աշխարհքս կարգացուցիչն ու շինիչ, կարգացուցիչն էլ պիտի քանդվի։ Իմ դուշմանս նրանց ձեռը չընկնի, սաղ սաղ կուտեն մարդի... (13)։

Նրա՞նց է տված երկնքի ու երկրի իշխանությունը՝ ո՞ր արքայության դուռը մեզ համար բանան, կամ փակեն» (15) և այլն։

«Հոգը չիմանա, թե հայաստանցիք ուրիշ ազգերի նման՝ հենց էն ա՛ գինի անմենքս, ուզում են հարբեր տան, կամ ինչպես քաղաքի Դավիթաուլյան սարքը գետ շահած մարդ, գինով ասմբրին որ տեսնում են, երեսներին խաչ են հանում, կամ չիքրախանումը ընում, կամ թուր ու սերթնոկ գրավ դնում, կամ թե չէ գինում, ձեռամ վեր ընկնում, երազ տեսնում, գլուխ տալիս։ Ճանաչած մե՛ տղաքն, էս պակասությունը չունեն... որովհետև աշխար չեն տեսել.... ա՛շ

մեր եվրոպացիների, որոնք անխղճորեն հարձակվում են իմ հայրենակիցների վրա, առանց նախապես մտածելու նրա վրա, թե ինչ է կատարվում իրենց հայրենիքում»[1]։

բարոյականության ձեն չունի, ո՛չ կրոնագիտություն, որ գինու գինը լավ իմանան ու երկու թաս խմելիս՝ տա ու գլուխ կորցնեն ու աներահարված՝ երկինքը համբառնան։ Չէ՛, չէ՛ նրանք շատ բարի են, ու էլած փառք չեն տալիս խմիչքի.... Մեկ Հայ չես տեսնիլ քո փողոցը հարբած, ցեխումը թավալ տալիս, թեկուզ հինգ թունգի էլ խմի... (34)։

«Վերք Հայաստանի» և նրանից առաջ գրված գրականազգագրական երկի հատվածների համադրումը բերում է այն եզրակացության, որ հեղինակի մոտ ապագա վեպի ստեղծագործումը վերջին տարիներին ավելի քան հասունանում էր։ Աբովյանն արդեն առանձնացնում էր վեպի համար նախատիպեր ևս։ Տեր-Մարկոսի՝ հայ ագահ, ընչաքաղց հոգևորականի նախատիպն, օրինակ, հիմնականում համընկնում է Վրաստանի թեմի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսի։ Ժամանակակիցներին քաջ ծանոթ էին վերջինի ընչաքաղցությունը, կաշառակերությունը, անմարդկային արարքները, հոգևոր կարգի ոտնահարումը։ 40-ական թվականներին Գալուստ Շիրմազանյանը դրանք դարձրեց կատակերգության նյութ։ Ծանո՞թ էր այդ երկը Աբովյանին, թե՝ ոչ, կարևոր չէ՛։ Աբովյանի քննադատական դիտողությունները, Կարապետ արքեպիսկոպոսի մասին, Շիրմազանյանից առաջ են արված և նրան տիպական բնավորություն դարձնելու առաջնությունը Աբովյանինն է. ինչպես պարզվում է, պարսիկների տիրապետության շրջանում, Քանաքեռ գյուղում, Տեր Մարկոս անունով ապրել է մի քահանա[2]։ Պատմականությանը դեմ չգնալու

[1] ԱԺՄ № 38, թարգմանել է Կ. Աբովյանը։

[2] Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթապանակ № 54, վավերագիր № 321։ Քանաքեռցի Տեր Մարկոսի մուրհակը՝ Գեորգ վարդապետին, 1826 թ. հունիսի 5։

համար Աբովյանը վեպի հերոսին կոչել է վերջինիս անունով. Թեպետ կերպարը գծելիս հիմնականում հետևել է Կարապետ արքեպիսկոպոսի կյանքին ու գործունեությանը։

Ժամանակի գրական կյանքը, հասարակական-քաղաքական անցուդարձերը, հեղինակի անձնական կենսագրության այլևայլ դեպքերը նույնպես նպաստում էին «Վերք Հայաստանի» ստեղծագործման արագացմանը։

Գրվում էին աշխարհիկ տրամադրությամբ բանաստեղծություններ, պարսկա-թյուրքական հարստահարությունների ու բռնությունների դեմ ըմբոստացած հայ ժողովրդի հերոս զավակների սխրագործությունները գովերգող պատմական երգեր։ Նկատի ունենք Շուշավերցի Ռոստոմ Աբովյանի մասին հորինված երգը[1], Ասրի-Բեգի և Գիրիի մասին եղած զրույցը, որ հետագայում վերամշակեց Գ. Շերմազանյանը[2]։ Կային Ալամդարյանի «Գարուն» և «Երկու ձեռին երկու մոմ» բանաստեղծությունները՝ հայ նոր գրականության առաջին ծիծեռնակները։ Աշխարհաբար էին գրում Ներսիսյան դպրոցի որոշ սաներ, կար աշուղական հարուստ պոեզիա և այլն։ Այս բոլորը, հարկավ, «Վերք Հայաստանիի» համար դեր ու նշանակություն ունեին։ Բայց չմոռանանք, որ իշխող գաղափարախոսությունն ու գրական ուղղությունները՝ կղերա-ավատական աշխարհայեցողությունը, կլասիցիստական անարյուն արվեստը, կրոնական թեմաները չէին հաղթահարված։ Այդ գործը մնում էր «Վերք Հայաստանիին»։

Հասարակական կյանքում ևս Աբովյանը տեսնում էր ոգևորող բաներ։ Ֆեոդալիզմի հիմքերն էին խարխլում նրա ընդերքում սաղմնավորվող նոր, առաջավոր ուժերը... Բայց դրանք էլ դեռ թույլ ու երերուն էին։ Նայելով բուն իրականությանը,

---

[1] Քնար Հայկական, խմբագրեց Մ. Մինասարյանց, Ս. Պետերբուրգ, 1868, էջ 505—506։

[2] Ասում են, թե Գ. Շերմազանյանը դեռ 1820-ական թվերին Ասրի Բեգի և Գիրիի մասին նաև վեպ է գրել, որ հետագայում այրվել է...

Արզումանը չէր կարող չնկատել, որ վատ էր հայ աշխատավորության վիճակը. նրանք ճնշվում էին ցարական աստիճանավորներից ու տեղական հարստահարիչներից։ Ինչպես ժամանակակիցներն են պատմում, հայկական մարզի կառավարիչ Բեհբութովը իր անփառունակ գործունեության տարիներին (1830—1838 թթ.) ժողովրդին ճնշում ու թալանում էր ավելի դաժան, քան որևէ փաշա կամ սարդար։ Նրան հաջորդել է գեներալ Գոլովինը։ Սրա օրով էլ կեղեքումներին վերջ չկար։ Արզումանը վկայում է, որ ժողովրդի վիճակը համեմատաբար լավ էր Գևորգ Սմբատյանի կարճատև կառավարչության շրջանում, բայց նա էլ հեռացվում է պաշտոնից։ Հայտնի է, որ պարսկական լծից Արևելյան Հայաստանն ազատագրվելու ժամանակաշրջանում ժողովրդի մեջ տրամադրություն էր առաջ եկել Ռուսաստանի հովանավորության տակ հայկական պետականությունը վերականգնելու մասին, բայց այդ էլ ի դերև ելավ։ 1840 թվի ապրիլի 10-ի օրենքով վերացվեց Հայկական մարզը, իր հետ խորտակելով շատերի երազանքը։ Ռազմական դիկտատուրային փոխարինեց պաշտոնեությունը։ Սահմանափակվում էին հայ եկեղեցու իրավունքները (Положение-ի համաձայն), ցարական կառավարությունը ծայրամասերում իր իշխանությունը պահելու համար մեծ արտոնություններ էր տալիս տեղական հողատերերին։ Այսպիսի պայմաններում Արզումանը կորցնում էր իր դեմոկրատական-լուսավորական ծրագրերն իրականացնելու հույսերը։

Մռայլ էին նաև Արզումանի անձնական-հասարակական գործունեության հեռանկարները։ Նրան մերժեցին Կազանի համալսարանի հայոց լեզվի ամբիոնը, Գիտությունների ակադեմիան մերժեց նրա առաջարկությունը՝ աշխարհաբարը դպրոցները մտցնելու մասին։ Արգելվեց «Նախաշավիղի» գործածությունը և գրքի տպագիր օրինակները դատապարտվե-

---

[1] Wagner, Reise nach dem Ararat..., s. 81.

ցին աֆոշխների ու փտած հավիտենական զոհ դառնալու[1]։ Լուսավորական արգելքները հնարավոր չէին դարձնում նրա համառավոր պանսիոնի արդյունք ու անկաշկանդ գործունեությունը, Աբովյանը չէր կարող համբերել նաև ցարական սատրապանավորներից կրած վիրավորանքներին։

Դեռ տարիներ առաջ Աբովյանը երդվել էր՝ ամեն ինչ զոհաբերել խավարի ու բռնության ճնշումներից հայ ժողովրդին ազատագրելու գործին. «Էս ա տասնը հինգ տարի ա, որ տանից, տեղից, սիրելուց, բարեկամից, պատվից, փառքից ձեռք եմ վերցրել, հեռացել, աշխարքե աշխար ընկել, գլուխս քարե քար տվել, որ իմ ազգին պետքը գամ, մեկ հարիր ազգաս երեխայի ձեռից բռնեմ, ինչ գիտեմ, նրանց սովորցնեմ, նրանց սիրտն ու հոգին բռնամ, իմ սրտիս դարդերը բոլոր մեջն ածեմ, ազգին ինչ դեղ ա հարկավոր, նրանց տամ, գեղեր, քաղաքներ ուղարկեմ, որ գնան, իրանց բարի սերմը մեր բարի ազգի բարի երեխեքանց սրտումը ցանեն, նրանց էրված սիրտը հովացնեն, բերաններր լեղու գնեն, արտասունքը զլաթ, որ հանումը նրանց գլխին չտա, ինչպես մինչև էս օր տվել են, ու հետո, ախ՝ հետո գերեզմանը մտնեմ, հետո աչքս խփեմ, հոգիս հովանա, մարմինս դինջանա։ Էս ա իմ մուրադը... Էս օր էլ որ միտք եմ անում, թե ես հաց ունեյիս, տաք տեղը նստեյիս, հազարավոր հայ ո՛չ հաց ունին, որ ուտեն, ո՛չ ջուր ունին, որ տաքանան, սիրտս պատռվում ա, օրս խավարում»[2]։ Հասկանալի է, որ այսպիսի նպատակներ ու ծրագրեր ունեցող ազնիվ ու անկաշառ հայրենասերը չէր կարող նման պայմաններում հաշտվողական դիրք բռնել։ Նա կանգնած էր իրականության և իր երազանքների հակասության առաջ և կարծես ելք չէր գտնում։ Աբովյանն ապրում է հոգեկան խռովահույզ վիճակ։ «Էնպես բաները մտածելով, օրս ու

---

[1] ԽԱ, ԵԼԺ, V, 188։

[2] ԽԱ, ԵԼԺ, IV, 45։

ուժերս մաշվել էր։ Շատ անգամ ուզում էի իմ գլուխս մահու տամ։ Չէի իմանում՝ թե սրա չարին ի՞նչ կըլի։ Թո՛ղ լսողը չհավատա, ամա էս ցավն էնպես էր սիրտս առել, որ շատ անգամ գժվածի պես ընկնում էի սար ու ձոր, ման գալիս, մտածում, էլ եդ սիրտս լիքը տուն գալիս» (3)։ Եղել են դեպքեր, երբ հոգեկան ուժեղ լարվածությունը նրան անկողին է գցել[1]։

Եվ այս ներքին պայքարի պահերին է, որ կրկին փայլատակում է նրա գլխում Աղասու հերոսական կերպարը։ Աբովյանն հիշում է պարսկական լծի դաժան տարիները, իր ժողովրդի օրհասը և նրա փրկությունը ռուս մեծ ժողովրդի ձեռքով։ Նրան ոգևորում է ապագան, այն, որ իր ցանած սերմերը պիտի արգասավորվեն հայ երիտասարդության սրտերում և նրանցից պիտի մեծապես օգտվի ժողովուրդը։

Համոզված լինելով, որ ամենահարմարը մատչելի անցյալի պատմական իրադարձությունների վերարտադրման միջոցով արդիական հարցերը արծարծելն է, նա հաստատ վճռում է իր խոհերն ու զգացումները շաղկապելով իր տեսածի ու լսածի հետ տալ գրին՝ մերկացնել հայկական կյանքի խոցերը և ժողովրդին բուժել այն վերքերից, որ նա ստացել է թյուրք ու պարսիկ զավթիչներից, տեղական հարստահարիչներից, անարգել հոգևորականությունից, վերջապես ցարական պաշտոնեությունից. համախմբել ժողովրդի ուժերը և վառել նրա սրտում ըմբոստության հուրը ընդդեմ բռնության, միաժամանակ արթուն պահելով երախտագիտության զգացումը Ռուսաստանի հանդեպ, որը եթե չլիներ, կկործանվեր հայ ժողովուրդը. հասցնել, վերջապես, հայ ժողովրդին՝ նրա կուլտուրական ու տնտեսական վերածնունդն իրականացնելու համար կազմած իր ծրագրերը։

---

[1] Վրացական ՍՍՌ Կենտրոնական Պետական պատմական արխիվ, ֆոնդ 424, գործ № 36, թերթ 190։

Այս մտորումների մասին Աբովյանը հաղորդում է գաղափարակիցներին, որոնք ոգևորում են նրան։ Եվ այդ քաջալերանքից գոտեպնդված ու կրակված նա ձեռնարկում է իր անմահ երկի՝ «Վերք Հայաստանի, ողբ հայրենասիրի» պատմավեպի ստեղծագործմանը՝ անկեղծ ոգևորությամբ ու գերմարդկային լարվածությամբ։

«ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ՎԱՐԻԱՆՏՆԵՐԸ

ա) ԳՐՈՒԹՅԱՆ ԹՎԱԿԱՆԸ[1]

«Վերք Հայաստանիի» գրության թվականի հարցում ժամանակակից արովյանագետների մեծ մասը միաձայն տեսակետի վրա է կանգնած։ Համարյա բոլորն էլ ընդունում են, որ այն գրվել է 1840 թվին և որպես հավաստի կռվան վկայակոչում վեպի ձեռագիր անվանաթերթը։ Այդ շարքից տարբերվում են հանգուցյալ բանասեր Ն. Ճաղաղիգը, Պրոֆ. Գ. Աբովը և Ռ. Զարյանը։

Պրոֆ. Գ. Աբովի համաձայն «Վերք Հայաստանին» գրվել է 1836 թվից սկսած և ավարտվել՝ 1840 թվին. այս կարծիքի համար նա ոչ մի փաստարկ չի բերել[2]։ Ըստ Ն. Ճաղաղիգի՝ Աբովյանը իր վեպը սկսել է գրել 1838 թվից և ավարտել՝ 1840-ին, իսկ ըստ Ռ. Զարյանի՝ 1837 թվից և ավարտել դարձյալ՝ 1840 թվին[3]։ Վերջին երկուսի կարծիքը՝ Գ. Աբովյանի հա-

---

[1] «Վերք Հայաստանիի» գրության թվականի որոշումը բանասիրական նեղ հարց չէ։ Դա Աբովյանի գրական-հասարակական հայացքների ստեղծագործական զարգացման կարևոր էտապներից մեկը որոշելու հարցն է։ Այլ կերպ պիտի մեկնաբանել, օրինակ, Աբովյանի ուսումնառությունը, կամ հայ ժողովրդի տնտեսական-կուլտուրական վիճակը բարելավելու ուղիների մասին ունեցած նրա պատկերացումները մինչև «Վերք Հայաստանին» և հետագայում։

[2] Г. Абов, Хачатур Абовян, Ереван, 1948, стр. 97 и 145.

[3] Ն. Ճաղաղիգ, Խաչատուր Աբովյանի կենսագրությունը, Երևան, 1945, էջ 105, նաև 61, 98—99, 101—102։ Ռ. Զարյան, Աբովյանի կյանքը, Երև-



«Վերք Հայաստանի» վերջին վարիանտի
(մաքրագիր) անվանաթերթը

շերն են, որ ասված է. «Վարժապետս 1838 թվից սկսած մեզ մոտ կարդում էր Աղասու պատմությունը՝ հատված-հատված։ Թե ո՞րքան լրիվ էր այն ժամանակ, չեմ կարող ասել. բայց մենք սիրով լսում, սրանից ոգևորվում էինք»[1]։ Հայտնի է, որ Աբովյանը, մինչև «Վերք Հայաստանին», գրել է Աղասու մասին բանաստեղծություններ, որոնցից մեկը մինչև իսկ անդավորված է տպագիր «Նախաշավիղում»։ Աբովյանի խոսքերը կարող էին նրանց վերաբերել, բայց ո՛չ երբեք հանրահայտ «Վերք Հայաստանիին»։

Ինչպես վերևի երեք տեսակետները, այնպես և աբովյանագետների մնացած մասի հավաստի համարած 1840 թվականը չպիտի ընդունենք, որովհետև փաստերը դեմ են խոսում նրանց, որովհետև բոլոր աբովյանագետների համար ելման կամ հանգման կետ հանդիսացող «Վերք Հայաստանիի» ձեռագիր անվանաթերթի վրա եղած թվականը հավաստի չէ։ Աբովյանի բնորոշ ձեռագրով գրված է միայն վերի բուն խորագիրը. «Վէրք Հայաստանի, ողբ հայրենասիրի: Պատմական վէպ: Բաժանեալ յերիս մասունս: Ի Խ. Աբովեանէ, վերատեսչէ արքունական, նահանգական ուսումնարանին՝ որ ի Տըփխիս»: Սրան հաջորդող՝ «ի 1840 Թիֆլիզ» տողը գրված է այլ ձեռքով և կասկածելի է։ Անվանաթերթի (ձեռագրի) այս և վերևի տողերի ուշադիր համեմատությունը (հնագրական առումով) հանգեցնում է հետևյալին։ Տարբեր ձեռքով և տարբեր ժամանակներում են գրված դրանք, ընդ որում առաջին տողերը Աբովյանին են պատկանում, իսկ վերջին տողը նրա ձեռագիրը չէ։ Միևնույն տեղանունը անվանաթերթի վրա օգտագործված է երկու անգամ՝ Տփխիս և Թիֆլիզ ձևերով, պարզ է, որ նույն մարդը 2—3 տողի մեջ այդպիսի հակասության

վան, 1940, էջ 92—93։ Նաև Խ. Աբովյան, Ընտիր երկեր, հ. I, Երևան, 1939, էջեր 333—4։

[1] Ժամանակակիցները Աբովյանի մասին... էջ 113։

չէր թույլ տա։ Վերջապես, թվականը՝ 1840, գրված է նախկին ջնջված (թվականի) տեղը, ընդ որում վերջին 0 (զրոն) սարքված է մատիտով՝ հակառակ նրա, որ 184 ...գծված է եղել խունացած թանաքով։ Ակնհայտ է, որ գործ ունենք հեղինակային անվանաթերթի վրա եղած թվականի հետագա հարմարեցման փաստի հետ, որը և թյուրիմացության մեջ գցելով շատերին, հարկադրել է պնդելու այն սխալ կարծիքը, իբրև «Վերք Հայաստանիի» վրա հեղինակը սեփական ձեռքով նշանակել է 1840 թվականը։

Իսկ ո՞ր թվին Աբովյանը ձեռնարկեց «Վերք Հայաստանիի» ստեղծագործմանը։

Պահպանվել է «Վերք Հայաստանիի» սևագիրը, որի շատ էջեր, երբեմն եղել են Թիֆլիսի գավառական դպրոցի գործերի շապիկներ։ Նրանց վրա կան թվականներ՝ 1838, 1839, 1840, վերջապես՝ 1841։ Հատկապես վերջին թվականը հիմք է տալիս եզրակացնելու, որ Աբովյանի վեպը 1841 թվից առաջ չէր կարող գրված լինել։

«Վերք Հայաստանիի» հառաջաբանում Աբովյանն ասում է, որ իր վեպի ստեղծագործմանն է ձեռնարկել Բարեկենդանին։ Սովորաբար բարեկենդանը հայերի մոտ նշվում է տարվա փետրվար ամսին, ուստի «Վերք Հայաստանիի» գրումն էլ սկսվել է նույն այդ ամսին։

Նույն տեղում պատմելով, որ մինչև վեպի գրությանը ձեռնարկելը ինքն ապրել է հոգեկան ծանր վիճակ և մինչև իսկ որոշած է եղել ինքնասպանություն գործել, Աբովյանն ասում է, թե այդ քայլից իրեն ետ է պահել որդու պատկերը. «Ջուրն ընկնիլ՝ էլ չէի կարող, չունքի Աստուծո ահը մտքումս, անմեղ քոփիս ձենը անկաջումս էր. սերն ու ծնողական գութը ջիգյարումս, ես գինչանայի, էթըմին ո՞վ պահեր» (4)։ Իսկ այս նշանակում է, թե մինչև «Վերք Հայաստանիի» գրման տարին ծնված է եղել Աբովյանի որդին։ Խոսքը Վարդան Աբովյանի մասին է։ Մենք հաստատապես գիտենք նրա ծննդյան թվա-

կանը՝ 1840 թիվ, մայիս 31[1]: Կարո՞ղ էր Աբովյանը 1840 թվի փետրվարին գրած, ավարտած լինել իր վեպը և, միաժամանակ, հիշատակել նրա մեջ, որ ծնողական սերն իրեն ետ է պահել ինքնասպանությունից: Իհարկե՝ ո՛չ. 1840 թվի փետրվարին նրա որդին դեռ ծնված չէր, և եթե վեպն այդ ժամանակ գրված, ավարտված լիներ, ապա որդու մասին ոչ մի հիշատակություն չէր կարող լինել: 1841 թվի ու հաջորդ տարիների համար միանգամայն այդ բնական ու ճիշտ կլինի, որովհետև ինչպես այդ թվին արդեն կար նրա որդին, այն էլ գրկի երեխա:

«Վերք Հայաստանիի» մեջ Աբովյանը դրական է արտահայտում հայկական մարզի նախկին կառավարիչ Գևորգ Սմբատյանի մասին՝ ասելով. «Ազգի աչքի լիսն ա էս օր էլ, տարի ու կես կառավարիչ էր բոլոր Հայոց նահանգին» (183): Հայտնի է, որ Գևորգ Սմբատյանը հայկական մարզի կառավարիչ է նշանակվել 1839 թվի մարտի 26-ին[2] և աշխատանքից ազատվել 1840 թվի սեպտեմբերի սկզբին[3]: Վերը մեջբերած հատվածում, ինչպես տեսանք, Աբովյանը Գ. Սմբատյանի կառավարիչ լինելու մասին խոսում է որպես անցած իրողության: Կարո՞ղ էր նա Գ. Սմբատյանի մասին խոսել

---

[1] ՀՍՍՌ ԿՊԱ, ֆոնդ 53, ցուցակ 1, գործ № 392, թերթ 34. այստեղ հիշատակվում է, որ Վարդան Աբովյանը ծնվել է 1840 թվի մայիսի 31-ին և մկրտվել է նույն թվի օգոստոսի 18-ին, Ջղրաշենի եկեղեցում, Սալաթնովայի թոռ՝ Մովսես ավագ քահանա Սալաթինյանցի ձեռքով: «Վերք Հայաստանիի» հառաջաբանում հիշվում է նաև, որ վեպի գրության ժամանակ որդին արդեն գրկի երեխա է եղել («...Տեսնիմ իմ միայնակ որդին ղոշին առած... գժվածի պես վեր թռա, երեխես եմ նայում» 5—6):

[2] Մատենադարան, Սինոդի կարգադրիչ մասի արխիվ, թղթապանակ № 12, վավերագիր № 46, թերթ 2:

[3] ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 90, ց. 1, գ. № 549: Գ. Սմբատյանի ստորագրած վերջին գրությունները կրում են 1840 թվի սեպտեմբերի 4 և 14 ամսաթվերը (նույն տեղում, թ. 1—19 և 27—28): Ուրեմն ճիշտ էր Աբովյանը, երբ ասում էր, թե նա՝ Գ. Սմբատյանը «տարի ու կես կառավարիչ էր...»:

իբրև Երևանի Հայկական մարզի կառավարչի, եթե վեպը 1840 թվի փետրվարին գրված, ավարտված լիներ: Ինչու՝ ո՛չ: Իսկ 1841 թվին, կամ դրանից հետո, կարող էր, որովհետև այդ ժամանակ, իսկապես, Սմբատյանը ազատվել էր պաշտոնից, տեղափոխվել էր Թիֆլիս, և, ինչպես հետագայում կտեսնենք, այցելել է Աբովյանին:

Այս անուղղակի փաստերից բացի, մեզ հաջողվեց գտնել Աբովյանի ուղղակի վկայությունը: Խոսելով «Վերք Հայաստանի» գրության ժամանակի ու հանգամանքների մասին, նա ասում է. «Ինձ համար այնքան հիշարժան 1841 թվականի բարեկենդանին սկսեցի իմ պատմությունը...»[1]: Ավելորդ է սրանից հետո վեպի գրության թվականի մասին նոր փաստեր բերել: Հեղինակի բառերը անառարկելիորեն հաստատում են, որ նա «Վերք Հայաստանի» պատմավեպի ստեղծմանն է ձեռնարկել 1841 թվականի փետրվարին (բարեկենդանին):

Հարց է ծագում. չի՞ հակասում արդյոք այս թվականը «Պարապ վախտի խաղալիքի» հառաջաբանում եղած տվյալին, ուր «Վերք Հայաստանին» հիշվում է 1841 թվին արդեն պատրաստի գործ: «Սրա (Աղասու — Պ. Հ.) պատմությունը շատ երկար է, որ գրած մոտիս հազիր ունիմ ու նրանով կարելի է իմանալ էն ժամանակվա մեր աշխարքի հալը: Գրքի անունն ա Վէրք Հայաստանի, ողբ հայրենասիրի»[2]: Կարծում ենք՝ ո՛չ: Նախ, նրա համար, որ «Պարապ վախտի խաղալիքի» ձեռագիրը լրիվ չի պահպանվել, նրա անվանաթերթը, հառաջաբանը (որոնց վրա նշված է եղել թիվը) ու նյութերի ցանկը կորել են, հետևաբար և հնարավորություն չկա ստուգելու՝ իսկապե՞ս նրանք կրել են 1841 թվականը: Երկրորդ. այդ ժողովածուի ստանավորներից մեկը («Իմ բարեկամ Աղաջան Վարդանյանի պատկերի առաջին»), գրված 1841 թվի սեպտեմբերի 5-ին[3],

[1] ԱեԱ № 65:

[2] ԵԱ, ԵԼԺ, II, 190:

[3] ԵԱ, ԵԼԺ, I, 199:

հիմք է տալիս ասելու, որ «Պարապ վախտի խաղալիքը» կարող էր կազմվել ամենաուշը 1841 թվի վերջերին, հետևաբար ժողովածուի հառաջաբանում «Վերք Հայաստանին» իբրև պատրաստի գործ, հիշատակելը բնավ չի ժխտում վեպի՝ 1841 թվի փետրվարին գրված լինելը, այլ, ընդհակառակը, հաստատում է այդ։

Իրականում 1841 թվականն էլ գրոշմված է եղել վեպի ձեռագիր-անվանաթերթի վրա։ Այդ ասելու հիմք է տալիս Մ. Տեր-Ազարյանի վկայությունը։ «Մեկ քանի խոսք Աբովյանի վերա» հոդվածում անդրադառնալով «Վերք Հայաստանիի» առաջին հրատարակությանը, նա գրել է. «Զարմանալի բան է, որ Վէրք Հայաստանի տպագրութեան մէջ ցույց չէ տված, թե ե՞րբ է գրվել նա. բայց մենք տեսնում ենք ձեռագրումը, որ նա գրված է 1841-ին»[1]։ Այս տողերը գրված են 1861 թվին։ Երևի դրանից հետո, որևէ մեկը, ձեռքն առնելով Աբովյանի վեպի ձեռագիրը, խունացած է տեսել հին թվականը և իր համոզմամբ գրության ճիշտ թվականը և վայրը նշանակել, խորամուխ չլինելով սակայն, որ Աբովյանը արդեն մի անգամ նշանակել է Տփխիս, որ նախապես գրած է եղել 1841։

Եզրակացություն. Աբովյանը «Վէրք Հայաստանի» պատմավեպի գրությանն է ձեռնարկել 1841 թվականի փետրվարին: Հայ նոր գրականության հիմնաքարի ստեղծագործման սկիզբն այսուհետև պիտի համարել ոչ թե 1836, 1837, 1838 կամ 1840 թվականները, այլ 1841 թվականի փետրվար ամիսը:

բ) ԱՌԱՋԻՆ, ՉԱՓԱԾՈ ՎԱՐԻԱՆՏ (ՆԱԽԱԳԻՐ)

Այն կարծիքը, թե «Վերք Հայաստանին» մի շնչով է գրված, իշխում էր երկար տարիներ։ Բայց վերջին 15 տարում, երբ Աբովյանի ձեռագրերը մատչելի դարձան ուսումնասիրողներին, երբ հայտաբերվեց ու հրատարակվեց վեպի սևագիր մի

[1] «Կռունկ հայոց աշխարհին» (ամսագիր), 1861, էջ 545։

վարիանտը, պարզվեց, որ «Վերք Հայաստանին» երկար ու բրտնաջան աշխատանքի արդյունք է և հեղինակից պահանջել է ոչ միայն օրեր, այլև ամիսներ ու տարի։ Իրավացի էր անշուշտ «Վերք Հայաստանիի» ակադեմիական հրատարակության ծանոթագրող Հ. Մուրադյանը, երբ ուշադրություն դարձնելով վեպի սևագիր վարիանտի որոշ առանձնահատկությունների վրա, գրում էր, թե «անկասկած է, որ դրան նախորդել է նախնական մի այլ վարիանտ ևս»[1], որ «մեզ հասած երկու ձեռագրերը, անկասկած է, որ ունեցել են իրենց նախորդ օրինակը, թերևս հենց այն օրինակը, որ հեղինակի վկայությամբ գրված է եղել «թարաղաների» վրա, որը դժբախտաբար մեզ չի հասել»[2]։ Բայց Հ. Մուրադյանն առաջ քաշելով նախնական վարիանտի հարցը, հենց այդտեղ էլ կանգ է առել, ոչ մի խոսք չասելով նրա բնույթի ու առանձնահատկությունների մասին։ Եվ դա հասկանալի է։ Նրա հիմքերից մեկը վեպի հառաջաբանում հիշված «թարաղաներն» են եղել, որոնցից, նախ, ոչ մի հետք չի մնացել և, երկրորդ, աբովյանագետներին մինչ այդ հայտնի աղբյուրներում չէր ասված, թե «թարաղաների» վրա գրածն ի՞նչ բնույթ է ունեցել։

Իսկ ինչպիսի՞ն է եղել «Վերք Հայաստանիի» նախնական վարիանտը։ Թղթերից մեկում անդրադառնալով իր վեպի ստեղծման հանգամանքներին, Աբովյանը գրել է. «Հանգավոր տողերը (Die Versen) հորձանք տալով թափվում էին թղթի վրա։ Բոլոր ժողովրդական ավանդությունները, կրոնական պատկերացումները խառնել էի իրար, բայց, ինարկե, առանց որևէ կարգ ու կանոնի։ Օրական գրում էի 20 թերթից ավելի, այն էլ բացառապես հանգավոր տողեր։ Իմ վեպը... «Վերք Հայաստանի, որը հայրենասիրի» խորագիրն է կրում»[3]։

---

[1] ԽԱ, ԵԼԺ, III, 377։

[2] Նույն տեղում, էջ 380։

[3] ԱԵԱ, № 65։ Versen բառը նշանակում է հանգավոր տողեր, չափածո, ոտքեր։

Վարարած գետի պես հորձանք տվող հանգավոր տողերով գրված և առանց կարգի ու հերթականության ժողովրդական ավանդությունների, կրոնական հավատալիքների ու այլոց մասին պատմող հիշյալ չափածո երկը (Համանուն վերնագրով) բոլորովին համապատասխան չէ «Վերք Հայաստանիի» մեզ հասած թե՛ սևագիր և թե՛, մանավանդ, մաքրագիր վարիանտին։ Նախ, այն պատճառով, որ վերջի մեզ հասած սևագիր ու մաքրագիր վարիանտները հանգավոր տողերով չեն գրված, չափածո չեն[1]. երկրորդ, նրանց մասերի մեջ կա միասնություն և տրամաբանական հաջորդականություն. երրորդ՝ նրանց մեջ փոքր տեղ են բռնում ժողովրդական ավանդություններն ու կրոնական հավատալիքները։ Անժխտելի է, որ Աբովյանի խոսքը վերաբերում է «Վերք Հայաստանիի» մինչև այժմ անծանոթ, նախնական չափածո վարիանտին (նախագրին)։

Աբովյանի արխիվում պահպանվել է մի կիսատ, չափածո երկ, «Աղասու խաղը» (Քեչիչ-Օղլու գունով) վերնագրով, որ 1948 թվին հրատարակվեց գրողի երկերի ակադեմիական հրատարակության 2-րդ հատորում (տեքստ և ծանոթություններ Ա. Մանուկյանի)։ Ծանոթանանք նախ այդ յոթհազարտողյան անսկիզբ ու անավարտ լիրիկական երկի հեղինակային ինքնագրին[2]։ Ձեռագիրը բաղկացած է 309 էջից և ծայրից ծայր գրված է Աբովյանի ձեռքով։ Կան թերթեր, որոնց միայն լուսանցքներն են օգտագործված, իսկ բուն էջերը թողած են մաքուր։ Ինքնագրի առաջին (1—16) էջերի թուղթն ու գրչությունը արտաքինապես տարբերվում է հաջորդ (17—309) էջերից. եթե առաջինների գրչությունը, թուղթը և թանաքը հա-

---

[1] Ճիշտ է, «Վերք Հայաստանիի» սևագիր և մաքրագիր ինքնագրերում էլ կան չափածո հատվածներ, հաճախ էլ արձակ շարվածքի տակ թաքնված չափածո էջեր, սակայն դրանց մի մասը երգեր են, իսկ մյուսները, մեր համոզմամբ, փոխանցված են վերջի չափածո նախագրից։

[2] Աբովյանի Արխիվի № 55 ձեռագրի մասին է խոսքը։

մարյա տարբերություններ չունեն «Վերք Հայաստանիի» մաքրագիր վարիանտից (գրված են պարզ, մաքուր, առանց շտապելու, բովանդակության ու սյուժեի զարգացման ներքին օրգանական կապը միշտ պահպանած), ապա 17—309 էջերինը համընկնում են վերքի սևագիր վարիանտին, որի առանձնապես վերջին մասերի թուղթը, թանաքը, տառերի ձևը գրեթե չեն տարբերվում ակնարկվող 17—309 էջերից։ Ձեռագրի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում ծանոթանալու նաև այս երկի վրա հեղինակի կատարած աշխատանքի բնույթին։ Պարզ երևում է, որ հեղինակը ամեն անգամ ընդհատված երկը վերսկսելիս կամ շարունակելիս, նախ սկսել է գրել հանգիստ, պարզ ու հստակ, սակայն մի երկու էջ հետո, երբ մտքերն ու տպավորություններն սկսել են կուտակվել, իրար ետևից հորդալ, արագացրել է ընթացքը, գրել է շտապ, անկանոն, առանց հանգերի ու գրածի ներքին բովանդակության վրա ուշադրություն դարձնելու։ Նա շարունակ շեղվել է, շարունակ կողմնակի բաների մասին խոսել։ Ստեղծագործական աշխատանքի այս ոճը պարզ նկատվում է ձեռագրի 19—25, 26—74, 74—98, 131—163 և այլ էջերում, որից պետք եզրակացնել, որ «Աղասու խաղը» վերնագրով այս չափածո երկի գրությունը հեղինակից խլած պետք լինի ո՛չ ավելի, քան 10 օրվա աշխատանք։

«Վերք Հայաստանիի» նախնական վարիանտի կամ, ինչպես այսուհետև պիտի կոչենք, նախագրի բնույթի ու յուրահատկությունների մասին Աբովյանի ասածները, որ բերվեցին վերևում, տառացիորեն համապատասխանում են «Աղասու խաղը» վերնագրով լիրիկական անավարտ երկին[1]։ Տեսնենք, թե

[1] «Վերք Հայաստանիի» չափածո նախագրից են նաև «Աղասու սրտի տխրությունը» և «Աղասու սրտի փափագը» չափածո հատվածները։ Ուշագրավ է, որ Բոդենշտեդի համար կազմած տետրակում «Աղասու խաղի» սկզբնական էջերի հետ միասին Աբովյանը տեղավորել է նաև դրանք։ ԱՆԱ № 65։



Մի էջ «Վերք Հայաստանի» սևագրից

ի՞նչ առանձնահատկություններ ունի նա, ինչի՞ մասին է խոսվում ու պատմվում նրանում և ի՞նչ կետերում է նա մոտենում կամ հեռանում «Վերք Հայաստանիի» վերջնական վարիանտից։

Ճակատագրի հարվածով հայրենիքից ու հարազատներից կտրված, օտար վայրեր նետված և անորոշության մեջ տարուբերվող Աղասին ապրում է ծանր ողբերգություն։ Նրան հոգնեցրել են երկար թափառումներն ու վտանգներով լի կռիվները, նա չափազանց տանջվում է հայրենիքի ու հարազատների կարոտից և չունի մեկը, որ մխիթարի իրեն, կիսի իր հետ վշտերը։ Անելանելի վիճակից չկարողանալով ելք գտնել, նա օր առաջ մահ է տենչում, որպեսզի ազատվի «էս դառն աշխարհիցս»[1]։ Եվ կարծելով, որ մարդիկ անկարող են հասկանալ իր մեծ վիշտը, Աղասին բաց է արել սիրտը մայր բնության առաջ և կրակված հոգով՝ թփերին ու ծաղիկներին, հովերին ու ջրերին է պատմում իր տանջանքների ու տենչանքների մասին։

Ավելի ու ավելի մխրճվելով հուշերի մեջ և մի պահ մոռանալով ինքն իրեն, Աղասին մտքով թռչում է վաղուց անցած-գնացած օրերը՝ մանկության ու պատանեկության տարիները։ Նրա երևակայության մեջ սկսում են մեկը մյուսի ետևից հարություն առնել բազմապիսի դեպքեր ու դիպվածներ, կամ էլ խոսել՝ արդեն մեռած, կամ ընդմիշտ թողած բարեկամներն ու հարազատները՝ Ապով պապը, Սառախաթուն տատը, մանուկ Մոսին, ապա մայրը, կինը, քույրը, երեխաները, վերջապես «տնանկ վարժապետ» Խաչատուրը։ Սրանց ամեն մեկից Աղասին որևէ հուշ ունի պահած, ամեն մեկի երևալով Աղասին անցած այս կամ այն օրն է մտաբերում։

---

[1] ԽԱ, ԵԺ, II, 14։ Աղասու հոգեվիճակի այս նկարագրությունը նույնությամբ կրկնվում է «Վերք Հայաստանիի» երրորդ գլխում՝ էջեր 141—144։

Առաջին անձնավորությունը, որի հետ երևակայության մեջ խոսում է Աղասին ու խոսեցնում, կինն է՝ հարուստ ու հորդուն ներքնաշխարհով Նազլուն։ Այս բյուրեղյա հոգով էակը, կարծես ամաչելով թաքուն վշտերն ի հայտ բերել, փոխանակ իր մասին խոսելու, պատմում է Աղասու հետ անցկացրած երջանիկ օրերից, երբ անհոգ էին, բախտավոր և սեր էին վայելում բնության մեջ։ Հանկարծ փոխվում են պատկերները, և Աղասին երևակայության մեջ կարծես լսում է կնոջ խոսքերը, որը երեխաներին պատմում է նրանց հոր (Աղասու) մասին.

Բարձր ում որ մեկ գուշ աչքով մտիկ տա
Հենց կիմանա՝ թե աշխարհը իրենն ա։
Արարած աշխարքն նրան կճանաչի
Քյուլլու ջամբաթն նրա գլխովն երգվի.
Բարք թե հենց մեկ բերանը բաց անի,
Քարերն էլ կլովին, նրան անկար կանեն....
Բարք հենց թե մեկ ամպերը կխանց,
Սար ու ձոր կդողան, ատն կառներն կփախչին,
Բարի մեջումն հունարներ շատ կա,
Բայց ժամանակի աչքը քոռ ըլի...
Բարի յեզրան ախ՝ իր փորն են քցել,
Թե չէ նա գիտի ինչ բաներ կանի,
Որ աշխարքի աչքն հենց մնա ռաաած[1]։

Հույները Աղասու դիմաց են բերում նաև քրոջը, որն ամենից ավելի անհանգստացած է եղբոր վիճակով։ Չէ՞ որ նրա պատճառով է Աղասին տարուբերվում օտարության մեջ, նրան փրկելու համար է սպանել ֆարաշներին և սար ու ձոր ընկել։ Նախասու վերհուշերը հրապարակ են հանում Աղասու կյան-

---

[1] ԽԱ, ԵԼԺ, II, 29—30։ Համեմատիր «Վերք Հայաստանի» վերջին մաքրագիր վարիանտում Աղասուն աված բնութագրականի հետ (էջեր 15—18), ուր կրկնվում են «Աշխարքի աչքն քո վրեն մնացած», «Գլխովդ մեջտ պտիտ կգանքը» և այլ արտահայտությունները լեզվական չնչին տարբերություններով։

քի այլ մանրամասներ՝ նրա մանկական չարություններն ու հանաքները։ Քրոջ ականջը շարունակ անցորդի ձայնին է, շարունակ սպասում է, թե մեկն իրեն ասի. «Աչքդ լըի լույս՝ ախպերդ գալիս ա»[1]։ Քույրն երանի է տալիս, որ ինքը մեռներ լավ էր, քան թե Աղասին այդ օրն ընկներ.

Քվորդ աչքը ընչի՞ չըռռացավ,
Քիրդ պիտի մեռներ, դու նրան թաղեիր...[2]։

Քույրը պատմում է նաև իրենց մոր՝ նանի մասին, որը շատ լալուց արդեն ուժասպառ է դարձել։ Որդու կարոտն առնելու համար նա համբուրում է Աղասու տնկած ծառերը, նրանց վրա արցունքներ թափում, որ ջրվեն։ Մայրը, որ մանուկ ժամանակ Աղասուն այնքան գրկել ու խաղացրել է, նրանով հպարտացել է, միշտ խրատել՝ լինել բարի, խելոք, հնազանդ, այժմ կորցնելով նրան, երկնքի հավքերի հետ է խոսում, սրանցից լուր հարցնում կորած, անուշ զավակի մասին.

Զնկրն են թռչում, նա ձեն ա տալիս,
Կռունկն ա գալիս, խաբար հարցնում
Տեսե՞լ են երա՞ր նրա Աղասուն,
Լացն հողին խառնում, դեպ նրանց բցում,
Տարե՞ք Աղասուն իմ ողբս ու լացս.
Կռունկ երա՞ր դուք որդիանց եք գալիս,
Տեսա՞ք Աղասուն, ո՞ւր է ման գալիս...[3]։

Աղասու երևակայության մեջ խոսք են առնում, վերջապես՝ Աղավ պապը, Սասախաթուն տատը, մինչև իսկ Գրիգոր Լուսավորիչը, որոնց պատմությունների մեջ կան զանազան դեպքեր ու դիպվածներ՝ հայ ժողովրդի կյանքից ու կենցաղից.

---

[1] ԽԱ, ԵԺԺ, II, 42։

[2] Նույն տեղում, էջ 41։

[3] Նույն տեղում, էջ 46—47։ Համեմատիր «Վերք Հայաստանիի» հետ. «Ղուշ ա գլխավերևս թռչում, քո անունն եմ տալիս» (145)։ Աղասու մոր նամակից։

ժողովրդական ավանդություններ, կրոնական լեգենդներ և այլն։

Ագասու մասին, իբրև կերպարի, ավելի քան 7000 տողից բաղկացած այս չափածո վարիանտում քիչ բան է ասված։ Իմացվում է, որ նա սիրում է Հայրենի բնաշխարհից։ «Հերդ գեղի տեր, դու օջաղ դադա»[1]։ Սիրում է աշխատանքը և գրեթե ողջ օրն անցկացնում հանդ ու դաշտում. միշտ էլ նրան կարելի է տեսնել «դուռթանի մաջի վրա կռացած», «հողը վարելիս» կամ «կալը կալսելիս», «սերմը ցանելիս» կամ «ջուրը ջրելիս» «ալյուրն աղալիս» կամ «քարվան գնալիս»[2]։ Իմացվում է վերջապես, որ նրա հորդորն ու խրատը, հարազատներին ու յուրայիններին, շարունակ եղել է՝ լինել ազնիվ, բարի և մարդասեր։

Ես ձեզանից հենց միշտ էս կխնդրեմ,
Որ իրար սիրե՛ք, չավություն անեք....
Բերններից կտրեք, ու աղքատին տաք,
Աղքատի ձեռը դարտակ ետ չդրձեք։

Կամ՝

Ջուլի անցվորին կանչիր նստացրո՛ւ,
Կերցրո՛ւ, խմացրո՛ւ, փորը կշտացրո՛ւ...[3]։

Սույն չափածո երկում կան բազմաթիվ դատողություններ էլ, որոնք չգիտես պատկանում են Ագասո՞ւն, թե՞ նրա երևակայության մեջ՝ հանդես եկող ոգիներին։ Դրանց մեծ մասը, առավել հարստացված ու մշակված, հետագայում անցել են «Վերք Հայաստանիի» հաջորդ վարիանտին։ Այստեղ ևս, թեպետ բավական մանվածապատ, ընդգծվում է, որ գյուղացիու-

---

[1] ԽԱ, ՆՀԺ, II, 20։ Համեմատիր «Վերք Հայաստանիի» հետ. «Տանուտերի տղեն էր...» (15)։

[2] Նույն տեղում, էջ 25։

[3] Նույն տեղում, էջ 32։ Համեմատիր «Վերք Հայաստանիի» հետ. «... Աղքատին փայ տո՛ւր. աղքատ տեսնելիս՝ կերցրո՛ւ, կշտացրո՛ւ...» (Ագասու մենախոսությունից — 12)։

թյան վիճակն ավելի ապահով է, որ վերջիններս ավելի մարդասեր են ու բարեգործ.

Մեր ամբարն հացով, մեր կարասները
Մեր տուն ու դուռը լիքը բարությունով՝
Հենց բանեն տրաքում են ու ստող ուզում...
Մեր սուփրի տուտը Ֆռանգստան ա հասել,
Մեր բաղի բարին, ծով դառել, կանգնել[1]։

Ասում են Աբովյանի գյուղացիները։

Նշվում է նաև, որ գյուղացիությունը դեռևս ապրում է բնատնտեսական կյանքով և շուկայի հետ ոչ մի գործ չունի.

...Ու բաղարիցը մեկ մախաղ կորեկ
Փողով չե՞ք առել ու ձեր տունը բերել...[2]։

Կիության մեջ ապրելու և շուկայի հետ կապ չունենալու մեջ է գաղտնիքը, որ, ինչպես նշվում է, գյուղացիությունը սրտաբաց ու օտարասեր է. «Թե Թուրք ըլի, թե Հայ», դատարկ ձեռքով գյուղացին երբեք նրանց նա չի դարձնի, կկանչի, կհյուրասիրի։ Նա պարծենալով ասում է.

Հազար հաց ուտող ու բարեկամներ
Ունինք մեր տանը...[3]։

Որպես հաստատումն սրա՝ նորից ու նորից Աբովյանն անդրադառնում է Ապովի բարեգործությունների նկարագրությանը, պատմում, շեղվում, նորից պատմում, նորից շեղվում և այսպես շարունակ։ Ապովը տենչել է մեծ այգի, որպեսզի նրա բարիքները բաժանվեն աղքատներին ու կարիքավորներին, առանց ազգային խտրության։

---

[1] ԽԱ, ԵԺ, II, 54—55։ Համեմատիր «Վերք Հայաստանիի» հետ. «...տունն ու շիրախանեն հազար բարությունով լիքը՝ տրաքում էին ...ծով, ի՞նչ տուն» (20)։

[2] Նույն տեղում, էջ 56։ Համեմատիր «Վերք Հայաստանիի» հետ. «Մեկ փարի բան բաղարիցը տուն չէ՞ր գալիս...» (21)։

[3] Նույն տեղում, էջ 57։

Կտուր համար ձեր Հոգելույս պապը
Էն մենծ իգին քցից հենց ճամփի տակը
Ապրանքափոսի գլխին էն ջաղացն
Բաղը՝ որ էլ ո՛չ տուտ ունի կամ տակ
Հազար բարությամբ անկեց լցրեց
....Հինգ լավ կառապան
Բանեց, փող ավեց, որ նրա միջումը մնան,
Ինչքան պտուղ գա ամեն առավոտ
Քթոցով հավաքեն, շալակեն, անեն մառ.
Տանեն ճամփի գլուխը ու պատի տակին
Նստին, ամեն անց կենողին կանչեն,
Թուրք ըլի թե Հայ՝ նրանք մտիկ չանեն....

Կամ՝

....Մեծ բաղի մնացած պտուղները
Հավաքում էին, չորացնում կամ կախում
Գինին՝ կարասները տանում, լցնում,
Որ ձմեռն էլ միշտ աղքատ ու տնանկ
Գան անփող տանին, կամ ուտեն իրանք
Կամ հիվանդներին դեղապատեր անեն...[1]։

Ընդարձակ տեղ է հատկացված նաև Աղասի ուխտագնացությունների նկարագրությանը, բայց նրանց վրա կանգ չենք առնի։

«Վերք Հայաստանիի» վերջնական վարիանտի նման, այստեղ ևս արտահայտվել է հեղինակի քննադատական վերաբերմունքը իրականության այս կամ այն երևույթի նկատմամբ։ Մի երկու տեղ Աղասին ըմբոստանում է պարսկական կոպիտ

---

[1] ԽԱ, ԵԼԺ, II, 102—103 և 112։ «Վերք Հայաստանիի» վերջին վարիանտում Աղասի մասին ասված է համարյա բառացի նույնը. «...էն ջաղացն՝ բաղը իր ձեռովը անկեց՝ որ անց կենողը գնա նրա բարությունը վայելի։ Չորս կառապան ամեն առավոտ՝ ինչ պտուղ ծառիցը վեր էր ընկնում, հավաքում, քթոցներով տանում էին ճամփին դնում ու անց կենողի ջեբն ու խուրջինը լցնում։ Էն մեկը իրուցը մեկ պտուղ, մեկ թաս գինի իրանց տանը չէին բանացնիլ, ջոկ կպահեին ու աղքատ գեղցիանցը կբաժանեին» (23—24)։

բռնության դեմ, որ խեղդում էր ժողովրդի ամեն մի ազատ ու անկաշկանդ շարժում. «Ոտդ որ փոխես, գլուխ են կտրում» կամ «Շներն էլ են մեզ վրա աղությունն անում»[1], բայց այս մտքերը արտահայտված են այնքան անորոշ, որ գրեթե տեղ չեն հասնում, մինչդեռ օտար բռնության դեմ ըմբոստացումը «Վերք Հայաստանիի» գաղափարական բովանդակության առանցքային խնդիրներից է։ Քննադատական խոսք կա նաև ցարիզմի մասին, որը Հայկական մարզի վերացումից հետո ավելի էր ճնշում գյուղացիությանը.

....Հիմիկ մեկ խաչապաշտ էլ
Մեր խեղճ ազգի հետն ընկած ման ա գալիս
Որ արինը ծծի ու հոգին հանի[2]։

Այս միտքը ավելի զգույշ ձևով անցել է նաև «Վերք Հայաստանիի» հաջորդ վարիանտին, ուր անանուն հերոսի կերպարով քննադատվում է «Հիմիկվան թագավոր, կայսրը՝ հայ ժողովրդին տանջելու, չարչարելու համար (264)։

Աղասու դատողությունների մեջ մի այլ ուշագրավ միտք էլ է զարգացվում. այդ արդեն վերաբերում է յուրազգի իշխաններին ու մեծատուններին։ Բոլոր բարիքների պարգևող երկիրը Աղասու բերանով ասում է.

Թե իմ խորդ հարսը, իմ ագահ որդիք
Իշխանքն փառավոր, խաթունքն մեծազգիք
Հենց իրանք ուզեն, որ իմ տված բարին
Հենց իրանց գլխին անեն ու իրանց ուտին
Նստին անգործ տանը միջա ծառայապատիկ
Ո՛չ իրանք ուտեն, այլոց էլ չտան....
Դուք նրանց գոռ արե՛ք, որ գնան, կորչեն.

Իսկ փոքր ինչ ներքև պարզորոշ ասում.

.... Խեղճ չմնաք, ձեզ սպանել տան,
Բաս ատամ եմ ձեզ ընչի՞ եմ տվել։

---

[1] ԽԱ, ԵԼԺ, II, 30։

[2] Նույն տեղում, էջ 85։

Բաց հանձար, ու խելք, ձեզ են պարգևել.
Վրա թոն՛ք ընկնի, ազատ երեսին
Ճղեցե՛ք, կոտորեցե՛ք....[1]

Սեփական տիրողների դեմ ըմբոստանալու այս կոչը «Վերք Հայաստանիի» հաջորդ վարիանտներից դուրս է մնացել: Չի կարելի տարակուսել, որ այստեղ առկա են ժամանակի սոցիալական շարժումների արձագանքները: Աբովյանը հետագայում, երևի մտածել է, որ բացահայտորեն նման գաղափար արտահայտելը վտանգի տակ կդնի իր անձն ու գործը, ուստի լռությամբ վերևում բերած մտքերը վեպից հանելով փոխադրել է մյուս այլաբանական երկերի մեջ (նկատի ունենք «Ժանդ փուշը» առակը՝ գրված նույն տարում, նույն ոգով):

Աղասու դատողություններում ընդվզում կա նաև քրիստոնեական՝ չարին չհակառակվելու, հանդուրժողականության և սուրն արհամարհելու քարոզների դեմ: Նրա հոգին, երկնային դրախտում ուզում է բողոքել Գրիգոր Լուսավորչին.

Ընչի՞ մեր տանը էսպես քանդեցիր
Մեզ որբ, թող դու բաժին տվիր.
Էկար հանգստացար, մեզ կրակում թողիր.
Ինչպես մեր թուրն դու ձեռից խլեցիր:
Էդ սուր պապի ջան՝ քո միրքից մնացիմ
Ձեռներդ կհամբուրեիմ, ոտներդ կընկնեիմ
Տուր որ էդ տանեիմ, էդ տամ իմ ազգին
Որ թե մեզ սպանեն, մենք էլ սպանենք....
Մենք նահախ տեղը ուրշին վնաս տալ չենք....
Աշխարհն երկինք չի՞ տանեց թող
Մարդի միս ուտեն որդիքն երկրի[2]:

Այս դատողությունները, որ չափածո վարիանտում տակավին միստիկական քող ունեն, «Վերք Հայաստանիի» վերջին

---

[1] ԽԱ, ԵԼԺ, II, 75—76:
[2] Նույն տեղում, էջ 87:

վարիանտում, հակառակ նախորդի, ավելի են կատարելագործվում. այն, ինչ այստեղ ասված էր անհամարձակ ձևով, այնտեղ հայտարարվում է աշխարհով մեկ. «...Թեկուզ բողազս էլ դուս կտրեն, ես գրոստն եմ ասում։ Թուր որ չունիս գլուխդ կտրում են, օղլուշաղդ քաշում, կերածդ հարամ անում, դատածդ խլում, քեզ էլ եսիր անում...» (82)։

«Վերք Հայաստանիի» վերջին վարիանտի բաղդատությունը սկզբնական չափածո տարբերակի հետ երևան է հանում մի շարք ուրիշ համընկնումներ ևս։ Պարզվում է, որ այստեղ էլ, չնայած թույլ ձևով, քննադատվում են հոգևորականները (էջմիածնի ուխտադնացության կապակցությամբ) և առաջ է քաշվում աշխարհաբար լեզվին քաղաքացիություն տալու հարցը.

Աստված ավեց լեզուն՝ մեր սիրտը հայտնենք
Բայց մենք մեր լեզուն՝ սրտի բայանքը,
Մեր էս ասըր ընկանն՝ մեր սրտի դուռը
Փակում ենք, կողպում, այլ դռնով գնում
Լեզուն չինում՝ ենք երկաթե կողպեք...[1]։

Այս տողերը վեպի վերջնական վարիանտի համապատասխան հատվածների կողքին շատ անգույն են հնչում. դրան ապացույց կարող է ծառայել «Վերք Հայաստանիի» հանճարեղ հառաջաբանը, ուր ընդարձակորեն խոսվում է աշխարհաբարը գրականության լեզու դարձնելու անհրաժեշտության մասին։

«Վերք Հայաստանիի» վերջնական վարիանտին, սույն չափածո տարբերակից փոխանցվել են նաև առանձին դրվագներ ու նկարագրություններ, ինչպես օրինակ Աղբրանքափոսի մասին պատմվող ավանդությունը։

---

[1] ԽԱ, ԵԺ, II, 113։

«Աղասու խաղը»

......մեկ էշարած
Ճամփեն գնալիս, գիշերվան
սհաթին
Հանկարծ մեկ դուռը իրան
առաջին
Բաց էլավ, տեսավ, որ ներսը
նրագ կար,
Մտավ ներս՝ տեսավ որ աշխարքի
գանձն,
Անգին քարեր ու աչվան մարգա-
րիտ
Լիքն էին՝ մնաց աչքը հենց
սառած։
Ինչի բռնումը հող էր լցրած.
Նա էն գեն առեց ու տեղը լցրեց,
Ինչ աչքը սիրեց, բարձեց դուս
բերեց
Ու հենց դուս էկավ, աչքը եդ
քցեց
Տեսավ՝ որ չոմախն ընգել էր
մնացել։
Աշրածակ չոբանի աչքը չէր լցվել,
Եդ դառավ՝ որ իր դականակն
հանի.
Դուռը փակվեցավ, ինքը մնաց
ընդի...[1]։

«Վերի Հայաստանի»

...մեկ չոբան էշը բարձած տուն գալիս, տեսնում ա, ճիրաքի իրան առաջին մեկ դուռը բաց էլավ։ Մտնում ա ներս, աչքդ բարին տեսնի, ջավահիր, մարգարիտ, ոսկի՝ էնքան ա, որ էլ հեսար չի՛ կա։ Ինչի բռնան մոխիրը գեն ա անում մեր բախտավոր իշարածը ու խուրջինները պրոճպրունգ ջավահրով լցնում, դուս գալիս։ Մի քիչ տեղ որ գնում ա, ձեռի փետը միտն ա ընկնում։ Աչքը չկշտացած՝ էն փետի խաթեր եդ ա դառնում, հենց ուզում ա, որ դուս գա, էլ դուռը չի՛ կա» (193)։ (Ճարտասանությունը չենք բերում)։

Փոխանցվել են նաև առանձին համեմատություններ, որոնք ցույց են տալիս բնության այս կամ այն երևույթի՝ ժողովրդական պատկերացումները.

...Ամպերն իրանց գլուխն վիշա-
պի նման,
Ծովերն բերաններն, անդունդի իր
փորը

«Ամպերը սարերից գլխները բարձրացրին, ռանգը կորցրին, չանգ ու դուման սար ու ձոր բռնեցի։ Հենց գիտես՝ հազար վիշապ

[1] ՍԾ, ՆԺ, II, 100։

Կրակով, բոցով, օձերով լիքը
Թոփով թոփխանով, թրով, թվանքով
Բաց արած վզքեն թոզ ու դումանով[1]։

բերանները բաց արած՝ գալիս են՝ որ սար ու ձոր կուլ տան» (152)։

Ուշի ուշով քննելով վեպի սկզբնական և վերջնական տեքստերից վերցված այս համեմատությունները, նկատում ենք, որ առաջինին բնորոշ անորոշությունից Աբովյանն աշխատել է խուսափել և վերջնական տեքստում կերտել է միանգամայն հղկված, գեղարվեստորեն կատարյալ և դիցաբանական մանվածապատությունից զերծ համեմատություն։

Այս բոլոր համընկնումների ու համապատասխանությունների պատճառը պարզ է։ Աբովյանը գրում էր վաղուց ծրագրած «Վերք Հայաստանին», որի նախնական չափածո վարիանտը, իր վկայությամբ, ստացվել է խառն ու անորոշ և որի մեջ բացակայել են որոշակի կերպարներն ու բնավորությունները և որոշակի սյուժեն։ Բոլոր դեպքերն ու դեմքերը կենտրոնացված են մի անձնավորության շուրջ, նա էլ անբնական ու անմարմին է։ Կարևորագույն մտքերն ու գաղափարները խճողված են բազմաթիվ շեղումների և միմյանց հետ կապ չունեցող զրույցների, ավանդությունների, հավատալիքների միջև։ Օրինակ, Աղասին երևակայության մեջ խոսեցնելով Նազլուին, պատմել է տալիս այն մասին, թե ինչքան երջանիկ էին իրենք, ինչքան իրար հետ կապված, թե ինչպես ինքը վախենում էր, չլինի թե քաջքերը հանկարծ հափշտակեն Նազլուին և իրեն մենակ թողնեն։ Այս միտքը բավական է, որ տասնյակ տողեր նվիրվի քաջքերին ու սատանաներին[2]։ Կամ մի ուրիշ տեղ, ուր խոսվում է վիշապների մասին, Աբովյանը հետևյալ ընդարձակ, սակայն խճճված նկարագրությունն է արել.

[1] ԽԱ, ԵԼԺ, II, 91—92։
[2] Նույն տեղում, էջ 23։

....Թե ինչպես սրտով
Ուզում էր տեսնի էնպես իգիթ տղին բարով,
Որ էնքան աշխարք, ու ծով ու ցամաք
Ճամփորդ արեց իրանց թագավորի
Սրտի ուզած աղջիկն կամ անգին քարը
Ելեց ու բերեց ու արյան ծովը
Թրի ճանապարհն, տներն կտրատելով
Ետ ածեցին նրան մրմինքը տարավ,
Թուր ածեցին նրա ուսների տակին,
Կոխեց անցկացավ ոտներն արինլվա
Հազար տեղ կտրած, յարա փարալու,
Հրեղեն ձիու վրա նստած, ու յալը բռնած,
Ծովին լոք տվեց, սարի գլխովն թռավ,
Անիրավ դավըշի եղնիցն հասավ,
Գլուխն առի տակին գրեց վրեն կանգնեց
Ասաց հոգիդ տու՛ր, կամ անգին քարը
Կամ Ասլան Փաշիշահի սիրուն աղջիկը…
Վեց գլուխը կտրեց ու մեկը թողեց,
Էլ եդ սաղացան, էլ նա կտրեց,
Մինչև աղջիկը տղին տանց, պատմեց,
Թե նա օխտ ճուտ ունի ֆլան տեղը,
Ու խոխի ունի իր թևի տակին,
Մինչև էն խոխին, չհանեն ու չէրեն
Մինչև ճուտերը չսատկին, չմեռնին,
Նրան ո՛չ թուր, սուր, ո՛չ թոփ գյուլ կանի…, և այլն[1]

վերջանում է այս վիշապապատում հեքիաթը, բայց առասպելների ու հեքիաթների վերջը չկա։

Որպեսզի այս և մյուս բազմաբանի ավանդությունների ու կրոնական զրույցները միասնական շղթայի մեջ տեղադրվի, իր շարունակական շեղումները պատճառաբանի, Աբովյանը նախադրում կոմպոզիցիոն մի ինքնատիպ հնարանք է օգտագործել։ Ըստ որի, որպես թե Աղասու երևակայության մեջ ավանդությունները ու զրույցները մայրը կամ տատն են պատմում, ինչպես և շեղումները՝ նրանց են պատ-

[1] ԵԱ, ԵԺ, II, էջեր 93—94։

կանում, ուստի Աղասին մի երկու տեղ ընդհատում է նրանց, խնդրելով կրկին վերադառնալ կիսատ մնացած պատմության.

Հերի՞ք ա մայր իմ, ճանապարհ պատմիր
Ու մի էդքան մեզ ու քեզ սպանիր...[1]։

Կամ՝

Մենք էս խոսքերը մտքում կպահենք
Տատի ջան՝ քո խրատն մենք մոռանալ չենք.
Պատմությունդ արա՛, որ մենք էլ տեսնենք
Թե ուխտն ի՞նչ գաղ ա...[2]։

Սակայն այս ինքնատիպ հնարանքն ևս անույժ է պատճառաբանելու «Վերք Հայաստանի» սկզբնական չափածո վարիանտի ակնհայտ թերությունները։ Անվերջանալի ու անորոշ զրույցներին և ավանդություններին կուլ են գնում հեղինակին հուզող հարցերն ու մտքերը՝ բնության շարժիչ ուժը սերն է[3]։ Մարդը չի մեռնում, նրա հոգին կենդանի ապրում է իր գործերի մեջ։ Հոգին կենսունակ է, մարմինը՝ թույլ[4]։ Հիվանդին բժշկողը հավատն է և ոչ թե դեղը[5]. և այլն։

Անվերջանալի ու խճողված պատմություններին զոհ են գնում նաև լիրիկական առանձին կտորներ, շաղախված հույզով ու կարոտով.

Կիտվել գնում եք՝ ո՛ւր սպիտակ ամպեր
Առված հաչողի ձեր ճամփեն ձեր մտքեր։
Արևելքի ընիցն, թե արևմտից
Հյուսիսի ճանկից, թ'հարավի բերնից
Ծովերի տակիցն, թ'սարերի գլխից

---

[1] ԽԱ, ԵԼԺ, II, 149։
[2] Նույն տեղում, էջ 175։
[3] Նույն տեղում, էջ 26։
[4] Նույն տեղում, էջ 71 և 90։
[5] Նույն տեղում, էջ 117։

Թողյ գնում ե՞ք ձեր մուրազն առնեք։
Հախ միայն տերը ձեր մուրազը տա։
Դվլորն էլ գնաց, ձեր բախն հաջողա։
Ախ սիրուն ամպեր, գարունքվան ամպեր
Ջուր առած, լցված, գնաք գուք ամպեր.
Կրակ գոգ արած ու ծխով լցված
Մեկ դհիցը գաք, մեկ դհով գնաք.
Ա՞խ ինչ կլի, որ ջրի փոխանակ
Ախ ի՞նչ կլի որ՝ կրակի տեղը
Ախ ինչ կըլի որ ձեր գոգը թափ տաք
Ձեր ծոցը բանաք, ձեր ձեռը մեկնեք
Սիրտս եգ հանեք, սիրտս բաց անե՛ք,
Իմ դարդն իմանաք, մեկ դարման անե՜ք....[1]։

Վերևում կատարված քաղվածքներից, համադրումներից, Աբովյանի վկայությունից, ինչպես նաև մեր փաստարկումներից ակնհայտորեն հետևում է, որ «Աղասու խաղը» պայմանական վերնագրով չափածո երկի մեջ, որն հանդիսանում է «Վերք Հայաստանի» վեպի առաջին վարիանտը[2], և որտեղ մեծ տեղ է տրված Աղասու անձի ու շրջապատի հետ կապված զանազան մանրունքների մակերեսային վերարտադրմանը, երկարորեն նկարագրվել են կենցաղային ու կրոնական ծեսեր ու սովորույթներ, խոսվել է մանրամասնորեն ընտանեկան հարաբերությունների, նախապաշարումների ու հավատալիքների և այլ բաների մասին,— անտեսվել են ժամանակի կարևորագույն խնդիրներն ու իրադարձությունները։ «Վերք Հա-

[1] ԽԱ, ԵԼԺ, II, 125—126։

[2] Ա. Մանուկյանը, դեռ 1948 թվին, «Վերք Հայաստանիի» և «Աղասու խաղի» փոխհարաբերության մասին այսպիսի ենթադրություն է արել. «Հավանական է, որ «խաղը» գրվել է «Վերքից» առաջ մինչև 1840 թվականը և հանդիսացել է վերջինիս չափածո նախօրինակը»։ Դժբախտաբար նա այս միտքը զարգացնելու և հիմնավորելու փոխարեն, նույն էջում, մի քանի տող հետո, ավելացրել է. «...Կան մի քանի այլ տվյալներ էլ, որոնք ապացուցում են, որ «խաղն» է հաջորդել «Վերքին», և ո՛չ ընդհակառակը» (ԽԱ, ԵԼԺ, II, 341)։

յաստանիի» առաջին, չափածո վարիանտում չկա հայ գյուղացիության կյանքի խորը, ռեալիստական նկարագիրը, չի գնահատված հայ ժողովրդի նորագույն պատմության մեջ ռուս մեծ ժողովրդի խաղացած առաջադիմական դերը, համարյա ոչինչ չի ասված հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական զարգացման ուղիների մասին,— խնդիրներ, որոնք վեպի վերջնական վարիանտի էությունն են կազմում։

Այս խնդիրների գիտակցումն է հարկադրել Աբովյանին հրաժարվել մի հերոսի հարուստ ներքնաշխարհի և հոգեվիճակի միջոցով ժողովրդի մտածողության, կենցաղի ու սովորույթների պատկերը տալու մտումից և ձեռնարկել հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական կյանքի ու նրա պատմական տրամադրությունների տարեգրությունը գրելուն։

«Վերք Հայաստանիի» առաջին, չափածո վարիանտի թերությունները մասամբ նաև հետևանք են նրա ստեղծման բացառիկ հանգամանքների։ Արժե այդ խնդրի վրա ևս ուշադրություն դարձնել։

Աշխատության առաջին գլխում ցույց տրվեց դժվարություններով ու արգելքներով լի այն երկարաձիգ ուղին, որը հասցրեց Աբովյանին «Վերք Հայաստանիի» ստեղծագործմանը։ Վեպի հառաջաբանից, ինչպես նաև Բոդենշտեդին ուղղված բացատրականից պարզ երևում է, որ նա իր հանճարեղ ստեղծագործության առաջին էջերը գրել է հանգիստ, հավասարակշռված վիճակում, նախապես գծված պլանով և գրելուց հետո կարդացել ուրիշների մոտ և նրանցից խրախուսանքի խոսք լսել։ Բերենք կողք-կողքի Աբովյանի այդ վկայությունները.

«Վերք Հայաստանիի» հառաջաբան	Բացատրական
«Մեկ բարեկենդանի՝ աշակերտներս՝ որ բաց թողի, սկսեցի՝ ինչ որ երեխությունիցս լսած, կամ	«Ինձ համար այնքան հիշարժան 1841 թվականի բարեկենդանին սկսեցի իմ պատմությունս այն ձե-

տեսած բան գիտեի, տակ ու գլուխ անիլ։ Վերքը իմ ջիգյարն Աղասին միտս ընկավ.... Անցի կեղծավորություն չանեմ, նրան ընտրեցի։ Հայոց լեզուն առաջիս փախչում էր Կրեսոսի նման.... Մեկ երեւ բան դեռ չէի գրել, որ իմ մանկական սիրելի բարեկամ ու ազնիվ Հայազգի պարոն դոկտոր Աղաֆոն Սմբատյանը ներս մըտավ։ ... Զոռ արեց՝ որ կարդամ... Սիրտս դողում էր կարդալիս. մըտքումս ասում էի՝ թե հենց հիմի որդի որ ա, գլուխը կպտտի, ունքերը կկիտի մյուսների նման ու իմ անմախության վրա մռռումն էլ ա հո կծիծաղի, որ երեսիս չասի.... վերջացնելիս՝ որ հենց էն ա, թուրն էկել էր, ոսկորին դեմ առել, որ չասեց. «Թե էդպես կշարունակես, շատ հիանալի բան կդառնա», ուզում էի վրա թռչիմ, բերանը, է՛ն քաղցր բերանը համբուրեմ» (4—5)։

վով, կարծես մի հայ գյուղացի պատմելիս լիներ իր հարևաններին.... Իմ առաջին տետրակները ես կարդացի նախ իմ երեխաների, իսկ այնուհետև գնդապետ Սումբատովի մոտ, որը հաճույքով է կարդում այդպիսի բաներ և պակաս կրթված մարդ չէ.... Երեխաները չէին կարողանում զսպել մերթ իրենց ծիծաղը, մերթ էլ լացը։ Բարի գնդապետը, հակառակ դրան, հենց հաջորդ օրը եկավ ինձ մոտ իր եղբոր հետ, որովհետև մինչ այդ ու մի անգամ չէր այցելել և հուզված սեղմելով ինձ իր կրծքին, բացականչեց. «Մեր հայ Լոմոնոսովը ծնվել է»։ Այդ նշանակում էր հարձատած յուղի վրա ջուր լցնել, այնպես հանկարծ միանգամից բոցավառվեցին իմ մտավոր ու հոգեկան ուժերը...»[1]։

Այս մեջբերումներից հետևում է, որ 1841 թվականի բարեկենդանին (փետրվարին) ձեռնարկելով իր գլխում տասնըհինգ տարուց ավելի փոթորկած կերպարների ու գաղափարների գեղարվեստական մարմնավորմանը, Աբովյանը հույս չի ունեցել, թե հաջողություն կունենա։ Նրան թվացել է, թե «Վերք Հայաստանին» էլ մյուս գործերի (օրինակ՝ «Նախաշավիղի») բախտին կարժանանա։ Վեպի առաջին վարիանտի սկզբնական էջերի կամ տետրակների ընթերցումը պանսիոնի աշակերտների, մտերիմ ընկեր Աղաֆոնի և գնդապետ Գ.

---

[1] ԱԵԱ, № 65։

Սմբատյանի մոտ, փարատում է նրա երկյուղը։ Սանների ուրախության ու կարեկցանքի արտահայտությունները, Աղաֆոնի անկեղծ խոսքերը. «Թե էդպես կշարունակեք, շատ հիանալի բան կդառնա» և, վերջապես, գնդապետի ոգևորված բացականչությունը. «Մեր հայ Լոմոնոսովը ծնվել է» — այնպես են բոցավառում մեծ հայրենասերի ու հանճարեղ գրողի հոգեկան ուժերը, որ նա համարյա կորցնում է սառը դատողությունն ու երկյուղածությունը և արդեն շարունակում է գրել կրակված, աշխարհից վերացած վիճակում։ Այս է ասում մեզ «Վերք Հայաստանիի» նախնական չափածո վարիանտի առաջին թերթերի և հաջորդ մասերի համեմատական ուսումնասիրությունը, նույնն են հաստատում նաև Աբովյանի իր իսկ վկայությունները։ Ուստի շարունակենք լսել նրան.

«Նա գնաց թե չէ՝ կրակը ջանս առավ։ Սհաթի տասն էր առավոտը։ էլ հաց, կերակուր միտս չէկավ։ Ճանճը առաջովս անց կենալիս, ուզում էի, սպանեմ, էնպես էի վառվել։ Հայաստան հրեշտակի պես աչքիս կանգնել՝ ինձ թև էր տալիս։ Ծնող, տուն, երեխայություն, ասած, լսած բաներ էնպես էին կենդանացել, որ էլ աշխարքը միտս չէ՛ր գալիս։ Ինչ խոսք, կորած, մոլորած մտքեր ունեի, բոլոր բացվել, եդ էին եկել։ Նոր էի իմանում, որ գրաբառ ու ուրիշ լեզվներ՝ մինչ էն սհաթը միտս փակել, բռնել էին... Գիշերվան մինչև սհաթի հինգը ո՛չ հացի մոտիկ արի, ո՛չ չայի, չիբուխն էր իմ կերակուրը, գրիչը իմ հացը։ Տանեցոնց խնդրեցի, նե-

«Էլի՛ ազատվել... Երեք օր ու նույնքան գիշերներ ունեի. խմելը, քնելը, անգամ տեղից շարժվելը ինձ համար դժոխային տանջանք էր։ Ես կատաղում էի, երբ նույնիսկ ճանճն իմ կողքովս էր թռչում... Միայն նստած էի ես ննջում, իմ հացն ու ջուրը օր ու գիշեր մեն մենակ սուրճն էր։ Հայոց նոր լեզուն, որով ես մինչ այդ ամենաանշան առանձնավորների անգամ դժվարությամբ էի գրում, արթնացրել էր իմ հիշողության մեջ պատկերներ, դարձվածքներ, որոնց մասին մինչ այդ չէի երազել։ Իմ գրիչը չէր հասնում մտքերիս ու զգացմունքներիս նրանց... Օրական գրում էի 20 թերթից ավելի, այն էլ բացառապես հանգավոր տողերով...»[1]։

[1] ԱԵԱ, № 65։

ղանալուն, խառվելուն էլ չէ՛ի մտիկ անում։ Երեսուն թարադեն էն ա լցվելով էր, որ բնությունը իր պարտքը պահանջեց, այլեւս գը-նաց։ Սաղ գիշերը ինձ էնպես էր երևում՝ թե նստած գրում եմ...» (5)։

Ստեղծագործական այս լարված, ինքնամոռաց վիճակին են հաջորդել նաև պահեր, երբ Աբովյանը գրեթե կորցրել է իր հավասարակշռությունը, հառաչել, անկապ խոսել... «Մի առավոտ,— պատմում է նա,— բաց եմ անում աչքերս այս տանջալին վիճակից և, ի սարսափ ինձ, տեսնում եմ իմ ահաբեկված կնոջը, դայակին՝ հեկեկում են ու իրենց կորստում։ Իմ հարցերին, թե իսկապես ի՞նչ է պատահել, երեխայիս հո որևէ բան չի՞ եղել, արդյոք մահվան անկողնում չէ՞,— կինս վշտից չկարողացավ ոչ մի պատասխան տալ։ Վերջապես մեր դայակը, մի ռուս կին, ինձ կարեկցելով, կերկերուն ձայնով սկսեց բացատրել. «Պարոն, օ՜, պարոն, ի՞նչ արիք դուք մեզ հետ այս գիշեր ու հենց քիչ առաջ էլ։ Դուք բարձրաձայն ճչում էիք, լալիս, հառաչում, ձեր մազերը պոկում և հուսահատ կանչում աստված գիտե թե ինչ։ Ես ու իմ ողորմած տիրուհին էլ բան չմնաց, որ չանեինք ձեզ ուշքի բերելու համար, շատ ժամեր չարչարվեցինք ձեզ հետ միասին. Խղո՜ւր, խղո՜ւր։ Վերջապես հավատացինք, թե դուք, աստված չանի, խելագարվել եք։ Նոր միայն ուզում էի բժշկի ետևից գնալ, որովհետև ուզում էինք դեռ այս բանը գաղտնի պահել։ Այժմ փառք աստծո, դուք ինքներդ ուշքի եկաք»[1]։

---

[1] ԱԺԱ, № 65։ Այս դիպվածը գրեթե նույն ձևով նկարագրված է նաև «Վերք Հայաստանի» հառաջաբանում. «Էն առավոտը իմ դուշմանի տանը ո՛չ էդ գա, ինչ որ ես տեսա։ Աչքս բաց եմ անում, իմ խեղճ, զարիբ Գերմանացի կողակցի ձենն ա ընկնում ակնջս։ Տեսնիմ իմ միակնակ որդին ծոցին առած՝ էն արտասունքն ա վեր ածում, որ քարեր կմղկտան։ Ծառա

Այսպես ուրեմն. «Վերք Հայաստանիի» նախնական, չափածո վարիանտը Աբովյանն ստեղծել է լարված վիճակում, կարծես աշխարհից վերացած։ Նա գրել է ոգևորված ու ինքնամոռացման մեջ ընկած՝ օրեր շարունակ։ «Վերք Հայաստանին» գրելիս նա լացել է իր հերոսի հետ, ոգևորվել նրա քաջագործություններով։ Երեք օր ու գիշեր տևող ստեղծագործական ինքնամոռացմանն են հաջորդել նույնքան լարված մի քանի օրեր էլ, որոնց ընթացքում նա գրում էր ավելի քան քսան թերթ լիքը հանգավոր տողեր։ Ոգևորության պահին Աբովյանը չէր նկատում, որ իր մտքերն ու զգացմունքները հոսում էին հախուռն թափով, առանց կարգի ու հաջորդականության։ Խորապես ապրելով Աղասու հոգեվիճակը, նա չէր նկատում, որ շարունակ իր ձայնն էլ է խառնվում բանաստեղծական այդ հեղեղին, գրաբար լեզվով ինքն էլ է արտասանում վերամբարձ ու բարձրաթռիչ բառյակներ անձնվիրության ու հայրենասիրության մասին։ Հրեղեն գրչով կայծակնային արագությամբ լափելով էջերը, նա չէր նկատում, որ իրար ետևից շարում է մանկական հիշողություններ, վաղեմի ավանդություններ ու զրույցներ, առասպելներ ու հավատալիքներ, գյուղական կյանքի իդիլիկ պատկերներ, անցյալի տպավորություններ ու դիպվածներ, որոնք հայ ժողովրդի մեծ սրտի մեջ վերք էին թողել։

ու զարավուշ էլ՝ մեկ պուճախում են փետացել, կանգնել ինձ ցավելով մտիկ անում։ Ո՞վ սիրտը էս ահամթին չէ՛ր հաքել։ Գժվածի պես վեր թռա, երեխես եմ նայում՝ փառք Աստուծո՛ սաղ ա, կողակցիս եմ պաչում, սիրտը չի՛ կարում եղ քերել։ Ի՞նչ էր պատահել, չէի իմանում։ «Անաստված՝ ինձ սպանեցիր հո՛, էս ի՞նչ բան բերիր գլխիս». վերջապես լսեցի։ Տանեցն էլ մեկ կողմից են ինձ զնամիշ անում։ Վերջապես իմանամ՝ որ սաղ գիշերը անդադար դեյն եմ տվել, գոռացել, ա՜խ քաշել, խոսացել, ու ինչ որ հարցրել են տանեցիք՝ միշտ էլ Գերմաներեն ո՛չ, Հայերեն պատասխան տվել, ու հազար տեսակ վայրիվերո բան ասել, էլ եդ իմ կռիվն սկսել։ Մինչև ահամթի իննը էս հալումս ընկած՝ ես իմ քեֆն եմ արել, նրանք իրանց սուգն ու խնձանից ձեռք վերցրել» (5—6)։

Նկատի ունենալով ստեղծագործական այսպիսի թափը, միանգամայն բնական պիտի համարել «Վերք Հայաստանիի» նախնական չափածո վարիանտի գաղափարական գեղարվեստական թերությունները։ Աբովյանն ինքն է վկայում, որ գրիչը չէր կարողանում հասնել մտքերի ու հույզերի ետևից, էլ որտե՞ղից ստացվեր տրամաբանական կուռ ամբողջականությամբ երկ (նախագիծն անշուշտ ավելի մեծ ծավալ է ունեցել, քան մեզ հասած հատվածները)։

1841 թվականի փետրվար ամսի երկրորդ կեսին, չափազանց կարճ ժամանակամիջոցում (տառացիորեն մի քանի օրում), գրելով «Վերք Հայաստանիի» նախնական չափածո վարիանտը, Աբովյանն անմիջապես սկսում է մտածել վերամշակման մասին։ Ձեռագրի լուսանցքներում նա նշում է մի շարք դեպքեր ու դիպվածներ, որոնք վրիպել էին իր ուշադրությունից և որոնք պետք է տեղ գտնեին վեպի նախնական վարիանտի հյուսվածքի մեջ։ Օրինակ, 31-րդ էջում[1], ուր Աղասու երեխայության մեջ արևը խոսում է մարդկանց պարգևած իր բարիքների մասին, գրված է. «Աստ կարելի է երկարել»։ 38-րդ էջի լուսանցքում. «Պատմել հայոց քաջությունը, սարսափելությունը»։ 34-րդ էջում, ուր Նազլուն երեխաներին պատմում է Աղասու մասին, գրված է. «Աստ կամի երեխայոցն ցուցանել յերկինս, զոր պարտ է յաւելուլ»։ Մի քանի տասնյակի հասնող նշումներ կան ձեռագրի 94-րդ էջի լուսանցքներում, որոնք կարելի է բաժանել հետևյալ խմբերի։

Կրոնական տոներ, արարողություններ, նախապաշարումներ:—«Աշխարք բերել։ Համբարձում։ Ջրօրհնեք։ Վարդավառ։ Մեռոն օրհնել։ Ծում։ Ուխտ գնալ։ Մատաղ անել։ Ժամ։ Պատարագ։ Գերեզման <օրհնել>։ Պաս բաց անել։ Աղքատաց հաց տալը» և այլն։

[1] Այս և հաջորդ երեք թվահամարները վերաբերում են «Աղասու խաղի» ձեռագրին՝ ԱԵԱ № 55։

Կենցաղային ու առտնին սովորություններ:— *«Քարվան գնալը։ Հանգը հաց հայ մշակին։ Ճոճ գցել։ Հեռու տեղից գալը, առաջ գնալը, թթոցով պատուղ տալը։ Զուկ բռնել։ Գեղարքունի փորս անել։ Ջիրիդ։ Սարից եղ բերել։ Միրգ ծախել։ Հարսանիք։ Զատկի ձուն և բողչա։ Աչերին կուտը։ Դալի փայը աղքատաց։ Աչղների մարաքյա» և այլն։*

Արտացոլվող ժամանակաշրջանին բնորոշ իրադարձություններ:— *«Ղալարանթլղ։ Թուրքերի կռիվ»,— որ վերաբերում են, մեր կարծիքով, 1821 թվին պարսիկների և թյուրքերի միջև ծագած պատերազմին։*

Սրանց օրգանական շարունակությունն են կազմում հայերեն և գերմաներեն լեզուներով կատարած այն բազմաքանակ նշումները, որ մնացել են Աբովյանի արխիվում, առանձին թերթիկի վրա[1]։ Իրենց բնույթով այս նշումները ևս կարելի է բաժանել նույնպիսի խմբերի.

Կրոնական տոներ, արարողություններ, նախապաշարումներ:— *«Գեղարդի և մասանց հանելը և ման ածելը։ Համբարձում Քրիստոսի։ Թաղումը։ Օծումը։ Գերեզմանատան օրհնելը։ Բայրամը (Մհարամ — Գ. Հ.)։ Պողոց օգտակարության մասին, Հայոց, վասն հիվանդաց։ Պասորդ։* Սիամանի մասին ունեցած նրանց պատկերացումները[2]: *Պատարագը զանգակատանը» և այլն։*

Կենցաղային ու առտնին սովորություններ:— *«Երևանի կարի վրա քնելը։ Մեր գեղի աղջիկները, շատ* նանուշ: *Միրուքի պատիվը։ Բարեկենդանի ձեթոփը։ Գոմշի, ուղտի կռիվը։ Աղ ու* հաց *(Հյուրասիրություն — Գ. Հ.)։ Փող շաղ տալը» և այլն։*

Արտացոլվող ժամանակաշրջանին բնորոշ իրադարձություններ:— *«Ցիցիանովի ժամանակի ծառայությունները և թուղթ։* Քաղաքը և լեռնաշղթան *(Ղարաքիլիսա և Լոռի — Գ. Հ.)։*

---

[1] Անձ. № 150։

[2] Ընդգծված այս և հետագա նշումները բնագրում գրված են գոթական գերմաներենով, թարգմանել ենք մենք։

Ղազախ, Ղարափափախ, Բորչալու, Նալի խան: *Թաթարաց տիրապետությունը բոլոր Ղազախու, Բորչալվի և այլոց տեղաց*։ Թաթարները որպես տիրապետող ազգ: *Թուրքի աղայոց եկեղեցի գնալը և սրբոց աչքը հանելը։ Պարսից խաները*։ Այս կախարդական կամուրջը Երևանի մոտ... Պանակուրյունը կամրջի մոտ: Թուրքերը մինչև այժմ վերաբերում են եղբայրների պես» և այլն։

Թերթիկի նշումների մեջ կա մի նոր խումբ ևս, Աբովյանի մանկապատանեկան հիշողությունները:— *«Այբբենի տախտակը*։ Տեր բուրք վաճառականը և *հայրս։ Աղա ջան, գլխիդ մատաղ, աչքիդ մատաղ (այսպես էր հայ գյուղացին դիմում պարսիկ հարկահանին — Գ. Հ.)։ Հորեղբոր ճարտարությունը։ Թուրք կանչեն իմ հորը*՝ Աբով Օղլի: *Գեորգ քեռի պաչ անելը և պատմությունը։ Քեշիշ սանդա բելա իչ (Թյուրքերը ծաղրում էին հայ քահանաներին այս արտահայտությամբ — Գ. Հ.)։ Հաղբատու թվանք ցցելս, Հերետիկոս անվանելս։ Աղասու սպանելը վասն քաշելոյն քվեր յուղոռ» և այլն։*

Ծրագրային նշումների խորը ուսումնասիրությունը մի հետևություն է բերում. «Վերք Հայաստանի» նախնական չափածո վարիանտն ավարտելուց հետո, մի առ ժամանակ, Աբովյանն այն համոզման է եղել, որ եթե այն հարստացվի նոր կերպարներով, Աղասու և այդ նոր կերպարների ապրած ու գործած ժամանակաշրջանին, միջավայրին ու կյանքին բնորոշ դեպքերով ու դիպվածներով, ապա նրանով կարելի կլինի իր ծրագրերն ու ցանկությունները հայ ժողովրդին հասցնել։ Աբովյանը մինչև իսկ փորձ էլ է անում նույն բնույթի ու երանգի նոր հատվածներ գրելու։ Պահպանվել է դրանցից մեկը՝ որ կրում է «Գեղի տակով անց կենալիս երգած»[1] վերնագիրը։ Դա մի մենախոսություն է, որ ասում է Աղասին,

[1] *Տե՛ս, ԵԼԺ, I, 150—151։ Բանաստեղծության բնագրի գրչությունը, թուղթը և թանաքը տառացիորեն նույնն են «Աղասու խաղից» ձեռագրի՝ գրչության թղթի ու թանաքի հետ։*

ֆարաշներին սպանելուց հետո, փախչելու պահին, երբ ընդմիշտ թողնում էր հայրենի տունը և ահավոր վտանգի առաջ կանգնած հարազատներին.

Աչքե՛ր՝ ընչի համար դուք չեք դուս գալիս, ա՞խ չեք դուս գալիս.
Ձեռնե՛ր — ինչպես չե՞ք չորանում, թափում, ա՞խ վրես մնում
Ոտնե՛ր, ինչպես որ էս հողը կոխում, ախ ինձ տեսնելիս
Քարե՛ր, ինչպես չեք ինձ տակով անում, ա՞խ ինձ սպանում...

Այս աղեկտուր կանչերին են հաջորդում սիրած հայրենիքից՝ վաթանից հեռանալու մեծ ու ահավոր կսկիծի և հարազատներից բաժանվելու ցավի արտահայտությունները.

Վաթան—Նազլու—Նազլու—վաթան.
Խեղճ հեր, խեղճ մեր, որդիք ցրված
Ախ ո՞ւր եք, ախ մեռա — ձեզ զուրբան
Ձեր չարը տանեմ — Աղասուն տարան։
Ջուրն ուզեմ ընկնեմ, ոտներս ա կապած,
Թուրը խրեմ սիրտս՝ ձեռներս ա թոզած
Քարերին ձեն տամ, նրանք չեն իմանում,
Գետնին եմ խնդրում նա չէ պատռվում.
Ախ ում ասեմ դարդս, որ էս հաղաքումն
Իմ հոգին առնի, չոմննամ անում...։

Բայց Աբովյանը այստեղ էլ կանգ է առել, այլև չշարունակելով։ Աղասու հոգեվիճակի նկարագրությունը՝ գյուղից հեռանալու պահին, իհարկե, տրված է նաև «Վերք Հայաստանի» հաջորդ վարիանտներում, սակայն միանգամայն տարբեր ձևով։ «Ձեռն ու ոտը կապած՝ դժոխքը փորումը, սադայելյան չար հրեշտակները գլխին պտիտ տալով, Զանգվի վրովն անց կացրին, ու հենց բռնես՝ սար ու ձոր բերանները բաց՝ նրանց ըլին ուզում կուլ տան, էնպես փախցրին նրան՝ նրա քաջ ընկերքը։ Շատ անգ իրանից գնում, քիչ էր մնում ձիուցը վեր ընկնի, էլի ընկերքը հասնում, երեսին ջուր էին ածում, անկաջները տրորում, եդ բերում. էլի նրա սիրտը գընում, ձիու գլխովն էր ուզում ընկնի։ Բաղի վախտ՝ որ բիրդանբիր՝ «Թա՛գուհի, նա՛նի, բա՛բի, Նա՛զլու» չէր ձեն տալիս, քար ու հող ուզում էին կրակվին» (131)։ Այս և վերևի հատ-

վածների թռուցիկ համադրությունն իսկ ցույց է տալիս, որ եթե վեպի առաջին չափածո վարիանտում հերոսի ապրումները լուսանկարչական ճշտությամբ են վերարտադրված, ապա վերջինում Աբովյանը դիմել է պատկերավորության, պարզության ու սեղմության։

Ժամանակ անց Աբովյանը ընդմիշտ հրաժարվեց Աղասու կյանքի ու սխրագործությունների պատմությունը վեպի նախնական չափածո վարիանտի ոճով վերարտադրելու մտքից, դրա հետ միաժամանակ՝ վերևում մեր բերած շատ ու շատ ծրագրային նշումները իրականացնելուց։ Անշուշտ նա գիտակցում էր, որ նրանց վրա պատշաճ ուշադրություն դարձնելու դեպքում՝ պարսկա-թյուրքական բարբարոսների կողմից հրի ու սրի մատնված հայ ժողովրդի կյանքն ու ազատաբաղձ ձգտումները և ռուս ժողովրդի օգնությամբ Հայաստանի պատմության մեջ կատարված խոշոր շրջադարձը պատկերելու, տիպեր կերտելու փոխարեն, ստիպված պիտի լիներ զբաղվելու ազգագրական մանրամասներով, կենցաղագրությամբ։ Այնուամենայնիվ նշումների մեջ կային կարևոր շատ խնդիրներ, որոնց սակայն, Աբովյանը անդրադարձավ վեպի հաջորդ վարիանտներում[1]։ Նա արդեն համոզվել էր, որ այդօրինակ

[1] Խոսքը վեպում արտացոլվող ժամանակաշրջանին բնորոշ իրադարձություններին և Աբովյանի մանկապատանեկան հիշողություններին վերաբերող նշումների մասին է, որոնց մեծագույն մասը, ինչպես, մարմնավորվել են «Վերք Հայաստանի» մաքրագիր վարիանտում (մասամբ և սևագրում)։ Օրինակ, ռուս-պարսկական պատերազմի ժամանակ Բորչալուում և Ղազախում կատարված անցքերի և Նագի խանի գործած չարագործությունների մասին խոսք կա 2 և 3-րդ գլուխներում (89—90, 99—100, 125 էջ)։ Հայոց եկեղեցիների այրված ու աչքերը հանած սրբապատկերների մասին՝ 2-րդ գլխում (79), Մհայամի տանուտերության կապակցությամբ սարդարին շնորհավորելու եկած հայ հոգևորականների՝ մահմեդականներից կրած ծաղրուծանակի մասին՝ 2-րդ գլխում (78), Երևանի կամուրջով անցնելիս իրեն (Աբովյանին) պաշարած սարսափի մասին՝ 2-րդ գլխում (58), իր հորեղբոր Հարությունի հարստահարության մասին 1-ին գլխում (21—26) և այլն։

պահանջման երկով չէ, որ ժողովրդին պիտի ներկայացնի իր խոհերն ու ցանկությունները, այլ արձակ վեպի, ռեալիստական պատմավեպի միջոցով։ Ուստի նույն 1841 թվի կեսերին ձեռնարկում է «Վերք Հայաստանի» վեպի երկրորդ, արդեն արձակ վարիանտի ստեղծագործմանը՝ բոլորովին նոր պլանով, նոր ոճով և ընդգրկման շրջանակներով։

գ) ԵՐԿՐՈՐԴ, ԱՐՁԱԿ ՎԱՐԻԱՆՏ (ՍԵՎԱԳԻՐ)

«Վերք Հայաստանիի» երկրորդ, արձակ վարիանտի ձեռագիրը բաղկացած է 200 թերթից և ծայրից ծայր գրված է Աբովյանի ձեռքով[1]։ Վեպի առաջին և երրորդ գլուխները առավել մշակված են, գրված են՝ պարզ, մաքուր, առանց շտապելու, իսկ երկրորդ գլխի մեծ մասի տեքստը՝ խառը, անկանոն ու արագ ձեռագրով և շատ տեղեր՝ առանց կետադրության։ Ակնհայտորեն երևում է, որ մեր ձեռքը հասած այս ձեռագրին նախորդել է մի ուրիշը ևս, որի առաջին և երրորդ գլուխները, Աբովյանը կարողացել է վերամշակել ու մաքուր արտագրել, իսկ երկրորդ գլխի մեծ մասը թողել է համարյա անփոփոխ (խոսքը ԱԽԱ, № 2, 49—68 թերթերի մասին է—

[1] Պահվում է՝ ԱԽԱ, № 2։ Տպագրվել է՝ ԽԱ, ԵԺ, III, 203—363։ Հրատարակության ժամանակ բնագրի առանձնահատկությունների վրա մանրակրկիտ ուշադրություն չի դարձվել։ Որոշ տեղեր, Աբովյանի կատարած հետագա ավելացումները առանձնացված չեն (242-րդ էջի առաջին պարբերության, 245—246 էջերի «Երիցներն կիմանան...» բառերով սկսվող և «...պահ չես տվել» բառերով վերջացող հատվածը և այլն)։ Երբեմն աչքաթող են արված ձեռագրի լուսանցքներում եղած ծրագրային նշումները (ԱԽԱ № 2, թերթ 102 բ— «Լազգին, Միրիմանովն, Չավչավադզեն»), երբեմն էլ ձեռագրի բացթողումները լրացվել են վեպի վերջին վարիանտն արտագրող գրչի հետևությամբ, մեխանիկորեն վերջինի թույլ տված սխալները մուծելով Աբովյանի տեքստի մեջ (էջ 363, ձեռագրում՝ ԱԽԱ № 2, թերթեր 199բ և 200ա) և այլն։ Նույն ուսումնասիրության մեջ, «Վերք Հայաստանիի» արձակ վարիանտներից մեջբերումները անելիս, ամեն անգամ հենվել ենք ձեռագրերի վրա, թեպետ ցույց ենք տալիս տպագրված տեքստի էջերը։

Գ. Հ.)։ Ուստի իմանալով հանդերձ, որ չափածո նախագրի և այս արձակ վարիանտի միջև եղել է մի ուրիշ ձեռագիր ևս, մինչև հիմնավոր փաստերի երևան գալը հարցն այդքանով էլ փակենք և անցնենք վեպի երկրորդ, արձակ վարիանտի կամ ինչպես կոչելու ենք այսուհետև, սևագրի առանձնահատկությունների և ստեղծագործման հանգամանքների ուսումնասիրությանը։

Իր բովանդակությամբ, ընդգրկած ժամանակաշրջանով և կերպարներով «Վերք Հայաստանիի» սևագիրը հիմնականում համապատասխանելով վեպի վերջնական վարիանտին, այնուամենայնիվ վերջինիս համեմատությամբ ունի բավականաչափ տարբերություններ։ Նա չունի ընծայական և հառաջաբան, չափածո հատվածներով աղքատ է, ավարտվում է ոչ թե Աղասու մահով, այլ ռուսական զորքերի Երևանը գրավելու տեսարանով. «Մեծ էր հիրավի ու անմոռանալի Ռուսաց Փարեժ մտնիլը, բայց ե՞րբ Գաղղիացիք էն հոգվովը իրանց բախտավորությունը կվայելեին, ինչպես Հայք էս արժանահիշատակ օրը» (363)։ Սրանք են նրա վերջին տողերը։ Նրա մեջ թույլ է ներկայացված պարսկական լծի տակ հեծող հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը, թույլ են արծարծված հայ ժողովրդին՝ անցյալի պատմության հերոսական էջերի վրա դաստիարակելու, նրա ուժերը համախմբելու և ինքնաճանաչման բերելու հարցերը, թույլ է նաև հոգևորականության քննադատությունը, իսկ վիպական կերպարները բավականաչափ անգույն են։ Գեղարվեստական ու լեզվաոճական առումով նույնպես սևագիրը տառապում է մի շարք թերություններով՝ զգացվում է էպիկականության պակաս, շարահյուսությունը խճճված է, ոճի մեջ գերակշռում է նատուրալիզմը, կառուցվածքը միաձույլ չէ և այլն։

Սևագրի մեջ կան հատվածներ էլ, որոնք վեպի վերջնական խմբագրության ժամանակ դուրս են թողած։ Դրանցից առանձնապես հետաքրքիր է մեկը, ուր Աբովյանը պարզել է

իր պատմահայեցողությունը, իր վերաբերմունքն արտահայտել եվրոպական պատմագրության հանդեպ։ Այդ հատվածում ասված է, որ ժամանակի եվրոպական պատմագրությունը աչառու է, միակողմանի, ծառայում է պետականություն ունեցող ազգերին, պատմագիրները շարժվում են տիրողների քմահաճույքով ու թելադրանքով և արհամարհանքով փոքր ժողովրդներին դուրս թողնում պատմության տեսադաշտից։ «Պատմությունը, անհավատարիմ պատմությունը — գրում է Աբովյանը,— որ Հայի համար պապանձվել ա... էն ազգերին միայն գլուխ վեր բերի ու անարգարար կեղծավորությամբ տակը մտնի, որ թագավորություն ունին ու պատմություն գրողին կամ պարգև, կամ պատիժ կտան...»։ «Անտեր ազգին ո՞վ մտիկ անում, աշխարհս զոռովին ա գլուխ վեր բերում, ծունկը համբուրում՝ ու պատմագիրքն էլ ըստ մեծի մասի Եվրոպացի ըլելով, իրանց ազգերին են առաջ քաշում» (305)։

Ասված է, այնուհետև, որ եվրոպական պատմագրությունը ոչ թե ժողովրդի, այլ նվաճողների պատմություն է։ Նրա հերոսներն են Չինգիզ խանի, Թամերլանի, Նադիր շահի և այլոց նման աշխարհն արյան մեջ խեղդողներն ու ջարդարարները, իսկ «Հայոց քաջ որդիքը՝ որ երկու հազար տարուց ավելի իրանց արնովն, իրանց թրի զոռովն» պահպանել են իրենց գոյությունը», անուշադրության են մատնվել։ «Բայց ափսո՜ս ընչի՞ չի աշխարհներ քանդեցին գազանի պես՝ որ պատմությունը լայաղ անի՝ նրան էլ իր գոշին կպցնի, նրան էլ գրկի ու իր օթախը տանի» (305),— հեգնանքով ու դառնությամբ նկատում է Աբովյանը։

Եվրոպական պատմիչները փոքր ժողովրդներին անդրադառնալու դեպքում էլ, սխալ են ներկայացնում վերջինների բնավորությունն ու պատմությունը։ Մասնավորելով իր խոսքը հայերի մասին, Աբովյանը ընդգծում է, որ այդ պարոնները առանց ամաչելու «էստեղ, էնտեղ գրքում կամ կազեթում» գրպարտչական հարձակումներ են կատարում հայ ժողովրդի

վրա, որպես թե անմիտ են, վաշխառու և ոգետ, ռուսներին նվիրված չեն և այլն։ Մերժելով այդ սխալ կարծիքը, Աբովյանը վկայակոչում է ռուս-պարսկական պատերազմի տարիները, երբ հայ ժողովուրդը, օրհասական պահին անգամ, չդավաճանեց Ռուսաստանին։ Նա առաջ է քաշում անաչառ կերպով Վրաստանի պատմությունը գրելու անհրաժեշտության հարցը (ռուսական տիրապետության տակ անցնելու ժամանակաշրջանում), որը երևան կհաներ բազմաթիվ պերճախոս փաստեր, ուր «թղթի երես անց չկենա՝ որտեղ Հայի անունն ու քաջությունը, հավատարմությունը ու սերը արեգակի պես լիս չտա» (304)։

Քանի որ եվրոպացիների համար արժեք չունի մի խաղաղասեր ու ստեղծագործ ժողովրդի կյանքը, Աբովյանն առաջարկում է գրել հայ ժողովրդի անցյալի ու հերոսական գործերի պատմությունը, որ սերունդների համար կունենա դաստիարակչական մեծ նշանակություն։ «Ոչինչ երկրում էնքան մեծամեծ անցք, խռովություն չի պատահել,— ասում է նա,— որքան Հայաստան, թե մեկ երկրի պատմությունը կլասիչեսկի է անվան<վ>ում, այսինքն՝ երևելի, արժանահիշատակ, էնդուր համար՝ որ մեծ մեծ բաներ ա անց կացել, էլ ի՞նչ տեղ աշխարքումս էնքան երևելի բաներ են անց կացել, որքան Հայաստան»(305)։ Պատմության իսկական հերոսին նա տեսնում է ժողովրդի մեջ. «Մեղավորը մենք ենք,— շարունակում է նա,— որ մեր ազգի արածները չգրեցինք, քննեցինք, ուրիշ ազգեր էլ չիմացան, ու մեր անօրինակ Հայկայից անվանքը, որ ամեն գեղում, ամեն պուճախում հարյուրավորը կային ու կան, էսպես անհայտ մնացին» (305)։

Աբովյանի այս մտքերը մեզ օգնում են «Վերք Հայաստանի» վեպի գաղափարական տենդենցներից մեկը ըմբռնելու։ Ունենալով միանգամայն առողջ տեսակետ պատմության մասին, իր վեպում աշխատել է վեր հանել ժողովրդի ու նրա ծոցից դուրս եկած մարդկանց հերոսական ու հայրենասիրական

գործերը, ցույց տալ աշխարհին, որ հայերի մեջ էլ կա հերոսական ոգի, աշխատասիրություն և մարդասիրություն, աշխարհին ցույց տալու, որ հայերը վաշխառուներ չեն, ինչպես բարձրաձայն գոռում են նրանց մասին, որ նրանց մեջ էլ կան թաքնված շատ սուրբ զգացմունքներ, որոնք սակայն մինչև այժմ ո՛չ ոք չի շոշափել, և, հետևաբար, չի՛ էլ կարողացել ճանաչել»[1]։

Այս ուշագրավ մտքերը, «Վերք Հայաստանիի» սևագիր վարիանտի գեղարվեստական — գաղափարական թերությունների պատճառով, վիպական հյուսվածքից մի տեսակ դուրս էին մնացել։ Նրանց բանավեճային բնույթը և համապատասխան տեղում, իրենց նախորդող ու հաջորդող վիպական գործողության հետ կապված չլինելը Աբովյանին հարկադրել են վեպը մշակելիս հատվածն ամբողջությամբ մի կողմ դնել և նրա հիմնական դրույթները զարգացնել հառաջաբանում[2]։

Հետաքրքիր է նաև «Վերք Հայաստանիի» սևագրի մի ուրիշ հատվածը, որ խստորեն դատապարտված են մահմեդական մոլլաները, որոնք «դավրազություն անելով, խալխը խաբելով, ու սարերով ձորերով ընկնելով, աչքը մոխիր փչելով, խելքն ու միտքն ու սիրտը ու խոր վերնատունը դատարկ թողնելով, գիրն իր ծոցը դնելով, սուտ սուտ բաներ մոգոնելով» (253), թշնամանք են հրահրում երկու հարևան, բախտակից ժողովուրդների, թուրքերի ու հայերի միջև և մահմեդականների սրտում մոլեռանդության թույնն ածելով հայերի դեմ ուղ-

---

[1] ԱեԱ № 65։

[2] «Ափսոսում էլ, որ չէի կարդում բաղի գրքերում, թե Հայ ազգը պետք է՝ որ սիրտ չի՛ ունեցած ըլի, որ էնքան բաներ գլխովն անց են կացել...» (2—3) և այլն։ Սևագրում արծարծված հարցերի արձագանքը պիտի համարել նաև վեպի վերջին վարիանտում եղած «Պատմությունը՝ որ հայի համար թողացել՝ մեծ մեծ ազգերին ա զուլում անում...» (123), «Մի՛ ասի՛ր՝ թե <Հայերը> թամբալ են, բանից փախչում են, սրանց ամեն մեկի սրտումը հազար թուր կա ցցված» (88) և այլ արտահայտությունները։

ղում, նրանց մեղքով է, որ մահմեդականները «խեղճ Հայի արինն, կամ այլ քրիստոնեի՝ ծծեցին, քամեցին, հոգին բերանը հասցրին, տունը քանդեցին, շատն էլ թուրքացրին» (254)։

Աբովյանը քննադատում է նաև կրոնական մոլեռանդությունը, հավատը կամ կրոնը, որը նույնպես պակաս չարիքներ չի հասցրել մարդկությանը. «Ո՞վ կույր հավատ,— ասում է նա,— որ խեղճ մարդի սուրբ հոգին ճանկդ ես քցել, ու պատառոտում ես, կեղեքում, կտրատում, բայց ինքը չի՛ իմանում — որովհետև անունդ սուրբ ա, զորությունդ շատ։ Աստծու տված ես՝ բայց մարդի սրտումն, ինչպես ուզում ա, էնպես ա քեզ շուռ տալիս—բայց դու էլ նրան ես լավ շուռ տալիս — մեզ մոտ մնա — շատես ուրիշին — փիս ա։ Քեզ համար էլ վատ ա» (254—255) և այլն։ Թեպետ այս հատվածը բավական մանվածապատ է, սակայն ակնհայտ է Աբովյանի ըմբռնումը կրոնից։ Տարիներ հետո գրած «Թուրքի աղջիկը» վիպակում, փառաբանելով սիրո վրա հենված կրոնը, բնական կրոնը, մարդկանց բնական հավասարությունը, Աբովյանը հստակորեն չձևավորված իր այս մտքերն էր զարգացնում, խորացնում ու հիմնավորում։ Այս մտքերի թույլ արձագանքները կարելի է տեսնել նաև վեպի վերջին վարիանտում, Աղասու դատողությունների մեջ, բայց, իհարկե, բոլորովին նոր գույնով, նոր երանգով։ Եթե սևագրի մեջ այսպիսի դատողությունները սովորաբար երկի սյուժեից դուրս են մնում, շեղումներ են, որոշակի հերոսի հետ չեն կապվում, ապա վերջնական վարիանտում նրանք զտվում են, բեռնաթափվում, ավարտուն տեսք ստանում, դառնում որոշակի կերպարի սեփականություն և օրգանապես ձուլվում այդ կերպարի խոհերին ու դատողություններին։

«Վերք Հայաստանի» սևագրում կան հետագայում չօգտագործված շատ հատվածներ էլ, որոնցից կարելի է գաղափար կազմել վեպի հիշյալ վարիանտի կառուցվածքի, ոճի ու լեզվի

առանձնահատկությունների մասին։ Իրենց բնույթով այդ հատվածները մոտ են վեպի չափածո նախագրին։ Նրանց մեջ էլ բացակայում է ներքին կապն ու հաջորդականությունը, լի են շեղումներով ու հեղինակային միջամտություններով, չարաճճիորեն խճճված են, լեզուն լիքն է անհարկի բառերով ու արտահայտություններով. բերենք մի նմուշ։

Երգիծական երանգներով պատկերելով Այրարատյան դաշտում, ամառային արևակեզ կեսօրը, կենդանիների հանդեսը, իսկ հետո Մհաղյամի տոնակատարությանը շտապող մահմեդականների արտաքինը (241—245), Աբովյանը հանկարծ ընդհատում է նկարագրությունը և դառնում ընթերցողին. «Մեր տղա չի ծիծաղաս — ամոթ ա — լավ չեն ասիլ — էս քաշախած պարոնների քեֆլներին կդիպչի» (245)։ Թվում է, թե այս նախազգուշացումից հետո պիտի շարունակվի նկարագրությունը, բայց՝ ո՛չ։ Աբովյանը նույն ոգով շարունակում է. «Էս շան հայլին — էս սև օրին — ասկու չեն քթնում — թե կըրծեն — դու էլ ուզում ես վրները ծիծաղի՞ս — հա՞յ լիրբ, անամոթ, անաստված — բերանդ քեզ արա՛ — էս ֆոռած խիարին — էս գոմշի կվին — էս սատկած շանը — էս ղոթուր իշին — էս կապը կտրած աուշին — էս կատաղած գիլին — էս նենգավոր օձին — էս թոզից փախած կովին մի՛ մոտանար, թե չէ՛ հարո՛ւ կտա... կկծի, յաղու կտա...» (245)։

Այս անմշակ, նատուրալիզմով, անհարկի արտահայտություններով և անտեղի կուտակումներով լի տողերին են հաջորդում նորերը, ուր, սակայն, բոլորովին կողմնակի բաների մասին է խոսքը. «Քրիստոսը որ ասաց՝ «քեզ չար անողին բարի արա» (գրաբառ չեմ գիտում, ների՛ք, էդ սևագլխների բան ա, էնպես խոր խոր տեղերից խոսալ, որ իրանք էլ չհասկանան, ի՞նչ թե մենք), չասաց՝ թե հավի պես կուչ արի, ով կլխփի գլխից — դու տաղ արա, քո վարձը երկնքումը կառնես։ Հարամ ըլի էն վարձը, էս տեղ որ ինձ սպանեն, էնդեղ ինչ կուզեն, անեն» (246)։ Անկախ վերցրած, իհարկե, սա

քաղաքական սուր նետ է՝ ուղղված քրիստոնեական բարոյախոսության դեմ, բայց տեղին ասված չլինելու հետևանքով նպատակին չի հասնում։ Սրան հաջորդում է անկապ արտահայտությունների նոր շարք. «էլի բերանս բաց էլավ, գլուխս քարը առնի, սիրտդ տեղն ընկավ, հարա՛, չիբուխ քաշի, մհլամ դի՛ր ատամիդ վրա, անկաչըրդ կապի, ցուրտ ա, չմրսի. հար կուլ տուր...» (246) և այլն, և այլն։

Ինչի՞ համար են այս բոլորը, ի՞նչ է ուզում ասել հեղինակը, դժվար է որևէ բացատրություն տալ։ Վերևի անորոշ արտահայտություններից հետո, թվում է, թե պիտի սկսվի բուն նկարագրությունը, բայց նորից են ծայր առնում շեղումները. «Դալաքին կանչիր, մի քիչ արին առնենք. քարակ դալաքն էլ հարփել ա, դուքանումը շան պես շնթռել։ Թաս դնա՛ պորտիկեն, թեղ, թեղ, ծափ թեփ պես թոփ. բանը բանիցն անց ա կենում։ Մնաք բարով, քանի որ ձեր տունն եմ գալիս, էղպես մեկ ցավ է պատահում քեզ, էլ թե գամ, տոս կոտրվի...» (246)։ Ենթադրելով միայն կարելի է ասել, որ խոսքը հայ հարուստներին է վերաբերում, որոնք ամենայն անգամ, այլևայլ պատրվակներով, աշխատում էին խուսափել ազգօգուտ գործերից։ Ահա ինչից սկսեց և ուր հասավ Աբովյանը։ Այնուհետև նա խրատում է. «Պատվելի սիրելի[1], գերի ընկածին պետք է թափել, խեղդվողին պետք է ձեռք մեկնել։ Հիվանդին պետք է քոմակ անել... դու իմ դարդն իմացի, ես քոնը։ էն ժամանակը կըդառնանք հալալ ախպեր» (246)։ Բայց այստեղ էլ միտքն ընդհատվում է։ Ասես գալիս են շեղումներ՝ մեկը մյուսի ետևից, շեղումներ ու սայթաքումներ, իսկ ողջ ասելիքը դեռ մնում է։ Այսօրինակ բազում շեղումներից հետո միայն Աբովյանը հավաքում է մտքերը և խոսքը դարձնում ժամանակի «կարողություն» ունեցող մարդկանց։ «Արի՛ սիրտ

[1] Նախապես այս բառի տեղ գրված է ձգել իշխան, որ հետագայում ջնջված է։

սրտի տանք, ես իմ կարողության դյորա, դու քու: Իրար սիրենք, պատվենք, մյուսների թասիբը քաշենք, խեղճին քոմակ անենք, թե էլ խոսամ, լեզուս պապանձվի: Ես լեզու եմ սովորել, փող չեմ դատել: Ի՞նչ անեմ: Ամա լեզվով մարդ շատ տուն ա քանդում կամ շինում, քանց փողով...» (247): Եզրակացությունը պարզ է. ժողովրդի վիճակը կարելի է բարվոքել ամենակարող լուսավորության և ունևորների աջակցության միջոցով: Բայց ի՞նչ գործ ունի այս միտքը Մհալյանի տնակատարության նկարագրության մեջ, անկարելի է հիմնավորել:

«Վերք Հայաստանիի» սևագիր վարիանտի շատ մասերում առկա շեղումները ցույց են տալիս, որ վեպի այս վարիանտում ևս Աբովյանը դեռ չի կարողացել իրեն հուզող հարցերը պարզ, դյուրըմբռնելի լեզվով և գեղարվեստորեն համոզիչ եղանակներով արծարծել, դեռ չի կարողացել գտնել հերոսների հանդիպադրման միջոցով ժամանակաշրջանի կենսական խնդիրները հրապարակ հանելու և լայն մասսաներին հասցնելու գաղտնիքը: Հերոսների փոխարեն շարունակ խոսում ու դատողություններ է անում հեղինակը, բայց միջամտություններով, այնքան խճճված, որ մտքերը կուլ են գնում: Ակներև է, որ սևագիրն ստեղծելու պահերին նույնպես Աբովյանը եղել է լարված վիճակում և սառը դատողականությամբ չի կարողացել իր գրածը հսկողության տակ առնել:

Վեպի սևագիրը ունի մի ուրիշ յուրահատկություն էլ, որ հատուկ չէ «Վերք Հայաստանիի» վերջնական վարիանտին: Դա առակների առկայության, առակներն իբրև արտահայտչական միջոց օգտագործելու փաստն է, որի նպատակը ո՛չ այնքան վեպը հետաքրքիր ընթերցելի դարձնելն է, որքան այս կամ այն գաղափարը այլաբանության միջոցով ընթերցողին հասցնելը: Սակայն այդ ևս վեպի սևագրի ոճի ու կառուցվածքի մեջ, ավելի կուռ ու միասնական դարձնելու իմաստով, որևէ գրական փոփոխության առաջ չի բերել, ընդհակառակը,

ավելի է խճողվել նրկի կառուցվածքը (տես էջեր 251—252)։

Սևագրում կան հովվերգական բնույթի նկարագրություններ էլ, որոնք նույնպես վեպի վերջնական տեքստում տեղ չեն գտել։ Դրանցից մեկը վերաբերում է Լոռվա լեռնաշխարհի մարդկանց կենցաղին։ Ազատ բնության այդ զավակները չգիտեն ահ ու սարսափ։ «Գիշերվան մութը բռնած վախտը... կրակի չորս կողմը նստում, որը գողից <էր> պատմում, որը կովից, որը թվանքը լցնում, որը թուրն ու ղամեն հազրում, որը դուս գնում մեկ թվանք քցում, ձեն տալիս, էլ եդ ներս գալիս՝ որ գող չի գա, կամ գել չմոտանա (335) և այլն։ Այս ու նման հատվածներն, անշուշտ, կրճատվել են ո՛չ թե գեղարվեստական թուլության պատճառով, այլ որպեսզի վեպի մեջ պատմական ժամանակաշրջանի խնդիրներն ավելի լայնորեն արծարծելու համար տեղ ազատվի և պատմավեպի ժանրին ո՛չ բնորոշ տարրերից վեպն ազատագրվի։

Վեպի սևագիր ու վերջնական վարիանտներն ունեն ուրիշ տարբերություններ էլ, որոնց կանդրադառնանք աշխատության հաջորդ գլուխներում։

Այժմ պարզենք, թե ե՞րբ և ի՞նչ պայմաններում է ստեղծվել «Վերք Հայաստանիի» երկրորդ, արձակ վարիանտը կամ սևագիրը։

Վերևում տեսանք, որ Աբովյանը վեպի առաջին, չափածո վարիանտի ստեղծագործմանը ձեռնարկեց 1841 թվի փետրվարին և նույն ամսին էլ, կարճ ժամանակում, ավարտեց։ Այնուհետև, որոշ ժամանակ, նրան մտահոգել է չափածո վարիանտի վերամշակումը։ Ենթադրում ենք, որ վեպի այս նոր, արձակ վարիանտի ստեղծման ուղղությամբ Աբովյանը իր աշխատանքները կարող էր սկսել 1841 թվի կեսերին կամ ամառային արձակուրդների ժամանակ։ *Սևագրության մի մասը նա արտագրել է Թիֆլիսի գավառական դպրոցի գործի շապիկների վրա, որոնց մի մասը վերաբերում է՝ 1838, 1839*

և 1840 թվերին[1], իսկ մեկը՝ 1841 թվին[2]։ Անառարկելի է, որ, հատկապես վերջին շարքը, կարող էր օգտագործվել միայն համապատասխան գործը շարքից դուրս գալուց հետո, իսկ դա, բոլոր դեպքերում, 1841 թվի կեսերից վաղ չէր կարող լինել։

«Վերք Հայաստանի» սևագրում Աբովյանը հիշում է Հովհաննես Կարբեցի կաթողիկոսին, իբրև կենդանի մարդու («Առաջին եպիսկոպոսը... Հովհաննես՝ այժմյան կաթողիկոսը»—270)։ Հովհաննես Կարբեցին վախճանվել է 1842 թվի մարտի 26-ին[3]։ Ուրեմն, վեպի սևագիրը 1842 թվի սկզբներին արդեն ավարտված է եղել, ինչպես նաև արտագրված, հակառակ պարագայում Հովհաննես Կարբեցին, իբրև կենդանի մարդ, չէր հիշվի այնտեղ։

Աբովյանի պանսիոնի աշակերտ Գ. Աբիխյանը պատմել է. «1841 թվի աշունքին պանսիոնի աշակերտներից 10 հոգի ճամփորդի պես հագնված գնացինք վարժապետի հետ՝ մեծ մասս ոտով, զրույց անելով՝ դեպի Սոմխեթ, Խրամի կողմը։ ...Աբովյանցը շարունակ հարցեր էր տալիս այս ու այն պատահող գեղացի ծերին, թե ի՛նչ անցքեր են պատահել այդ ձորերում, շեներում և ծորատեղերի մեջ նշանակում էր նշանավոր տեղերի, անձերի անունները։ Երբ տեղ հասանք, քեֆ անելը թողած՝ խոսեցնում էր ուխտավորներին, տեղեկություններ ժողովում 15—16 տարի առաջ եղած քրդերի արշավանքի մասին, թե քուրդ Օքյուզ աղեն ինչպես է թալանել Նեմեցի Կոլոնիեն, որի նկարագիրը վարժապետը գեղեցիկ կերպով գրել է «Վերք Հայաստանի»-ի մեջ... Հետևյալ առավոտ ֆուրգոնով գնացինք Շուլավեր... Վարժապետս լավ էր, որ

---

[1] ԱԵԱ № 2, թերթեր 135, 143, 179 և 159, 163, 189։

[2] Նույն տեղում, թերթ 176,—Дело с представлением годового отчета за 1840 год в Дирекцию Закавказских училищ, 1841 года.

[3] Ա. Երիցյան, Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, հ. II, Թիֆլիս, 1895, էջ 547։

Հասան-խանի օրով երկու շուլավերցի մելիքներ են նահատակվել քրդերի ձեռքով. ուստի դուրս եկավ փողոց, ծերերին խոսեցրեց, ծոցատետրի մեջ նշումներ արեց: Այդ մասին երկար գրած կա «Վերք Հայաստանի» գրքի մեջ»[1]:

Վեպի առաջին, չափածո վարիանտում ոչ մի խոսք չկա շուլավերցի Սոսի և Հոհանջանի հերոսական վախճանի մասին, ինչպես նաև ռուս-պարսկական պատերազմի տարիներին Ղազախի ու Բորչալուի անցուդարձերի մասին: Չափածո վարիանտը վերամշակելու համար կատարած ծրագրային նշումների մեջ Ղազախի և Բորչալուի անցքերը գրավում են Աբովյանի ուշադրությունը[2]: Ինչպես երևում է, վերոհիշյալ ճանապարհորդության ժամանակ նա ճշտել է իր իմացածը և հետո, արդեն, ընդարձակորեն պատմել «Վերք Հայաստանի» սևագրում, իսկ ավելի ուշ, որոշ վերամշակումով նաև վեպի վերջնական վարիանտում:

«Վերք Հայաստանի» արձակ վարիանտն ստեղծելիս Աբովյանը անձամբ այցելել է պատմական վայրերը, խոսել ու խոսեցրել է մարդկանց, հետամուտ եղել, որպեսզի պատմավեպում վերարտադրվող դեպքերն ու դեմքերը ավելի ճըշմարտացի և պատմությանը հարազատ լինեն:

Ժամանակ անց վեպի այդ վարիանտն էլ չի բավարարում Աբովյանին: Ձեռագրի էջերի վրա՝ տողերի արանքներում ու լուսանցքներում, նա կատարում է բազմաթիվ փոփոխություններ ու ավելացումներ. առաջին և երրորդ գլուխների կանոնավոր ու մաքուր գրված շատ ու շատ էջերը սկսում են ծածկվել տասնյակ ջնջումներով ու լրացումներով, էլ չենք խոսում երկրորդ գլխի մասին, որից հետագայում շատ քիչ բան

---

[1] Ժամանակակիցները Աբովյանի մասին... էջ 111:

[2] Նկատի ունենք «Kasak, Garapapach, Bortschalu, Nagi Chan» («Ղազախ, Ղարափափախ, Բորչալու, Նաղի-խան») և «Թաթարաց տիրապետությունը բոլոր Ղազախու, Բորչալվի և այլոց տեղաց» նշումները, ԱԵԱ № 150:

փոխանցվեց վերջնական վարիանտի մեջ։ Ռեալիզմի պահանջը հարկադրում է հեղինակին ձեռագրի մեջ ներմուծել նախապես գրած «Մհալլամի սուրը» չափածո ազգագրական ֆարսը կամ պարսից բայրամի,— որի հետ հայերը տանջակ մռայլ հիշողություններ էին կապել,— նկարագրությամբ։

Հերոսներից՝ Նազլուի բնավորության գծերի թույլ բացահայտված լինելը Աբովյանին թելադրում է հորինելու Նազլուի նամակը Աղասուն, որն ամենահարմար միջոցն էր այդ կնոջ հոգեկան ծանր ապրումներն ու զգացումները վերարտադրելու։ Վերքից դուրս մնացած մի շարք կարևոր դեպքեր ու խնդիրներ նախորդ վարիանտի ծրագրային նշումների ձևով գրի են առնվում լուսանցքներում։ Ձեռագրի 48ա էջի լուսանցքում (այստեղ քննադատվում է՝ աղճատված ձևով ռուսերեն բաներ օգտագործելու վնասակար տենդենցը), օրինակ, նշված է. «Թուրքերի օրինակը», որ վերաբերում է պարսկերեն ու թուրքերեն բառերից հայոց լեզուն մաքրելուն։ 102 բ էջի լուսանցքում (նկարագրվում է պարսից ննդավոր հարձակումը Ղարաքիլիսայի վրա) նշված է. «Վաղգին, Միրիմանովն, Ջավչավադզեն»։ Խոսքը վրաց նշանավոր գրող ու գործիչ Ալեքսանդր Ճավճավաձեի մասին է, որ մասնակցել է ռուս-պարսկական պատերազմին։ Թե ի՞նչ դրվագ է ցանկացել պատմել՝ հայտնի չէ։ 48 բ էջում՝ «Ասա պարտ է խոսիլ պատուտասիրութենէ»,— որ վերաբերում է հայ երիտասարդությանը հայրենասիրական գաղափարներով ոգևորելուն։ 103 ա էջում՝ «Քանի անգամ հանելը Աղասու ու թրի ծերով խփելը։ Հ<ասան>-խ<անի> ձին բաղդուրմիշ ըլի. քյալի վրա վեր ընկնիլը ևն»։ 116 բ էջում՝ «Սահակ աղի խնդիրքը, Սավարզամիրզի գալը»։ 115 ա էջում՝ «Սահակ աղի, հայերի խնդիրը և լացը։ Հայ սարդարի ձեռք տան ու աշխարհի պես փաշալամիշ անեն»,— երեքն էլ վերաբերում են Ղարաքիլիսայի կոտորածին։ Վերջապես 59 ա էջում՝ «Էստեղ պատմել Սարդարի ֆարսերը գալը» (Մհալլամի տոնակատարության կապակցու-

թյամբ)։ Այս նշումներից միայն առաջինը և երրորդը հետագայում, մանրամասնաբար իրականացվեցին. մյուսները գրեթե այդպես էլ մնացին։

Նշումները ցույց են տալիս, որ Աբովյանը աշխատում էր ավելի ու ավելի ընդարձակել իր պատմվածքի ընդգրկման սահմանները, առավել ճշմարտապատում դարձնել այն։ Այդպիսին իսկապես որ դարձավ «Վերք Հայաստանիի» վերջին խմբագրությունը։

գ) ԵՐՐՈՐԴ ԵՎ ՎԵՐՋԻՆ ՎԱՐԻԱՆՏ (ՄԱՔՐԱԳԻՐ)

«Վերք Հայաստանի» վեպի երրորդ և վերջին վարիանտի ձեռագիրը կամ, ինչպես կոչելու ենք այսուհետև, մաքրագիրը, որը հիմքն է՝ վեպի հետագա բոլոր հրատարակությունների, պահվում է հեղինակի արխիվում[1]։ Նա բաղկացած է 472 էջից։ Կան տարբեր ժամանակներում և տարբեր մարդկանց ձեռքով արտագրված էջեր։ Ձեռագրի 1—95, 115—199, 218—224, 253—357 և 425—472 էջերը արտագրել է Աբովյանը, 199—218 էջի սկիզբը՝ աշակերտներից մեկը[2], իսկ մնացած 96—114, 225—253 և 357—424 էջերը՝ մի երրորդ անձնավորություն[3]։

Սևագրի համեմատությամբ մաքրագիրն ունի նոր մասեր։

Նախ՝ ընծայականը, որից պարզվում է, որ վեպը ձոնված է «Վսեմափառ Հայկազնույ Սմբատայ», որը, հեղինակի խոստովանությամբ, եղել է «Վերք Հայաստանիի» խրախուսողը և Աբովյանին հուսահատ վիճակից հանողը[4]։

---

[1] ԱԵԱ № 1։

[2] Ենթադրվում է, որ այդ աշակերտն եղել է Պետրոս Շարոյանը։

[3] Ամենայն հավանականությամբ այդ անձնավորությունը Խաչատուր Մարգարյանն է կամ 1840-ական թվերի սկզբներին Վրաստանի Թեմի Հայոց Հոգևոր կոնսիստորիայում աշխատող ատենադպիրը (տե՛ս կոնսիստորիայի գործերը ՀՍՍՌ Պետարխիվում)։

[4] Ինչպես ճիշտ ենթադրել է Ն. Շահազիզը, Սմբատը Հայկական մարզի վերջին կառավարիչ Գևորգ Սմբատյանն է (Դիվան, I, 345), այն մարդը,

Այնուհետև, հառաչարան, որ բացակայում էր ձեռագրի մեջ։ «Վերք Հայաստանի» հառաչարանը իր զուգակիցը չունի ողջ հայ գրականության մեջ։ Նա սովորական՝ «ընթերցողին» կամ «երկու խոսք» չէ։ Վեպի օրգանական մասերից մեկը լինելով հանդերձ, հառաչարանը, անկախ վերցնելիս էլ, մի ամբողջական գործ է, որը պատմում է հայ ժողովրդի գրականության տխուր վիճակի, հայ գրողի տանջերի ու ձգտումների և ժամանակի կաշկանդող շղթաներից դուրս՝ գալու ուղիների որոնման մասին, ժողովրդի հոգուն ու սրտին մոտ, ժամանակի պահանջներին համապատասխան նոր գրականություն ստեղծելու դժվարությունների մասին, մի հայրենանվեր արվեստագետի ընդվզման ու խիզախման և նրա ստեղծագործական հանճարի փայլատակման մասին։ Հառաչարանի մեջ, որպես կիզակետի, Աբովյանն ի մի է բերել այն բոլոր հարցերը, որոնք բուն վեպում արտահայտված են հերոսների դատողություններում կամ հեղինակային խորհրդածությունների մեջ։

Մաքրագիրն, այնուհետև, ձեռագրի համեմատությամբ ունի մի նոր մաս ևս։ Խոսքը վեպի վերջին էջերի (179—189) մասին է, ուր ավարտին է հասցվում Աղասու կյանքի պատմությունը և պատկերվում ռուսական ազատարար զորքերին հայ

որին Աբովյանն անվանել է «Ազգի աչքի լիս», որի անունով «ոչ թե Հայք, Թուրքերն ևս» երդվել են (152) և որին վեպի մաքրագրում դարձրել է գործող անձ (ձեռագրում չկար)։ Գ. Ամրատյանը քաջատեղյակ ու ականատես է եղել «Վերք Հայաստանի» ստեղծագործման հանգամանքներին։ Բոդենշտեդտին ուղղված գրության մեջ, Աբովյանը խորհուրդ է տալիս մանրամասնություններ իմանալ Ամրատյանից. «Հարցրեք նրան, եթե ուզում եք իրողությունը հիմնավորապես իմանալ» (ԱԵԱ № 65)։ Իսկ ինչո՞ւ է Աբովյանը ծածկել իր բարեկամի անունը. կարծում ենք այն պատճառով, որ 1840 թվից սկսած Ամրատյանը ցարական կառավարության աչքում այլևս վստահելի անձ չէր։ Գոլովինը նրա դեմ մեղադրանքներ էր հարուցել, իսկ Նիկոլայ I-ինը կարգադրել էր հիմնավորել և պատժել (Акты, собранные Кавказской археографической комиссией, т. IX, стр. 155—158).

ժողովրդի ցույց տված ընդունելությունը: Վեպի այս էջերում խոսվում է Հայերի ներգաղթի և Հայկական աշխարհազորի մասին, որի անցած ուղին, ռուս-պարսկական պատերազմի տարիներին, լուսապսակված էր անթառամ փառքով (182): Այս էջերում է պատկերված Աղասու ողբերգական մահն ու թաղումը, որն իր արտակարգ ուժով միշտ կցնցի ընթերցողին: Նորություն է և այն, որ Աբովյանը վեպին է միացրել «Զանգի» վերնագրով արձակ նկարագրությունը: Մաքրագիրը լրացվել է նաև մեծ ու փոքր բազմաթիվ պարբերություններով, որոնք գաղափարական-գեղարվեստական առումով «Վերք Հայաստանին» հասցրել են նոր աստիճանի: Այդ բոլորը մանրամասնորեն կտեսնենք հաջորդ գլուխներում:

Ե՞րբ է Աբովյանն սկսել իր աշխատանքները մաքրագրի վրա: Կարծում ենք՝ 1842 թվի կեսերին, որովհետև մինչև տարվա սկզբները նա զբաղված է եղել սեպագրով: Ինչպես երևում է մի շարք փաստերից[1], 1842 թվի ամառը Աբովյանը ճամփորդել է Հայաստանում և բավական երկար ժամանակ մնացել Երևանում, Աղամալյանների տանը: Այստեղ նա բանաստեղծություններ է գրել ու նվիրել Աղամալյաններին, որոնց մեջ

---

[1] Տե՛ս այդ փաստերը. 1. Ս. Զաքարյանցի նամակը Աբովյանին, 1842 թ. հուլիսի 11 (Դիվան, հ. II, 196—197), 2. Աբովյանի իր աշակերտներից ստացած նամակները (Դիվան, հ. II, 197, 198, ԱձԱ № 290, 258, 291, 203), 3. Աբովյանի նամակ-ուղերձը Ս. Ջալալյանին, 1842 թ. հուլիսի 24, Երևան (Դիվան, հ. I, 66), 4. Աբովյանի երեք ոտանավորները՝ գրված 1842 թ. օգոստոսի 3-ին և 4-ին, Երևանում, Աղամալյանների տանը (ԽԱ, ԵԺ, I, 202—207), 5. Գ. Ամբարդանյանի նամակը Աբովյանին, 1842, թ. օգոստոսի 25 (ԱձԱ № 206), Քերովբեի նամակը Աբովյանին, 1842 թ. օգոստոսի 26 (Դիվան, հ. II, 168—170), Բարսեղ արքեպիսկոպոսի նամակը Աբովյանին (Դիվան, հ. II, 170) և այլն: Աբովյանը, ըստ վերը բերված փաստաթղթերի, Թիֆլիսից դուրս է եկել 1842 թվի հունիսի վերջին, իսկ վերադարձել է օգոստոսի կեսերին: Երևանում անցկացրել է մոտ երկու ամիս, ըստ որում մի անգամ եղել է Էջմիածնում, մի անգամ էլ Գեղարդում (Սա հաստատ չի կարելի պնդել):

ակնհայտ է «Վերք Հայաստանի» շունչը (Զանգի գետի նկա-րագրությունը)։ Մեր կարծիքով հենց Երևանում էլ Աբովյանը ձեռնարկել է մաքրագրի ստեղծագործմանը։ Հայրենիքում թարմացնելով տպավորությունները և վերստուգելով որոշ փաստեր (օրինակ, բերդի գրավման մանրամասները, Խլղարաքիլիսայի գյուղապետի անունը), նա նախ, լրացումներ ու վերախմբագրումներ է արել սևագրի մեջ, իսկ հետո սկսել՝ արտագրությունը։ Սևագրի լուսանցքներում, անշուշտ, այդ ժամանակ են ուրվագծվել Երևանի բերդի նկարագրությունը, Մեհրաբյան Թումանյան Հովակիմի սխրագործությունները պատմող գրվածքը և ուրիշները։ Երևանում անցկացրած այդ օրերին Աբովյանի հետ էր նաև իր աշակերտ Շարոյանը, որի ձեռքով են թերևս արտագրվել ձեռագրի 199—218 էջերը։ Մաքրագրի արտագրությունը ավարտվել է 1843 թվի սկզբներից ոչ ուշ։ Ինչո՞ւ։ Որովհետև բուն վեպում Աբովյանը իր պանսիոնի մասին խոսում է որպես գործող հիմնարկի («Աստված կյանք տա էն ծնողացը՝ որի որդիքն ինձ մոտ են» — 65), իսկ Հառաջաբանում՝ արդեն անցած իրողություն («էս միջոցումը Աստված ինձ մեկ քանի երեխեք էլ հասցրեց, որ պետք է կարդացնեի» — 2, «իմ սիրելի աշակերտները... իմացել էին՝ թե Քուռն եմ ընկել» — 3 և այլն)[1]։

Ինչ վերաբերում է մաքրագրի ընծայականին ու Հառաջաբանին, նրանք գրվել են ավելի ուշ, բուն վեպի վրա աշխատանքներն ավարտվելուց հետո։ Այդ երևում է հետևյալից։ Ընծայականը և Հառաջաբանը չեն մտել վեպի՝ Աբովյանի կողմից համարակալված պրակների մեջ։ Բացի այդ, Հառաջաբանի վերջին տողերը, էջը լրացած լինելու պատճառով, գրված են ոչ թե հաջորդ թերթի վրա, այլ 14, 13 և 12 էջերի լուսանցքներում։ Այդպես կարող է պատահել միայն հետագայում գրված ու միացրած հատվածի հետ։ Հառաջաբանն, այսպիսով, գրվել է 1843 թվի կեսերին (ամենավաղը)։

[1] Աբովյանի պանսիոնը գործել է մինչև 1843 թվի հունվարը։

ծ) ՄԻ ՍԽԱԼԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

«Վերք Հայաստանիի» մաքրագրում, թերևս հեղինակի անուշադրության հետևանքով, մնացել են որոշ հակասություններ ու անճշտություններ։ Վեպի վերջին էջերում հանդես հանած կերպարը, որ պատմում է Աղասու մահվան մանրամասնությունները, անվանված է Մուսայի հայր, չնայած նույն գլխի սկզբում ասված է, թե Մուսան հայր չուներ։ Այս հակասությունը առաջինը նկատել է Մ. Նալբանդյանը (1863 թվի ապրիլին, բանտում) և «Վերք Հայաստանիի» իր օրինակի լուսանցքում գրել. «Տես 268—269—273 և 274, ուր խոսվում է, թե Մուսեն հեր ունի, և թե նա մինն է բարեկենդան օրվան բանդ գրվողներից. նա է պատմում Աղասու ինչպես մեռնիլ և վերջը երբ որդին (Մուսին) սպանում է իրեն Աղասու դագաղի մոտ, հերն էլ մեռնում է և Քանաքառ եկեղեցում մի օր թաղում են երկու հայր և երկու որդիք, ի՜հարկե անուշադրություն է Աբովյանի կողմից»։ Բայց Նալբանդյանն արդարացրել է Աբովյանին՝ անմիջապես ավելացնելով. «Նրա սիրտը կրակ է ընկած, էլ ո՞րտեղ նրա աչքին կգային այսպիսի հակասություններ, մնաց որ՝ իրանից հետո է տպված գործը, գուցե թե ինքը տպեր՝ սրբագրեր այս և ուրիշ մի քանիսը»[1]։

Նալբանդյանից հետո, մի այլ հակասություն նկատել է Հովհ. Թումանյանը, նշելով որ վեպում ռուս-պարսկական պատերազմի թիվը ցույց է տված 1825, փոխանակ՝ 1826 թ. հուլիսի 16[2]։

Կան ուրիշ հակասություններ ևս. վեպի սկզբում Աղասու կնոջ անունը Վարդիթեր է (50), իսկ հետագայում՝ Նազլու։ Հնարավոր է, որ Վարդիթերը անունն է այն կնոջ, որ նախա-

[1] Ա. Ի ն ճ ի կ յ ա ն, Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը, Երևան, 1954, էջ 242։

[2] ՀՍՍՌ Գիտ. ակադ., Գրականության և արվեստի թանգարան, Հ. Թումանյանի արխիվ, № 178։

տիպ է ծառայել Նաղաշի համար։ Վեպի 177 էջում գրված է. «Կոման Երևանի (Պասքևիչը — Գ. Հ.) Ներսես արքեպիսկոպոսի ձեռիցը բռնած մտավ Վաղարշապատ, որ Եփրեմ կաթողիկոսի սուրբ աչքին լիս տա, ու առողջություն»։ Սա վերաբերում է 1827 թվին, մինչդեռ հայտնի է, որ Եփրեմ կաթողիկոսը այդ ժամանակ Էջմիածնում չէր, բնակվում էր Թիֆլիսում[1]։

Ձեռագրի մեջ կան էջեր էլ, ուր Աբովյանը տեղ է թողել համապատասխան անունը կամ թիվը հետագայում ճշտելու ու լրացնելու նպատակով, սակայն վերստին չի անդրադարձել։ Օրինակ՝ «...ուր մեծն Շահն-շահ, Աշոտ Բագրատունի, Սմբատ ......Զաքարե Սպասալար» (93 և 275), «......գեղը որ Պարսիկք էկան, քանդեցին, գերի արին» (122 և 306)։ Եվ չգիտենք այժմ, թե բաց թողած տեղերում որ թագավորի կամ գյուղի անունները պիտի լինեին[2]։

«Վերք Հայաստանիի» մեջ եղել են ուրիշ երեք բացթողումներ ևս, որոնք լրացրել է մաքրագիրն արտագրող անձնավորությունը, առանց մտածելու, որ դրանով աղճատել է հեղինակի տեքստը։ «... ամսի... էր, որ Երևանու բերդը ծխումը կորավ»,— դարձել է. «ամսի հինգն էր, որ...»։ «.....օր ....գիշեր»,— դարձել է, «հինգ օր հինգ գիշեր»։ «...օրվանից ետը»,— դարձել է. «հինգ օրվանից հետո» (363 և 178)։ Երևանի բերդի պաշարումը սկսվել է 1827 թվի սեպտեմբերի 24-ին, մինչդեռ ըստ լրացման՝ չգիտես որ ամսի հնգին։ Բերդի ռմբակոծությունը տևել է 6 օր (սեպտեմբերի 25—30-ը ներառյալ), իսկ ըստ լրացման՝ հինգ։

---

[1] Եփրեմ կաթողիկոսը Էջմիածին է վերադարձել 1828 թվի հունիսի 15-ին։ Ա. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը..., հ. 1, էջ 372։

[2] Այս երկու բացթողումները «Վերք Հայաստանիի» ո՛չ մի հրատարակության մեջ չեն ծանոթագրվել, որի պատճառով և առաջ է եկել շփոթություն։ Մ. Նալբանդյանին, օրինակ, թվացել է, թե «...գեղը» բառից առաջ գրաքննիչը կրճատել է մի հատված՝ քաղաքական պատճառով» (Ա. Ինճիկյան, էջ 242)։

Արտատպողը տեքստի մեջ լեզվական սխալներ էլ է մտցրել։ Օրինակ՝ Աբովյանը գրել է. «...մեկ օր լողանալիս» (273), արտատպված է. «...մեկ օր լողանալիս» (92), կամ՝ «ձորի քարն ու էրն էին...» (274), արտատպված է. «ձորի ու էրն էին» (93) և այլն։

Եվ այսպես, Աբովյանը չի կարողացել, գուցե ժամանակ չի ունեցել «Վերք Հայաստանիի» վերջնական վարիանտը մի անգամ էլ աչքի անցկացնելու, վերևում նշված հակասություններն ու թերությունները վերացնելու։ Ինչքա՞ն ուրիշ բաներ կփոխեր նա, եթե վեպը իր ձեռքով տպագրության պատրաստեր։

ՎԵՊԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՐՍՏԱՑՈՒՄԸ

ա) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

19-րդ դարի առաջին քառասնամյակի հայկական իրականությունը, որն արտացոլված է Աբովյանի անմահ երկում և որի մեջ ապրել ու ստեղծագործել է հայ նոր գրականության հիմնադիրը, հանդիսանում է ֆեոդալական տնտեսաձևի և կղերաավատական գաղափարախոսության տիրապետության շրջան՝ հայկական անկախ պետականության բացակայության պայմաններում[1]*: Մինչև Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, հայ ժողովուրդը ենթակա էր բռնության ու կամայականությունների երկիր հանդիսացող խանական Պարսկաստանի և «ֆեոդալիզմի ամենացածր և բարբարոսական աստիճանի վրա»*[2] *գտնվող Թյուրքիայի արյունոտ լծին և անմարդկայնորեն կեղեքվում ու շահագործվում էր թյուրք ու պարսիկ խան—բեկերից և տեղական հողատերերից: Հետագայում (1828—1840-ական թթ.), երբ Արևելյան Հայաստանն անցավ Ռուսաստանի տիրապետության տակ, երբ ժողովրդի անձի ու գույքի անվտանգություն ստեղծվեց, երբ աշխուժացավ երկրի կյանքը, տնտեսաձևի տեսակետից Հայաստանը հիմնակա-*

---

[1] «Феодальный строй существовал... в Закавказье с IV века до 70-х годов XIX века». Политическая экономия, учебник, Москва, 1954, стр. 38.

[2] К. Маркс—Ф. Энгельс, Сочинения, т. IX, Москва, 1933, стр. 374.

նում մնաց նույն վիճակում. դարձյալ իշխողը կղերաավատատական գաղափարախոսությունն ու ֆեոդալական կարգերին բնորոշ հիմնարկներն էին, դարձյալ գյուղացիությունը մնում էր ճորտատերերի անօրինության տակ։ Ավելին. այդ տարիներին ցարիզմը գրեթե չփոխեց գյուղացիների ու ֆեոդալների միջև նախկինում եղած փոխհարաբերությունները։

Բայց այս բնավ չի նշանակում, թե 1828 թվից հետո, մինչև «Վերք Հայաստանի» ստեղծագործման պահը (1841 թ.) Հայաստանում նոր տեղաշարժեր չեղան։ Արևելյան Հայաստանի վրա տարածելով իր տիրապետությունը, Ռուսաստանը իրականում լուրջ հարված էր հասցնում ֆեոդալական կարգերին, խարխլում նրանց հիմքերը. Պարսկաստանից և Թյուրքիայից Հայկական մարզ ներգաղթեցին հազարավոր հայեր, որը նպաստում էր հայ ժողովրդի տարբեր հատվածների համախմբմանն ու սերտ փոխհարաբերություններին և պայմաններ ստեղծում սաղմնային դրության մեջ գտնվող ազգության տարրերի՝ լեզվի, տերիտորիայի, տնտեսական կյանքի ու կուլտուրայի ընդհանրության առաջանալուն, բնատնտեսությանը զուգահեռ, սկսում էին աշխուժանալ առևտրային ու դրամական հարաբերությունները, տրամադրություններ էին առաջ գալիս հայկական պետականությունը վերականգնելու մասին և այլն։ Իսկ այս ամենը նշանակում են, որ անցյալ դարի 30—40-ական թվերին, հայկական իրականության մեջ, հնի ընդերքում սկսել էին սաղմնավորվել հասարակության զարգացման տըվյալ էտապի համար առաջավոր արտադրողական ուժերը, որոնք 70-ական թվերին տապալեցին մեռնող ֆեոդալական արտադրաեղանակը և ազդարարեցին նորի հաղթանակը։

Սերտորեն կապված լինելով հայկական իրականության այս բարդ ու բազմաբեղուն կյանքի հետ և խորապես ապրելով իր օրերի հրատապ հարցերով, Աբովյանը միշտ անհաշտ ու թշնամի մնաց հնին, մաքառեց կղերականության և ավատականության դեմ և իր ողջ գործունեության ընթացքում,

հենվելով հասարակության զարգացման նոր ու առաջավոր ուժերի վրա, նպաստեց նրանց ձևավորմանն ու զարգացմանը, նրանց պայքարին՝ ընդդեմ հնի, խանդավառվեց նրանց ապագա հաղթանակով, որը միայն, նրա համոզմամբ, հայ ժողովրդին կազատագրեր ֆեոդալական անմարդկային կարգերից, տգիտությունից ու բռնությունից, կբարվոքեր երկրի տնտեսական վիճակը, կթեթևացներ աշխատավորության դրությունը, հայերին կազատագրեր պարսկա-թյուրքական վայրագ ասիմիլյատորներից և կվերականգներ Հայկական պետականությունը (որը Աբովյանի մոտ ներկայանում է Անի քաղաքի անունով)։

«Վերք Հայաստանի» ստեղծագործելու պահերին Աբովյանի ուշադրության կենտրոնում են եղել հայ ժողովրդի ուժերը համախմբելու, նրան ինքնաճանաչման բերելու, ռուս մեծ ժողովրդի օգնությամբ պարսկա-թյուրքական բռնապետությունից ազատագրելու, ժողովրդին լուսավորելու և Ռուսաստանի տիրապետության տակ, օտար նվաճողների վայրագություններից պաշտպանված պետականություն ստեղծելու գաղափարները, շարունակ նրա որոնումների առարկան է եղել հայտաբերումն այն ուղիների, որոնցով պիտի ընթանար հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական զարգացումը։ Կերտելով Աղասու կերպարը, կամ խոսեցնելով քանաքեռցի Հարությունին, պատմելով Հայաստանի պատմական անցյալի մասին, կամ մատնանշելով ազգի գոյության գործոնները, Աբովյանը միշտ և ամենայն տեղ այս գաղափարներն է նկատի առել, լայն զանգվածներին ըմբռնելի ու համոզիչ եղանակներով՝ այս գաղափարները մասսայականացրել ու արծարծել։

Վեպի առաջին երկու վարիանտների քննությունից արդեն մասամբ պարզվեց, որ նրանցում արծարծված որոշ խնդիրների Աբովյանը պարզորոշ պատասխաններ չէր տվել, որոշ խնդիրներ էլ այն ժամանակ նրա ուշադրությունից դուրս էին մնացել։ Աբովյանի իղձերն ու ցանկությունները ճշտորեն դրսևոր-

վել ու արտահայտվել են միայն ու միայն «Վերք Հայաստանի» մարքրագրում։ Ուստի դառնանք նրան և տեսնենք, թե նախորդ վարիանտների համեմատությամբ, գաղափարական տեսակետից ի՞նչ նոր բան կա այնտեղ։

Մարքրագրում Աբովյանին ու նրա հերոսներին, ամենից ավելի հուզել է հայ ժողովրդին ինքնաճանաչման բերելու հարցը, իբրև ժողովրդի տնտեսական ու կուլտուրական զարգացման կարևոր նախապայմաններից մեկը։ Վերքի հերոս Հարությունը լրջորեն գիտակցելով դրա կարևորությունը, ասում է. «Մեր ազգը որ խեղճ ա մնացել, թրի, կրակի եսիր, բոլորի պատճառն էն ա՝ որ մեզ մեկ ասող չի՛ ըլում՝ թե մենք ո՞վ ենք, մեր հավատն ի՞նչ ա, ինչի՞ համար ենք էկել աշխարք, քու գալիս ենք, քու գնում։ Հա լավ՝ հավն էլ ա օրը հարիր անգամ ջուր խմելիս, կամ կուտ ուտելիս՝ գլուխը ցածացնում բարձրացնում, էստով ի՞նչ կդառնա։ Ո՞վ չի՛ գիտի՝ թե երկնքումն Աստված կա, մեզ համար դատաստան։ Ամա պետք է իմանանք էլ՝ թե երկրումը ի՞նչ պետք է անենք, որ էն դատաստանի տակը չընկնինք՝ է՞» (25)։

Հարությունն, իհարկե, որոնում է դրությունից դուրս գալու ճանապարհ։ Լինելով գյուղացիության առաջավոր խավերի տրամադրությունների արտահայտիչ և իր ուժեղ ու թույլ կողմերով կապված լինելով նրանց հետ, Հարությունն այն համոզման է, որ պարսից լծի տակ հեծող ժողովուրդը կարող է ինքնաճանաչման գալ և իր վիճակը բարվոքել լուսավորության միջոցով, իսկ կրթել կարող էին այն ժամանակ միայն հոգևորականները, ուստի վերջինների թերությունները շատ լավ իմանալով հանդերձ խոսքը դարձնում է նրանց. «Թո՛ղ ինձ կարթացնեն, որդուս ուսումն տան, մեզ ճամփա չհանց տան ճամփից, հավատից չհանեն...» (25—26)։

Ճի՞շտ էին արդյոք Հարությունի պահանջները, թե նրա խոսքերը դատարկ փամփուշտներ էին՝ օդում արձակված։ Այս ցույց տալու համար Աբովյանը մարքրագրում առանձին ուշադ-

բություն է դարձնում Հարությունի շրջապատի վրա, հանդիպեցնելով ու խոսեցնելով նրան տանուտեր Օհանեսի և գյուղական ավագների հետ։

Ահա ի՞նչ է պատասխանում նրան տանուտերը. «Ամեն մեկ խոսքդ մեկ ջավահիր ախի, ամա ո՞վ ասես... Ո՞վ կուզի՝ որ իր աչքը քոռ ըլի, ամա որ ասածդ տեղ չի՛ հասնում, ի՞նչ ես գլուխդ ցավացնում, բերանդ ափսո՛ս չի՛... հալբաթ Աստված մի օր իր ողորմության դուռը բաց կանի... ինչ Աստծու կամքն ա, է՛ն ըլի... Ո՞վ ա գիտում՝ թե էքուց գլխըներիս ի՞նչ կգա. մարդի միս են ուտում, արինը խմում. ով ճար ունի, իր գլխին ա անում... ճամփեն որ ուղիղ ըլի, ինչքան երկար էլ ըլի, գնա՛, դուզ ճամփից մի՛ դուս գալ, թե չէ որ սարերով չոլերով ընկար, բանդ բոշ ա, գլխիդ փորձանք շատ կգա։ Յոլդան չխանն գյոզի չխար (ճամփից դուրս էկողի, աչքը դուրս կգա)» (26)։ Ակնհայտ է, որ թեպետ հասունացած էին Հարությունի շոշափած հարցերը, սակայն քաղաքական անբարենպաստ պայմանները արգելք էին դառնում նրանց իրագործմանը։ Տանուտերն, օրինակ, գերադասում է համբերել և սպասել դեպքերի տարերային ընթացքին, նրա վկայակոչած ժողովրդական առածի իմաստն հենց այդ է։ Իսկ այդ նշանակում է՝ տեսնել, սակայն աչք փակել. տանել օտարի լուծը, սակայն հանդուրժել. գնահատել ազատությունը, սակայն չկռվել հանուն նրա։

Հետագայում ավելացրած մի ուրիշ պարբերության մեջ Աբովյանը վերարտադրել է նաև գյուղական ավագների հայացքները. «Ի՞նչ ես չարչու մասալեքդ բաց արել, գլխներս տանում,— կշտամբում են նրանք Հարությունին։— Մենք էլ լավ գիտենք՝ թե կորած էշը ո՞ր գոմումն ա կապած, ամա ի՞նչ անենք՝ որ մոտանոցի շլինքը կտրում են... Ախր ի՞նչ անենք՝ որ լսող չկա. հո չե՞ս կարող քեզ սպանիլ» (26—27)։ Ապա քիչ հետո ավելացնում. «Մենք էլ լավ գիտենք՝ որ դրուստն ես ասում, ամա ի՞նչ անենք՝ որ գեղըցու խոսքը չկանի չե՛ն

դնում, քաղաքացին էլ տեղը տաքացրել, տաղ արել, իր չալը խմում, ո՞վ դարտն ա, թե քարը քարի վրա չի՛ կանգնել, ամեն մարդ իր գդակն ա գցում, իր գլուխը քորում, բերանդ բաց անելիս՝ հող են ածում, աչքդ բաց անելիս՝ թոզ. շունը տերը չի՛ ճանաչում, ո՞վ ասես, ո՞վ: Կուտ ունիս, քո հավի առաջն ածի՛ր, դան ունես, քո ջաղացը տա՛ր: Դու էլ՝ թե ձեռիցդ գալիս ա, ղանակդ սրի՛ր, մեկ կողմիցը վրա թռի՛ր, աշխարքս թալան թալան ա, նամարդը իշի փալան ա: Հա կաց ու քեֆ արա» (27—28): Գյուղական ավագանները հիմնավորելով տանուտերի ասածները և իրենց միանգամայն անզոր զգալով ստեղծված դրությունը փոխելու գործում, այն միտքն են զարգացնում, թե քանի որ աշխարհը հափշտակողական է, իսկ օտար բռնության դեմ ընդվզման ամեն մի փորձ ենթակա՝ խստագույն պատժի, ինչո՞ւ վտանգի ենթարկվել, ինչո՞ւ դեմ գնալ մարդը մարդուն գայլ աշխարհի օրենքներին:

Եթե նկատի առնենք, որ այս խոստովանությունը կատարվում է տակավին պարսկա-թյուրքական լծի տիրապետության շրջանում, ապա պարզ կդառնա հեղինակի հետևությունը՝ ժողովուրդը ինքնաճանաչման կարող է գալ, ինչպես նաև իր վիճակը բարվոքել, միայն ու միայն քաղաքական բարենպաստ պայմաններում:

Հայտնի է, որ նման պայմաններ ստեղծվեցին Արևելյան Հայաստանի ազատագրությունից հետո: Հարությունին մտահոգած խնդիրները դեռ մնում էին օրակարգի մեջ, պետք էր անպայման սպառիչ պատասխաններ տալ նրանց. սակայն ի՞նչ ձևով: Չէ՞ որ վեպը վերջանում էր 1828 թվականի դեպքերով, և հեղինակը պատմականության առաջ կմեղանչեր, եթե Հայաստանի տնտեսական ու կուլտուրական զարգացման ուղիների մասին ունեցած իր հայացքները վիպական հերոսների բերանով արտահայտեր: Աբովյանին մնում էր մի ուղի՝ հեղինակային խորհրդածությունները՝ ուստի մաքրագրում,

վիպական գործողություններին զուգակցվում են մի շարք այգորինակ «հավելումներ»։

Դեռ Հարությունն էր առաջադրել առաջին հարցը. «Ո՞վ ենք մենք»։ Նշանակում է, նախ և առաջ անհրաժեշտ է ժողովրդին ծանոթացնել իր պատմական անցյալի հետ։ Պատմությունից ժողովուրդը ոչ միայն կիմանար, թե ո՞վ է ինքը, ի՞նչ անցյալ է ունեցել, այլև արդիական նշանակություն ունեցող եզրակացություններ կհաներ։ Անցյալի հերոսական շրջանները կօգնեին նրան՝ բռնակալության լուծը թոթափելու և պայքարով ազատ ու անկախ հայրենիք նվաճելու։ «Երևանու բերդն, Հայաստանու հողն՝ որ հազար տարուց հետ սկսած՝ դառել էր գողի ու ավազակի բնակարան։ Է՞ն հողը, էն հիանալի աշխարքը, ուր տեղ որ դրախտն էր եղեմական, ուր որ Աստված՝ բոլոր աշխարքը ջրհեղեղովը երբ որ կործանեց, Հայոց սուրբ Մասսա սարը միայն արժանի տեսավ, որ Նոյան տապանը նստի ու Հայոց երկրիցը էլ եդ մարդիկ բազմանան ու ուրիշ երկրներ էլ շինություն քցեն» (54) և այլն։ Այսպես է նա սկսում խոսել հայ ժողովրդի պատմական հայրենիքի ու անցյալի մասին, ակնհայտորեն տուրք տալով ավանդական պատմագրությանը, ըստ որի Հայաստանն է համաշխարհային պատմության օրրանը, հայ ժողովուրդն ու հայոց լեզուն՝ մայրն աշխարհի մյուս ժողովուրդների ու լեզուների։ Իսկ ինչո՞ւ. երեխա ժամանակ էջմիածնական աբեղաներն այդ էին ուսուցանում, նույնը նա լսեց նաև Ներսիսյան դպրոցում։ Երբ հասուն տարիքում մեկնեց Դորպատ, այդ տեսակետը դեռ հերքված չէր, ծանոթներն ու ընկերներն էլ իրենց նամակներում նույնն էին ասում. «Եվրոպա թե Ասիա ինձ անդադար ձեն էին տալիս, թե Հայկա զավակն եմ ես, Նոյան թոռը... դրախտի բնակիչը...» (2),— գրում է Աբովյանը վերի հառաջաբանում։ Սակայն կրկնելով նման կարծիք հայերի ծագման ու դերի մասին, Աբովյանը մտքով չի անցկացրել, թե նրանք բարձր են կանգնած աշխարհի մյուս ժողովուրդներից։ Նա

ցանկանում էր ասել, թե դրախտային համարված երկրի մարդը զրկվել է ազատ ու անկախ պետականությունից, հետադիմել, ստրկացվել է և դարեր շարունակ ոչնչացվել՝ ամենաբարբարոս կերպով:

Պատմական անցյալից Աբովյանը ուշադրություն է հրավիրում այնպիսի պահերի վրա, երբ օտար բռնակալների դեմ ոտքի ելնելով՝ ժողովուրդն ու նրա հերոսները փրկել են հայրենիքը օրհասական կործանումից: Նա հիշեցնում է հայերի առասպելական նախնի Հայկին, որը կործանում է տիտանյան Բելին, Արա Գեղեցիկին, որը մարտում է բռնակալ Շամիրամի դեմ և ընկնում հերոսական մահով, Զարմայրին, որը օգնության ձեռք է մեկնում Հեկտորին՝ ընդդեմ հույների, Վահեին, որ դիմադրում է Ալեքսանդր Մակեդոնացուն և այլն: Պատմական դեմքերից նա անդրադարձել է Տիգրան Մեծին և Տրդատին, որոնց ժամանակ Հայաստանը հասնում է քաղաքական հզորության, ապա Բագրատունիներին ու Ռուբինյաններին, որոնք «հազար թշնամու ձեռի տակը մնացած հայրենիքը (վաթանը) էլ եդ գերեզմանից հանեցին, էլ եդ նո՛ր հոգի տվին» (54): Աբովյանը գովասանքով է խոսում պարսից տիրողների դեմ Վարդան ու Վահան Մամիկոնյանների գլխավորությամբ հայ ժողովրդի մղած դյուցազնական կռիվների մասին և փառաբանում իր անկուն ժողովրդին ու նրա հերոս զավակներին, որոնք «իրանց կյանքը, թագավորությունը, մեծությունը, փառքը, իշխանությունը, զորքը կորցնելեն եդև... հազար թրի տակից, հազար կրակի միջից՝ սիրտ սրտի տված, հոգի հոգու կպցրած, մինչև էս օր էլ՝ իրանց գլուխը, իրանց սուրբ հավատը, իրանց սուրբ օրենքը՝ է՛ն վեհանձնությունովը պահպանեցին, որի օրինակը աշխարհքումը ո՛չ էլել ա, ո՛չ կըլի» (55):

Ծանոթացնելով ժողովրդին անցյալի հետ և հետաքրքրություն առաջացնելով դեպի ժողովրդական հերոսների անձնազոհ կյանքը Աբովյանը խանդավառում էր իր ընթերցողներին հայրենասիրության ու անձնուրացության գաղափարներով:

Սակայն միայն պատմության դասերը չեն, որ նպաստում են ժողովրդի ինքնաճանաչմանը։ Դրան մեծապես օգնում են նաև ժողովրդի տարբեր հատվածների միջև ստեղծվող կուլտուրական փոխհարաբերություններն ու տնտեսական կապերը, որոնց հետևանքով ժողովուրդն սկսում է համախմբվել և զբաղվել ընդհանուրին շահագրգռող խնդիրներով։ Այստեղից Աբովյանն անցնում է Հարությունի առաջադրած մյուս հարցի պատասխանին. «Ինչի՞ համար ենք էկել աշխար... Երկրում ի՞նչ պետք է անենք...»։ Ավելի պարզ ասած, նա արդեն սկսում է մատնանշել, թե ի՞նչ ուղիներով պիտի ընթանա ժողովուրդը։

Այս հարցերն Աբովյանին զբաղեցրել էին դեռևս վեպի սևագիրը վերամշակելու ժամանակ։ Վերջինի լուսանցքների վրա եղած նշումները ցույց են տալիս, որ նա այս խնդրում բավական մտավախություն է հանդես բերել։ Նրան թվացել է, որ եթե գյուղի աղա, բացի հաստափոր ինչալուխ իշխան, բացի [գլուխը] լիքը [չինովնիկ]», որոնց ամենօրյա հոգացումների առարկան է պլավ ուտել, լավ խմելը, քյահլան ձիու վրա նստելը, մանեթները ջեբումը չխկացնելը, ձեռին գողգողալով խաղացնելը, քեֆ ու մարաքյա անելը, շինած արաղ կոնծելը, Կախեթու գինի լափելն (239) ու նման բաները,— չեն զբաղվում այդ հարցերով, մարդիկ, որոնք արհամարհում են, սեփական ազգությունը, լեզուն և առանց ամաչելու ասում «Հայի անունը՝ որ վրես չէ՛ր էլել, ես գիտեմ՝ թե ի՞նչ տեղ կը ճարեի. ինչ փառքի կհասնեի, քանի խաչ ու կավալեր կըճարեի» (237),— կարող են արդյոք հանդիսանալ, ինչպես հայ ժողովրդի ինքնագիտակցման գալուն, այնպես էլ հոգևոր ու ֆիզիկական ուժերի համախմբմանը։

Նա ենթադրել է, որ ժողովուրդը մի ամբողջական մարմին է և անպայման բոլորը պետք է շահագրգռված լինեն և գիտակցեն համախմբման անհրաժեշտությունը, հակառակ պարագայում, նրանք ոչ կարող են գալ ինքնագիտակցման, ոչ

էլ տնտեսապես ու կուլտուրապես առաջադիմելու։ «Ազգը,[1] որ կա, մի մարմին ա, ամեն մարդ նրա անդամը։ Ամենն էլ ձեռներիցը եկածը պետք է անեն, ինչքան կարողություն ունեն, միմյանց քամակ անեն, որ առողջ, սաղ, սալամաթ մնան»,— գրում է նա նույն էջում։ Սա լուսավորիչների զինանոցից վերցրած թեզ էր, իսկ նրանց մասին Վ. Ի. Լենինն ասել է. «Լուսավորիչներն իբրև իրենց հատուկ ուշադրության առարկա չեն առանձնացրել բնակչության ոչ մի դասակարգ, խոսում էին ոչ միայն ժողովրդի մասին ընդհանրապես, այլ նույնիսկ ազգի մասին ընդհանրապես»։[2] Ուստի զարմանալի չէ, որ վեպի սևագրում, չնայած հայ մեծատունների, ատարհանավորների ու վաշխառուների հասցեին ասված մի շարք քննադատական դիտողությունների, նրա եզրակացությունը մնում էր անորոշ, նա որոշակի ուղի ցույց չէր տալիս. «Եղ գանե՛նք էլի մեր բանը, կըլի թե՝ բաղի մարդի քեֆին դիպչի ասածս։ Ամեն մարդ իր դարդը քաշի, ես հո քարոզիչ չեմ, կամ վարդապետ։ Նրանց գործն ա էսպես խրատ տալը, ազգի սիրտը գրավիլը... Դատաստանի օրը իրանք ըլի՛ն պարտական, մեր ձեռիցն ի՞նչ կգա, որ անենք» (239)։

Վեպի մաքրագրում Աբովյանը բոլորովին այլ ձևով է արտահայտել իր վերաբերմունքը։ Այստեղ այլևս չկան՝ ո՛չ նախկին չեզոքությունը, ո՛չ էլ այլասերված վերնախավի՝ սեփական ժողովրդից երես դարձնելու վախը։ Նա այլևս հույսեր չի կապում ո՛չ ուռճացած վերնախավի և ո՛չ էլ այլասերված ինտելիգենտների հետ։ Նրա մտահոգության առարկան աշխատավորական հոծ զանգվածներն էին, ուստի նրանց էլ ուղղում է իր խոսքը։ «Աստված հիմիկ մեզ լիս ա բաց արել,— ասում է նա,— Ռուսաց թրին՝ սարեր չե՛ն դիմանալ... Մենք որ իրար թասիբ քաշենք, իրար քամակ անենք, իրար պայծառացնենք,

[1] Ավելորդ չէ հիշեցնել, որ Ազգ Աբովյանը գործածում է ժողովուրդ բառի իմաստով։

[2] Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկեր, հ. II, Երևան, 1950, էջ 651։

շենացնենք, ծովն էլ տեղիցը վեր կենա, մեզ տակով չի՛ կարալ անել, ի՛նչ թե Օսմանցին, յա Պարսիկը» (60)։ Իսկ այս նշանակում էր, որ հայ ժողովրդի համախմբումը ոչ միայն նրա տնտեսական-կուլտուրական վիճակի բարվոքման երաշխիքն էր, այլև օտար տիրողների վայրագություններից պաշտպանված լինելու գրավականը։ Աբովյանը մարտահրավեր է նետում նաև բոլոր նրանց, ովքեր խանգարում են հայ ժողովրդի ուժերի համախմբմանն ու ինքնաճանաչմանը. «Ո՛վ թուր անի, առաջ ի՛մ գլուխս խփի, ի՛մ սիրտս խրի, ապա թե ո՛չ՝ քանի բերնումս լեզու կա, փորումս սիրտ, ես լեղապատառ ձեն կտամ. «էգ ո՞ւմ վրա եք թուր հանել, Հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում» (6)։

«Վերք Հայաստանիի» մաքրագրում Աբովյանը հայ ժողովրդի ուշադրությունն է հրավիրում այլ պարագաների վրա ևս։ Նա հասկացնում է, որ միայն համախմբվելը բավական չէ։ Որպեսզի ժողովուրդը պահպանի ինքնուրույնությունը, պարտավոր է բոլոր ջանքերը գործադրել՝ անձեռնմխելի դարձնելու համար իր ազգային առանձնահատկությունները, որոնք, պետականությունից զրկված և աշխարհով մեկ ցրված բաժանբաժան եղած մի այնպիսի ժողովրդի համար, ինչպիսին հայերն էին, հանդիսանում էին լեզուն և կրոնը[1]։ Այստեղից էլ այն կարևոր ուշադրությունը, որ նա դարձրել է վերջինների վրա. «Մեկ ազգի պահողն էլ՝ լեզուն ա ու հավատը, թե սրանց էլ կորցնենք, վա՛յ էն էկել ա մեր օրին» (5), կամ՝ «Մեկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն ա ու հավատը։ Լեզուդ փոխի՛ր, հավատդ ուրացի՛ր, էլ ընչո՞վ կարես ասել, թե ո՞ր ազգիցն ես» (63), կամ՝ «Ձեզ եմ ասում՝ ձեզ՝ Հայոց նորահաս երիտասարդք՝... տասը լեզու սովորեցե՛ք, ձեր լեզուն, ձեր հավատը ղայիմ բռնեցե՛ք» (64) և այլն։

[1] Սա ժամանակին ճանաչված տեսակետ էր, որ հետագայում պաշտպանում է նաև Մ. Նալբանդյանը (Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. II, էջ 312)։

Անցյալ դարի 40-ական թվերին, ընդգծելով լեզվի և կրոնի ամուր պահելու անհրաժեշտությունը, Աբովյանը արծարծում էր նաև քաղաքական հարց: 1836 թվին ցարական կառավարությունը հրատարակել էր Պոլոժենիե, որով սահմանափակվում էին հայ եկեղեցու իրավունքները և որը սուր ավեց նախ հնդկահայերի, ապա նաև տեղացիների դժգոհություններին: Ֆ. Բոդենշտեդը վկայում է, որ ցարական գեներալներից մեկը հայտարարել էր. «Եթե հայերը ցանկանում են լուսավորվել՝ թո՛ղ ռուսերեն սովորեն և եթե կամենում են աղոթել՝ թո՛ղ ռուսերեն աղոթեն»[1]: Աբովյանը, որ անշուշտ տեղյակ էր այս ամենին, հաճախ էլ ինքն էր տուժել պաշտոնեությունից[2], լեզվի ու կրոնի պահպանման խնդիրն առաջադրելով հակադրվում էր ցարական խավարամոլների նման վտանգավոր ձգտումներին, ժողովրդին պահելով ավելի աչալուրջ:

Թե հավատ (կրոն) ասելով ինչ էր հասկանում Աբովյանը, այդ հետո կտեսնենք, այժմ անդրադառնանք լեզվի դերի նրա ըմբռնմանը[3]:

«Ա՜խ՝ լեզուն, լեզուն, լեզուն որ չլի, մարդ ընչի՞ նման կլի» (63),— գրում է նա: Դժվար չէ հասկանալ, որ Աբովյանի համոզմամբ լեզուն է այն հատկանիշը, որով մարդը տարբերվում է բնության մնացած արարածներից: Շարունակելով իր միտքը, նա այնուհետև նշում է, որ լեզուն մարդուն բնորոշող հատկանիշ լինելուց բացի նաև ժողովուրդների տարբերիչ հատկանիշներից մեկն է: Ժողովուրդը, եթե ուզում է ապրել,

[1] Bodenstedt's gesammelte Schriften, B. III, Berlin, 1865, s. 30, նաև՝ «Մասիս» (լրագիր), Կ. Պոլիս, 1869, № 931:

[2] «Ուղևորություն դեպի Անիի ավերակները» երկում (1847), Աբովյանը պատմում է, որ մի անգամ Թիֆլիսի գիմնազիայի ավագ ուսուցիչ Ցիլյադելֆինը իրեն ասել է. «Կառավարությունը ցանկանում է ոչնչացնել տեղական լեզուները, իսկ դուք ուզում եք նրանց վերակենդանացնել ու ամրապնդել» (ԵԽԱ № 23):

[3] Ավելորդ չէ հիշեցնել, որ լեզու ասելով Աբովյանը նկատի ուներ աշխարհաբարը:

պետք է ամուր ու անաղարտ պահի իր լեզուն։ Օտար լեզվի որդեգրումը երբեք չի կարող տվյալ ժողովրդի համար կենարար սնունդ հանդիսանալ. «Ինչ քաղցր, պատվական կերակուր էլ տաս երեխին, էլի իր մոր կաթը նրա համար շաքարից էլ ա անուշ, մեղրից էլ,— այլաբանորեն ասում է նա։— Մեր կաթն էլ որ ծախենք, առնող չի՛ ըլել։ Մեր աչքը որ հանենք ուրիշին տանք, ուրիշը կարելի՞ ա դնել տեղը։ Մեր օրորոցի վրա մեր լեզվով մեզ նանիկ ասեցին, է՛ն էլ ա մեր միտքը չի՞ պետք է ընկնի... էն վայրենի ազգերն էլ իրանց տսպա լեզուն աշխարքի հետ չե՛ն փոխի։ Հո լսել ես շատ անգամ մուղիկի ձեն՝ ասա՛, քո սաղն ու բայաթի՞ն ա քեզ դիր գալիս, թե էն» (63—64)։

Սակայն այստեղ առաջ է գալիս մի ուրիշ խնդիր։ Չէ՞ որ կղերաավատական գաղափարախոսները ատամներով պաշտպանում են գրաբարը, որ ժողովուրդը չի խոսում և չի հասկանում, իսկ աշխարհաբարը դեռևս «անպատիվ» է, դեռ մշակված ու որոշակի չափ ու կշռի տակ դրված չէ։ 30-ական թվերից սկսած մեծատուններն ու վաշխառուները լեզուն ապականում էին իրենց բնորոշ տերմիններով, «իրենց չարչիական լեքսիկոնով», աղճատված ձևով նրա մեջ մտցնելով «փրոմուլիվարսա արի, սկուչնա եմ, օֆիծարսա էլա, փրոշենի ամի, սանյարին շատ ունիմ, գլուխս կրուժիրսա էլավ, փեզչեսնենի մարդ ա, ռազփոյնիք ա, յափերնիք օրմին ես, գնանք կուփարսա ըլենք, ափրանիեմեն եմ գալիս, փրոիգրարսա արին, համփրին փսերբի ուրաքնա ա, շատ խլափոր պլուչիրսա չի՛ ըլում և այլ» (64) բառեր ու դարձվածքներ։

Այս հարցում ևս նրա տեսակետը որոշակի է. նա աներեր կանգնած է մայրենի աշխարհաբարի ամրապնդման ու զարգացման դիրքերում, առաջադրելով պատվար կանգնեցնել այդ վնասակար տենդենցների դեմ և վճռական հակահարված տալ ամեն տեսակ կապկումների. «Գիտամ, լուսավորյալ մարդը նա է, որ ամեն լեզու քանի կարա, խոսակ խոսա։ Դու քո լե-

դուն՝ որ խոսակ խոսաս, ի՞նչ մնաս ունի, հենց գիտում ես, խելքդ ձեռիցդ կառնեն, թե սովոր իմաստությունդ ջուրը կթափի, կամ թե չէ անբռության սիրտն ես ուզում շահիլ» (64)։

Լեզվի մաքրության հարցը Աբովյանը մասամբ շոշափել էր նաև ՛վեպի սևագրում, ուշ շրջանում ավելացրած մի պարբերության մեջ, առանց սակայն ռուսական բառերն ու արտահայտությունները աղճատված ձևով հայերենի մեջ մտցնելու տենդենցը քննադատելուց այն կողմ անցնելու։ Նա գրում էր. «Հիմիկ էլ հո՝ մեկ սլոտ փոլնքատ, խրնքակեր շան կոծած շկոլի ձագ, պատակեր կատու, մեկ ֆորթի շաթու, մեկ մխոտ թեբերից, կեղտոտ գդալ, էրեսվան լափոտը ղունջը ցցել, էլ դամաղ չի՛ անում՝ իր լեզուն խոսի հարևը մորն էլ ղունջը ծռելով հենց էն ա հաչում. «էն հայվարա, այսինքն հայերեն, չե՛մ գիտի, լեզուս չի՛ բռնում, կոշտ լեզու, փիս լեզու ա, բողազ է շանգռում, գլուխս է ցավացնում. փրոզուլիվաթիա արի, աբուչնա եմ...» և այլն (238)։ Եզրակացությունը պարզ է. լեզուն աղճատողը ուռճացող վերնախավի այլասերված զավակներն են, որոնց նկատմամբ նրա ատելությունն այնքան ուժեղ է, որ արտահայտությունների մեջ ընտրություն չի կատարել։

Վեպի մաքրագրի մեջ, կրկին արծարծելով լեզվի մաքրության հարցը և խորամուխ լինելով նրա էության մեջ, Աբովյանն արդեն զգում էր, որ դա մասնավոր խնդիր չէ, դա ունի համաժողովրդական նշանակություն և առաջին հերթին վերաբերում է «հարիր հազարին»։ Մաքուր, միասնական և ընդհանուրին հասկանալի լեզվով պետք է իրականացվեր ժողովրդի լուսավորության գործը, հայրենիքի կուլտուրական վիճակի բարելավումը։

«Վերք Հայաստանի» մաքրագրում Աբովյանը խորամուխ է լինում նաև համաժողովրդական լեզվի խաթարման օբյեկտիվ պատճառների մեջ և ճշտորեն նշում, որ հարյուրամյակներ շարունակ լինելով պարսկա-թյուրքական բարբարոսների լծի և, հետևաբար, պարսկացման ու թյուրքացման վտանգի

տակ, ինչպես նաև զրկված լինելով մարդկային ամենատարրական իրավունքներից (հայերեն խոսելն ու երգելը՝ տիրողներն արգելում էին— Գ. Հ.), ժողովուրդը արյուն-արտասուքով էր իր գոյությունը պահպանում, ուր թե լեզվի մաքրության մասին մտածեր։ «Ժամանակն էնպես ծովել էր մինչև հիմա, որ մարդ իր գլուխը չէ՛ր կարում պահել, ո՞ւր մնա լեզվի զարդը քաշիլ» (64)։ Միանգամայն բնական համարելով թյուրքերեն ու պարսկերեն բազմաքանակ բառերի — ձևերի մուտքը հայերենի մեջ, Աբովյանն առաջարկում է բնական ճանապարհով էլ լեզվից հեռացնել դրանք. «Քիչ քիչ կարելի ա խտտակել, երբ որ ազգը ուսումն առնի ու իր լեզվի բառերը քիչ քիչ հասկանա» (64),— եզրափակում է նա։ Աբովյանը անտարակույս ճիշտ էր, որովհետև գիտակցել էր, որ գլխավոր չարիքը՝ օտար լեզուն բռնի պարտադրելը, այլևս չկար։ Օտար բառերից լեզուն մաքրելու առաջին փորձը Աբովյանն ինքն է կատարել, «Վերք Հայաստանի» վարիանտների վերամշակման վրա աշխատելիս։ Իսկ թե ի՞նչ սկզբունքով — չափով, այդ կտեսնենք սույն աշխատության վերջին գլխում։

«Վերք Հայաստանի» մաքրագրում Աբովյանն ընդարձակորեն խոսում է հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական վիճակի բարվոքման գործում լուսավորության կամ, ավելի պարզ, գրականության ու դպրոցի կատարելիք մեծ դերի մասին։ Վերջինները կվերացնեին հասարակական կյանքում ու կենցաղում եղած բացերը, կփարատեին տգիտությունն ու խավարը և ինքնաճանաչման եկած ու համախմբված հայ ժողովրդին հանելով դարավոր նիրհից, կառաջնորդեին լուսավոր ազգերի շարքը։ «Ծալլի մեղքը չի՛,— ասում է նա,— որ ճամփից դուրս են էկել, իրար մոռացել, մեզ նման կարդացողի տանողը պետք է ծառիցը կապած, պծով սոված պահած...» (60)։ Ճարտասանության մեջ՝ մեջ բերելով մի շարք այլաբանական արտահայտություններ. «Ով թուր չի՛ առել ձեռքը, թրի զարկն ի՞նչ կիմանա, ով թվանք չի՛ քցել իր օրումը, քարս

ի՞նչպես կարա անիլ... Դու ուզում ես անհիմքը՝ տուն շինել, կրակ չի՛ վառած՝ հաց թխիլ, մմի ծերը թողել ես, մատդ ես կրակին դեմ անում, առանց պատրուքի, ուզում ես, ճրագան ինքն իրան քեզ լիս տա։ Կացինը դնում ես ծառի քոքին, դու քնում, յա ձեռներդ խաչում, գլադին կանգնում, ծառն ինքն իրան քեզ ցախ կդառնա՞, խելքդ ո՞ւր ա» (61) և այլն, Աբովյանը պարզ ու որոշ ասում է, որ անհրաժեշտ է հիմնել ժողովրդական դպրոցներ և առանց հետաձգելու սկսել նոր սերնդի կրթության ու դաստիարակության գործը։

Իսկ ի՞նչ հունով պետք ընթանար հիմնելիք դպրոցը։ Իհարկե ո՛չ կղերական դպրոցի՝ սխոլաստիկայի, սերտողության և ո՛չ էլ ազնվականական դաստիարակության՝ անգործության ու դիլետանտության ճանապարհով։ «Հայոց ազգի ջանին ղուրբան՝ մեկ նրա երեխին ուսումն տուր, նրա էն լուսաթաթախ հոգին կրթի՛ր, կրթիլ եմ ասում, թուղթ խաղալ, Ֆրանցուզերեն խոսիլ. անգիր բերան անիլ, գլխիցը դուս տալ՝ չեմ ասում ու շարական, փոխ, յա շիլափլավ ուտել սովորցնիլ, որ մեզ էս տեղն ա քցել» (61)։ Աբովյանի համոզմամբ այդ նորը պետք լինեին ժամանակի ու մարդկանց պահանջները բավարարող և բնության ու նրա հրաշալիքների էությունը բացահայտող գիտելիքները։ Պարզ ասած նոր դպրոցի դասագիրքը պետք լիներ բնությունը, որը ցույց է տալիս «բարի ճամփա» (12)։

Աբովյանը այն կարծիքի չէր, թե դպրոցը կամ լուսավորությունը միանգամից կվերափոխեն կյանքը, ո՛չ, նա հասկանում էր, որ դրա համար հարկավոր է տևական ժամանակ, ուստի զգուշացնում էր շուտ ոգևորվողներին. «Մեղձ ազգի հոգին մինչև էսօր քաղել են, հազար տարվա յարա ունի սրտումը, որ դեռ չի՛ սաղացել։ Էնքան դարդ սրտատանք ա կուլ տվել, որ ո՛չ աչքումը լիս կա, ո՛չ բերնումը համ, ո՛չ սրտումը եղ. դու հենց ուզում ես՝ որ էստոնք մեկ ոհաթումը անց կենան, ի՞նչպես կըլի...» (61)։

Ժողովրդական դպրոցներ հիմնելու համար հարկավ կալա-

հանգչելին նյութական ահագին միջոցներ, որ թշվառության մեջ ապրող «ազգը» կամ ժողովուրդը ի վիճակի չէր ամբողջությամբ հոգալու։ Այս կետում է, որ Աբովյանը մի տակտիկական քայլ է կատարում, աշխատելով ընդհանուր լեզու գտնել գեթե ու երկփեղկված երրորդ դասի ունևոր խավի հետ և ամբողջ ազգին՝ այն է՝ հասարակ ժողովրդին և ունևորներին դրանով շահագրգռելու համար մաքրագրում թեական ձևով ավելացնելով այս տողերը. «Տո որ մեկ գերեզմանատան համար, մեկ դարտակ ողորմի տալու խաթեր քո ազգի պատվական իշխանքը՝ պարոն Զավրովն, Խերեգինովը, Դավիթ Թամամշովը, Մովսես Տեր Գրիգորովը հազար մանեթներով կըխարջեն, իրանք իրանց տեղ կըրաշխեն, ժամ կշինեն, խալխը ինքն իրան կերթա, իրան հացովը մշակություն կանի անփող, բաս խելքդ ի՞նչ տեղ ա, էնպես ընտիր իշխանքը, էնպես բարեսիրտ ազգը՝ վարժատուն շինելուց, մեկըմեկու օգնելուց կփախչի՞ն, որ մեկ հացն տանին» (61—62)։ Աբովյանն ուզում է համոզել լսողին, բայց ինքն ամենից առաջ է կասկածում նման ծրագրի հաջողության վրա։

Աբովյանի հույսը հայ նոր երիտասարդության վրա էր, վերջիններին հետ էր կապում նա իր լուսավորական ծրագրերի իրականացումը, ուստի շարունակ նրանց է դիմում, նրանց հետ խոսում. «Ձե՛զ եմ ասում, ձեզ՝ հայոց նորահաս երիտասարդք՝ ձեր անուշին մեռնիմ...» (64)։ Կամ. «Էրեխե՛ք՝ ձեր ջանին մեռնիմ, ձե՛զ եմ ասում իմ՝ դարդը՝ ձեզ համար եմ գրում...» (111) և այլն։ Նա խրախուսում է երիտասարդությանը անդավաճանորեն նվիրվել ժողովրդին, աշխատել հայրենի գրականության զարգացման համար, կերտել բանաստեղծական մտքի գոհարներ, դրանով անմահացնելով և իրենց և իրենց ժողովրդին (64—65)։

Իսկ ի՞նչ բնույթ ու բովանդակություն պիտի ունենար նոր գրականությունը։ Այդ հարցի պատասխանը, Աբովյանը, սպառիչ կերպով տալիս է «Վերք Հայաստանիի» մաքրագրին կցված «Հառաջաբանում»։

բ) ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆՈՐԵՆ ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ԴԵՐԻ ԸՆԴԳԾՈՒՄԸ

Խորհրդածելով հայ ժողովրդի ուժերն համախմբելու, նրան ինքնաճանաչման բերելու, համաժողովրդական խոսակցական աշխարհաբարը մաքրելու և միասնական սիստեմի տակ դնելու ու այլ խնդիրների շուրջ (դրանք Աբովյանի համոզմամբ Հայաստանի տնտեսական-կուլտուրական վիճակի բարելավման ուղիներից էին), հայ մեծ գրողն ու գործիչը դրանց իրականացումը պատկերացնում էր միայն Ռուսաստանի և ռուս ժողովրդի հետ մշտապես կապված լինելու դեպքում։

Վեպի առաջին վարիանտներում վերևի հարցերը թույլ արծարծված լինելու պատճառով, Հայաստանի տնտեսական ու կուլտուրական հառաջադիմության այս կարևոր նախապայմանի վրա փոքր ուշադրություն էր դարձված։ Չափածո նախագրում, օրինակ, ռուս և հայ ժողովուրդների բարեկամության մասին ո՛չ մի խոսք չկա։ Հետագայում միայն, ծրագրային նշումների թերթիկի վրա, Աբովյանն արել է մի ժլատ գրանցում. «Ցիցիանովի ժամանակի ծառայությունները և թուղթը», որ վերաբերում է 1804 թվականի ռուսական զորքերի Երևանյան արշավանքների առաջ բերած ոգևորությանը և նրանց՝ հայերի ցույց տված օժանդակությանը, որը սակայն նախագրում հետագա արծարծում չի ստացել։ Հաջորդ, սևագիր վարիանտում, առկա են արդեն, հեղինակի ռուսական կողմնորոշումը բնորոշող մի շարք արտահայտություններ։ Սակայն դրանք էլ մնում են մի կողմից արդեն Ռուսաստանի տիրապետության տակ անցած փամբակցիների ու լոռեցիների արտագրություններ[1] և մյուս կողմից՝ Երևանի գրավման

[1] Ուշագրավ է, որ սևագրի ակնարկվող արտահայտությունները («Աստված օրհնի՝ Ռուսի հողն ու ջուրը»—325։ «Բայց վա՛յ ձեր օրին... թե... Ռուսի գլխներդ դուք դուրան չառաք, նրա հետ սիրով, սրտով չմիանաք»—302։ «Տուն ու տեղ թողան, Ռուսի մոտ փախչին, Ռուսին պաշտեն, նրա ըմբրքին

առաջ բերած համաժողովրդական ոգևորության արձագանքները։

«Վերք Հայաստանիի» մաքրագիր վարիանտում հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման (օրիենտացիայի) հարցն արծարծվել է բազմակողմանիորեն և դարձել վեպի սևեռուն գաղափարներից մեկը։

Հենց վեպի սկզբում, վերախմբագրելով բարեկենդանի հանդեսի նկարագրությանը նվիրված էջերը, Աբովյանն ստեղծել է մի հոյակապ էպիկական պատկեր։ Պարսկական բռնապետության մռայլ տարիներն են. գյուղացիները բոլորվել են քեֆի սեղանի շուրջ և բարձրացրած յուրաքանչյուր բաժակի հետ արտահայտում են իրենց իղձերն ու ցանկությունները։

Ահա այդ տեսարանը սևագրում.

«... արաղ մազեն տուն բերին։ Խունկ ծխեցին, էրթիկները բաց արին... Մեր քեղխուդեն հացի նստեցին։ Մեկ գլխին տերտերն էր, մյուս գլխին տանուտերը, ու մեկելներն էլ սրով պատի տակին էնպես բազմեցին, որ սուփրի մեջը՝ էկող գնացողի համար բաց մնա։ Նոքարը արաղն առեց՝ ափթա տերտերին դեմ արեց։ «Աստված **աշխարհս խաղաղություն, բարեվորաց հաշտություն, Քրիստոնեից ազատություն տա՛**...» (216),— ընդգծված բառերը ավելացվել են հետագայում — Գ. Հ.։

Ահա նույն հատվածը մաքրագրում.

«... Տերտերը «Պահպանիչն» ասեց, քեղխուդի մեկը՝ «Ձեզ եւ խաղաղությանը», տանուտերինը՝ «ամենն» ձեն ավեց, տանուտերը՝ «Մեղա Աստուծո, Հայր սուրբ, քեզ ունիմ միջնորդ», ու վերջապես արաղ մազեն էլ որ տուն չբերին, ամենի սիրտն էլ տեղն ընկավ, ինչ անց էր կացել, բամուն ավին, խունկ ծխեցին, երթիկ ու դուռ բաց արին... կատարները տաքացավ ու մեր պարոն քեղխուդեքը հացի նստեցին, սուփրեն բաշեցին, մեկ գլխին տերտերը բազմեց, մյուս գլխին՝ տանուտերը, մեկելներն էլ պատի տակին էնպես սրով բազմեցին ու ոտները ծալե-

---

մեռնին, որ էսպես տեղը էլ նրանց հեչ չընկնին»—302,— խոսքը Խլղարաքիլիսայի երիտասարդների Հասան-խանի ձեռով գերեվարելու մասին է.—Գ. Հ.) Աբովյանը հետագայում մաքրագրին չի փոխանցել։

ցին, որ սուփրի մեջը՝ եկող գնա-
ցողի, անց ու դարձ անողի համար
բաց էր մնացել։

Նոքարը, որ արաղը չափեց, ավալի ոֆֆա տերտերին դեմ արեց, սա էլ խաչակնքեց, օրհնեց՝ տվողին խմացրեց՝ որ մեր գդիրն էր, ու ետո ինքն առավ թասը ձեռը ու օրհնության տասը սկըսեց։ «Աստված աշխարքիս խաղաղություն, թագավորաց հաշտություն, քրիստոններից ազատություն տա։ Էնչանք մեռնինք ո՛չ, որ մեկ օր էլ էսպես էլով, գյունով Ռուսի ձեռի տակին նստինք, քեֆ անինք»։ «Ամեն, ամեն» ձեն ավին ամենն էլ» (32) և այլն։

Ի՞նչ է պարզվում այս համադրումից (թողնում ենք լեզվական-ոճական կարևոր տարբերությունները)։ Մաքրագրում Աբովյանը ընդգծել է հայ ժողովրդի գլխավոր ցանկությունը՝ չմեռած տեսնել ռուսներին իրենց աշխարհի գլխին, որ բացակայում էր սևագրում. «Էնչանք մեռնինք ո՛չ, որ մեկ օր էլ էսպես էլով, գյունով Ռուսի ձեռի տակին նստինք, քեֆ անենք»: Շարունակելով նույն ոգով ու ոճով վերախմբագրել այդ հատվածը, Աբովյանը ավելացնում է նոր խոսքեր ևս։ Հայ ժողովուրդը անհամբերությամբ անձկում է այդ բախտավոր ժամին, ուստի և աղերսում է բարձրյալին. «Տե՛ր Աստված՝ դու մեր Ռուս թագավորի սիրտը ռահմ քցես, որ գա, մեզ ազատի՛, բնչանք մահ մի՛ տար մեզ, մինչև նրանց երեսը տեսնինք» (33)։ Սրանք հասարակ բառեր չեն, իզուր տեղ չեն ասված, իզուր տեղ չեն ավելացրած վեպի մեջ. սրանք հայ ժողովրդի գլխավոր բաղձանքի արտահայտություններն են, որոնց Աբովյանն ունկնդրել և որոնցով համակվել է մանկության տարիներից։ Ուշադրություն դարձնելով հայ ժողովրդի իղձե-

րից կարևորագույնի վրա, Աբովյանը դրանով իսկ ճշմարտացիորեն էր վերարտադրում վեպում արտացոլվող պատմական ժամանակաշրջանի տրամադրությունները:

Մաքրագրի մեջ իրականացված է նաև Աբովյանի վաղուցվա մտադրությունը, այստեղ վերարտադրվում է Ցիցիանովի և Գուդովիչի Երևանյան արշավանքների առաջ բերած համաժողովրդական ոգևորությունը: 1804 թվի ամառը, երեք ամիս շարունակ, ռուսական զորքերը պաշարված մնում են Երևանի մզկիթում՝ «առանց հացի, առանց օգնության, էն չոք ժամանակին, որ մարդի գլխին կրակ ա վեր թափում, էն թանկությունն ա ըլում, որ աղի լիտրը մեկ մանեթով ճարվելիս չի՛ ըլում, ու շատն էլ անթիվ, անհամար զորքով գալիս՝ սար ու ձոր բռնում ա, ու Թոփ զոնչունի շատն էլ՝ որը սաղն ա սպանում, որը չոքը»: Եվ այս դժոխային պայմաններում, ինչպես պատմում է Աբովյանը՝ «Հայերն են ըլում հաց ավողը, Թաք քոմակը, մանավանդ կենդանի նահատակ Հովհաննես[1] եպիսկոպոսը՝ որ էջմիածնա ամբարները դարդակում ա, որ բալքի թե էնպես բան ըլի, որ Ռուսն Երևան մնա, բայց... չի՛ ըլում» (57): Պարսկական լծի նկատմամբ ժողովրդի ատելությունն այնքան մեծ է լինում և հիասթափությունը, այնքան ահավոր, որ, երբ նահանջում են ռուսական զորքերը, շատ հայեր Հովհաննես Ցուղրաշու և վերոհիշյալ եպիսկոպոսի գլխավորությամբ նրանց հետևից գաղթում են Լոռի և Թիֆլիս. «Հալվարարու Հայերը որ կան, էն ժամանակն են իրանց երկիրը թողում» (58),— ավելացնում է նա:

Աբովյանը, արդեն հիշված ծրագրային նշման մեջ, ակ-

[1] Վեպի ակադեմիական հրատարակության անձնանունների բառարանում կենդանի նահատակ անվանված Հովհաննես եպիսկոպոսը նույնացվել է Հովհաննես Կարբեցու հետ (397): Հովհաննես եպիսկոպոսը Ակնեցի էր, աչքի է ընկել դեռ Ղուկաս կաթողիկոսի ժամանակ, 1805 թվից Վրաստանի հայոց առաջնորդն էր. ռուսական կողմնորոշմամբ հոգևորական: Վախճանվել է 1810 թվի նոյեմբերին:

նարկել էր Ցիցիանովի արշավանքների ժամանակ ռուսական զորքերին հայերի մատուցած ծառայությունները (օժանդակությունը) հաստատող թղթեր, իսկ վերևի մեջբերման մեջ էլ խոսում է էջմիածնի ամբարները դատարկելու մասին: Այդ թղթերի մի մասը բարեբախտաբար հասել են մեզ: Ահա մեկը—

Վ կ ա յ ա կ ա ն

Սույնը տրվում է նորին սրբազանություն հայոց արքեպիսկոպոս տեր Հովհաննեսին առ այն, որ նորին պայծառափայլություն, հետևակի գեներալ, Վրաստանի Գլխավոր կառավարիչ և զանազան շքանշանների ասպետ պարոն իշխան Պավել Դիմիտրիևիչ Ցիցիանովի ռուսական զորքերի հետ Երևանի պարսկական բերդի պաշարման ժամանակ, կենսամթերքի սակավության պատճառով, նորին պայծառափայլության հրամանով, նորին սրբազանությունից զանազան ժամանակներում ստացված, էջմիածնի վանքից բերված են կենսամթերքներ:

1804 հուլիսի 29-ին.

Ալյուր 150 չետվերտ 7 չետվերիկ. չետվերտը 7 փութ 10 ֆունտ, ուրեմն 1130 փութ 3,3/4 ֆունտ:

Ցորեն 5548 փութ 11,1/2 ֆունտ:

Պաքսիմատ (սուխարի) 169 փութ.

Սույն քանակությունը մուտք է արված ժամանակին մատյաններում, Սեվաստոպոլյան հրացանակիր գնդի մատակարարման բաժնի պետ, ենթասպա պարոն Պանտելեյմոնովի կողմից, որ հաստատում եմ 14 հոկտ. 1804-ին:

Մատակարարման շտաբի առաջին կարգի հանձնակատար՝

Դաշնով[1]:

---

[1] Ուղեգրություններ, հատոր Զ, Երևան 1934, էջ 105:

Այս փաստաթուղթը հայտնաբերել է պատմական գիտությունների դոկտոր Կ. Ղաֆադարյանը: Ուշադրավ է նրա հայտնաբերած մի ուրիշ գրությունը, որ վերաբերում է ռուսական զորքին՝ էջմիածնի ամբարներից ցորեն և այլ մթերքներ տրամադրելուն: «...Այսօր [illegible]

«Վերք Հայաստանի» մաքրագրում Աբովյանը փառաբանում է նաև ռուսական ռազմիկների քաջությունը՝ ի դեմս դաբաղկցի մի խիզախ ռուս զորականի, որի անունը թեպետ պատմագիրները մոռացել են, սակայն նրա սխրագործությունները ժողովրդական զրույցների ու երգերի նյութ են դարձել, և ժողովրդի հիշողության մեջ նա անմահացել է Ղարա մայոր անունով։ Ղարա մայորը աչալրջությամբ պահպանում էր Լոռու և Փամբակի սահմանները և ամեն անգամ, կռիվ ընկնելիս, ջարդում ու փախուստի մատնում պարսից հրոսակներին։ Մի անգամ Քյալբալի խանը որ լսում ա՝ թե Ղարա մայորը մեկ քանի հարյուր մարդից ավելի ո՛չինչ չունի, հրամայում ա, որ գնան, նրան սաղ սաղ բռնեն։ Բայց ռսի սալդաթի ու թոփի հոնարը դեռ չեն տեսած ըլում ողորմելիքը։ Իրեք, չորս անգամ էնրան ղոնչունը վրա է տալիս, բայց տեսնելով՝ թե Ռուսը պատի պես կանգնած՝ գյուլլից էլ չի երես եդ դարձնում, փախանը կատու ընկած՝ ձիու գլուխը շուռ ա տալիս ու իր հողը գալիս» (57)։

Այս հերոս ռազմիկի կերպարը Աբովյանի ուշադրությունն էր գրավել դեռևս 1838 թվից։ Իր համփորդական նոթերի մեջ նա գրել է. «Ի մէջ ճանապարհին ընդ առաջ լինի քեզ փոքր արձան մի՝ շինեալ ի սեաւ քարէ։ Աստ հանգչին ոսկերք քաջ գնդապետի միոյ (Ղարա մայեօր անուամբ) որ ի ժամանակս Ցիցիանովի ի գալն յԵրևանէ հարիւր արամբ առ ի տանել զպաշար վասն զօրաց, պարսիկք յեղակարծուստ պատահին նմա անթիւ զօրօք, և նա ընդ բոլոր ճանապարհն երկայնաձիգ՝ պատերազմի փոքու գնդիւ իւրով այլ վերջապէս վատնեալ զամենայն վառօդ և զռումբս մեռանի քաջութեամբ՝ հանդերձ

ետևի ամբարն իսպառ ասել ածեալ որբեցին և առ ի յցուցանել զպակասն միացեալն բեռանց, զՎարդան վարդապետի առայի ետևի ամբարն եւ բացեալ՝ հանին անտի քանի մի սոմար, և դարձեալ կերեցին, որոց զասմարն եղև 396 սոմար ցորեն, զոր առեալ տան բերին, և մնաց վասն մեր (Վանականներին—Գ. Հ.) ուտելիք արտաքոյ մնեռի 3 կամ 4 ասոր հաց...» (Հովհաննես արքեպիսկոպոսին ուղղված Բարսեղ եպիսկոպոսի նամակից)։

ընկերոջ խոսքը[1]։ Ժողովրդական զրույցներն են, հարկավ Աբովյանին առիթ տվել Ղարա մայրի մասին այնքան ջերմորեն խոսելու համար։

Ներգործող մեծ ուժով ու բարձր գեղարվեստականությամբ մաքրագրում նկարագրված է նաև Երևանի գրավման պահին ռուսական զորքերին ցույց տված ընդդիմությունը և Հայաստանի ազատագրման առաջ բերած համաժողովրդական ոգևորությունը։ «Սալդաթի ոտը հենց բերդը մտավ՝ թե չէ՛, հազար տեղից, հազար փանջարից լացն ու արտասունքը էլ չէին թողում, որ մարդի բերան բաց լլի։ Բայց ով սիրտ ուներ, լավ էր տեսնում, որ է՛ն ձեռներն, է՛ն աչքերը որ քարացել, սառել, երկինք էին մտիկ տալիս, առանց խոսքի էլ՝ ասում էին, որ դժոխքի քանդվիլը մեղավորների համար՝ էս գինը չէ՛ր ունենալ, ինչպես Երևանու բերդի առնիլը Հայերի համար... հազար տեղ... ծեր, մանուկ, աղջիկ, պառավ... ընկնում էին սալդաթների ոտովն ու էնպես նվաղած, հոգին քաղված մնում։ Քանի Հայաստան իր փառքը կորցրել էր, քանի Հայք իրանց գլուխն էին թրի տեղ թշնամու ձեռք ցցել, է՛ս օրը, է՛ս ուրախությունը չէին տեսել, չէին վայելել» (179)։ Արդարացել էին Հայերի դարավոր հույսերը. Հայաստանի «հողն ու զավակը» հանգստանում էին ռուսական արծվի թևերի տակ։ Ռուսների ծավալած ազատաշունչ հողմը՝ «խեղճ Հայերի էրված, խորոված սիրտը՝ անչափ մի անչափ հովացրեց» (58)։ Եվ այն խոսքերը, որոնք համրորեն, արցունքի միջով կամ հոգու ձայնով էին ասում Հայերը, հայ ժողովրդի հայրենանվեր զավակը ազդարարում էր հզոր ձայնով՝ աշխարհով մեկ. «Օրհնվի էն սհաթը որ Ռուսի օրհնած ոտը հայոց լիս աշխարհը մտավ ու դժոխքի անիծած չար շունչը մեր երկրիցը հալածեց։ Քանի որ մեր բերնումը շունչ կա, պետք է գիշեր ցերեկ մեր քաշած օրերը մտքներս բերենք, ու Ռուսի երեսը տեսնելիս՝ երեսներս

---

[1] ԱՇԱ № 20։



Երևանի բերդի գրոհումը (նկար Մաշկովի)։

խաչ հանենք, Աստծուն փառք տանք, որ մեր աղոթքը լսեց, մեզ Ռուս թագավորի հզոր, աստվածահաստատ ձեռի տակ բերեց» (58)։

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու պատմականորեն առաջադիմական նշանակությունը ավելի ընդգծելու համար Աբովյանը զուգահեռ է անցկացնում իր ժողովրդի և ամերիկյան բնիկների միջև, որոնք անցել են քաղաքակիրթ պետությունների գերիշխանության տակ[1]։ Նա նկատում է, որ եթե «քսան տարու միջում լուսավորյալ, քրիստոնյա, խաչապաշտ եվրոպացոց ոտը՝ ողորմելի Ամերիկա էնպես քանդեց, ջնջեց, հողի հետ հավասարեց, որ հինգ վեց միլիոն ազգերիցը՝ էս օր հազար հոգի էլ չեն մնացել, էն էլ սար ու ձոր ընկած, վայրենի գազանների պես են իրանց սև օրը լալիս, ու

---

[1] Եվրոպական պետություններից ու պապական ինկվիզիտորներից ամերիկյան բնիկների կրած տանջանքները վաղուց են հուզել Աբովյանին։ Դեռ 1834 թվին, Դորպատյան լրագրի համար գրած ակնարկում, նա ասում է. «Այժմ դարձնենք մեր հայացքը դեպի նոր աշխարհի՝ Ամերիկայի բնակիչները, կտեսնենք, թե ինչպես այնտեղ ժողովրդի քանակը պակասեց նրանից հետո, երբ ամերիկացիները եվրոպացիների ստրուկները դարձան, և ինչպես չքանում են նրանց կապերը, որքան թմրած և անկենդան են նրանց մտավոր հատկությունները» (ԱԵԱ № 40)։ Նույն մտքերն են արտահայտված «Յնայիս ամենի անդ Միխիթի թնդայ դղրդմամբ...» անագիր բանաստեղծության մեջ (գրված 1833—36 թթ. արանքում), որ եվրոպացիները բնութագրվում են «արյունոտ տեսլեամբ թշնամի զաման» (ԽԱ, ԵԼԺ, I, 260)։ Այս մտքերը բավական մանվածապատ ձևով Աբովյանը զարգացրել է նաև «Վերք Հայաստանի» չափածո նախագրում, որտեղ հայերի վրա եվրոպացիների գործած անիրավ ու զրպարտչական հարձակումների և պապական դարձնելու խելագար ձգտումների առնչությամբ

(«Թէ չէ՛ր բաւական Մահմադեան մաթրախ,
Թէ չէ՛ր բաւական կոտոց գլխափարախ։
Եւ մեր կրօնակիցք Քրիստոսի որդիք,
Անգութ խաչապաշտ կիրթ Եվրոպացիք...
Խաչել տան գիրքեանց
Անձանօթ Քրիստոս, մեր Յիսուս գթած,
Զոր մերն պաշտեմք, նոքա արտաքսեն...»

ԽԱ, ԵԼԺ, II, 134)։

կոտորվում» (55), որ եթե «եվրոպացիք Ամերիկա ավերցին, հողի հավասարեցին», ապա «Թուրք Հայաստան կանգնացրին ու ավարացվող բերդ, գաղթող ազգերին մարդասիրություն ու նոր հողի տվին» (180)։

Իր ընթերցողների ուշադրությանն հանձնելով եվրոպացի գաղութարարների՝ ամերիկյան բնիկներին «քաղաքակրթելու» անվան տակ կատարած այս ահավոր ոճրի նկարագրությունը, Աբովյանը ո՛չ միայն հիշեցնում էր մահմեդական հրոսակների տիրապետության շրջանում հայերի կրած զարհուրելի տառապանքները և այդ տանջարանից նրանց ազատագրող ռուսների կատարած մեծ գործը, ո՛չ միայն պատգամում էր իր ժողովրդին՝ հավատարիմ մնալ ռուսներին և երբեք չմոռանալ նրանց երախտիքը, այլև իր ձայնն էր բարձրացնում հօգուտ փոքր և ստրկացված ժողովուրդների պաշտպանության։

«Վերք Հայաստանին» մշակելիս ռուսասիրության գաղափարը Աբովյանը անցկացրել է անգամ մանրուքների մեջ։ Չափազանց բնորոշ է այս տեսակետից հետևյալ օրինակը։

տում է, որ «ոսկի պաշտելու» մեջ հայերին մեղադրող «կիրթ եվրոպացիք» այժմ իրենք են հանուն ոսկու կոտորում ու բնաջնջում Ամերիկայի բնակիչներին.

Զո՛ւ արար ինքն անգութ սուրհանդակ...
Եմուտ ի չքնաղ ծոց Ամերիկոյ
Զատուցած և ոսկի ակաւ պաշտել
Մեհեան նմա կանգնել, զմեհեան բորբոքել
Զանմեղ սուրբ որդիս մեր մօր բնութեան
Զոր նա բան Փարսիկն զորդիս Հայկազեան
Եղեալ ի գրկաց հարց, մարց, ծնողաց
Զոհեալ իւրում թշուառ անհոգի խաչին
Զանթիւ միլիոն զոհից ընդ հազարաց
Տուեալ իւրում Աստուծոյ անուշ պատարագ

(ԽԱ, ԵԼԺ, II, 135)։

Այս հարցերին Աբովյանն անդրադարձել է նաև «Ամերիկու լիս գտնելը» պատմա-գեղարվեստական երկում (ԽԱ, ԵԼԺ, V, 233—271), ինչպես նաև «Ուղևորություն դեպի Անիի ավերակները» ճանապարհորդական նկա-

«Ռուսի զորքը» արտահայտությունը, որ նախապես գրված էր սևագրում հետագայում դարձրել է. «Մեր զորքը» (123)։ Պարզ է, որ սա արտահայտումն է Ռուսաստանի նկատմամբ հայերի տածած հոգեհարազատության։

Մաքրագրում հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը բնորոշող, ժողովրդներին խաղաղություն ու ապահովություն բերելու գործում Ռուսաստանի կատարած դերն ընդգծող ուրիշ արտահայտություններ ևս կան (օր. «Դրանց ոտքը որտեղ որ մտնի, էնտեղ բախտավորություն ու խաղաղություն պետք է ըլի» — 180 և այլն)։ Այդ ամենը ի մի բերած լավագույն իլյուստրացիա են դառնում Էնգելսի այն մտքի՝ թե «Ռուսաստանը իսկապես առաջադիմական դեր է խաղում Արևելքի նկատմամբ»[1]։

գ) ՔԱՂԱՔԻ ԵՎ ԳՅՈՒՂԻ ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Գաղափարական առումով նորություններ կան նաև սոցիալական հարցերի մեջ, որոնք արծարծվել էին դեռևս սևա-

---

գրության մեջ (ԱՆԱ № 23)։ Միջազգային քաղաքակրթության գավազանի տակ շնչահեղձորեն մեռնող ամերիկյան բնիկների պաշտպանության գաղափարը, ինչպես պարզվում է վերջերս ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր-գրող Մարիետա Շահինյանի խիստ հաջող, բայց չհիմնավորված հայտարարությունից, «Վերք Հայաստանի» վեպի մեջ է անցել Պուշկինի «Ջոն Տեններ» հոդվածից, որ տպվել է 1836 թվին. «Современник»-ի երրորդ գրքում (գրվել է 1836 թվի ամռանը։ Տե՛ս А. С. Пушкин, Полное собрание сочинений в десяти томах, том VII, Москва—Ленинград, 1949, стр. 449—464 և 710—711)։ Նա պնդում է, որ Աբովյանը կարդացել է այդ հոդվածը և վերջինիս մտքերը զարգացրել «Վերք Հայաստանի» մեջ («Коммунист», Ереван, 1953, 4 марта)։

Մ. Շահինյանը շնորհակալ գործ կաներ, եթե պուշկինյան արձագանքները որոներ Աբովյանի վեպի ուրիշ մասերում և ոչ այս գաղափարի մեջ, որ հայ մեծ լուսավորչի գլխում է եղել Պուշկինի հոդվածը լույս տեսնելուց երկու տարի առաջ՝ 1834 թվից։

[1] К. Маркс—Ф. Энгельс, Сочинения, т. XXI, Москва, 1932, стр. 211.

գրի էջերում։ «Վերք Հայաստանիի» վերջին վարիանտում Աբովյանն ավելի է ընդգծել ու սրել իր բացասական վերաբերմունքը քաղաքի մարդկանց ագահության ու չարության, դրամի և համակրանքը՝ գյուղի ու գյուղացիության նկատմամբ՝ առանց սակայն նահապետական կարգերն իդեալականացնողի դեր ստանձնելու։

Ի՞նչ է փոխել Աբովյանը քաղաքի բնութագրությանը վերաբերող էջերում։ Նախ վերամշակել ու վերախմբագրել է մի շարք հատվածներ։ Գյուղացին, օրինակ, վեպի սևագրում, քաղաքի մասին ասում էր. «Քաղաք գնալիս՝ հենց իմանաս՝ թե բոլոր սոված, կոտորած ըլին։ Հացն ու Աստուծո ջուրն էլ՝ են փողով ծախում, ախր էլ ընդում ի՞նչ խեր ու բարաքյաթ կմնա» (211)։ Այստեղ՝ «ու Աստուծո ջուրն էլ» արտահայտությունը ավելացրած է հետագայում, որի իմաստն է ընդգծել, որ քաղաքացիները անտեսապես անապահով են։ Ինչ վերաբերում է հատվածի ամբողջությանը, նա ոչ միայն կաղում է լեզվական տեսակետից, այլ որ կարևոր է՝ չի հասկացվում, թե ով է այդ միտքն արտահայտողը, հեղինա՞կը, թե՞ մի ուրիշ մարդ։

Մաքրագրում վերախմբագրելուց և որոշակի հերոսի բերանով արտահայտելուց հետո, այդ տողերը հնչում են նոր իմաստով. «Քաղաք որ մտնում ես՝— ասում է Հարությունը,— հենց իմանաս՝ թե աշխարք սով ա ընկել. էլ ո՛չ խեր կա, ո՛չ բարաքյաթ։ Հացն ու ջուրն էլ որ փողով ըլին ծախում ու առնում, էլ ո՞մ դուռը գնաս՝ ո՞մ ձեռք գեմ անես» (23)։ Համեմատելով սա նախորդի հետ, ակներև է դառնում վերջինի նպատակահարմարությունը։ Այստեղ գյուղացիության կարծիքը քաղաքի մասին արտահայտված է շատ որոշակի։ Հարությունը պարզ ասում է, որ հողի հետ կապված և արդար վաստակով ապրող գյուղացին ոչ մի սպասելիք չի կարող ունենալ քաղաքից, երբ այնտեղ ամենատարրական ու կենսական բաները (հաց ու ջուր) ենթակա են առ ու տուրի կործանիչ

օրենքին։ Հաջորդ փոփոխությունները ավելի քան հաստատում են, որ ոչ միայն կենսամիջոցները, այլև մարդկային ամենանվիրական զգացումները գերի են դարձել դրամին, մարդկանց բարոյական կերպարանքն է աղճատվել։ Եթե գյուղացին հազար տարի էլ սոված «չլինըը ծուխ»[1] ու կանգնի բարեկամի դռանը, «մեկն էլ ա քեզ տուն չի՛ կանչիլ, մեկ սառը ջուր խմացնիլ» (23), դեմքը շուռ է տալիս «ու աչքը քամակը քըցում», «եդ փախչում» (23)։ Այս արարքներից խիստ զայրացած գյուղացին քաղաքի մարդկանց անվանում է «մահդամարդ», քանի նրանց համար գնահատելին ոչ թե մարդու ներքին արժանիքներն են, այլ հարստությունը։ Ատելությունն այնտեղ է հասնում, որ Հարությունը նզովում է քաղաքի մարդկանց «Գլխից քար ընկնի» անեծքով և որակում նրանց՝ «փողակեր, հողակեր» (23)։ Սա ոչ միայն հիշեցնում է կյանքի վաղանցիկությունը, այլև գյուղացիական նայիվ փիլիսոփայությամբ դիմադրում անում ագահ առևտրական-վաշխառուներին, որոնք թողած արդար վաստակի ուղին, փողն են դարձրել կուռք և անխղճորեն հարստահարում են մարդկանց։ Արծվյանի հերոսը մարքագրում մատնանշում է նաև որոշակի պահեր, երբ գյուղացին ու քաղաքի առևտրականները իրար հետ անմիջական հարաբերությունների մեջ են մտնում։ Այստեղ ավելի քան ակներև է դառնում առևտրականների անխղճությունը. «Ճոթ առնելիս հո՝ շատն ուզում ա, մեկ երկու շահի փող ենք դատել, էն էլ նա խլի» (23)։ Արծվյանն ավելացրել է նաև թևավոր արտահայտություններ, որ հատկանշական են ընչաքաղց փողամոլներին. «Սատկած ձիու նալնի են ման գալիս...» (23)։

Այս բոլորից հետո գյուղացիության առաջ ծառանում է մի հարց. «էլ ո՞ւմ առնես դարդդ» (23)։ Եվ սա օրինական հարց էր։ Կարո՞ղ էին բարոյական կերպարանքից ու մարդկային զգա-

[1] Այս և հաջորդ չակերտավոր արտահայտությունները սևագիր վարիանտում չկան—Գ. Հ.։

ցումներից զուրկ առևտրական-վաշխառուները օժանդակել հայ ժողովրդի համախմբմանն ու ինքնաճանաչմանը, շահագրգռվել երկրի տնտեսական-կուլտուրական վիճակի բարեկարգումով, երբ դեռևս ամենաաննշան չափով իրենց հետ հարաբերության մտած գյուղացիությանը, այն է՝ Հայաստանի բնակչության բացարձակ մեծամասնությանը, շահագործում ու թալանում էին ամենաանխիղճ կերպով։ Այս ուղղությամբ Աբովյանը խորհրդածել է նաև վեպի նախորդ՝ սևագիր վարիանտում։ Վերջինիս մեջ ներդրած թերթիկներից մեկի վրա այսպիսի տողեր կան. «Աստված էլի կյանք տա՛ Թիֆլիզի վաճառականներին. Աստված նրանց պահի՛, պայծառացնի՛, Ազգի համար հաստատ մնան...» (239),— սակայն միտքը չէր ավարտել։ Ո՞վքեր են այս նոր մարդիկ, որոնց Աբովյանը օրհնանք է ուղղում, ի՞նչով են տարբերվում նրանք քանաքեռցիների հարևան քաղաքում ապրող առևտրական-վաշխառուներից։ Գուցե «վաճառական» ասելով Աբովյանը նկատի է ունեցել ֆեոդալիզմի ընդերքում զարգացող նոր ուժե՞րը. դժվար է որոշակի պատասխան տալ, որովհետև վեպի մաքրագրում այս տողերը այլևս չեն երևում։ Բայց մի բան հաստատ է։ Հարությունի քննադատած քաղաքի մարդիկ տարբեր են «Թիֆլիզի վաճառականներից» կամ ապագա հասարակության «սյուներից»։

Մաքրագրում իր հերոսի բերանով հույս չկապելով այն ժամանակվա հասարակության մյուս խավերի՝ ֆեոդալների ու վաշխառուների հետ, Աբովյանը ամենից համակրելին ու առաջադիմականը համարել է՝ գյուղացիությանը, ֆեոդալիզմի դաժան օրենքների տակ եռակի մաշկվող գյուղացիությանը։ «Էլի թե հոգի կա, հավատ, մեզանում ա» (23),—ասում է Հարությունը և ոգեկոչում մյուսներին «իրար արևով խնդալ» (23),— կամ, ավելի պարզ ասած, տնօրինել սեփական բախտը։

Կարո՞ղ էր գյուղացիությունը նման դժվարին երթի մեջ՝

ամուր ու աներեր մնալ։ Ինչպես երևում է, Աբովյանը դրանում համոզված է եղել, գոնե նման եզրակացության են բերում գյուղական կյանքի և գյուղացիության առավելությունները ընդգծող այն հատվածները, որոնք վերախմբագրված ձևով փոխանցվել են «Վերք Հայաստանիի» չափածո նախագրից։ Հակառակ քաղաքի մարդկանց ագահության ու չարության, գյուղացիներն ազնիվ ու մարդասեր են, հյուրասեր ու առատաձեռն։ Նրանք օգնում են ամենին, առանց ազգային խտրության. «Յարանի յաղն էլ՝ նրանց ղոնուլը ո՞նց կենար, իրանք թևիցը կըքաշեին, տուն կկանչեին՝ որ նրանց սուփրի համն առնի ու էնպես համփա ընկնի։ Շատ անգամ եկեղեցումը որ մեկ ղարիբ օրմին կտեսնեին, սուրբ սուրբն առածին պես շատը կերթար եկեղեցու դուռը կըկայներ՝ որ ափթա ինքը նրան իր տունը տանի ու շատ անգամ՝ երբ ուղորը շատ կըլեր, խոսքը մին կանեին՝ որ մեկ էրկու շաբաթ նրան իրանց միջումը պահեն, նրան քեֆ շհանց տան ու բոլորն ի միասին՝ մեկ օր սրա տանը, մեկ օր նրա՝ ուրախություն անեն՝ ղարիբի սիրտն առնեն» (21)։

Հակառակ «հաց ու ջուրը» ծախու հանած քաղաքացիների, գյուղացին կապված լինելով հողի հետ, տնտեսապես ապահով է. «Գութանը դրանը լծած, մաճանը ձեռքում, կախանով տանձ ու խնձորով խըթխըթում և մտնողին հոտը տեղն ու տեղը բռնում, շշմացնում էր։ Նորահարսն ու փեսան կամ մեկ ապիզ ղոնաղ՝ որ գլուխը բարձին չէ՛ր դնում էս անմահական բարության մեջ, էնպես իմանում էր՝ թե դրախտում ա աչքը խփում, կամ բաց անում» (20)։

Վերջապես, քաղաքում կարելի է տեսնել Զարզար Ֆոդոսի նման ֆանատիկ-փողամոլների, իսկ գյուղում՝ Ալոսի նման հասարակության բարձր մասին մտածող մարդկանց, որոնք իրենց մարդասեր գործերով անմահացել են սերունդների հիշողության մեջ։ Վերքի չափածո նախագրում Ալոսի մասին շատ ընդարձակ էր խոսված և նրան գովքն էր բերված

մի աստվածավախ, քրիստոնեական «բարի արա», քարոզով ղեկավարվող ուխտավոր։ Սևագիր վարիանտում նախորդը մի կողմ դնելով ասված է միայն մի քանի չոր ու ցամաք բառ. «Հարիր տարի կըլի՝ որ պարոն Ա. մեռել ա, էլի նրա օղորմին հա՛ կա, հա՛ կա. Թուրք ու Հայ նրա գերեզմանովն են օրթում ուտում» (211)։ Եվ այսքան միայն. ո՛չ անուն, ո՛չ կատարած գործ։ Վերջի մաքրագիր վարիանտում Աբովյանը ոչ միայն հիմնական գծերով վերականգնել է Ապովի մասին նախագրում պատմածները (բաց թողնելով ուխտագնացության նկարագրությունը, որն անհարիր էր եկեղեցու մասին Աբովյանի ունեցած հայացքների հետ), այլև նրանց տրված է նոր իմաստ. «Հարիր տարի կըլի որ լուսահոգի Ապովը մեռել ա, էլի նրա ողորմին հա՛ կա, հա՛ կա։ Թուրք ու Հայ նրա գերեզմանովն են օրթում ուտում։ Ճամփի վրի մենծ իգու անունը Հնգատան ա հասել...» (23)։ Ապա թվարկում են նրա մյուս բարեգործությունները։ Այստեղ այլևս չկա սևագրի անդեմ ու անարյուն «պարոն Ա»-ն, այլ կա «լուսահոգի Ապովը», որն աշխատել է հասարակության համար, որի քրտնքով վաստակած բարիքները բաշխվել են տնանկներին ու կարոտյալ գյուղացիներին։

Բայց իսկապես այսպիսի՞ն էին գյուղն ու գյուղացիությունը պարսկական լծի տիրապետության շրջանում։ Իհարկե՝ ո՛չ, և Աբովյանը այն օրերի մասին չէ, որ խոսում է[1]։ Հայ գյուղն այդպիսին չէր նաև «Վերք Հայաստանի» ստեղծելու տարիներին։ Գյուղի նկարագրության մեջ Աբովյանը խտացրել է գույները, միտումնավոր չափազանցությունների դիմել և որպես իրականություն ներկայացրել այն, ինչ ցանկացել է տեսնել ապագայում, իրողություն դարձած։ Աբովյանի ընդգծած

[1] Նախագրում, որ գյուղացին հպարտանում է, թե «մեր տուն ու դուռը բյուր բարությունով հենց բռնած տրաքում են», միաժամանակ հիշեցվում է, որ այդ բարիքները «դեկին, թշնամին դալիս են տանում, մեր գլուխն էլ կտրում» (ԽԱ, ԵԼԺ, II, 55)։

այսպիսով միայն ու միայն գյուղի հնարավորություններն են։ Երազանքն ու իրականությունը խառնելով իրար նա ցանկացել է ասել, որ գյուղացիները կարող են ունևոր ու ազատ դառնալ, եթե իրենցից վանեն բռնապետության ու հարստահարության լուծը, ազատ մնան առևտրական-վաշխառուների շահատակություններից և լինեն իրենց վաստակի տերը։

Քանի որ գյուղի ու քաղաքի հակադրության հարցը ամենից առաջինը Աբովյանը դրել է «Վերք Հայաստանի» մաքրագիր վարիանտում, չենք կարող չանդրադառնալ այդ կապակցությամբ քննադատության մեջ քաղաքացիություն ստացած այն տեսակետին, թե Խաչատուր Աբովյանը օպոզիցիայի մեջ է եղել ֆեոդալիզմի ընդերքում զարգացող բուրժուական հարաբերությունների նկատմամբ և «Վերք Հայաստանի» մեջ՝ իրար հակադրելով գյուղն ու քաղաքը, դրանով իսկ մերժել է բուրժուական հարաբերությունները։ Այսպես ասողները մոռանում են, որ 19-րդ դարի առաջին կեսի հայկական իրականության մեջ իշխողը ֆեոդալական տնտեսաձևը և կղերաֆեոդալական աշխարհայեցողությունն էին, և այդ պայմաններում ավելի անհրաժեշտ էր գյուղացիության շահերի պաշտպանությունը։ Նրանք մոռանում են, որ Աբովյանը լուսավորիչ էր, դրանով իսկ մոռանալով Լենինի հայտնի ցուցումը լուսավորիչների մասին։ «Չի կարելի մոռանալ,— ասում է Լենինը,— որ այն ժամանակ, երբ գրում էին XVIII դարի լուսավորիչները (որոնց բուրժուազիայի առաջնորդների շարքն է դասում ընդհանուրից ճանաչված կարծիքը), երբ գրում էին մեր լուսավորիչները 40-ական թվականներից մինչև 60-ական թվականները, հասարակական բոլոր հարցերը հանգում էին ճորտատիրական իրավունքի ու նրա մնացուկների դեմ մղվող պայքարին։ Հասարակական-տնտեսական նոր հարաբերությունները և նրանց հակասությունները այն ժամանակ դեռ սաղմնային վիճակում էին...»[1]։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. II, Երևան, 1950, էջ 654։

Լենինյան այս դրույթների լույսի տակ քննելով Աբովյանի հայացքները, կտեսնենք. էպոխան էր թելադրում Աբովյանին առաջին պլանի վրա դնելու գյուղացիության հարցը, գյուղացիության շահերը պաշտպանելու։ Աբովյանն իր գործունեությամբ (որպես լուսավորիչ) նպաստում էր նոր, բուրժուական հարաբերությունների զարգացմանը, որոնք պրոգրեսիվ էին։ Աբովյանը այդ նոր ուժերի առաջնորդներից մեկն էր, ուստի հակապատմական կլիներ, որ պրոգրեսիվ ուժերի առաջնորդը դեմ դուրս գար իր իսկ հենարանին[1]։

Ոմանք **ճաղաճը** առանց լրջորեն մտածելու նույնացնում են բուրժուական հարաբերությունների հետ, չցանկանալով հաշտվել այն մտքի հետ, որ Աբովյանը այդ անվան տակ հասկացել է ֆեոդալներին զինակցած առևտրական-վաշխառուներին, այսինքն՝ նրանց, որոնք իրականում գործում էին այն ժամանակ։ Պիտի հիշել, որ քաղաքը, ինչպես նաև առևտուրն ու վաշխառությունը գոյություն են ունեցել կապիտալիզմից դեռ շատ առաջ, իսկ հատկապես ասիական երկրներում, վերջինները ո՛չ թե նպաստել են նոր հարաբերությունների զարգացմանը, այլ խանգարել են։ Այս մասին կա Կարլ Մարքսի ցուցումը. «Վաշխառությունը, ինչպես և առևտուրը շահագործում են արտադրության տվյալ եղանակը, չեն ստեղծում այն, ար-

[1] Որ իսկապես Աբովյանը կողմնակից է եղել նոր հարաբերությունների զարգացմանը և Հայաստանի տնտեսական ու կուլտուրական վիճակի վերափոխման նախապայմանը տեսել է արդյունաբերության զարգացման և գյուղատնտեսության ասպարեզում մեքենաների օգտագործման մեջ, դրա ապացույցն են հանդիսանում, ի թիվս այլ փաստերի, դեռ 1836 թվին կառավարությանը ներկայացնելու համար գրված գերմաներեն Համառոտ ակնարկը՝ Հայաստանի և հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական վիճակի բարելավման միջոցների մասին և հայ մեծ լուսավորչի ամենավերջին երկը՝ «Ուղևորություն դեպի Անիի ավերակները» խորագրով (ԱԵԱ №№ 49 և 23)։ Նա գրել է. «Дай толчок промышленности, учи молодых людей, а не старых, закосенелых в прадедовских привычках... и дело пойдет на лад». ԱԵԱ, № 23, թ. 13։

տաքսատ են հարաբերում նրանք։ Վաշխառությունը ուղղակի ձգտում է պահպանել այն (տվյալ արտադրաեղանակը — Գ. Հ.), որպեսզի նորից ու նորից կարողանա շահագործել այն. վաշխառությունը պահպանողական է, նա լոկ թշվառացնում է արտադրության տվյալ եղանակը»[1]։ Այնուհետև. «Ասիական ձևերի ժամանակ վաշխառությունը կարող է շատ երկար հարատևել՝ առանց որևէ ուրիշ բան առաջ բերելու, բացի տնտեսական անկումից և քաղաքական ապականությունից», իսկ փոքր ինչ վեր Մարքսը ասում է, որ արտադրության եղանակը «միևնույնն է մնում»[2]։

Այս դրույթների լույսի տակ գնահատելով Աբովյանի հայացքները քաղաքի կամ առևտրի ու վաշխառության մասին, պիտի եզրակացնենք, որ ֆեոդալական տնտեսաձևի տիրապետության պայմաններում գյուղացու բերանով քննադատելով առևտրի ու վաշխառության առաջ բերած չարիքները, Աբովյանը ո՛չ թե օպոզիցիայի մեջ էր գտնվում զարգացող բուրժուական հարաբերությունների նկատմամբ, այլ, ընդհակառակը, օբյեկտիվորեն պայքարում էր նորի զարգացմանը արգելակող հնացած ուժերի դեմ, նայելով դեպի առաջ։

Հաճախ Աբովյանի քննադատական դիտողություններից՝ տրված քաղաքի մասին, ավելի համարձակ եզրակացություններ են հանել, որպես թե Աբովյանը կարողացել է տեսնել բուրժուական հարաբերությունների բացասական կողմերից մի քանիսը այն ժամանակ, երբ բուրժուական հարաբերությունները դեռ նոր էին զարգանում։ Եթե փիլիսոփայական լեզվի վերածենք այս, կստացվի, որ Աբովյանը տեսել է նաև կապիտալիզմի հակասություննե՛րը... Վ. Ի. Լենինը ուսուցանում է, որ լուսավորիչները անկեղծորեն չէին տեսնում (մասամբ դեռ չէին կարող տեսնել) հակասություններ այն կարգերի մեջ, որ ճորտատիրականից էր աճում»[3]։ Այս պետք է լավ հիշել։

1 Կ. Մ ա ր ք ս, Կապիտալ, հ. III, գիրք 2, էջեր 152—3։

2 Նույն տեղում, էջ 139։

3 Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկեր, հ. 2, էջ 654։

դ) ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՐԿԱՑՈՒՄԸ

Երկարատև մշակումներից հետո, վեպի վերջին, մաքրագիր վարիանտում Աբովյանն առավել որոշակի է դարձրել իր բացասական վերաբերմունքը հոգևորականների նկատմամբ։ Երբեմն նրա խոսքն այնքան սուր է, որ թվում է, թե բացահայտ աթեիզմ է քարոզում[1]։ Դրա պատճառն այն է, որ հոգևորականները մոլի պաշտպան էին հնի և արգելակում էին նոր հարաբերությունների զարգացումը, կրոնական դոգմաներով խեղդելով նոր աշխարհահայեցողության ամեն մի արտահայտություն։

Հոգևորականության նկատմամբ քննադատական խոսք կա դեռ վեպի չափածո նախադրում։ Սատախաթուն տատի պատմածներից պարզվում է, որ էջմիածնական աբեղաները օգտվելով մարդկանց կրոնական երկյուղածությունից, մաշկում էին աննկատելի ձևերով։ Օրինակ, ուխտագնացությունների ժամանակ վանականները համոզում էին ջերմեռանդ հավատացյալներին, թե, «Աշխարքի մալը, խաղինեն, դովլաթն մանկ ա, ձեռի կեղտ, շունի բարաքյաթ. որ նրանց դու չտանեք, առատ տուր չտաք, Երկնքի դռնից զուրկ եք կդառնաք»[2]։ Իսկ երբ այդ չէր օգնում սպառնալիք էին կարդում. «Ինչ որ տալիս եք, ուղիղ սրտով տվեք, կային սրտով ձեռք չերը մի՛ տանեք։ Չերը օձ կդառնա, ձեր ձեռք կկծի»[3]։ Նշվում է մի այլ հանգամանք ևս։ Այն պահին, երբ ջերմեռանդ ուխտավորներն առատ աջհամբույր տալով երկրպագում էին վանքի սրբությունները, ներքին ուրախությամբ կրակված արե-

---

[1] Վեպի մեջ ավելացրած հատվածների մի խոշոր մասը հոգևորականների քննադատությանն է վերաբերում։ Բավական է համոզվելու համար սևագիր և մաքրագիր վարիանտների առաջին գլուխները, նույնիսկ թռուցիկ, համեմատել իրար հետ։

[2] ԽԱ, ԵԼԺ, II, 182։

[3] Նույն տեղում, էջ 184։

գանները պլում էին շարականը. «Ընչանք բոլորն էլ համբուրած հըլլին Նարեկանի ձեռն նրանք չեն կարում»[1]։ Դեռ ավելին. էջ-միածնի վանականները հատուկ մատյաններ էին կազմել և արձանագրում էին բնամթերքի այն քանակը, որ աղքատ ուխ-տավորները խոստանում էին վանքին. «Տիրացուն բոլոր գրում, նշանակում. Դավթարն վանահորն տալիս... Որի ավա-ծը որ քիչ ա ըլում, Ինքը վանահերն մեկն երկու շինում. Եղա մարդ գրկում տնե տուն հավաքում. Հավաքողն էլ ա իրան փայն ուզում, թե չտաս... Նա իր սուրբ բերնովն կանիծի»[2]։

Քննադատական այս փաստագրությունների համար աղբյուր էին ծառայել Աբովյանի մանկական հիշողությունները, էջ-միածնի վանքում մոնթ եղած տարիներին տեսածն ու լսածը։ Բայց, նախագրում նա միայն երևույթն է արձանագրել, ա-ռանց որոշակի վերաբերմունք ցույց տալու։

Հոգևորականների մասին քննադատական խոսք կա նաև սևագրում, այն էլ բավականաչափ ընդարձակ։ Այնտեղ փորձ է արվում ստեղծելու ագահ և ընչաքաղց հոգևորականի՝ Տեր Մարկոսի տիպը, դժգոհություն է հայտնվում երկար և ձիգ ժամերգության և խոստովանության արարողություններից։ Ահա այնտեղից ամենաուժեղ մերկացնող հատվածը. «Ամենը հո ամենը, խլլահիմ տեր Մարկոսը՝ որ առավոտից մինչև բի-կուն գյուղլա գիպած «...» պես ման ա գալիս, մեկ մեռել պա-տահածին պես՝ ձեռն ու ոտը դող ա ընկնում, հոգյառ հրեշ-տակի պես՝ ուզում ա՝ որ կես ջանն էլ ինքը հանի։ Դեռ պա-տանը չկարած, թեղ կողոպուտն ու թաղումները ա հարցնում։ Մեկ հացկերույթ ըլելիս՝ հինգ մարդի գդար հաց է ուտում, ակի հոտն առնելիս փորը վլոց վլոց ա ընկնում։ Սկին ձեռին բռնած վախտին էլ՝ աչքերը հենց դես ու դեն ա քցում՝ թե ով մեկ ձեռը դեմ կանի, բայց հենց որ խոստովանության ժամա-նակը գալիս ա, էնպես գիտես՝ թե Աստուծո գառն ա ու աչ-

---

[1] ԽԱ, ԵԼԺ, II, 185։

[2] Նույն տեղում։

խարքիցս ո՛չինչ չի խաբար։ Ղորդ ա՝ կարդալ չե՛մ գիտում, բայց լավ եմ իմանում՝ թե ինչ բանն ա Աստծու աչքին գիրեկան։ Ի՞նչ անենք, գրողն էլ իրանք, ջնջողն էլ» (205—6)։ Ճիշտ է, այստեղ նշմարվում են Տեր-Մարկոսի գործած նորանոր հանցանքները՝ մեռելը չթաղած կողոպուտն է ուզում, քեֆի ժամանակ՝ ապահովություն ցուցաբերում, ժամերգության պահին՝ մարդկանց ձեռներին նայում, թե չե՞ն դցում գանձանակը դրամ, սակայն դրանից հեղինակը հետևություններ չի հանում. նա կարծես հանդուրժում է. «Ինչ ասում են, անկաջներներս կախ արած, պետք է կատարենք, չարեն ի՞նչ ա» (206)։

Սևագրի լուսանցքներում, հետագայում, գրի են առնվել նոր հատվածներ, սակայն դրանցից ավելի քան տուժել է նկարագրությունը. ավելացել են անհարկի արտահայտությունների (նատուրալիստական) թիվը, և ընչաքաղց հոգևորականի կերպարը կորցրել է իր շոշափելիությունը։

«Վերք Հայաստանի» մաքրագրում Աբովյանը հիմնովին վերափոխել է սևագրի նշված նկարագրությունը։ Տեր-Մարկոսի վարք ու բարքից անցնելով առհասարակ հոգևորականների գործունեության քննադատությանը, նախորդ վարիանտում հանդես բերած «չեզոքությունը» հակադրել է որոշակի խոսք ու գործ։ Աղասու բերանով նա հոգևորականներից պահանջում է լինել անձնվեր ու մարդասեր. «Տո մեկ արի՛ ձեռս բռնի՛ր, հոր պես ինձ սիրտ դի՛ր, ինձ անուշ լեզվով մխիթարի, էստ հոգիս էլ հետը հանի՝ է՛» (14)։ Պորտաբույծ կյանք վարելու փոխանակ, առաջարկում է ապրել արդար ու ազնիվ վաստակով։ «Նախ տեղը՝ դատած մալը ուտիլը ու դարդակ քնիլը, հարամ ա։ Մարդ պետք է ինքն էլ աշխատի, որ կերածը հալալ ըլի»։ Բացի այս, մաքրագրում տարբեր առիթներով անդրադառնալով հայ ժողովրդի ու նրա հոգևոր դասի փոխհարաբերություններին, Աբովյանը ժխտական վերաբերմունք է ցույց տալիս վերջինների նկատմամբ։

Նրա ընդգծած առաջին կարևոր միտքն այն է, որ հոգևորականները ագահ են, «բռանց են ջոկում» տառերը և եկեղեցական արարողությունների պահին ծիծաղելի վիճակի մեջ ընկնում։ Ի հաստատումն սրա, վկայում ավելացված է գյուղական եկեղեցիներում բազմաթիվ անգամ կրկնվող հետևյալ զավեշտական պատկերը. քահանան «Ավետարան կարթալիս՝ հազար անգամ՝ յա չեչմակը (գյոզլուկ) դզում, յա տերացվի մզզառ վրա բարկանում, յա գրակալը դոշընհրին քաշում, յա գլուխ, երես գրքի միջումը կորցնում, մեկ պատիկ մոմ էլ ձեռներն առնում, յա մոնթի գլխին խփում՝ որ մոմը դուզ բռնի։ Շատ անգամ էլ որդիանց որդի մի փիս, անմարդ, դժար, աստամ, գլուխ կոտրող բառ էր որ չէր ռաստ գալիս, հենց գիտես՝ թե սատանի թամքը կորավ, շատ կռանալուցը, մոմը մոտ բռնելուցը՝ յա գիրքն էր էրվում, յա նրա միրուքը։ Ամա էնպես բառեր վարավուրդ էին արել, մոռանալիս՝ կամ գլխովն էին պտտում, կամ մեկ գիրն/ասում, մյուսը կուլ տալիս, յա թե չէ՝՝ սխ (սուրբ խաչ—Փ. Հ.) կարթալու տեղ՝ սոխ կամ սըխտոր ասում, ղս (Ղուկաս — Փ. Հ.) ասելու տեղ՝ ղարախ, ու ժամօրհնողն էլ՝ յա՛ շոռ էր ասում, յա չէ՛ լռում» (10—11) և այլն։

Ընդգծվում է այնուհետև, որ հոգևորականները զուրկ են բարոյական կերպարանքից։ Նրանք խոստովանության պահին, առանց ամաչելու, հավատացյալին առաջադրում են ամենագռեհիկ հարցերը. «Երկու սհաթ չոքացնում», չարչարում և «արևի, անձրևի տակին» տանջվելով և դառը քրտինքով հազիվ հաց իր աշխատած հալթալթող խեղճ գյուղացուն «մեղավոր շինում»։ «Միրուն սրտում ա՝ էդ հարցրած բաներիցդ, քար ըլի, էդ խոսքերը չի՛ տանիլ,— դայրույթով ասում է Աղասին։— Ախր ի՞նչպես են Աստուծո սուրբ տաճարումը էնպես բաներից խաբար առնում, որ շոլումը չի՛ պետք է խոսացած, բալքի թե քամին իմանա, տանի ուրիշի անկաչ քցի. տանը չի՛ պետք է ասած, որ չըլիմ չիմանամ՝ պատերը զարզանդին» (13)։

Մագրագրում բացահայտ բողոքի ձայն է բարձրացվում կղերականների հարստահարությունների դեմ. «Քիչ ա մնացել՝ որ մեզ սաղ սաղ ուտեն» (14),— բողոքում է Աղասին։ «Բանը է՛ն չի, որ մարդ ձեռը տալիս, գնա ժամը, մեկ երկու ծունգր դնի, գուս գա, մի քիչ գրին մտիկ անի... ուտի, խմի, քեֆ անի, փորն ու գլուխը հաստացնի, ու գա, մեր ջանին ընկնի, թե ինչ որ գտել ենք՝ էն էլ մեզ տվեք, որ տանինք՝ լավ ուտենք, լավ հագնինք, լավ մաչենք, ձեզ համար աղոթք անենք» (24),— ձայնակցում է նրան Հարությունը։ Աբովյանի հերոսները անկարող են զսպել իրենց ցասումը, քանի որ ամեն անգամ նրանց առաջ են հոգևորականների՝ խոսքի ու գործի հակասությունը ցուցադրող պատկերները։ Կղերականները քարոզում են՝ արհամարհել կյանքն ու աշխարհը, իսկ իրականում «կնգանից, գինուց, փողից, ձիուց, էլ ի՛նչ գիտեմ, ինչ բաներից խաբար տալիս» (25)։ Ավելի ու ավելի բազմապատկելով հոգևորականների կողմից ժողովրդին հարստահարելու փաստերը, Հարությունը նշում է, որ նրանք փողով մարդկանց մեղքերին թողություն են տալիս, ծանր հանցագործին՝ արդար հաշվում։ «Թանդդ կուշտը ընկած վախտը՝ ուզում են՝ թե գլուխդ վեր բերեն, էս ո՛չ Քրիստոս ա արել, ո՛չ Մահմեդ։ Տո հենց փող պետք է տամ, որ հոգիս դրախտ գնա՞։ Տո որ գործս լավ չըլի, ես անօրեն ըլիմ, Աստված նրանց խոսքով իմ հոգուս պետք է թողություն տա՞։ Տո աստված փողը ի՞նչ <ա>անում... Փողն աղքատին պետք է տված։ Դեն քցես՝ լավ ա, քանց են մարդին տաս՝ որ քեզ մեկ շնորհակալություն էլա չասի...» (25)։

«Վերք Հայաստանի» մագրագրում Աբովյանը մատնանշում է հոգևորականների գործած, կրոնի ոգուն անհարիր, նորանոր հանցագործություններ։ Նրանք փողի ծարավից պատրաստ են ոտնահարելու եկեղեցական օրենքները։ «Մեկ հաս ու չհաս պատահելիս հո՝ ուզում են՝ մեր տանը քանդեն,— ասում է Հարությունը։— Տո թե տուտը կարճ ա, չի՛ հասնիլ,

փո՞ղն ա երկարացնում...» (24)։ Որքան ճիշտ է դիտված... Էջմիածնի կաթողիկոսական դիվանի և սինոդի թղթերը քըրքըրելիս, հանդիպում են հաս ու չհասին վերաբերող հարյուրավոր գործեր։ Թվում է, թե մայր Աթոռում ուրիշ գործով չեն զբաղվել։ Խոշոր կաշառքով թույլատրվել են չհաս ամուսնություններ, ապօրինի պսակ, անօրինական բաժանում, բռնի արգելումներ։ Արովյանն ինքն էլ առիթ էր ունեցել Նոր-Նախիջևանցի օրիորդի և քանաքեռցի Մարիամի գործերի կապակցությամբ հոգևորականների մոտ, առանց փողի, «արդարությունն» որոնելու և ձեռնունայն ետ էր դարձել։

Քննադատական այս ուժեղ արտահայտությունների հետ միասին, մաքրագրում, Արովյանը վերամշակել է նաև էջմիածնական եպիսկոպոսի և երևանցի անանուն անձի հանդիպման տեսարանը, և նորաստեղծ հերոսի՝ Պետրոսի բերանով մի շարք նոր և հետաքրքրական գաղափարներ արտահայտել։ Պետրոսը բողոքում է օտարի լուծը հնազանդորեն տանելու ատելի հոգևորականների քարոզի դեմ։ Մինչև ե՞րբ «մենք դատենք, ուրիշներն ուտեն» (81),— ասում է նա։ Պետրոսին այլևս ճշմարիտ չի թվում այն ավանդությունը, թե հայերը վերջին դատաստանի օրը միայն կարժանանան թագավորությանը։ Նա համոզված հայտարարում է, որ ժողովուրդը անկախություն ու ազատություն կարող է նվաճել միայն պայքարով՝ սրի միջոցով. «Թո՛ղ ժամ, պատարագն էլ ըլին, ո՞վ ասում չըլի, լեզուն քըրըվի՝ ասողի, ամա թրի ու թվանքի փիրն օրհնած ա, թեկուզ բողազս էլ դուս կտրեն, ես դրուստ եմ ասում։ Թուր որ չունիս՝ գլուխդ կտրում են, օղլուշաղդ քաշում, կերածդ հարամ անում, դատածդ խլում, քեզ էլ եսիր անում. աշխարքն էսպես ա, ի՞նչ կարաս անիլ... Թե մենակ իմ դարդն ըլիմ քաշում, թո՛ղ աչքս հանեն» (81—82) և այլն։ Այս խոսքերն ուղղված են կույր հնազանդության և ժողովրդին ֆիզիկապես ու բարոյապես մեռցնելու ավետարանական

քարոզի դեմ։ Եվ բնական է, որ կոչում են հնապաշտ էջմիածնական եպիսկոպոսի սրտին։

Աբովյանը մաքրագրում վերափոխել է նաև վերջինիս պատասխանները։ Եվ ի՞նչ. եթե Պետրոսը ըմբոստանալով ավետարանական քարոզների դեմ փաստարկում է թուրն ու հրացանը և առաջ քաշում տղամարդավարի մեռնելու և պայքարով օտարի լուծը թոթափելու գաղափարը, եպիսկոպոսը շարունակ հիշեցնում է դրախտն ու երկինքը, քրիստոսի ու մարտիրոսների օրինակը. «Փառք աշխարհիս իբրև ըծաղիկ խոտոյ, այսօր է և ի վաղիւն ցամաքի։— Ասում է նա,— էդպես սարսափելի չար մտքը ձեր սրտներումն էլ չի՛ պտի անց կենա, ո՞ւր մնաց բերան բերեք, յա լեզվով էլ ասեք։ Ինչ Աստուծո կամքն ա, էն պտի ըլի։ Պողոս Առաքյալը չի՞ ասում, թե «հնազանդ լերուք թագաւորաց. զի յԱստուծոյ են կարգեալ». պրծա՛նք, գնաց. ով այլ տեսակ կմտածի, անհավատ ա ու դժոխքի բաժին, մեր պարտականությունն ա՝ որ ասենք, ձերը՝ որ լսեք...» (82—83)։ Աչք փակելով ժողովրդի կրած անասելի դրկանքների առաջ, շարունակության մեջ նա խոսում է իրենց՝ վանականների վրա պարսից խաների գործադրած ճնշումների մասին, որոնց դիմաց, որպես թե ոչինչ չեն ժողովրդի կրած տառապանքները։ «Էն ժամանակը դուք ձեր կմոռանաք». (83),— ասում է նա։ Այս բաները Աբովյանն ավելացրել է հոգևորականների մարթապաշտությունը ընդգծելու համար։ Ժողովրդին մարթում են՝ այդ ոչինչ, իսկ որ էջմիածնի տաքուկ խցերում սպասավորներին անհանգստացնում են խան-բեգերը՝ երբեմն վանքում անկարգություններ անելով, մոլուցքով սպանում են «խոզերին» (sic!) և յուղ ու պանիրը տանում կամ կաշառք պահանջում, ա՜յ, դա սարսափելի է։ Եպիսկոպոսին ցավ է պատճառում կենսամթերքների պակասելը, բայց որ ուրիշի կնոջն են քաշում, որդուն թուրքացնում, սառնասրտորեն հորդորում է համբերել. «Նրա (քրիստոնյայի — Գ. Հ.) թուրը իր համբերությունն ու հա-

վատն ա», «կասեն՝ նստի՛ր, նստի՛նք, վե՛ր կաց՝ վեր կե՛նանք...» (84)։ Աբովյանը մաքրագրում ցույց է տալիս, որ եպիսկոպոսը չի հասկացել Աղասու ըմբոստության արժեքը, նրան անվանում է «էշ գեղցի» և նրա օրինակով խանդավառվողներին սաստելով ասում. «Քրիստոնեն թրի կոթն էլ ձեռ չի՛ պետք է առնի, կարճ, որ քար աղան գլխին» (84)։ Եվ այս հազար անգամ կրկնված կույր հնազանդության քարոզին այլևս չկարողանալով համբերել, մաքրագրում, էջի տակ ավելացրել է հետևյալ խորիմաստ ծանոթագրությունը. «Էս խոսակցությունից իմացողը կիմանա, թե ի՞նչ էր մեր խեղճության պատճառը։ Էլ ես չեմ ուզում բերանս բաց անել։ Ի՞նչ ավետարանի կողքին գրած ա, սուրբ ա, բե՛ր հասկացողը, էն ժամանակ գլխիս խփի՛ր» (84)։ Թեպետ Աբովյանը ընթերցողին է թողնում եզրակացության գալու, սակայն նրա ժխտական վերաբերմունքը հոգևորականների նկատմամբ բացահայտ է։

Այսպիսի սուր մերկացումներ անելով հանդերձ, Աբովյանի հերոսները (մաքրագրում) այնուամենայնիվ, հաշվի են նստում հոգևորականների հետ։ Նրանք (Աղասի, Հարություն) այն միտքն են զարգացնում, որ հոգևորականները պետք է չափավորեն իրենց վարք ու բարքը («տեր փող էլ ուզեն, կտամ, չունենամ, գլուխս կծախեմ, բեգ կպահեմ, թաքըլի էնպես բան անեն, որ խելքումս մտնի. իմ հավատին հասնին» — 14), պետք է հոգ տանեն ժողովրդին լուսավորելու գործով («երեխեքներս չոլան դառած ման են գալիս, նրանց դարդը չեն քաշում, որ մեկ այբբեն էլ ա մեկ ճղի բղի, սովորցնեն, հենց իրանց ֆիքրն են քաշում։ Էնպես հո չի՛ ըլիլ» — 14, կամ. «Որդի, երեխա, իշի պես մեծանում են, նրանց հոգսը չեն քաշում, վարժարան չեն բաց անում, չե՛ն կարթացնում, հենց ուզում են՝ թե մեր դատածը լինեն... ասում էլ ես, աղաչանք անում, անկաջըլվեր են անում...», — 25 և այլն)։

Մի երկու տեղ էլ Աբովյանի հերոսները համարձակ վե-

րենորոգչական ծրագրեր են առաջադրում՝ եկեղեցական արարողությունները պետք է կրճատել, խոստովանության ընդունված կարգը պետք է փոխել և այլն:

Հնարավո՞ր էր այս պահանջների իրականացումը, կամ կարո՞ղ էին հոգևորականները Աղասու և մյուսների հույսերն արդարացնել: Վեպում հեղինակի զարգացրած հիմնական տենդենցը ցույց է տալիս, որ հայ հոգևորականները չէին կարող ո՛չ լուսավորել ժողովրդին, ո՛չ էլ նրանց ապրելու ուղի ցույց տալ: Ինչ վերաբերում է վերանորոգչական առաջարկություններին, ապա հազիվ թե դրանք իրականանային: Իսկ որ Աբովյանն ու նրա դրական հերոսները այնուամենայնիվ հաշվի են նստում հոգևորականության հետ, դրա պատճառն այն է, որ հայկական իրականության մեջ, այն ժամանակ, եկեղեցին մեծ ուժ էր ներկայացնում, նրան էին ենթարկվում գաղափարախոսության բոլոր բնագավառները և կրթական հիմնարկները: Ֆեոդալիզմի կապանքներից գյուղացիությունը դեռ ազատագրված չլինելով, կառչած էր աստծո գաղափարին և, ինչպես ասել է Լենինը, «զուտ անգիտակցորեն, նահապետականորեն, կրոնականորեն էր վերաբերում այն բանին, թե ինչպիսի պայքարով պետք է նա իր համար ազատություն նվաճի»[1]:

ե) ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Վեպի վերջին վարիանտում[2] կա մի ընդարձակ հատված, ուր եկեղեցական արարողություններից ու տգետ հոգևորականներից դժգոհ Աղասին իր պատկերացումներն է արտա-

---

[1] Վ. Ի. Լենին, Գրականության մասին, Երևան, 1948, էջ 61:

[2] Բնության մասին Աղասին խորհրդածել է դեռ չափածո նախագրում.

«Ծառերից, թփերից ես մարկ տալով
Դաշտերից ձենը ականջս առնելով
Սուրբ արեգակից ծեգն իմանալով

հայրենի բնության մասին։ «Քրիստոսը գիտենա՝ իմ ծառիցը ու դաշտիցը շատ բան եմ սովորում, քանց սրանցից» (14),— ասում է Աղասին, որն ըստ հեղինակի՝ «ժամիցը գալիս՝ փառք էր տալիս Աստուծո՝ որ շուտ արձակվեցավ, ինքը տուն էկավ՝ որ մի քիչ գինչանա, ու գնա հանդը՝ որ էլի սիրտը բացվի» (12—13)։

Ինչո՞վ էր բնությունը գրավել Աղասուն։ Նրանով՝ նախ, որ բնության մեջ չկար հարկադրանք, եկեղեցու կաշկանդող շղթաներն այստեղ փոխարինվում էին ազատությամբ, ազատ բնության անքանակ հրաշալիքներով։ «Հանդն էր դուս գալիս. իր մասինն ու պտուղը, դաշտերի ծառն ու ծաղիկը, երկնքի պայծառ արեգակի, լուսնի, աստղերի լիսը տեսնելիս, նրա հոգին վերանում էր, խելքը թռչում, շատ անգամ աչքերը ծով դառած՝ տեղն ու տեղը մնում կանգնած. հենց իմանում էր՝ թե իրան դրախտը տարան (12)։ Բնությունը, այնուհետև, նրան տալիս էր զոյամիջոցներ՝ ապրելու, իր սերունդը պահելու և աշխարհին պետք գալու համար, նրա միտքը կարելով դատարկ հարցերից՝ ուղղում էր դեպի կյանք ու աշխատանք. «Ի՞նչ ասեմ երկիրն ա մենակ գեղեցիկ, հազար ծաղկեններով, բուսով զարդարած, բաս երկինքը ո՞ւր թողամ, որ ցերեկը ինձ լիս ա տալիս, հանդիս պտուղը հասցնում, գիշերը մութին իմ աչքիցս հեռացնում ու էնպես շաղրի պես գլխիս վրա կանգնած՝ անձրև, արև տալիս՝ որ ես ապրիմ , որդիքս պահպանեմ, աշխարքի պետքը գամ՝ որ մեռնելիս էլ՝

Սուրբ աստղերացդ աչքն աչքիս տանելով
Աղբրի ջրլղցն, սարի մեծությունն
Ծովի, ցամաքի մեծությամն, բարությունն
Գլխումս բաց կանեմ, գետնի վրա կրկնեմ
Իմ ժամ, իմ խորան երկինք գետինքը...» (ԽԱ, ԵԼԺ, II, 39)։

Այս մտքերը սակայն նախագրում չեն զարգացվել և մնացել են մշուշոտ և անորոշ, իսկ վերջի հատվածը, սևագիր վարիանտում բոլորովին աչքաթող են արվել։

գան հողիս վրա, ինձ մեկ դարդակ ողորմի տանն» (12),— խորհրդածում է Աղասին։

Եվ այս խորհրդածությունների ժամանակ նրան զբաղեցնում է մի հարց. ո՞վ է բնության հրաշալիքների ստեղծողը, ո՞րն է այն ուժը, որ շարժման մեջ է դնում կյանքն ու աշխարհը։ Աղասու երկար որոնումները բերում են այն եզրահանգման, որ այդ արարիչը՝ բնության մեջ է, որը մարդկանց հետ խոսում ու գործում է աներևույթ ձայնով. «Տերևները խշշալիս, ջուրը թռչելիս, աղբյուրը ջըխջըխալիս, բլբուլները երգելիս, հովը փչելիս, շողը երեսիս թափելիս, ամպը գոռալիս, անձրևը գալիս...» (12), որը մարդկանց տալիս է ապրելու ու կատարելագործվելու սրբազան սկզբունքներ. «...բարի կա՛ց, բարություն արա՛, արարչիդ մեծությունը ու խնամքը ճանաչի՛ր, ծառի պես պտուղ տո՛ւր, ծաղկի պես հոտ, սարի պես աղբյուր, դաշտի պես մասիլ, երկրի պես հաց, երկնքի պես լիս... վայելի՛ր Աստուծո բարությունը, ուրիշին էլ փայ տո՛ւր. աղքատ տեսնելիս՝ կերցրո՛ւ, կշտացրո՛ւ. ջուրը վրովդ անց կենալիս, կանչի՛ր, կուտ տո՛ւր, դու առատ ձեռք ունեցիր, որ առատ առնիս ու բախտավոր ըլիս» (12)։

Մաքրագրում, մի քանի տեղերում, բավական անհիմնավորելի, Աբովյանը ներմուծել է նաև այս արտահայտությունները. «Ինչ ուզում ես, խոսի՛ր, արա՛, ձեռդ ո՞վ ա բռնում, ամեն մարդ իր գլխի տերն ա» (15)։ «Ես չե՞մ իմ գլխիս տերը» (22). և այլն, որոնցից հետևում է, որ նա պաշտպանել է նաև անհատի ինքնուրույնության գաղափարը, որ նշանակում էր դեմ դուրս գալ այն հասարակության ու աշխարհայեցողության, ուր մարդ ծնվելով՝ լույսի տեղ խավար էր տեսնում, բնական օրենքը թաղած՝ անբնականին հետևում, անձնական ունակությունները զարգացնելու տեղ՝ զգացմունքները մեռցնելու հորդոր և ազատության տեղ՝ օտարի լուծը ստրկորեն տանելու քարոզ լսում։

Առաջադրելով մարդուն բնության ձևով կատարելագործե-

լու, բնական օրենքին վերադառնալու և մարդու մեջ առաքինության, նվիրվածության և հումանիզմի բարձր գաղափարներն արմատավորելու այս սկզբունքները, կամ առանձին տեսնելով բնության մեջ Աբովյանը ամբողջ հասակով ծառանում էր միջնադարական կղերաավատատական աշխարհայեցողության դեմ, իրենից դեն վանում միջնադարյան խավարն ու մշուշը և ուղղվում դեպի աթեիզմ ու մատերիալիզմ տանող ճամփաները, որոնց, սակայն, նա չկարողացավ հասնել։

ԿԵՐՊԱՐՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՆԱԽԱՏԻՊԵՐԸ

ա) ԱՂԱՍԻ

«Վերք Հայաստանի» կենտրոնական հերոսը Աղասին է։ Ո՞վ է Աղասին, արդյոք իրական-պատմական անձնավորությո՞ւն է, թե՞ հեղինակի երևակայության արդյունք, գաղափարատիպ, կամ Աբովյանը՝ ինքը։ Պահպանողական Հայկունին Աղասուն համարել է իդեալիստ ու Դոն-Կիխոտ և ժխտել նրա կերպարի իրական հիմքը[1]։ Ի. Հարությունյանը հավասարության նշան է դրել Աբովյանի և Աղասու միջև[2], ոմանք էլ Աղասուն համարել են շիլլերյան խռովիչ՝ ուղղակի կերպով չժխտելով նրա՝ իբրև իրական մարդու, գոյությունը։ Սովետահայ աբովյանագետները թեպետ ընդունում են Աղասու իրական անձ լինելը, սակայն դեռ չեն պարզել, թե որտեղի՞ց է սկսվում և ո՞ւր վերջանում իրական Աղասու կյանքն ու գործը վեպում և ի՞նչ նոր բան է ավելացրել հեղինակը։ Այս հարցը մեծ նշանակություն ունի վեպի ժանրն ու մեթոդը, ինչպես նաև Աբովյանի տիպական արվեստի ուժն ու թուլությունը ճիշտ ըմբռնելու գործում։ Ուստի այն մանրամասն քննության ենթարկենք։

Ի՞նչ է հաղորդված վեպում Աղասու մասին։ Նա Քանաքեռ գյուղի տանուտեր Օհանեսի որդին է՝ «Ապուշենց օջախից» (էջ 324—5), Աբովյանին՝ մանուկ հասակում, գրկել, փայ-

[1] «Մեղու Հայաստանի» (լրագիր), 1851, 22 հուլիսի, № 140։

[2] Ի. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն, Զգացմունքների աշխարհ, Թիֆլիս, 1893, էջ 40։

փախել ու խաղացրել է (183)։ Մոտավորապես 1821 թ. փետրվարին, աղջիկ քաշելու ժամանակ, Աղասին սպանել է սարդարի ֆարաշներին և փախել ռուսաց հողը։ Ձմեռն ու գարունը անցկացրել է Փամբակի և Լոռվա սարերում, ապա հաստատվել Անիում, որ 1821 թ. հուլիսին փոքրաթիվ խմբով մեծ ջարդ է տվել Հասան-խանին (168 և 170)։ Հետագայում (մինչև 1825 թվի վերջերը) այցելել է Թիֆլիս (176)։ Շամխորի ճակատամարտի նախօրերին (1826, սեպտեմբեր) Աղասին երևվում է Մադաթովի բանակում։ (174—5, 184)։ Մասնակցել է ռուսական զորքերի Երևանյան արշավանքներին՝ գեներալ Կրասովսկու բանակում (183) և զոհվել բերդի գրավման ժամանակ՝ պարսիկների դաշույնից։

Աղասու մասին մի քանի խոսք էլ կա «Պարապ վախտի խաղալիքը» հատվածում. «Աղասին մեկ ջահել, աշխըգ քանաքցի հայ էր,— կարդում ենք այնտեղ։— Ղզլբաշի ժամանակին սովորություն կար, որ աղջիկ էին քաշում։ Մեկ որ էսպես աղջիկ քաշելիս՝ կարիճ Աղասին դուս էկավ, մեկ երկու թուրքի սպանեց ու փախավ Փամբակ։ Խեղճի հորնեմորը Երևանու բերդումը չորացրին. ինքն էլ՝ Ռուսը որ Երևան առավ, գնաց, որ հորն ազատի, իրան էլ հոր վրա տվին, սպանեցին»[1]։

Այս, ինչպես և վերի ավյալները, որքան էլ ուշագրավ են, այնուամենայնիվ դեռևս բավարար հիմք չեն տալիս Աղասուն իրական անձ համարելու, կարող են վիպական հնարանք լինել։

Պահպանվել են մեմուարային բնույթի վկայություններ, որոնց գրառողներն են Պերճ Պռոշյանը և ուսուցիչ Շուզգինը։ «Անվիճելիորեն պատմական անձնավորություն Աղասին ապրել է Քանաքեռ գյուղում»,— գրել է Շուզգինը[2]։ «Մինչև այսօր

[1] ԽԱ, ԵԼԺ, II, 189—190։

[2] СМОМПК, IV, 38:

մեզանից շատերի կարծիքն է, որ «Աղասին» հեղինակի երևակայության մեջ ստեղծված մի անգո հերոս է. բայց ես դեռ տասը տարեկան մանուկ՝ հորից լսել եմ, որ Երևանի առման ժամանակ... պարսիկները ատրճանակի գնդակով սպանեցին Աբովենց տանուտեր Օհաննեսի տղա Աղասի աղային, որ ռսի ափիցար էր պատրոն ապալաթներն ուսին»,— ասում է Գոռշյանը[1]։ Երկու վկայությունն էլ խոսում են Աղասու իրական-պատմական անձնավորություն լինելու օգտին, բայց սրանք էլ դեռ բավարար չեն։ Գուցե ժողովուրդը Աբովյանի վեպի ազդեցության տակ է դրանք հորինել։ Բարեբախտաբար, պահպանվել է Աբովյանի վկայությունը ևս, որից պարզվում է, որ դեռ անցյալ դարի 40-ական թվերին՝ նրա բարեկամներին էլ հետաքրքրել է Աղասու անձն ու գործը։ Պատասխանելով դրանցից մեկին, Աբովյանը գրել է. «Նա (Աղասին — Գ. Հ.) օտար մարդ չէ, իմ հայրենակիցն է, Քանաքեռից, իմ ժամանակակիցն ու հեռավոր ազգականը»[2]։ Սրանից էլ հետևություն. «Վէրք Հայաստանիի» կենտրոնական հերոս Աղասին եղել է իրական անձնավորություն, Քանաքեռցի, Աբովյանի հեռավոր ազգականը և ժամանակակիցը:

Ճշմարի՞տ են Աբովյանի պատմածները Աղասու մասին և ի՞նչ իրական հող է ունեցել վեպի հիմքում ընկած դեպքը։

Երևանի բնակիչները Շուլցինին պատմել են. «Աղասին... սարդարի հետ լավ հարաբերությունների մեջ էր և հաճախ լինում էր նրա մոտ։ Բայց ահա սարդարը Քանաքեռ է ուղարկում ֆարաշներին՝ իր հարեմի համար գեղեցիկ աղջիկներ հավաքելու։ Աղասու հարսնացուն ընկնում է նշված զոհերի թվի մեջ։ Այն ժամանակ Աղասին, հավաքելով իր նման մի քանի կտրիճ տղերք, քշում է ֆարաշներին։ Իհարկե, դրանից հետո նրան անհնար է լինում հայրենի գյուղում մնալ, և

---

[1] «Աղբյուր» (ամսագիր), 1902, № 3, էջ 132։

[2] ԱԵԱ № 65։

Նա իր ընկերների հետ սկսում է այժմ վրեժ լուծել պարսիկներից խուլ ճանապարհների վրա... Իմիջիայլոց սարդարը ջանում է ոխը հանել Աղասու հորից։ Նա նրան բանտ է նստեցնում՝ տալով պահակներին հրաման. սպանել և որդուն, և հորը, հենց որ մեկը փորձ անի ազատել կալանավորին, իսկ մյուսը՝ փախչելը[1]։ Այս դեպքը բավական մոտ է «Վերք Հայաստանին», մի տարբերությամբ՝ վեպի բոլոր վարիանտներում հիշվում է, որ Աղասին ուներ կին ու երեխաներ, իսկ այս ավանդության մեջ ամուսնացած չի եղել։ Ուրեմն, հարեմ տարվող աղջիկը Աղասու հարսնացուն չէր կարող լինել։ Անշուշտ, Շուլգինի գրի առած դեպքը, ժողովրդի բերանում պատմվելով, շատ է հեռացել իր իրական հիմքից և 80-ական թվերին արդեն վիպական գունավորում ստացել։

Կա մի երկրորդ պատմություն ես, որ գրի է առնվել 1939 թվին Աշտարակի շրջանի Դովր գյուղի բնակիչ Հովհաննես Հովհաննիսյանից[2]։ Այստեղ էլ շահի զինվորները Աբովյանի քրոջն են բռնությամբ հարեմ տանում։ Աբովյանը չի թողնում։ Նրա հորը բանտարկում են, տանջում, սպանում։ Աբովյանը հասնում է, որ հորն ազատի, իրեն էլ հոր վրա են սպանում։ Ժողովրդական այս ավանդության մեջ, թեպետ փոխվել են գործող անձերը՝ սարդարը դարձել է շահ, ֆարաշները՝ զինվոր, Աղասին՝ Աբովյան, Թագուհին՝ Աբովյանի քույր, սակայն, անտարակույս, կա մի ճշմարիտ հատիկ։ Քաշվող աղջիկը եղել է Աղասու մոտիկ ազգականը։ Իսկ ո՞վ. այդ մասին, մինչև այժմ հայտնի աղբյուրներում ոչինչ չկար։

Ինչպես ասինք, այնպես էլ այս հարցի սպառիչ պատասխանը տալիս է գերմաներեն բացատրականը, որ տված է. «Աղասու քրոջն ես բաժին ընկավ այդ սարսափելի ընտրությունը (սարդարի հարեմ քաշելը — Փ. Հ.)։ Ահավոր վայնա-

[1] СМОМПК, IV, 38։

[2] Ա. Ղանալանյան, Աբովյանը և ժողովրդական բանահյուսությունը, էջեր 59—60։

տանի մեջ, երբ ծնողներն ու ազգականները փորձեցին ընդդիմանալ իրենց հարազատ զավակի առևանգմանը, իսկ տմարդի ֆարաշները դաժանությամբ ու բռնությամբ ուզում էին քաշել տանել աղջկան, քանի որ նա արտակարգ գեղեցիկ էր, ցավով բռնված Աղասին թափով անցավ ամբոխի միջով և իր սրով սպանեց ֆարաշներից մեկին, մյուսներին մահացու վերք հասցրեց, որովհետև նրանք ընդամենը երեք հոգի էին, ու մինչ նրան կկարողանային բռնել, անասելի վտանգների ենթարկվելով փախավ ռուսի հողը և ռուսների հետ միասին վերադարձավ, երբ վերջիններս սկսեցին պարսկական պատերազմը։ Նրա քույրը մեծ գումարով փրկագնվեց ու դեռ ապրում է. դժբախտ ծնողները, ընդհակառակը, մեռան բանտում, երկարամյա բանտարկությունից հետո, սարսափելի մահով[1]։ Որ իսկապես ո՛չ թե Աթոյենց Թագուհու, այլ իր քրոջն հափշտակելու ժամանակ է Աղասին սպանել ֆարաշներին, հաստատվում է նաև վեպի ծրագրային մի նշումով՝ «Աղասու սպանելը վասն քաշելուն քվեր յուրո»[2]։

Համոզված լինելով, որ վեպը ոչ թե անհատի, այլ ժողովրդի պատմություն է, որ Աղասու կյանքի պատմությունը ինքը պիտի մշակի որպես հայ ժողովրդի կյանքի, կենցաղի, մտածողության ու հերոսական գործերի ռեալիստական պատմություն, Աբովյանը գիտակցաբար-վերախմբագրել է նշված փաստը։ Աղջիկ քաշելը պարսիկների տիրապետության շրջանում, ամենամասսայական երևույթներից էր։ Օրը ցերեկով, մարդկանց աչքի առաջ, սարդար-խաները քաշում էին հայերի աղջիկներին ու տղաներին, տանում, պղծում, թյուրքացնում կամ սպանում, բայց ոչ ոք սիրտ չէր անում դիմադարձ կանգնել։ Աղասին չի կարողանում համբերել։ Եթե նա պաշտպանում է իր քրոջ պատիվը և ըմբոստանում պարսական լծի դեմ, ապա պաշտպանում էր նաև ողջ հայ ժողովրդի ռանա-

[1] ԱեԱ № 65։
[2] ԱեԱ № 150։

հարված իրավունքը։ Այս առումով տիպական արվեստին և Աղասու կերպարի պատմականությանը բոլորովին չի հակասել Աբովյանի կատարած փոփոխությունը։ Վեպի հիմքում դնելով ժամանակի տարածված երևույթներից մեկը, Աբովյանը նրանից բխեցնում է մի ամբողջ ժողովրդի կյանքի ու վիճակի ռեալիստական նկարագրություն։

Ի՞նչ վախճան է ունեցել Աղասին։ Ժողովրդական զրույցը, որ գրի է առել Շուլցինը, համարյա չի տարբերվում վեպից. «Երբ Պասկևիչը մոտեցավ Երևանին,— ասված է այդ զրույցում,— Աղասին ներկայանում է նրան և առաջարկում իր ծառայությունը Երևանի բերդի թույլ ամրացված տեղերը ցույց տալու համար... ռուսական առաջին զինվորների հետ նա ցատկում է բերդի պատերով և, իհարկե, անմիջապես նետվում բանտ։ Պահակները, դեռևս իրենց տեղերը լքած չլինելով, հասցնում են կատարել սարդարի հրամանը. նրանք սպանում են Աղասուն և նրա հորը»[1]։

Աղասու սպանության այս նկարագրությունը մեզ հավաստի չի թվում. վեպի ազդեցությունը շատ է նկատելի. բացի այդ, ըստ Պ. Պռոշյանի՝ Աղասին սպանվել է ոչ թե բանտի մեջ, այլ «բերդի փակված դրան բանալու ծակից», «տարճանակի գնդակով», այն պահին, երբ «սալդաթների առաջն ընկած բերդի դուռը կոտրել էր, թուրքերեն դրսից գոռում էր, որ անիրավ շուն Հասան խանը բերդի բանալիները դուրս գցի, բերդի դուռը բաց անի»։ Մինչ այդ Աղասին զրուցել է Պռոշյանի հոր հետ, խոստացել նրան պարգև տալ. «Անեց,— պատմել է Պռոշյանի հայրը,— ինձ թողեց ու գնաց բերդի դրան առաջին, դրան էս երեսին, անհավատ թուրքի փշտովից (տարճանակ) գյուլլախորով փավեց։ Մեյիդը (դիակը) նա քաշելն ու ներսից բերդի բանալիները սողնակի ծակից դուրս տալը մին էլավ»[2]։

[1] СМОМПК, IV, 38։

[2] «Աղբյուր», 1902, № 3։ Պռոշյանի հայրը մինչև իսկ հիշում է Աղասու արտաքինը. «Սպիտակ չարքյալեկով մի հայ աժիդար»։

Երկար տարիներ ժողովրդի մեջ պատմվել է բերդի գրավման ժամանակ մի անանուն սպայի դավադիր սպանության մասին, որը շատ է հիշեցնում Պռոշյանի հոր վկայությունը։ Դա հետևյալն է. «Պաշարման 8-րդ օրը ռուսական ճամբարից նկատվում է, որ պարսիկները պարսպից դուրս ցույց են տալիս ինչ որ ձող և ինչ որ բան են ուզում ասել։ Ուղարկվում է սպա իմանալու՝ ինչ է պետք պաշարվածներին։ Պարզվում է, որ ձողին կապած են բերդի դարպասների բանալիները, և պարսիկները գոռում են ռայխիմ (հանձնվում ենք)։ Ասում են, որ երբ սպաներից մեկը ուղարկվում է բանալիները ընդունելու, պարսիկները ցույց են տալիս, իբրև թե հանձնում են նրանք դարպասի անցքի միջով, սակայն սպան հազիվ մոտենում է, որ պայթում է համազարկը, և նա սպանվում է տեղնուտեղը»[1]։

Աղասու վախճանը, հավանաբար, նման է եղել վերջին նկարագրության. նա սպանվել է դավին անտեղյակ՝ բերդը մտնելու պահին։ Վեպի մեջ Աբովյանը փաստը գիտակցորեն խմբագրել է. Աղասին այնտեղ մեռնում է հորը գրկած, մուրազն արդեն կատարած, որովհետև ազատվել էր հայրենիքը։

Ճշմարտացի են նաև վեպի այն էջերը, ուր նկարագրվում են Աղասու կյանքն ու գործերը Լոռիում, Անիում, Մադաթովի բանակում, բոլորն էլ կարելի է հիմնավորել, թեպետ ոչ ուղղակի Աղասու անվան հիշատակումով[2]։ Ընդունելով հանդերձ,

---

[1] СМОМПК, IV, 37: Ըստ Կրասովսկու «Օրագրի» այդ սպանվողի ազգանունը եղել է Բելով (Кавказский сборник, том XXII)։

[2] Հ. Թումանյանի «Քաջերի կյանքից» զրույցում նկարագրված է Աղասու կյանքից մի դրվագ։ Դսեղցի Մեհրաբը Աղասուն հրավիրում է իրենց գյուղ և նրա պատվին մրցություններ կազմակերպում։ Աղասին ցույց է տալիս իր ուժն ու ճարպիկությունը։ Բայց քեֆի սեղանի վրա, երբ Մեհրաբը լսում է, որ Աղասին ծնողներին ու հարազատներին թողնելով թշնամու ձեռին, սարերն է ընկել, թասը ցած է դնում և վշտացած ասում է. «Մենք նրա՞ն ենք իգիթ ասում, որ իրան վառած կրակում ծերերին թող անի էրվելիս, ինքը գլուխն ազատի, փախչի սարերն ընկնի... իրան նամուսը —

որ Աղասին իրական-պատմական անձնավորություն է, չպիտի մոռանալ, որ Աբովյանը նրա բնավորության որոշ գծեր միտումնավոր չափազանցրել է։

Ի՞նչ զարգացում է ապրել Աղասու կերպարը Աբովյանի ստեղծագործության մեջ։

Աղասուն վերաբերող Աբովյանի ամենավաղ գործը, որ հասել է մեզ, չափածո է, ամփոփված «Նախաշավիղի» մեջ (տպագրվել է 1838 թվին) և ունի «Սեր, Բարեկամություն» վերնագիրը. Համառոտ բովանդակությունը հետևյալն է։ Ծպտված Աղասին մտնում է թշնամու զորքերի մեջ, պարսիկ բռնակալին սպանելու և հայրենիքն ազատելու մտադրությամբ, սակայն բռնվում է։ Որոշում են նրան մահապատժի ենթարկել։ Աղասին խնդրում է երեք օր ժամանակ՝ գնալ, քրոջ հարսանիքը անել ու վերադառնալ և իր տեղն իբրև գրավական, թողնում է ընկերոջը՝ Մոսուն։ Անցնում է երեք օր։

ծնողը։ Կնիկը երեխեքը, վեր ացի թշնամու առաջին.... Ափսո՜ս իգիթ անունը... ափսո՜ս իմ օջաղը, ափսո՜ս...» (Մեհրաբը Հովհ. Թումանյանի նախահայրերից է։ Նրա որդին է՝ Հովակիմը)։ «Հորիզոն» (Գրական հանդես), 1894, էջ 96։

Աղասու կյանքից մի դրվագ էլ պատմել է Պերճ Պռոշյանի հայրը։ «Հենց որ ոսկի զորքը մեծ թոփերն առաջ քցած եկավ բերդի դրան մոտ կանգնեց, ես չոքեչոք մոտեցա թոփի բերանը պաչեցի։

— Այ տղա, ո՞վ ես, ընչի՞ պաչեցիր, մոտեցավ ու հարցրեց սպիտակ չարքյազկով մի հայ ափիցար։

— Աղա ջան, ասեցի, համ կպաչեմ, համ ես թոփերը քաշող ձիերի տակին կը պառկեմ, թող վրովս անցկացնեն. ախր դու Թաք աշխարհքից եկած աղա ես, էս անիրավ ղզլբաշի ձեռից հայի քաշած նեղություններն անտեղյակ ես, որը մին էր՝ մեր հայ քրիստոնեի խաչին հայհոյանք տալը հազար։ Չէ՞ որ էս թոփերն են սրանից հետո մեր խաչի պատիվը բարձրացնողը։

Հետո էն աղեն անուշ ու սրտեցից ըլիս հարցրեց ու ասեց.— Երբ որ բերդը կմտնենք ու քիչ կհանգստանանք, դու արի ինձ մոտ, քեզ նշան տամ կտամ։ Հարցրու՝ քանաքեռցի Աբովենց Աղասուն, էգ ես եմ» (Աղբյուր, 1902, № 3 էջեր 133—134)։

Վերջացնելով քրոջ հարսանիքը՝ Աղասին բռնում է վերադարձի ուղին։ Մեծ տանջանքներ կրելուց հետո նա այն պահին-է հասնում քաղաք, երբ պարսիկները Մոսուն մոտեցրել էին թնդանոթին և ցանկանում էին դնել փողի մեջ ու կրակել։ Ընկերները գրկախառնվում են. ամեն մեկը ցանկանում է մյուսի տեղ մեռնել։ Բռնավորը տեսնելով այդ, ներում է նրանց և խոստանում՝ հերություն ու տիրություն անել հայ ժողովրդին։ Բանաստեղծության սյուժեի զարգացումը, ինչպես նաև արտահայտչական միջոցները շատ են նման Շիլլերի «Երաշխիք (Դամոն և Ֆինտիաս)» բալլադին։ Բերենք մի երկու զուգահեռ.

Աբովյան	Շիլլեր
«Թուրը փնչի տակին կորիչ Աղասին...»։	«Դամոնն՝ ասած հանդերձի տակ մի դաշույն...»։
«Թոփի առաջին պատասխան կտաս...»։	«Դաշի վրա՞ կարող ես լոկ այդ թավել...»
«Կխնդրեմ միայն, որ ինձ տաք հրաման, Քվորս հարսանիքն անեմ, ու էդ գամ, Իմ տեղակ զամին ձեզ իմ բարեկամն, Սրան պատժեցեք, թե էդ չըդառնամ...»։	«Ինձ երեք օր ժամանակ եմ հայցելու, Գնամ քրոջս լույս փեսային հանձնելու, Բարեկամիս թողնում եմ քեզ գրավական,— Թե չը դառնամ՝ իմ տեղ սպանի՛ր դու նորան»։
«Անձրևն երկնքիցն գետի պես թափում Գետերն սար ու դաշտ տակ ու վեր անում»[1]։	«Տեղատարափ ահա անձրև երկնքից, Եվ թափվում են սարից ջրեր հորդառատ...»[2]։

Այս համադրումներից պարզ է դառնում, որ Աբովյանը համարյա բառացի օգտագործել է Շիլլերին։ Սակայն Շիլլե-

---

¹ Խ. Աբովյան, Նախաշավիղ կրթության, Թիֆլիս, 1838 (Մատենադարանի օրինակը), էջեր 76—78։

² Ֆ. Շիլլեր, Երաշխիք (Հ. Հովհաննիսյան, Բանաստեղծություններ, Երևան, 1949, էջեր 322—327)։

րի ու Աբովյանի բանաստեղծությունների մեջ տարբերություններ էլ կան։ Նախ, Աբովյանը բաց է թողել «Երաշխիք» բալլադի սյուժեի զարգացման մի քանի մանրամասները՝ Դամոնի ավազակները գետի մոտ, աղերսն առ Զևս, կռիվը ավազակների հետ, զրույցը ուխտավորների և տնպահի հետ և այլն։

Այնուհետև, շիլլերյան բալլադում գործողության վրա իշխողը աստվածային կամքն է, իսկ Աբովյանի մոտ՝ մարդկային նվիրվածությունը, անդավաճան սերն ու բարեկամությունը։ Դամոնը իր ընկերոջն աղերսում է մնալ պատանդ, իսկ Աղասին այդ բանը չի էլ ասում. նա համոզված է, որ ընկերը գետին չի գցի խոսքը։ Վերջապես, Աբովյանն աշխատել է նաև տեղայնացնել իր հերոսին՝ ավելացնելով կամ փոխելով այնպիսի մանրամասներ, որոնք չէին կարող հատուկ լինել շիլլերյան բալլադում վերարտադրված իրականությանը։ Հայտնի է, որ պարսիկների սիրած պատժի ձևերից էր՝ հանցագործին գցել թնդանոթի փողի մեջ և կրակել։ Այդպես են սպանել ռուս-պարսկական պատերազմի հերոս, Երևանցի Աստվածատրյանին, որ 1827 թ. սեպտեմբերին մուտք գործելով պաշարված բերդը՝ բնակչության մեջ տարածում էր Ներսեսի կոչերը[1]։ Պարզ է, որ Շիլլերի մոտ նման փաստը չէր կարող տեղ գտնել։

Թե ուրիշ գրվածքներ էլ գրել է Աբովյանը ժողովրդական ավանդությունների կամ շիլլերյան բալլադների ոճով, չգիտենք։

Աբովյանը փորձել է նաև Աղասուն պատկերել արևելյան սիրավեպի ու աշուղական արվեստի ոճով ու հնարանքներով։ Դրա արտահայտությունն է. «Ուր ես գնում Նազլու ջա՛ն հոգվույս թագուհի» բանաստեղծությունը (գրված ամենաուշը 1838 թ. սկզբին), որի մեջ աշուղ դարձած Աղասին սիրուհու գովքն է անում։ Նազլուի սերն այնպես է կրակել նրան, որ

---

[1] Ա. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը, հ. I, էջ 303։

Աղասին կորցրել է հանգիստը։ Նա տանջվում է, լալիս, սարերին ու ձորերին իրեն օգնության կանչում։ Աշխարհը նրա համար վշտի ծով է դարձել, արցունքներ թափելուց աչքերի մեջ փշեր են աճել, բլբուլն անգամ հասել է իր մուրազին, իսկ ինքը մնացել է անսեր ու անընկեր։

Ուր ես գնում Նազլու ջա՛ն հոգվույս թագուհի
Հուրի մալաքի պես քաշած, զարդարած,
Աչքդ բա՛ց ինձ մտիկ տուր քո սիրույդ գերի,
Որ գլի պես չոքը չոր քո դուռն եմ եկած[1]։

Բանաստեղծության մեջ կան ժողովրդական երգասացներին հատուկ չափազանցություններ ևս, որոնց նպատակն է ընդգծել հերոսուհու հմայքի ուժն ու զորությունը։ Նազլուի հայացքը բավական է միայն, որպեսզի սիրուց մոխիր դարձած և սիրուհու դռանը շաղ եկած Աղասին կրկին վերակենդանանա.

Թող սերս կրակ դառնա իմ ջանս էրի,
Իմ լաշիս մոխիրն դռանդ թափի.
Երեսդ հանելիս թե շողքդ ինձ դիպչի,
Նոր կկենդանանամ քույրուղիդ արի...[2]

Աղասու կերպարի մշակման այս երկրորդ ուղուց ևս Աբովյանը հրաժարվել է։ Ուրիշ նոր փորձեր առայժմ հայտնի չեն։

1841 թ. փետրվարին Աբովյանը ձեռնարկեց «Վերք Հայաստանիի» նախնական վարիանտի ստեղծմանը։ Դեռ կաշկանդված լինելով կերպարի մշակման նախնական փորձերից, ըստ սովորության, նախագիրը նա գրեց չափածո։ Ժամանակ անց «Աղասու դժբախտ պատմությանս»[3] այդ վարիանտը չբավարարեց նրան, որովհետև այստեղ առաջին պլանի վրա էին դրված հերոսի բնավորության անհատական, զգայական կող-

[1] ԽԱ, ԵԺ, I, 146։
[2] Նույն տեղում։
[3] ԱՆԱ № 65։

մերը, իսկ հասարակականը դրեթե չէր երևում¹։ Անգամ չէր պատճառաբանված, թե ինչի հետևանք էին Աղասու ծանր ապրումները։ Ավելի ուշ, երբ Աբովյանն սկսեց վեպի հաջորդ արձակ վարիանտը շարադրել, այս անգամ արդեն նա իր հերոսին պատկերում էր միայն ու միայն պարսկական բռնապետության դեմ հայ ժողովրդի մղած ընդհանուր պայքարի մեջ։ Եթե հարուստ էին նրա ապրումները, հույզերն ու մտորումները, ապա դրանք հետևանք էին՝ նրա կատարած գործի հերոսականության և հայ ժողովրդի կրած տանջանքների բազմազանության ու ահավորության։

«Վերք Հայաստանիի» արձակ շարադրանքը նույնպես, հայտնի պատճառներով, Աբովյանին չբավարարեց։ Նա աշխատում է վեպի նոր, վերջնական խմբագրության վրա և 1843 թվին ավարտում այն։

Այժմ տեսնենք, թե ի՞նչ փոփոխություններ է կրել Աղասու կերպարը վեպի երկու արձակ վարիանտներում։

Արդեն ասվել է, որ սևագրում Աղասուն վերաբերող սյուժետային մասը ընդհատվում էր Երևանի բերդի գրավումով. այնտեղ չէր պատկերված Աղասու մահն ու թաղումը, թերևս Աբովյանը չի էլ գրել վեպի այդ մասը (Մաքրագրում այդտեղ ընդհատվում են օտար գրչի կողմից արտագրված էջերը), կամ գուցե նրա համար դժվար է եղել սիրած հերոսի վախճանի

---

¹ Իր անձնական տրամադրությունները վեպի նախագրում Աբովյանն ամբողջությամբ վերարտադրել է Աղասու միջոցով, իր վիշտը, ուրախությունն ու կարոտը ամբողջությամբ վերագրելով նրան։ Բոցենշտեդին ուղղված բացատրականում անդրադառնալով հայրենիքից ու հարազատներից հեռու մնալու պատճառով Աղասու կրած ծանր ապրումներին, Աբովյանը ասում է. «Իրականում դրանք իմ զգացմունքներն են, որոնք ես վերագրել եմ Աղասուն, որովհետև ես էլ եմ երկար ժամանակ հայրենական հարկից նետվել օտարության մեջ։ Գրելով նման վիճակում, ես էլ էի հետը արտասվում...»։ ԱԺԱ № 65։ Մաքրագրում Աբովյանը հիմնականում առանձնացրել է իր անձնական տրամադրությունները վեպի գլխավոր հերոսի ապրումներից։

մասին խոսելը։ Մաքրագրի նոր հատվածներում, էպիկական գույներով, պատկերված է Աղասու վախճանի մի շարք մանրամասներ՝ նրա կյանքի պատմությունը հասցնելով ավարտի։

Մաքրագրում Աբովյանը կենդանի ու կոնկրետ է դարձրել Աղասու արտաքինի նկարագրությունը. «Սևեկթել թուխ թուխ մազերը՝ ձախու կողմիցը քամու հետ խաղում, յա աղնիվ երեսին էր գիպչում, յա բկի տակովն ընկնում։ Բեղերն ապրշումի պես ոլորել՝ էնպես էր թշի վրով դուս տարել, որ ամեն մեկի մեկ ծերը անկաչներին էին գիպչում» (36—37)։ Կամ՝ «նրա լեն թիկունքը, բարձր հասակը ու սևեկթել ճակատը...» (16) և այլն։ Աղասու արտաքինի այսպիսի ցուցադրումը բավականաչափ մոտ է հերոսի նկարին, որ անցյալներում շատ տարածված է եղել[1]։

Լեզվաոճական բնույթի մի շարք մանրուքները կենդանի պատկերացում են տալիս Աղասու ֆիզիկական ուժի ու խիզախության մասին։ Վերցնենք ջիրիդի նկարագրությունը (ընդգծված բառերն ու արտահայտությունները սևագրում չկան). «Շատ անգամ ջիրիդը **հեռու տեղից** շպրտում, ձին չափ էր քցում, ու **գետնիցը ծուռ ըլելս ձիու վրիցը** բռնում էր, **էլ եդ** քցում։ Շատ անգամ **հենց էնպես** դուզ շպրտում էր, ու **կրակի պես նետիցը հասնում, կպնում**, էլ եդ ծուռ անում։ **Գետնին** վեր ընկած տեղիցն էլ՝ **էնպես էր թամքի միջիցը կռանում**, բարձրացնում, որ **ջիրիդն առաջին դողում** էր։ Ընկերանց վրա էլ որ վախտ վախտ ջիրիդ չէ՛ր քցում, **է՛նպես էր նշանում**, որ գդակների **ծերին էր դիպչում, կամ** գդակը **հետը տանում, որ իմանան՝ թե նա նրանց** վնաս չի՛ անում։ Շատ անգամ թամքի

[1] Տես, Խ. Աբովյանի տնակը (Հ. Մալխասյան և Տեր-Դավ, Գիր և կյանք, դասագիրք, Թիֆլիս, 1911, էջ 513)։ «...Մեր ողջկույց տանտիկինը դուրս բերեց երկու լուսանկար։—Մեկը՝ Աբովյանն էր, ամենքիս լավ ծանոթ պատկերը։ Իսկ մյուսն ես երբեք չէի տեսել — Աղասին... այդ ջուխտ լուսանկարները՝ Հեղինակը և հերոսը, շատ տարածված են գյուղում և համարյա չկա տուն, որ նրանք չլինեն»։

ԱԳԱՍԻ *(գործ անհայտ նկարչի)*։

միջին չուխա ասի վրա կանգնում, էնպես էր ձին չափ քցում» (37 և 219)։ Աբովյանի ցանկությունը, որ է ցույց տալ, թե Աղասին ինչպես է իրեն դրսևորում խաղի ու մրցության մեջ, այս կամ այն ճարպիկ շարժումը կատարելիս՝ իրականացել է։ Հնոու տեղից շպրտում, ծով ընկնելիս բռնում, կրակի պես ջիրիդի նետիցը հանում է և այլ արտահայտությունները լրիվ պատկերացում են տալիս Աղասու «տղամարդության, հունարի» մասին։

Մաքրագրում կան ընդարձակ հատվածներ էլ, որոնց նպատակն է ցույց տալ Աղասու, իբրև մարդու, բարոյական դեմքը. «Տանուտերի աղեն էր, աղքատի ու նաչարի ընկեր։ Որը էր նրա դուռը գալիս, սուփրեն էր բաց անում, կամ քիսեն, ում դուլթան չունեին, իրանցը բան տալիս. ում եզն ու հողաղ չունեին, իրանցն ուղարկում. ում փող չուներ՝ որ մշակ բռնի՝ իրեն էսի, փորի, յա թաղի, կամ թաղը հա ա, ինքն էր առաջ ընկնում, գեղի տղերքը հավաքում ու գնում նրա բանն՝ առանց կանչելու, առանց խնդրելու անում, ու իրու տերը մեջը մըտնելիս՝ աչքը մնում սառած, նրան ումրը ու արև խնդրում, չունքի թե մեկ տարի վաղն անթաղ մնա մեր աշխարքումն, խոպան կըրանա» (15—16),— կարդում ենք դրանցից մեկում։ Այստեղ ընդգծվում է Աղասու բնավորության կարևոր գծերից մեկը՝ մարդասիրությունը. նա օգնում ու կարեկցում է ընկածին, առանց հասկացնելու, որ բարիք է անում։ Ուշադրություն դարձնենք մի մանրուքի վրա. Աբովյանն ասում է, թե անթաղ մնալու դեպքում վաղը Հայաստանում փչանում էր։

Մաքրագրի մի այլ հատված ցույց է տալիս, որ բարի ու սրտացավ Աղասին կատաղի ու դաժան էր թշնամիների՝ մողովրդին տանջողների ու հարստահարողների նկատմամբ. «Նրան էնքան բարի էր՝ որ նհախ տեղը ղուշ էլ չէ՛ր սպանիլ, մոծակը չէ՛ր կոխիլ, ամա հարամի թշնամու ձեռին տապակվելով դիշեր ցերեկ, որ թե էնպես էր պատահում, որ Թուրքերն էկել էին բաղը լցվել, կամ իրան սպանել, կամ իր հարևանին,

էն ժամանակը երկինքումն ըլեր, վեր կըգար, գետին էն կողմինը ձեն տային, խեկուշն ական թոթափել հազիր էր, ու թե բառով բանը չէ՛ր վերջանում, էն ժամանակը նա իրան թրի, թվանքի ու կռան հունարը էնպես էր ցույց տալիս, որ թշնամին մնում էր կատու դառած, կամ նրա ձեռին, հնձանի տաքարին զուրբան ըլում, որ թաղում, ծածկում էին, չունքի հազար անգամ էին փորձել, վարավուրդ արել՝ թե մինչև Տաճկին չծեծես, քեզ բարեկամ չի դառնալ» (16)։ Իր բնավորության այս գծով, Աղասին մոտենում է էպոսի հերոսներին, որոնք խաղաղ պայմաններում հասարակ են, պարզ ու համեստ, իսկ կռվի մեջ՝ մոլեգին ու կատաղի։ Նրանք ժողովրդին միշտ փրկում են օտար նվաճողներից։ Հերոսի բնավորության այս գիծն ավելի խորը բացահայտելու համար Աբովյանը խոսեցնում է նաև նրան. «Դեռ՛ խերի որդիք՝ ձեզ ո՞վ ա ղրկել էս տեղ, ո՞ւմ վրա եք էդպես կատաղել, ասենք՝ թե Հայը ձեն չի՛ հանում, պետք է նրան սաղ սաղ ուտե՞ք. աչքներիդ լիսը կթռցնեմ էս սհաթը, կորե՛ք՝ թե չէ ամեն մեկդ ճուտի պես առաջիս կթրպրտաք։ Քանի էս կուռը վրես ա, դուք էստեղանց թել չե՛ք կարող դուս տանիլ» (43),— ասում է Թագուհուն առևանգելու եկած ֆարաշներին։ Այս տողերը արտահայտում են Աղասու՝ սեփական ուժի գիտակցումը և պարտականությունների ճանաչումը։

Մաքրագրում Աբովյանը առանձին ուշադրություն է դարձրել նաև Աղասու մտավոր ունակությունները բացահայտելու վրա։ Իր բնական ու անկաշկանդ մտածողությամբ նա ավելի բան է հասկանում, քան նույն ժամանակի տգետ կղերականներն ու թերուս ուսումնականները։ Աղասին պարզ գիտե, որ ժամանակի հոգևորականները ագահ են ու ընչաքաղց, ընկած սեփական շահի ետևից, չեն աշխատում, որպեսզի ժողովուրդը ազատվի տգիտությունից և բարելավի իր վիճակը։ Աղասին արդար վաստակի ու ազնիվ ճանապարհով ապրելու կողմնակից է և բացասական վերաբերմունք ունի նրանց բոլորի

նկատմամբ, որոնք վարում են պորտաբույծ կյանք և ունեզրկում են ժողովրդին։

Մաքրագրում առավել ցայտուն է դարձված հերոսի ու ժողովրդի փոխադարձ կապը։ Աղջիկները, օրինակ, «ջանգյուլում առնելիս, կամ Ֆալ քցելիս, կամ թիզ բաց անելիս, ամենն էլ իրանց մտքումը նրան էին գնում, երազում նրան տեսնում, վեր կենում՝ նրա սիրուն՝ ա՜խ ո՜խ քաշում։ Նրա ձեռի խնձորը կամ վարդը, որ մեկի ձեռն էր ընկնում, որ փթում էլ էր, կամ չորանում, էլի նա ծոցիցը չէ՛ր հեռացնում, քնելիս՝ բարձին դնում, զարթնելիս՝ դոշին, երեսին, կամ քթին։ Մեկ տեղ գնալ ըլելիս՝ հաղար տեղից՝ պատի արանքից, դռի չեմից, տան պուճախից՝ հենց նրան էին մտիկ տալիս ու շատը ուզում էր՝ թե հենց էն սհաթը, յա Աղասու ձեռը նրա ձեռին դիպչի, կամ շունչը շնչին, յա թուքը սիրտը մտնի, որ շուտով նրա արևին մատաղ ըլի, որ Աղասին նրան թաղի, Աղասու սիրտը նրա համար մրմնջա, Աղասու աչքը նրա վրա լա» (17)։ Սա սովորական չափազանցություն չէ։ Աղասին էպոսի աշխարհաշեն հերոսներին հոգեհարազատ բնավորություն է, իսկ ժողովուրդը իր անվտանգության համար ապրող ու մեռնող հերոսի մասին սովորաբար խոսում է պատկերավոր, բնորոշում՝ չափազանցված համեմատություններով, կամ թե նրա նկատմամբ իր սերն արտահայտում՝ այլաբանորեն։

Աղասու կերպարը մշակելիս, մաքրագրի մեջ Աբովյանը կատարել է նկարագրությունների կրճատումներ ևս, որոնք խանգարում էին հերոսի բնավորությունը ճիշտ ըմբռնելուն։ Սևագրից չի վերցված՝ «նրա համար աշխարհքը մեռած էր» (321), կամ՝ «երեսի ռանգ մռանգը թռել, գոմի բուղն ու ծուխն էլ՝ որ չէր կպել, բռնել, հենց իմանում էին՝ թե մարդ չի՛, մեկ գև ա իրենց մեջը մտել... փրփուրն էկել՝ բերնի վրա կիտվել էր...» (324) ու նման արտահայտությունները, որոնք Աղասուն ներկայացնում էին իբրև զգացմունքների գերի և հավասարակշռությունը կորցրած մարդու։ Վերի նախորդ վա-

րիանտում ստացվել էր այնպես, որ մերձավորի կյանքը փըրկելու համար իր անձը զոհող Աղասին վշտի պահին չէր կարողանում տանել հայրենակցի ուրախությունը. «Մ՛նկ երեխա՝ որ չէ՛ր տեսնում մոր ծոցին խաղալիս, մնկ աղջիկ՝ որ աչքը չէր ընկնում ջուրը գնալիս, մնկ տղա որ չէր տեսնում հորնըմոր, քիր ախպոր ու իր սրտի սիրեկան նշանածի մոտ նստած՝ զրից տալիս, յա սեր վայելելիս՝ գլխին կրակ էր վառվում, ուզում էր՝ որ քարափներվեր ընկնի հենց էն սհաթին, յա գետն ընկնի, խեղդվի, յա մեչումը կորչի՝ ջանավարի փայ ըլի. յա ինքն իր թուրը, իր սիրտը ցցի, մեռնի, էս փուչ աշխարքիցը պրծնի» (326)[1]։ Անգամ բնությունը, որն այնքան ցանկալի ու սիրելի էր Աղասու համար, որի մեջ նա գտնում էր հանգըստություն, անձնական վշտով տարված պահերին կորցնում էր հմայքը նրա աչքում. «Հորնըմոր կարոտը, նշանածի հասրաթը, քիր ու ախպոր սերը՝ սար ու ձոր նրա աչքին փուչ էին շինել ու զանակ։ Ծաղկի վրա էլ որ ոտը դնում էր, հենց իմանում էր՝ սուր մտավ ջիգյարը. սարին, ձորին էր մտիկ տալիս՝ հենց իմանում էր՝ վիշապ են՝ իրան ուզում են կուլ տան. ջրին որ մտիկ էր տալիս՝ էնպես էր կարծում, թե կրակ ա, իրան պետք է էրի» (326)։ Այս ամենը, իհարկե, հակասում էր էպիկական ոճին։ Աբովյանի նպատակը Աղասու ծանր ապրումները ցույց տալն էր, սակայն սևագրում այդպես չէր ստացվել. Աբովյանն իրենից անկախ գնացել էր դեպի եվրոպական սենտիմենտալ վեպ, որի ոճով Աղասուն պատկերելը համարում էր անմտություն։ Այս է պատճառը, որ այս և ուրիշ շատ հատվածներ Աբովյանը մի կողմ է դրել, և բոլորի փոխարեն գրել. «Ինքը որ տխուր ու մաշված էր, հենց իմանում էր՝ մարդիք սիրտ չունին, որ ուրախանում, ծիծաղում էին։

---

[1] Այս կտորը արձակ շարադրանքն է «Վերք Հայաստանիի» չափածո նախագրի 133—158 տողերի. «Կամիմ որ ասաց ա՞խ՝ որ հոգիս տամ...» և այլն։ Խ. Ա., ԵԼԺ, II, 14—15։

Էնտուր համար իր ընկերքը սար ու ձորն էր շինել, էնպես էր ծնողաց կարոտը, քիր ախպեր հասրաթը, դարդը նրա սրտոն առել։ Երևանու մեկ ծուխն էլա չէր ընկնում աչքովը, մեկ սար էլա՝ էն կողմիցը չէր տեսնում, որ բալքի սրանով էլ ա սիրտը մի քիչ հովանա (141)։ Այստեղ էլ խոսք կա Աղասու ծանր ապրումների մասին, սակայն առված չափի զգացումով, որ լիովի պատկերացում է տալիս Աղասու մեծ վշտի ու անհագ կարոտի մասին։ Այսպիսի հոգեվիճակը արդեն բնորոշ է էպիկական հերոսներին։

Աբովյանը կրճատել կամ դուրս է թողել նաև այն արտահայտությունները, որոնք հակասում էին Աղասու բնավորության մի ուրիշ գծին՝ համեստությանը («չունքի ես էի ուզում Երևան առնել, իմ անունը աշխարքումը թողալ» — 360), ինչպես նաև վերացրել է այն հատքերը, որոնք մատնում էին Աղասու իրական կենսագրության երկրորդական մանրուքները («Ապովենց օջախի ծուխն անպակաս ըլի, որ էդպես որդի ա բերել» — 324—5) և այլն։

Իրական Աղասին հարկավ հերոսական անհատ է եղել։ Հենց այն գործերը, որ նա կատարել էր՝ ֆարաշներին սպանել, տուն-տեղ թողած սարերն ընկել և պարտիզանական կռիվ մղել պարսիկների դեմ, Երևանի գրավմանը մասնակցել, օգնել ու օժանդակել ռուսական զորքերին, — բավական էին նրան վիպական կերպար դարձնելու։ Սակայն Աբովյանը Աղասու իրական կենսագրության փաստերով չբավականանալով, վերջիններս գունազարդել է էպիկական հնարանքներով։ Բնորոշ է այս տեսակետից Աղասու մահվան նկարագրությունը, որ, ինչպես ասվեց, տարբերվում է մեմուարային ավյալներից. «Աղասին, հրեշտակ Աղասին՝ երկու խանչալ սրտումը ցցված, իրեքը քամակումը, ու ոտ ու ձեռ հազար տեղ յարալու փարալու՝ իր ողորմելի հոր դաշին, արինը ծովի պես չորս կողմը բռնած... Աջու ձեռք որ չէր տարել, որ հոր գլուխը, էն ձնի պես սպիտակ մազերը մեկ խառի, մեկ դաշին կպցնի, որ էն-

քան տարվան էրված սրտի մուրազն մի առնի, հովանա, հենց տեղն ու տեղը ոտը վեր էին բերել ու կարած ձեռը մնացել էր հոր գլխատակին, երեսը երեսին, ու ձախու ձեռն էնպես փռտացած, դոշի վրա ընկած» (184)։ Այս նկարագրությունը ունի էպիկական հզոր ուժ ու շունչ։ Դաշույնները սրտում ու թիկունքին, ողջ մարմինը վերքերով պատած, ինքն արյան ծովի մեջ,—այսպես է ժողովրդի ստեղծագործ միտքը ներկայացրել նաև էպոսի հերոսների վախճանը, որոնք մեծ մասամբ դառնում են դավաճանության զոհ։ Պակաս հետաքրքիր չէ Աղասու թաղման նկարագրությունը։ Այդ էլ հիշեցնում է վիպասանական երգերից՝ Արտաշեսի թաղումը, որի դագաղի առաջ սիրելիները կամավոր կերպով անձնասպան էին լինում։ Այսպիսով, մաքրագրի այս և մյուս նոր հատվածները պատճառաբանում են Աղասու կերպարը՝ գեղարվեստական ու հոգեբանական տեսակետից և ռեալիստական գույներով պատկերում այն տիպական հանգամանքները, որոնց մեջ ապրել ու գործել է նա։

բ) ՎԵՊԻ ՄՅՈՒՍ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ.

«Վերք Հայաստանիի» հերոսական բնավորությունների թիվը բավական սակավ է։ Եթե Աղասու կյանքը վերարտադրելիս Աբովյանը հաճախ վերախմբագրել է փաստերը, մասնավոր դիպվածին հասարակական նշանակություն տվել, ապա մյուս հերոսներից՝ Գրիգոր Մանուչարյանին, Արծաթինցի Մանուկին, Մոսին կամ Հոհանջանին անդրադառնալիս, նրանց իրական կենսագրությունից գրեթե չի շեղվել։ Աբովյանը նրանց կյանքից ընտրել է այնպիսի դրվագներ, որոնք ինքն ըստ ինքյան վիպական երանգ են ունեցել։

Գրիգոր Մանուչարյան. Սա հոգևորական լինելով հանդերձ, ո՛չ թե քարոզել է պարսկա-թյուրքական բռնության նկատմամբ անգործություն, այլ խրախուսել է հայ ժողովրդին

սրով ու արյունով նվաճել ազատություն ու անկախություն։ Հակառակ դասակիցներին, Մանուչարյանն եղել է կռվի ու կյանքի մարդ։ Ամեն անգամ, երբ ռուսական զորքերը արշավանք են սկսել Անդրկովկասում՝ Պարսկաստանի դեմ, Մանուչարյանը մի կողմ նետելով եպիսկոպոսական սքեմն ու վեղարը, զենք ու զրահ կապած, իր խիզախների գլուխն անցած, միացել է նրանց և կռվի դաշտ իջել՝ հայրենիքն օտար զավթիչներից ազատելու համար։ Նրա կյանքի շատ մանրամասներ դեռ մնում են անհայտության մեջ։ Բայց հայտնի է, որ նա ծնվել է Շամշադինում, երկար ժամանակ նույն տեղում եղել է կրոնավոր, ապա նաև՝ վիճակավոր առաջնորդ ու եպիսկոպոս, մասնակցել է Ցիցիանովի 1803 թ. արշավանքին դեպի Գանձակ, 1808 թ. Գուդովիչի արշավանքին՝ Երևան, և այլն։

1826—7 թվերի ռուս-պարսկական պատերազմի ամբողջ ընթացքում Մանուչարյանը եղել է կռվի թոհուբոհում։ 1826 թ. օգոստոսի 6-ին 40 ձիավորներով, Երամ գետի մոտ, մեծ ջարդ է տվել թշնամուն։ Նույն ամսի վերջին, հինգ հարյուր հայ կտրիճների հետ, նա երևում է Մադաթովի բանակում։ Օգոստոսի 22-ին Մանուչարյանը ջարդել ու փախուստի է մատնել պարսից Ջոհրար-խանի և վրաց Թագաժառանգ Ալեքսանդրի զորքերը։ Սեպտեմբերի սկզբին իր հեծելազնդով մասնակցել է Շամխորի ճակատամարտին, ապա գեներալ Երմոլովի խնդիրքով ուղևորվել Շամշադին, զսպել տեղի թյուրք բեգերի ապստամբությունը և ետ դարձրել պարսիկների գերեվարած հայ ընտանիքները։ Նա խաղաղեցրել է նաև Ղազախի և Սևանի կողմերի խռովությունները։ «Вы к совершенному удовольствию моему оправдали в полной мере выбор и доброе о Вас мнение»[1],— գրում է նրան Երմոլովը 1826 թ. հոկտեմբերի 1-ի թվակիր նամակով։ Հայտ-

---

[1] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ № 54, վավերագիր № 269։

նի է դառնում, որ Մանուչարյանը Երմոլովին խնդրած է եղել՝ անկախություն տալ առհասարակ թաթարների տիրապետության տակ եղած բոլոր հայերին։ Վերջինս խոստացել է. «Что же касается до общей независимости всех армян и в других татарских провинциях, я не оставлю в последствие сделать распоряжение»[1].

Հայաստանի ազատագրումից հետո Մանուչարյանը քաշվում է հայրենի Հախում գյուղը։ Կարբեցու կաթողիկոսության շրջանում նա ենթարկվել է հալածանքների և 1831 թվի կեսերին ազատվել Շամշադինի վիճակավոր առաջնորդի պարտականություններից։ Մատենադարանի նյութերից պարզվում է, որ Մանուչարյանն ու իր կողմնակիցները հորդորել են գյուղացիներին հարկ չվճարել Էջմիածնին. «Ակնելով կամին միանձնական տալոյ զնուէրս և զհասոյթս Աթոռին»,— կարդում ենք ամբաստանագրերից մեկում[2]։ Նա վախճանվել է 1835 թվի դեկտեմբերի սկզբին։

Մանուչարյանի մասին «Վերք Հայաստանիում» պատմված դեպքերը, բոլորն էլ, իրողություն են և հաստատվում են վավերաթղթերով։ Օրինակ, վեպում ասված է, որ նա բռնել է պարսկական լրտեսներին և հանձնել Երմոլովին («Հինգ Պարսիկ իր ձեռովը բռնեց, ու Երմոլովին փեշքաշ արեց»—122),— նույն խնդրի առթիվ, Եփրեմ կաթողիկոսը՝ Պասկևիչին գրում է. «Գրիգոր եպիսկոպոսը... բռնեց... չորս նշանավոր լրտեսների, որոնք գնում էին Ղազախի և Բորչալուի գավառակներում խռովարար ֆերմաններ տարածելու...»[3]։

Իր վեպում Աբովյանը օգտագործել է նաև Մանուչարյանի մասին պատմվող մի ժողովրդական զրույց. «Երմոլովն... մեկ պաս օր եպիսկոպոսից խնդրում ա, որ կովի ժաման-

---

1 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ № 54, վավերագիր № 269։

2 Նույն տեղում, թղթապանակ № 74, վավերագիր № 235։

3 Ա. Երիցյան, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը...., Հ. I, էջ 249։

կին էլ պատին մոտիկ չանի, բայց նա հսկայաբար պատասխան է տալիս. Պարսից մսը թողած՝ ի՞նչ հարկավոր է տավարի միս ուտել» (122),— սա սրամիտ պատասխան է և հիշեցնում է Գայլ Վահանի ու այլոց մասին պատմվող ժողովրդական զրույցները:

Ինչպե՞ս է Աբովյանը մշակել Մանուչարյանի կերպարը վերջի երկու ինքնագրերում: Սևագրում իր պատմածների ճըշմարտացիությունը հաստատելու համար Աբովյանը վկայակոչում է անձնական ծանոթության փաստը, ասելով՝ թե «էս ահագին քաջության տեր\եպիսկոպոսը՝ որ իմ աչքովն եմ տեսել՝ որ երկու մարդի բոյ ու թիկունք ուներ, վաթսուն տարուց ավելի՝ էլի երեսը վարդի պես փայլում էր, է՜ն բարեձևիկ կերպարանքն ու հոգին ուներ՝ որ երեխի պես կնստեր, մեզ հետ կխաղար, շախմա կաներ, ու մարդի հոգի կուզեր՝ որ տեղից հանի. էնքան քաղցր էր նրա սիրտն ու բնությունը (307): Մաքրագրում ընդհակառակը, վերախմբագրել է այդ պարբերությունը, գրելով՝ «Թե Գրիգոր եպիսկոպոսին տեսներ, հոգին հետը կերթար. է՜ն զարմանալի սրտի տերն էր, է՜ն քաղցր լեզուն, է՜ն անուշ բնությունն ուներ: Երեխի պես կնստեր, կպատմեր, ինչ գլխովն անց էր կացել» (122):

Սոսի և Հոհանջան. Սրանք Աբովյանի ուշադրությանն են գրավել իրենց անձնազոհ հայրենասիրության ու խորը մարդասիրության համար: Նշելով, որ թյուրք ու քուրդ հրոսակները քանդում են «Նեմեցի կոլոնիեն», անզեն ժողովրդին սրի քաշում ու գերեվարում, նրանք արհամարհելով մահը «քառասուն կարրիչով» դուրս են գալիս «իրենց հազար» թշնամու առաջ, կռվում մինչև վերջին հնարավորությունը և անհավասար մարտում ընկնում հերոսական մահով:

Սոսին և Հոհանջանը իրական-պատմական անձնավորություններ են: Պահպանվել է Ներսես Աշտարակցու մի նամակը՝ ուղղված Մելիք Հոհանջան Մելիք Սարգսյանցին (գրված 1826 թ., օգոստոսի 7): Պատերազմի սկզբին ռուսական զոր-

քերի ժամանակավոր անհաջողությունը հուսահատեցրել էր ժողովրդին, շատերը կարծում էին, թե այս անգամ էլ Հայաստանի ազատագրության գործը չպիտի իրականանա։ Երկընտրանքի մեջ են եղել նաև շուշավերցիները։ Ահա Ներսեսը հուսադրելով նրանց ասում է. «Մի լիցի տարակուսութիւն հանելն զզօրս ռուսաց ի Ղարաքիլիսայէ, ի Գիւմրու, յԷլիսաւէտպօլէ և ի Նուխւոյ, զի այն ամենայն է՛ ըստ արուեստի զինուորական... վասն հզօրացուցանելոյ զզօրութիւն իւրեանց»։ Նա հիշեցնում է ռուս ժողովրդի Հայրենական պատերազմը Նապոլեոնի դեմ։ «Օրինակ այսորիկ ունիմք զմեծն և զհռչակաւորն՝ որ յամի 1812 սկսեալ ի սահմանաց Եւրոպիոյ հանին զամենայն բազմութիւն զօրաց ռուսաց ի հարիւրաւոր քաղաքաց, նա և ի Մոսկով քաղաքէ իսկ, այլ ի վախճանի՝ հռչակաւոր եղև հալածումն միլիօնաւոր զօրաց թշնամեաց. և ահեղ յետադարձ զօրաց ռուսաց, որք ոչ միայն վանեցին զթշնամին ի սահմանաց իւրեանց, այլև ոտնակոխ արարեալ զամենայն երկիրն նոցա, և զբուն քաղաք աթոռոյ կայսերութեան Նապոլեոնի զՓարէզ... Ժամանակ այս՝ ունի զնոյն սկսուած այժմ, այլ ոչ անաղան ընկալնուցու զնոյն վախճան, և դրօշակ անպարտելի զինուորութեան ռուսաց բարձրասցի ի գլուխ պարսպաց երևելի քաղաքաց Պարսկաստանի»։ Ոգևորելով շուշավերցիներին գալիք հաղթանակի հույսով, Ներսեսը կոչ է անում. «Այր իւրաքանչիւր վառեալ զինու և հեծելովք ձերում գնալի գալ խառնիլ ընդ զօրս ռուսաց... հալածելոյ զթշնամիս»[1]։

Պետք է ենթադրել, որ այս նամակից հետո են շուշավերցիները կազմել իրենց զորագունդը, որի մարտերի մասին Աբովյանը խոսում է «Վերք Հայաստանիում»։ Հոհանջանը և Սուսին հերոսական մահով զոհվել են 1826 թվի օգոստոսի

[1] Գրականության և արվեստի թանգարան, Ա. Քամալյանի արխիվ, № 17/17։

14-ին[1]։ Այդ առթիվ Ներսես կաթողիկոսը ցավակցական կոնդակ է ուղղել Հոռանջանի եղբորը, նրանց համեմատելով Վարդանանց զորավարների հետ. (կոնդակը գրված է՝ 1826, հոկտեմբերի 18, Թիֆլիս)[2]։

«Վեպի երկու վարիանտներում էլ Հոռանջանին և Մոսին վերաբերող դրվագը կրկնված է չնչին տարբերություններով։ Նորությունն այն է, որ Աբովյանը մաքրագրում առանձնապես շեշտել է, թե նրանք գերադասել են «մեր աշխարհի սիրով մեռնելը» խաղաղ կյանքից, և եղել են՝ «Զուլումը մեռնիլը ազամարդություն է» (124) սկզբունքի կրողները։ Բացի այդ, մաքրագրում ավելացրած մի ուրիշ պարբերությամբ ընդգծվում է, որ նրանք հայրենիքի շահերը բարձր են դասել անձնական ապահովությունից։ Թեպետ թշնամին խոստանում է ներել. «Մո՛սի աղա՛ քո աղ ու հացը շատ ենք կերել, մեր աչքը կըռնի, թե քեզ վրա թուր բարձրացնենք։ Մենք քեզ կտանինք, սաղ սալամաթ համփու կըցնենք, մի՛ անիր, գլուխդ մահու մի՛ տար, քե՛զ ենք ափսոս գալիս, արի՛, քեզ խնայի՛ր» (124) և այլն, սակայն նման հավաստիացումը նրանց ետ չի կանգնեցնում անձնազոհ պայքարից։ Այնտեղ, ուր վճռվում է սեփական ժողովրդի ազատագրման հարցը, տեղ չեն կարող ունենալ անձնական ապահովության մասին հոգացումներն ու թուլամորթությունը»։

Արծափեցի Մանուկ. Իրական պատմական անձնավորություն է (նրա մասին Աբովյանը գրել է նաև «Քրդեր» ուսումնասիրության մեջ, 1846 թ.։ Պահպանվել է Ներսես Աշտարակեցու՝ Մանուկին ուղղված նամակը և այլն)։ Մանուկը վայելել է լայն ժողովրդականություն։ Մանուկն իր քաջությամբ այնպիսի հռչակ է ձեռք բերած եղել Բայազետի շրջակայքում, որ Աբովյանի վկայությամբ, «քրդերը դեռ այսօր էլ (1845—

[1] Кавказский сборник, т. XXIII, стр. 132. (ըստ Հովհ. Թումանյանի)։

[2] Գրականության և արվեստի թանգարան, Ս. Քամալյանի արխիվ, № 17/17։ Մոսիի ազգանունը եղել է Քալանթարյան։

46 թթ. Ք. Հ.) երգում են նրա սխրագործությունները, մեծագույն պատկառանքով արտասանում նրա անունը, որին ես վկա եմ եղել անցյալ տարի այս տեղերում ճանապարհորդելիս[1]։ Մանուկը ապրել է պարտիզանական կյանքով, ատել է պարսիկ տիրողների լուծը և նվիրվել Հայաստանի ազատագրության գործին։ Ռուս պարսկական պատերազմի ժամանակ կապվելով ռուսական հրամանատարության հետ, նա գաղտնի տեղեկություններ է հաղորդել պարսկական զորքերի շարժումների մասին։ Հասան-խանը իմանալով այդ, աշխատում է մեջտեղից վերացնել Մանուկին և գործն հանձնարարում է Բայազետի փաշային, սա էլ՝ քուրդ ցեղապետ Հյուսեին-աղային, բայց վերջինս անտեսում է փաշայի հրամանը։ Վերջապես Մանուկը դառնում է դավադրության զոհ։ Մի անգամ, զրույցի պահին, անսպասելի հարձակվում են դարանակալ պարսիկները և սրախողխող անում. «Մաղ քաղաքը ամսով հենց նրա սուգն ա անում» (308),— կարդում ենք վեպում։ «Դեռ այսօր էլ <բայազետցիները> մեծ ակնածությամբ ցույց են տալիս այն տեղը, որտեղ նա սպանվել է»,— կարդում ենք «Քրդեր»-ում[2]։

Փաստական տեսակետից վեպի երկու խմբագրերում Մանուկին վերաբերող դրվագները ոճական չնչին տարբերություններով համընկնում են։ Օրինակ՝ սևագրի «վաթսուն մարդով՝ երկու երեք հարյուր մարդ քարդել, կոտորել» (308)՝ արտահայտությունը մաքրագրում դարձրել է. «Վաթսուն մարդով՝ շատ անգամ երկու, երեք հարյուր Քրդի մեջ մտել, ջախրփուրթ արել, դուս էր էկել» (123)։ Շնորհիվ այս նրբին փոփոխության, մաքրագրի շարադրանքի մեջ է մտել էպիկական տարրը, որ սևագրում բացակայում էր։

Թումանյան Մեհրաբյան Հովակիմ. Այս հերոսի կյանքը (սևագրի համեմատությամբ) Աբովյանը հարստացնում է նոր

[1] ԱԵՄ № 44։

[2] Նույն տեղում։

դրվագներով, որոնք բնորոշ են նրա ապրած միջավայրին։ Մաքրագրի էջերից մի քանիսը աշակերտներից մեկին արտագրել տալիս, Աբովյանը սևագրի 89—90 էջերի լուսանցքներում ավելացրել է մի մեծ հատված, որ նույնությամբ աշակերտը փոխանցել է վեպի մեջ։ Ահա այն. «էն Հովակիմը՝ որ մեկ օր լողանալիս՝ մեջքը հանկարծ՝ որ տասնը հինգ լողցի չի՛ն դուս գալիս, ինքն էլ կամաց կամաց ջրիցն ա դուս գալիս, ու որպես թե նրանց բանի տեղ չի՛ քցում, սկսում ա շորերը հաքնիլ։ Լազգիքը սովորաբար մարդ չեն սպանիլ, սաղ սաղ կբռնեն, որ տանին, ծախեն։ Հենց որ մոտանում են, ձեն ա տալիս էս աժդահեն՝ որ կանգնին, ու ասում, որ ազամարդություն էն չի՝ որ տասնըհինգ մարդ մեկի վրա թափին, բռնեն. թե սիրտ ունին, իրանք մեկ կողմը կանգնին ու ինքը մեն մենակ մյուս, թե որ հաղթեն, թո՛ղ էն ժամանակը բռնեն տանին... Սաղան Հովակիմը թվանքը ցցին ու առաջի մարդին սպանիլը մեկ ա անում։ Նա զզզան վախտը՝ էլ գյուլին չի՛ մարիկ անում, թուրը հանում ա, մեջներն ընկնում, թշնամին երեսը եդ ա շուռ տալիս, տասնըչորսին էստեղ, էնտեղ որը թրով, որը փշտովով սպանում, աղցան ա անում։ Վերջին տասնը հինգերորդն էլ՝ որ էարի պես չոքում, գլուխը դեմ չի անում քաջին՝ նա թևից բռնում, վեր ա կացնում ու ասում. «գնա քո կյանքը կբաշխեմ, որ գնաս ձեր երկիրն, ու ձեր քաջ ազգին պատմես, որ իմանան՝ թե մենակ իրանք չի թուր խփիլ գիտեն, թե Լոռու Դսեղ գեղումը էսպես ինձ նման հազարավորները կան, որ թեկ ուզենան, ձեր երկիրը ոտի տակ կտան, կջնջեն։ Ամա Հայ քրիստոնեին մեղք ա, էսպես բանը, մեր օրենքը չի՛ հրամայում» (92)։ Այստեղ տեսնում ենք հայ ժողովրդի մի հատվածի՝ իր սովորույթներով ու տրադիցիաներով, գաղափար կազմում նրա պատկերացումներին՝ հերոսության ու քաջության մասին։ Հովակիմի կերպարով Աբովյանն հաստատում է իր այն թեզը, թե քաջության ու ազատաբաղձության ոգին, առհասարակ, ուժեղ է այնտեղ, ուր

միշտ կենդանի են վաղեմի ավանդությունները, պատմվում են հերոս նախնիների սխրագործությունները և ժողովուրդը աչքի առաջ ունի անցյալի շինարարական արվեստի կոթողներն ու հուշարձանները:

Հովակիմն եղել է իրական-պատմական անձնավորություն[1]: Մեզ է հասել նրա սխրագործություններն հաստատող փաստաթուղթ, որից պարզվում է, որ նա մեծ գործ է կատարել Լոռվա ռուսական սահմանները լեռնական հրոսակների ասպատակություններից պաշտպանելու գործում: Ահա այդ փաստաթուղթը.

АТТЕСТАТ

Объявитель сего Дисихского кевхи Мераб Юзбашия сын Иоваким Туманов, во все время управления моего Борчалинскою дистанциею употребляем был мною по службе во время смутных обстоятельств как для содержания караульных для ограждения пути хищникам наряженны в совершенной исправности, так равно во время погоней за хищниками, в каких случаях оказывал он Туманов особенное усердие имущество за что по самой справедливости заслуживает вознаграждения. По чему долгом себя поставляю снабдить его сим с подписанием моим и с приложением герба моего печати о благополучном городе Тифлисе 1811-го года июня 2-го дня.

მეფ მოურავნი და (.................)[2]

Июня 2-го дня.
№ 37-ой

---

[1] Հովակիմի կյանքից դրվագներ է պատմել նաև Հովհ. Թումանյանը իր «Քաջերի կյանքից» գրույցում, որ գրված է լոռեցիների հուշերի հիման վրա: Հորիզոն, Գրական հանդես, 1894, գիրք առաջին, էջեր 87—96:

[2] Ազգանունը և կնիքը չե՛ն կարդացվում: Այս վավերագիրը պահվում է Հովհ. Թումանյանի տուն-թանգարանի արխիվում:

Վեպի մեջ կան ուրիշ կերպարներ ևս, որոնք թեպետ ունեցել են իրենց նախատիպերը, սակայն Արովյանը նրանց կյանքից համարյա բան չի վերցրել, բացառությամբ անունների։ Դրանք իրական մարդկանց անուններ կրող տիպեր են։ Տեսնենք, թե նրանց կերպարելու ի՞նչ հնարանքներ է օգտագործել Արովյանը։

Հարություն. Սրա համանուն նախատիպը հանդիսանում է Արովյանի հորեղբայրը։ Դեռ վեպի ծրագրային նշումների մեջ («Հորեղբոր հարստությունը») Արովյանը որոշած է եղել վեպի մեջ առանձին տեղ հատկացնել Հարությունի հայացքներին (սևագրում նա որպես կերպար հանդես չի բերվել)։ Ինչպես էլ՝ մարքրագրում հայ ժողովրդին ինքնաճանաչման բերելու հարցը նա է առաջ քաշում։ 1820-ական թվերին Հարությունը աչքի ընկնող անձնավորություն էր։ Նրա ստորագրությունը գտնում ենք 1828 թ. հուլիսին Երևանի հայերի՝ Էջմիածնի կաթողիկոսին ներկայացրած մի համախոսականի տակ, որով ժողովուրդը իր երախտագիտությունն է հայտնում Ռուսաստանին և խնդրում կաթողիկոսին՝ միջամտել, որպեսզի վերացվեն պարսիկների օրով եղած հարկերը[1]։ Արովյանը «Ջանգի» հավելվածի սյունետային մասում կրկին անդրադարձել է Հարությունի կերպարին ու ցույց տվել, որ նա ոչ միայն խոսքի, այլև գործի մարդ է. նա է որդեգրում Աղասու որբացած զավակներին։ Արովյանը Հարությունին ստեղծել է նրա բերանով հոգևորականության և քաղաքը քննադատելու համար։

Զարզար Պողոս. Իրական անձնավորություն է։ Սևագրում ուղղակի անվանված է Պողոս։ Մաքրագրում անունը լրիվ չի բերված, որովհետև 40-ական թվերին այդ վաչխառուն դեռ ապրում էր (ազգանունը Բարխչանյան)։ Զարզար Պողոսի ա-

---

[1] Լ և ո, Պատմություն Երևանի հայոց հոգևոր-թեմական դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 102—105։

նունը հանդիպում է նաև 1814 թվի ապրիլի 14-ին Երևանում կնքված մի պայմանագրի տակ, ուր նա դրել է իր կնիքը և սեփական ձեռքով գրել. «Ես՝ Զարգար Պողոս այս վերոյ գրեալ վախումլամիս վկայ եմ»[1]։

Սևագրում Զարգարի պորտրեն գծված էր թույլ։ Նշված էր միայն, որ աչքը կույր է և ֆիզիկապես՝ անզոր։ Մաքրագրում Աբովյանի ավելացրած մի քանի բառերը՝ «քամակն էկել՝ փորին դեմ առել, ատամները ցից ցից մնացել, աչքերը կուլ գնացել» (22) կենդանի ձևով կանգնեցնում են ընթերցողի առաջ ագահ վաշխառուի արգահատելի կերպարանքը։

Թագուհի. Իսկական առումով գեղարվեստական կերպար է, որի համար նախատիպ են ծառայել՝ ֆիզիկական բարեմասնությունների տեսակետից՝ Աղասու քույրը, իսկ անունով՝ Աբովյանի մայրը։ Թագուհին տիպական ընդհանրացումն է այն հայ աղջիկների, որոնց պարսիկ ու թյուրք տիրողները հափշտակում էին հայրենական հարկից և զոհ դարձնում իրենց կրքերին։ Նախագրում Թագուհին որպես այդպիսին հանդես չի բերվել։ Այնտեղ խոսք կա սոսկ նրա նախատիպի մասին։ Վեպի հաջորդ, արձակ վարիանտներում կերպարի ըմբռնման տեսակետից կան բավականաչափ տարբերություններ։

Եթե սևագրում նրա մասին նախապես ասված էր. «Թագոյին, աշխարքի աչք Թագոյին։ Ի՞նչ լեզու պետք է ըլի, որ նրա գովասանությունը պատմի» (222), իսկ հետո էլ արտահայտությունը լրացված՝ «երկնքի տակին, գետնի էրեսին անթառամ ծաղիկ Թագոյին, իմ դրախտ, մանիշակ Թագոյին» բառերով, մաքրագրում հերոսուհու հոգեկան ու ֆիզիկական բարեմասնությունների մասին գաղափար տալու համար Աբովյանը դիմել է լիրիկական զեղումների և մանրանկար հավելումների միջոցով քանդակել նրա ամբողջական կերպարը։ «Թագուհի՛ն, Թագուհի՛ն. աշխարքի աչք Թագուհին, երկնքի

[1] Կալվածագրեր, կազմեց՝ Հար. Աբրահամյան, Երևան, 1941, էջ 101։

տակին, գետնի երեսին անթառամ ծաղիկ Թագուհին, դրախտ, մանիշակ, անգին, անհատ, աննման, Թագուհին՝ ի՞նչ լեզու պետք է ըլի, որ նրա գովասանությունը պատմի, ի՞նչ աչք, որ նրա տեսքն ու կերպարանքը մեկ բանի նմանեցնի» (40)։ Հերոսուհուն ներկայացնելու այս ձևը հատուկ է ժողովրդական երգասացներին, որոնք շեշտը դնելով անհնարինության վրա, ջանում են այդ ճանապարհով գծել գեղեցկության ու թովչանքի այն մեծ ուժը, որը հատուկ է պատկերվող գեղեցկուհուն և որի բարեմասնությունների մի չնչին մասը միայն իրենք ի վիճակի են վերարտադրել։ Աբովյանը ավելացրել է լիրիկական նոր հատվածներ ևս. «Բլբուլը նրա հոտն առնելիս, իր վարդը մոռանում, նրան էր գովում, նրա վրեն էր իր սերը թափում, նրա հասրաթովն էրվում, խորովվում... Առավոտյան ցողը, երկնքից վերջի լիսը, մեկը նրան տեսնելիս՝ ցնծալով վեր էր գալիս, որ նրա սուրբ երեսին նստի, մեկը ցավելով երեսն իրան էր քաշում, աչքը խփում, որ նա շուտով քուն մտնի, գիշերն անց կենա, որ առավոտն էլի գա, նրա տեսության արժանանա, նրա լուսավոր հոգի առնի ու զվարճանա։ Քունը նրա աչքերին է՛նպես էր մոռանում, ինչպես մեկ սրբի՝ երկնային հրեշտակը։ Թևերն երեսին փռում, անմահական երազով նրան գրկում, գգվում, արթնացնում, էլ եդ իր գիրկը գնում» (41—42)։ Այստեղ դարձյալ հերոսուհու ողջ հոգեկան հարստությունը ներկայացվում է կողմնակի ձևով, նրա վրա սիրահարված բնության միջոցով։

Նազլու. Վեպի երկրորդական հերոսներից է։ Որպեսզի ընթերցողի հիշողության մեջ տպավորվի, Աբովյանը դիմել է ինքնատիպ հնարանքի՝ նամակի. դա օգնել է հեղինակին ո՛չ միայն կենդանի դարձնել հերոսին, այլև խուսափել կենցաղային նկարագրությունից և վեպի մեջ տեղ տալու ժամանակի կենսական հարցերն արծարծելու համար։ Նամակն իբրև հնարանք հատուկ է նաև ժողովրդական էպոսին ու հեքիաթներին, ուստի այս կետում Աբովյանի օրինակը վերջիններն

են եղել։ Նամակի առաջին օրինակը օգտագործված է ձեռագրում՝ Աղասու մոր նամակը որդուն, ուր վերարտադրված են մայրական անհագ սիրո ու կարոտի ապրումները։

Սևագրի վերամշակման ժամանակ Աբովյանն առանձին թղթի վրա շարադրել է նաև Նազլուի նամակը՝ Աղասուն, որն աննշան ուղղումներից հետո արտագրվել է մաքրագրի մեջ։

Նամակում կան կրակված արտահայտություններ, որոնց արտակարգ ուժի դիմաց ընկրկվում է ամեն մի սիրող սիրտ. այդտեղ Նազլուն առատորեն թափել է իր հոգու թաքնված ցանկերը. «Ա՛ղասի ջան, Աղասի. երար սիրտդ քար ա դառել, երար աչքդ ծաղիկ ու թուփ էլ չի՛ տեսնում, երար երեսդ մի երկնքին չե՞ս քցում, որ տեսնիս՝ թե ի՞նչ մրրած ամպեր են առաջիդ կանգնած, ի՞նչ կրակ է վերևիցը վեր թափում. չե՞ս իմանում միթե՝ ա՛նիրավ, ա՛նչիգյար՝ թե էս կըրակն ու էս բոցը, էս ծուխն ու էս ամպը՝ ի՛մ բերնիցն էն դուս գալիս, իմ սրտաս ա քուլա քուլա իրանից հանում, վերեն աստղերը խավարացնում, բռնում, ներքևը սար ու ձոր պապանձացնում, անձող շինում» (148)։

Ուրիշի բերանով համեստ, բյուրեղյա հոգով, ամոթխած Նազլուն իր պահանջներն է առաջադրում Աղասուն. որպես թե ինքն արդեն մեռել է, և Աղասուն թողել կտակ. «էլ էն բարձի վրա ուրիշ գլուխ չդնես, որի վրա որ քո հարազատ Նազլուդ հոգին ավեց, որ էդ գոգդ էլ ուրիշին դեմ չանես, որ Նազլվի ջանը հանեց, էդ լեզուդ էլ ուրիշի ջան չասի, որ Նազլվին կրակ դարավ, էրեց» (149) և այլն։ Թեպետ Նազլուն վեպի մեջ քիչ է երևում, մենք քիչ ենք տեսնում նրան, շատ քիչ լսում նրա ձայնը, սակայն այնքան ազդու է նամակը, որ ընթերցողի մտքից երբեք դուրս չի գալիս։ «Նա խոսում ու գործում է այնքան քիչ, բայց դուք կենդանի տեսնում եք նրան ձեր աչքի առաջ»[1]։

---

[1] В. Г. Белинский, Собрание сочинений в трех томах, т I, Москва, 1948, стр. 578.

գ) ՀԵՂԻՆԱԿԸ ՎԵՊՈՒՄ

Վեպի հիմնական հերոսների թվին ավելացել է նաև հեղինակը, իր ուրույն կյանքով ու հոգեբանությամբ։ Այնտեղ, ուր չեն գործում վեպի մյուս հերոսները և ուր անհրաժեշտ է վիպական այս կամ այն դեպքը կամ դիպվածը հաստատել, այս կամ այն կենսական հարցն արծարծել, հեղինակն է պատմում կատարվող իրողության մասին, իր գնահատականը տալիս, իր վերաբերմունքն արտահայտում, կամ էլ իրողությունը հաստատում ինքնակենսագրական անառարկելի փաստերով։

Նախադրում, ինքնակենսագրական բնույթի քիչ բան կա. մի տեղ Աբովյանը հիշում է ռուս-պարսկական պատերազմի սկզբին, գաղթի ժամանակ մեռած եղբորը. «Մանուկ քեզ թողի մեր նանի գրկին գնացի ես Թիֆլիզ՝ վա՜յ իմ արևին»[1], մի այլ տեղ՝ իր անունը. «Տուր խաչի կոչեալ՝ զի դրոշմեցին»[2], վերջապես մի տեղ էլ՝ իր իղձը, որ է տեսնել մեր ազգը բախտավոր»[3]։ Որոնք էլ առանց որոշակի նպատակադրման։

Վեպի ծրագրային նշումների մեջ Աբովյանը արձանագրել է. «Հայրապետու թվանք քցելս, հերետիկոս անվանելս»[4], սակայն հետագայում չի իրականացրել, և այլ աղբյուրներից էլ հայտնի չէ, թե ինչի մասին է ցանկացել գրել։

Սևագրում նույնպես քիչ են ինքնակենսագրական բնույթի հատվածները (ընդամենը երկուսը)։ Մի տեղ պատմելով Աղասու խմբից Հասան խանի զորքերի կրած ջարդի մասին (1821 թվի ամռանը) ասում է, թե այն ժամանակ ինքը եղել է Էջմիածնում և տեսել խանի խայտառակ փախուստը (170)։ Կամ, հիշատակելով Աղասու Թիֆլիս մտնելը և նրան ցույց

---

1 ԽԱ, ԵԼԺ, II, 114։

2 Նույն տեղում, էջ 143։

3 Նույն տեղում, էջ 115։

4 ԱԵՄ, № 150։

տված ընդհանրությանը, գրել է. «Դեռ վարժատան աշակերտ էի ու ինչպես էսօր կենդանի է մտքումս՝ Աղասին ի՞նչպես մտավ Թիֆլիզ» (176)։ Երկուսն էլ կատարված են վերի համապատասխան դրվագների հավաստիությունը հաստատելու նպատակով։

Հակառակ նախորդ վարիանտների, վերի մաքրագրում ինքնակենսագրական հատվածները բավականաչափ շատ են և սրտի են կարդում։ Ցանկանալով պատճառաբանել, թե ինչո՞ւ վիպում Երևանին ու նրա շրջակայքում կատարված դեպքերին մեծ տեղ է հատկացրել, Աբովյանը գրել է. «Ո՞վ կարողը չի՛ իմանա, թե ես Երևանու ծնունդ ըլելով, նրա հողի ու ջրի սերն ա էնքան սիրտըս քաշում, տանում. չէ՛ գիտե Աստված։ Երեխա եմ էլել՝ որ էն տեղանց դուս եմ էկել, ամա էս օր էլ, որ մտածում եմ՝ թե Զանգվի կարմնջի վրովը, յա բաղարի մեյդանովն անց կենալիս, ինչպես էր իմ լուսահոգի հերը ինձ սաստ, ձեռով անում, շանքի լեզվով խոսալն էլ ղազարի էր բերում, որ թեզ անց կենանք, մեզ թուրք չտեսնի, որ մտածում եմ, թե քանի քանի անգամ հենց մեր աչքումը յա մենք ենք գլխաշ յարալու արել, յա նրանք մեզ, ջանս վրես սրսռում ա, միտս վեր թափում» (58)։ Այստեղ Աբովյանը ներկայացնում է հայ ժողովրդի անապահով վիճակը օտար նվաճողների տիրապետության շրջանում և արժեքավոր տեղեկություններ հաղորդում իր մանկության տարիների մասին, որոնք լի են եղել ահով ու սարսափով և որոնց վերաբերյալ գրեթե ոչինչ չեն ասում վավերագրերը։

Ինքնակենսագրական բնույթի մի այլ հատվածում, որը բերված է իբրև ծանոթության վերի՝ «կարելի ա՞ թե մեկ մարդ չէրեվեր, մեկ մարդ չիմանար, թե ես էլ էս տեղ պետք է գոհ ըլեի» (111) արտահայտությանը (Խոջաբաքիխանցի կռվարանի նկարագրության մեջ), կարդում ենք. «էս ժամանակին վարժատանիցը դուս էկա ու Թիֆլիզուցը գնացի Հաղպատ Եփրեմ կաթողիկոսի մոտ, որ թուղթ առնեմ, գնամ, իմ

ծնողացը հանիմ, նրանց հետ քոչիմ ու գնամ Վեննետիկ։ Ամեն բանս հազիր էր. Օսմանլվիցն էլ մեկ տերտեր էր էկել իր որդովը, ուզում էր եդ դառնար։ Նրանց հետ էի ուզում համփու ընկնիմ, բայց դերձիկը դեռ շորս չէ՛ր հասցրել։ Որքան նեղացա, որ նրանք գնացին, ես մնացի։ Էրկու օրից հետո հենց մտա Ղարաքիլիսեն, Ալղարաքիլիսու եսրներն էկան։ Ողորմելի տերտերն իր որդովն էնտեղ էր սպանվել» (111)։ Այս հատվածն առանձին կարևորություն ունի Արովյանի կենսագրության համար, քանի որ այստեղ հիշատակված որոշ փաստերի մասին այլ աղբյուրները ոչինչ չեն ասում։

Մաքրագրում, մի երրորդ հատվածում, Արովյանը պատմում է պատերազմի ժամանակ իր կրած այլ զրկանքների մասին։ Անձնական ու հասարակական վշտերը նրա մոտ միահյուսված են եղել, և այնքան խորն է վերապրել դրանք, որ վերը գրելու պահերին չի կարողացել զսպել իր հուզմունքն ու ցավը. «Ա՜խ՝ ո՞ր մեկն ասեմ. սիրտս արին ա դառնում, ձեռներս դող ընկնում, աչքերս սևանում։ Երանի՛ նրան՝ որ էսպես բան ո՛չ տեսել, լսել ա, ո՛չ էլ կտեսնի, կլսի. բայց մեր ողորմելի ազգը՝ հազար անգամ ա տեսել, լսել, քաշել։ Քար չկա մեր երկրումը, քոլ չկա, որ Հայի արնով ներկված չլինի։ Դու էլ նրանց հետ գնացիր, սի՛րելի եղբայր իմ Մոսի, իմ զառնուկ աղպեր։ Ա՜խ՝ հենց մանուկ երեսիդ էի կարոտ, էն էլ չտեսա։ Մորս ծոցին, իրեք տարեկան՝ սովը քեզ տարավ՝ էգ լիս երեսիդ ղուրբան։ Գերեզմանդ ի՞նչ տեղ ա, չգիտեմ. բայց երկընքումն էլա երար մի քեզ կտեսնի՞մ, մեկ ճտովդ կընկնիմ, ա՜յ քու անմեղ ջանին մեռնիմ» (88)։ Սա միայն սիրող եղբոր ողբ կամ հառաչանքի կանչ չէ։ Սա ազնիվն ու մարդկայինը սիրող, իր ժողովրդի կրած անմարդկային տառապանքները ու անասելի տանջանքները խորապես վերապրած, պարսից կոպիտ ու խավար բռնության դեմ ըմբոստացած հայ ժողովրդի իսկական զավակի խոսքն է, ասված՝ վշտով, տանջանքով ու ցասումով։

Մաքրագրի մի շարք նոր հատվածներ ցուցադրում են նաև հեղինակի հոգեվիճակը, վեպի վերջին էջերը գրելու պահերին։ Պատմականությունը պարտադրել է խոսել նաև սիրած հերոսի վախճանի մասին, սակայն նա չի կարողացել զսպել հորդացած զգացմունքները. «Ա՜խ՝ էլ ի՞նչ գրեմ, ձեռս թուլանում ա, սիրտս արին կաթում... Ա՜խ՝ բաս Աղասու սուրն ո՞վ անի, նրա ջիվան ումրին ու օրը ո՞վ լաց ըլի։ Ես, ողորմելիս՝ նրա գերեզմանին ղուրբան՝ ա՜խ՝ բաս նա՝ որ ինձ էնքան երեխա ժամանակս իր ծնկան վրա խաղացրել ու ինձանով մխիթարվել ա, բաս ես քա՞ր պտի ըլիմ, որ նրա սուգը չանեմ» (183—84)։ Այստեղից պարզվում է ոչ միայն այն, որ մանուկ Աբովյանը մեծացել է Աղասու գրկում, այլև այն, որ հեղինակը լինելով զգացմունքներով հարուստ բնավորություն, օրեր շարունակ չի կարողացել գրասեղանին մոտենալ և ավարտել Աղասու մահվան ու թաղման արդեն սկսված նկարագրությունը. «Սի՛րտ՝ տրաքի, սի՛րտ՝ էլ չեմ կարում տանիլ, ո՛վ ջիգյար ունի, ինքն իմնա. մնացածը էքուց կգրեմ» (185)։

Մի քանի այլ հատվածներից իմանում ենք, որ հեղինակը ուներ մասնավոր աշակերտներ, հաճույքով պարապում է նրանց հետ և հոգեպես տանջվում, որ զուրկ է նյութական միջոցներից և չի կարողանում ձրի դասավանդել (60—65)։ Պարզվում է վերջապես, որ հեղինակը պատրաստ է ամեն զոհողություն կատարել հանուն իր ժողովրդի ազատ ու բարվոք կյանքի, որ նրա կյանքի իմաստն է հայրենիքի ու աշխատավոր ժողովրդի համար ապրելն ու մեռնելը։ «Հայո՛ց ազգ, Հայո՛ց ազգ, ձեր ջանին մեռնիմ. Հայոց ազգ՝ քո հողին մատաղ՝ Հայոց աշխար՝ էն ո՞ր կաթը դուք ծծեցիք, էն ո՞ր մեջքը ձեզ բերեց, էն ո՞ր ձեռը ձեզ գրկեց, էն ո՞ր բերանը ձեզ օրհնեց, որ դուք է՛ս հոգին ունենաք, է՛ս սիրտը ձեր միջումն ըլի, է՛ս հրաշքը դուք աշխարքին ցույց տաք։ Էն ի՞նչ աչք պետք է ըլի, որ քոռանա, ձեզ չտեսնի, ձեր դարդը չիմանա, էն ի՞նչ բերան պետք է ըլի, որ կապվի, ձեր փառքը չգովի,

ձեր անունը չպաշտի. էն ի՞նչ քարացած սիրտ պետք է ըլի, որ ձեզ չսիրի, ձեզ իր հոգին մատաղ չտա (55)։ Նա պատգամում է հայ ժողովրդին՝ լինել հավատարիմ Ռուսաստանին, միավորվել նրա հետ, հիշել նախնիների հերոսական գործերը, հետևել նրանց և վերականգնել հայրենիքը. «Օրհնեցե՛ք Ռուսի ազը,— ասում է նա,— ջան ջանի տվե՛ք, իրար սիրեցեք... Դո՛ւք, դո՛ւք իրար պահեցե՛ք, ինչպես ձեր նախնիքը, դուք իրար թասիր քաշեցե՛ք, ձեր նախնիքը միտք բերե՛ք, ձեր հողն ու ազգը պաշտեցե՛ք... ձեր ջանին ղուրբան՝ չթողաք, որ էս մուրազը հետս գերեզմանս տանեմ ու հողումն մարմինս քըրքըրվի, երկնքումը հոգիս տանջվի, երբ իմանամ՝ թե ձեր սերը պակասել ա, ձեր բարեկամությունը ցամաքել» (55)։ Այս հատվածները վեպի մեջ բերում են նաև զգալի լիրիկական տարր։ Վերջապես, հեղինակն է արծարծում իր խորհրդածությունների մեջ անցյալ դարի 40-ական թվականներին, հայ ժողովրդի առաջ ծառացած կարևորագույն խնդիրները։ Կան ուրիշ ինքնակենսագրական ու լիրիկական հատվածներ ևս, սակայն բերածները լի ու լի բավական են վեպի մեջ նրանց բնույթն ու դերը պարզելու համար։

Բնորո՞շ են արդյոք պատմավեպի համար՝ հեղինակը իբրև հերոս և ինքնակենսագրական բնույթի շեղումներն ու դատողությունները։ Չնայած որոշ գրողներ երբեմն իրենց անձն են դարձրել վիպական գրական հերոս (որովհետև այդպիսին ժամանակի իրականության մեջ չեն գտել) և այդ ճանապարհով արծարծել մի շարք կենսական հարցեր, կամ էլ բախման մեջ մտել հակառակ բանակի մարդկանց ու կարծիքների հետ, սակայն նրանք վեպի մեջ կրել են այլ անուններ (Կոմս Էմմանուելը «Մեռելահարցուկում»), «Վերք Հայաստանի» մասին նույն բանը չի կարելի ասել։ Այստեղ Աբովյանը հանդես է գալիս իր իսկական հայացքներով, իր ուղղակի խոսքով։ Կան գործեր էլ, որոնցում գրողը լիրիկական շեղումների ձևով վերհիշում է ինքնակենսագրական դեպքեր (Պուշկինի «Եվգե-

նի Օնեգինի» 8-րդ գլուխը), սակայն դրանք իբրև լիրիկական շեղում էլ մնում են։ Աբովյանի վեպը սակայն այդպիսին չէ։ Նրա լիրիկական շեղումները այլ գունավորում ունեն և զուգակցվում են վիպական գործողություններին ու կերպարներին․ երկի սկզբից մինչև վերջ, հեղինակին տեսնում ենք մանկությունից սկսած։

Ի՞նչ նպատակով են մաքրագրի մեջ ավելացվել ինքնակենսագրական բնույթի հատվածներն ու լիրիկական շեղումները։

Վեպի մեջ հեղինակի արծարծած մի շարք հարցերն ու նրանցից հանված եզրակացությունները, եթե վերագրվեին առանձին հերոսների, ապա պատմականության տեսակետից Աբովյանը պիտի մեղանչեր. մինչդեռ վեպում պատկերվում է 19-րդ դարի առաջին քառորդի Հայաստանի կյանքը, հերոսները պիտի խոսեին 30—40-ական թվերի հարցերի մասին։ Հեղինակը կարող էր այդ մասին խոսել, իսկ մյուս կերպարները՝ ոչ։ Ուրեմն, այդ հավելումները կատարվել են մոդեռնիզացիայից խուսափելու նպատակով։

Իր պատմավեպը գրելիս Աբովյանը նախօրինակ չուներ հայ գրականության մեջ, իսկ եվրոպական վեպին էլ չցանկացավ հետևել։ Նրա նյութը մոտակա անցյալի դեպքերն էին, որոնք դեռ առանձին գրքերի նյութ չէին դարձել։ Հիմնականում նա զրկված էր նաև փաստաթղթերից։ Ժամանակակից դեպքերի մասին ամենահավաստի աղբյուրը այնուհանդերձ մնում էին իր հիշողությունները, իր տեսածն ու լսածը։ Ուստի այնտեղ, ուր ընթերցողը կարող էր կասկածել, հեղինակը հավաստում է իր կենսագրության այս կամ այն դրվագով։ Համանման հնարանքի դիմել են նաև հայ պատմիչները՝ Խորենացին, Եղիշեն՝ իրենց օրերի դեպքերին կամ միայն իրենց հայտնի փաստերին անդրադառնալիս։ Ուրեմն ինքնակենսագրական բնույթի հավելումները կատարված են վեպի մեջ պատմական ճշտությունն ու ժամանակագրությունը պահպա-

նելու և հայ պատմիչների փորձը օգտագործելու պատճառով նա։

Աբովյանը գրում էր այնպիսի դեպքերի մասին, որոնց ինքը եղել էր ականատես ու մասնակից, որոնք իր սրտում էլ թողել էին վերք։ Լինելով զգացմունքներով հարուստ անձնավորություն, նա չէր կարող սառը հայացքով նայել այդ ամենին ու չորությամբ արձանագրել։ Դեպքերն ինքնաբերաբար նրան հարկադրում էին մասնակցել վիպական գործողություններին, տխրել և ուրախանալ իր հերոսների հետ, հառաչել նրանց մեծ վիշտը, ընկերանալ նրանց հրճվանքին ու ցնծությանը։ Այս ևս առիթ է դարձել ինքնակենսագրական դրվագների ու լիրիկական նոր հատվածների միջարկմանը։

գ) ՎԵՊԻ ՀԱՌԱՋԱԲԱՆՈՒՄ ՀԻՇՎԱԾ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (Ա. ՍՄԲԱՏՅԱՆ ԵՎ Գ. ԹԱՐԽԱՆՅԱՆ)

Աղաթոն Սմբատյանը, «Վերք Հայաստանիի» առաջին խրախուսողներից ու գնահատողներից մեկը, եղել է Աբովյանի մանկության ընկերը դեռևս Ներսիսյան դպրոցից (իսկական անունը Աղաբեկ)[1]։ Հեղինակի արխիվի նյութերից պարզվել է, որ 1829 թվից Աղաթոնը սովորել է Մոսկվայում, ապա ցանկություն է ունեցել անցնել Դորպատի համալսարանը և ուսանել բժշկություն։ Հենվելով հառաջաբանի վրա, կարելի է ենթադրել, որ ուսումն ավարտելուց հետո նա վերադարձել

[1] Որ՝ Աղաթոնը և Աղաբեկը միևնույն անձնավորությունն են, նշել է նաև Ա. Մնացականյանը (Տեղեկագիր, 1949, N7)։

Մեր այս ուսումնասիրությունը հրապարակային պաշտպանության դրվելուց հետո (1953 թ. հոկտեմբեր), ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Տեղեկագրի 1953 թվի դեկտեմբերի համարում լույս տեսավ Վ. Պարտիզունու «Անեղծված վերածված մի հարցի մասին» հոդվածը, ուր հեղինակը խոսում է Աղաթոն Սմբատյանի մասին՝ հենվելով աղբյուրների վրա, որոնք մինչև այդ օգտագործել էինք մենք ևս։

է Թիֆլիս և զբաղվել բժշկությամբ։ 1844 թվին Թիֆլիսում գործող բժիշկների շարքում հիշվում է բժիշկ Սումբատովն ազգանունով մի անձնավորություն, որ մեր կարծիքով Աղաֆոնն է։ Այնուհետև մոտ 20 տարի նրա մասին ոչինչ չի հիշվում։ 1863 թվին նրան տեսնում ենք Շուշիի թեմական դպրոցում, որպես ֆրանսերենի և ռուսաց լեզվի դասատու։ Այդ ժամանակ նույն դպրոցում էր աշխատում նաև Պերճ Պռոշյանը։ 1865 թվի հունվարից էջմիածնի Սինոդի հրամանով նա արձակվում է աշխատանքից։

Գրիգոր Թարխանյանը, որ հառաջաբանում գովվում է իր բնատուր խելքի ու սրամտության համար, անցյալ դարի 40-ական թվերին եղել է Գյոքչայի գավառամասի պետ։ 1841 թվին, երբ կառավարական հրաման է լինում Թիֆլիսի և Ելիզավետպոլի նահանգներում աղալարներից գյուղերը վերցնելու մասին, Թարխանյանը Սևանա լճի շրջակա Զոդ, Մեծ Մազրա և Զախիրլու գյուղերի աղալարներից ստորագրություն է առնում, որպեսզի նրանք այնուհետև գյուղացիներին չստիպեն՝ կատարելու իրենց նկատմամբ ունեցած պարտավորությունները և վճարելու հարկերը։ Աղալարները դրա դեմ բողոք են բարձրացնում։ Գործը բարդանում է։ Անդրկովկասյան երկրի քաղաքացիական վարչության պետ Գուրկոն կարգադրում է գյուղերը վերադարձնել աղալարներին։ Թարխանյանը բողոքում է Երևանի գավառապետին և առաջարկում՝ ազատել գյուղացիներին աղալարների ենթակայությունից։ Վավերագրերը պատմում են, որ Գյոքչայի գյուղացիները հրաժարվում են աղալարների նկատմամբ ունեցած պարտավորություններից։ Վերջապես Վորոնցովի կառավարչության ժամանակ ճորտական ռեժիմը ընկճում է նրանց։ 1847 թվին Թարխանյանը ազատվում է պաշտոնից։ Գյուղացիներն հետագայում մի քանի անգամ խնդրագրեր են ներկայացնում՝ աղալարների պարտավորություններից ազատվելու համար, սակայն մերժում են ստանում։ Այս ամենը Արովյանին ան-

շուշտ հայտնի էին։ Եվ եթե վերջի հառաջաբանում գովասանքով է խոսում Գ. Թարխանյանի մասին, ապա դրա աուիթներից մեկն էլ, անշուշտ, եղել է ճորտատերերի պարտավորություններից գյուղացիներին ազատելու գործին նրա ցույց տված եռանդուն մասնակցությունն ու միջամտությունը[1]։

---

[1] Ա. Սմբատյանի մասին տվյալները քաղել ենք՝ ԱեԱ № 352։ Դիվան, հ. II, էջեր 76, 84, 101, 123—124 և 129։ Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1915, էջեր 289 և 337։ ՎՍՍՌ, ԿԳԳԱ, ֆ. 2, ց. 2, գործ № 2422 և այլն։ Գ. Թարխանյանի մասին տվյալները քաղել ենք՝ «Крестьянское движение в Армении в XIX веке» (ժողովածու), էջեր 39—46։ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ № 129, վավերագիր № 213 և այլն։

ՎԵՊԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ

ա) ԺԱՆՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԸ

«Վերք Հայաստանին» ժողովրդական էպոսի ոճով ու հնարներով կերտված պատմավեպ է։

Աբովյանի համար հեշտ չի եղել վաղուց ծրագրած երկի ժանրը գտնելը։ 1820-ական թվերի վերջին, ինչպես արդեն իր տեղում ասացինք, միտք դնելով գրել «Աղասի» անունով գործ, նվիրված պարսիկների տիրապետության շրջանում հայ ժողովրդի տանջանքներին ու տենչանքներին, նա դեռևս իր համար չէր պարզել ծրագրած երկի ժանրը։ Դորպատյան տարիներին, հնօրյա մարդկանց և իրադարձությունները նա փորձեց վերարտադրել իր մանկապատանեկան հիշատակարանի էջերում, որն, իհարկե, ցանկալի արդյունք չտվեց։ Հետագայում նա փորձեց Աղասու սխրագործությունները պատկերել ժողովրդական չափածո ավանդությունների ոճով, իսկ փոքր ուշ՝ նաև աշուղական արվեստի գույնով ու երանգով։ Այնուամենայնիվ դարձյալ ցանկալի ձևը չէր գտնված։ Թղթերից մեկում անդրադառնալով «Աղասու պատմության», կամ «Վերք Հայաստանի» պատմավեպի ժանրն ընտրելու ուղղությամբ իր երկարամյա մտահոգություններին, Աբովյանն ասում է, որ ինքը գիտակցորեն չի դիմել եվրոպական վեպին։ «Սակայն ի՞նչ ձևով պիտի ես այն վերարտադրեի։ Որպես եվրոպական ճաշակի ու ոճի վե՞պ. դա հո վերին աստիճանի անմտություն կլիներ»[1]։ Եվրոպական վեպ ասելով

[1] ԱԵԱ № 65։

նա նկատի ուներ ժամանակին լայն տարածում ստացած ռոմանտիկ, շինծու վեպերը և արևելքի թեմաներով արևմտաեվրոպական գրողների հորինած էկզոտիկ երկերը, ինչպես օրինակ՝ Պաուլես Քամերոնի «Գուլսի թռիչքը» (վերջինի սյուժեն նման է Թագուհու առևանգման պատմությանը) ու նմանները, որոնց մեջ բացակայում էին ժողովրդի կյանքի ու մտածողության ռեալիստական նկարագիրը և պատմական ճշմարտացիությունը։ Ժամանակ անց, Աբովյանը գտնում է իրեն մտահոգող հարցի պատասխանը։ Այս առթիվ Բոդենշտեդին նա գրել է. «Աղասուն ես անպայման ցանկանում էի մշակել իբրև ժողովրդական վեպ, որպեսզի դրանով օտարներին էլ ծանոթացնեի ժամանակակից հայ ազգության հետ»[1]։ Իսկ այս նշանակում է, որ վերջնականապես նա կանգ է առնում ժողովրդական վեպի կամ էպոսի վրա, իբրև օրինակելի ժանրի, որով հնարավոր էր պատկերել և հայրենասեր հերոսի սխրագործությունները, և՛ օտար լծի տակ՝ հայ ժողովրդի կրած ահավոր տառապանքները, և՛ Հայաստանի ազատագրման համար պայքարող մարդկանց ձգտումներն ու գործերը, և՛ ժողովրդի կենցաղն ու մտածողությունը։ Այնպես որ, եթե օտարներն էլ իրենց ձեռքն առնեին գիրքը, կարողանային տեսնել, թե ինչ կյանք և անցյալ, ինչ միտք ու հոգի է ունեցել հայ ժողովուրդը։

Որքան էլ իր ոգով էպոսը ռեալիստական ստեղծագործություն է, այնուամենայնիվ իրականության արտացոլման նրա մեթոդը տարորոշված չէ։ Այնտեղ կարելի է հանդիպել՝ դիցաբանական պատկերացումներով պարուրված ռոմանտիկ տեսարանների, նատուրալիզմի հասնող նկարագրությունների, մարդկային երևակայության ստեղծած անհավատալի հրաշագործությունների, հոգեբանական նրբին վերլուծումների, շշմեցուցիչ պատկերների ու համեմատությունների և

---

[1] ԱԺԱ № 65։

այլն։ Կարճ ասած, էպոսի մեջ կարելի է գտնել և՛ ռեալիզմ, և ռոմանտիզմի ու նատուրալիզմի տարրեր։

Իր պատմվածքի հիմքում դնելով էպոսի ժանրային առանձնահատկությունները, Աբովյանը արձագանքել է նաև իրականության արտացոլման նրա ոճին ու եղանակներին։ «Վերք Հայաստանիի» մեջ օրինակ, ժողովրդի կյանքն ու կենցաղը, նրա պատմական տրամադրությունները, վերարտադրված են ճշմարտացի ու հարազատ, ռեալիստական մեթոդով, բայց արտահայտչական հնարների մեջ աչքի են զարնում մերթ փաստագրության հատնող մանրուքները, իսկ ամենից ավելի, ռոմանտիկ պատկերները։ Եվ դա բնական էր։ «Վերք Հայաստանին» արտացոլում էր հայ ժողովրդի հազարամյա տենչերի իրականացումը՝ նրա փրկությունը պարսկական լծից, այդ փրկության առաջ բերած համաժողովրդական ոգևորությունը, նոր ու արտակարգ մարդկանց լեգենդար սխրագործությունները, հայ ազատագրական շարժումների պաթոսը, իսկ այդ բոլորն ինչո՞վ կարելի էր տալ, քան շիկացած խոսքով ու հրեղեն լեզվով, քան ռոմանտիկ գույներով։

«Վերք Հայաստանիի» վարիանտները վերամշակելիս, պահպանելով ռոմանտիկ շունչը, Աբովյանը այնուամենայնիվ հսկայական եռանդ է թափել նաև իրականության արտացոլման խորթ եղանակներից վեպն ազատագրելու և նրա մեջ ռեալիստական մեթոդը հիմնավորելու ուղղությամբ։ Վեպի վերջին վարիանտի համեմատությունը նախորդների հետ ցույց է տալիս, որ նախագրի զգայացունց պատկերները և սևագրի նատուրալիստական նկարագրությունները այստեղ փոխարինված են ռեալիստական պատկերներով, որոնց հատուկ է քննադատական ոգին, տիպականացման ուժը և պատմական ճշմարտացիությունը։

«Բանաստեղծությունը, ինչպես և վեպը, իմ կարծիքով, պետք է համապատասխանի ժողովրդի գաղափարներին ու

զգացմունքներին և կառուցված լինի այնպես, որ պահպանի նաև ներդաշնակությունը, կենդանությունը, տիպերը և հետաքրքրությունը» — գրել է Արովյանը[1]։ Ունենալով ճիշտ հայացք գեղարվեստական երկի մեջ, բովանդակության ճշմարտացիության և ձևի կատարելության մասին, իր պատմավեպը մշակելիս նա աշխատել է, որպեսզի ամեն էջից մեզ նայի հայ ժողովուրդը՝ իր հույզերով ու մտորումներով, իր կյանքով ու կենցաղով, հասարակական-քաղաքական ձգտումներով ու պատմական տրամադրություններով, լավի ու կատարյալի մասին ունեցած իր հայացքներով։ Իմանալով, որ գրողի պարտականությունն է «ասել այն, ինչ որ կա, բայց ոչ հնարել»[2], Արովյանն աշխատել է ռեալիստական արվեստի սկզբունքներից ելնելով վերամշակել ու խմբագրել վեպը։ «Վերք Հայաստանիի» ստեղծագործման հանգամանքներին անդրադառնալիս, Արովյանն ի միջի այլոց գրում է. «Իմ վեպից ես դուրս ձգեցի ողջ մտացածինը, արհեստականը և անբնականը»[3]։ Ինչպես արդեն պարզվել է նախորդ գլուխներից, վեպը վերամշակելիս նա դուրս է նետել նատուրալիզմի ու սենտիմենտալիզմի արտահայտությունները, փոխել կամ կրճատել է այն նկարագրությունները, որոնք հարազատ չեն եղել ժողովրդի կյանքին ու կենցաղին և, ընդհակառակը, ավելացրել է բազմաթիվ նոր պատկերներ, որոնցում տեսնում ենք հայ գյուղացու կենցաղի մի շարք մանրամասներ, որ բացակայում էին նախորդ վարիանտներում։

Վերցնենք գյուղական քեֆի նկարագրության մեջ ավելացրած հատվածները՝ վեպի առաջին գլխից։ «Առաջ ձեռները լվանում, սրբում (էն էլ նստած տեղն ա նոքարը՝ փեշկիրն ուսին, ավթաֆա լագանը ձեռին՝ ամեն մեկի առաջին կռանում, յա շոքում, ձեռին ջուր ածում), հետ են սուփրեն

---

[1] ԱԵԱ № 65։
[2] ԱԵԱ № 38։
[3] ԱԵԱ № 65։

քաշում, աղամանը, պանրամանը, ձկնամանը մեջ տեղը շարում, ապա հացը քաշում, ամենի առաջին կիտում, բաղի վախտ կանաչի էլ ա ըլում։ Գիթալ շանգալ, դանակի ոտը դնո մեր աշխարքը չի մտել։ Մատներն էլած տեղը՝ ի՞նչ հարկավոր ա շանգալ, դանակ։ Կերակրներն էլ մեկ սինով (պոթնոս) ներս են բերում ու մեկ նոքար փեշն ու թևերը վեր քաշած. ուսին քցած՝ կուզեկուզ անելով՝ երկուսի առաջին մեկ աման ա դնում» (33—34)։ Ապա քահանան օրհնում է սեղանը։ Աբովյանը ավելացնում է նաև այդ բանաձևային օրհնանքը «Աստված աշխարքիս խաղաղություն, թագավորաց հաշտություն, քրիստոնեից ազատություն տա՛...» (32) և այլն։ Դրանցից հետո քահանան իր խոսքն ուղղում է հասարակության մեջ ամենից ավելի գիրք ու կշիռ ունեցող մարդուն, որը գյուղական պայմաններում լինում է տանուտեր, և սկսում գովաբանել նրան. «Մեր գլխի թագն ես, մեր աչքի ծաղիկը, հայր Աբրահամի օրհնությունը քեզ վրա, Սիմեոն ծերունի պես քո ըմրի խերը տեսնիս։ Քեզ ծուռը մտիկ անողի աչքը քոռանա...» (33) և այլն։ Վերջապես նա ասում է իր եզրափակիչ խոսքերը և բաժակը դատարկում։ Խմողին մատուցում են «մաղա»։ Գաղափար է տրվում նաև «մաղա» ընդունելու ձևի մասին։ «Տերտերն էլ առաջ ձեռը՝ ավոզի բթի վրա դրեց, թիքեն առավ, բերնին, ճակատին դրեց,«հա՜յ ձեռդ ապրի, հա՜յ զորանա» ասելով, ձգվելով, օրհնելով, գովելով թիքեն ծամեց, կուլ տվեց» (33) և այլն։ Այստեղ այնքան վառ է ցուցադրված հայ գյուղացու կենցաղի այս բնապատկերը, որ ընթերցողը կենդանի ձևով ընկալում է այն։

Մի ուրիշ հատված ծանոթացնում է պտուղների բուժիչ հատկության վերաբերյալ հայ գյուղացու մտածողությանն ու հայացքներին։ Այս մասին Աբովյանը խոսել էր նախագրում ևս, բայց անորոշ ձևով, իսկ հաջորդ վարիանտում՝ աչքաթող արել։ Մաքրագրում ավելացրած նոր պարբերության մեջ ասված է. Գյուղացին ահագին քանակությամբ միրգ է

գեղապետի համար պահում, որ սարի աղքատ խալխը՝ Թուրք, Հայ՝ շունքի բաղ շունին, մեկ հիվանդ պատահելիս՝ գան տանին ու իրանց Թամարզու նաշարի աչքը դուանը չմնա, շունքի մեր աշխարքումը ինչ հիվանդ էլ՝ որ ըլի, նրա առաջին ու՝ վերջին գեղը՝ պռուղն ա։ Պռուղը որ չըլի, ո՛չինչ բան նրան չի՛ փըրկիլ, ու լեզուն բերնումը կչորանա, յա հասրաթ կմեռնի» (21)։

Աբովյանը ուշադրություն է դարձրել նաև գյուղական առօրյայի ճշտիվ պատկերման վրա, որ նախորդ վարիանտներում շատ անգույն էր։ Վերցնենք սևագրից հետևյալ հատվածը. «Աղոթարանը բաց էլավ թե չէ՝ Քանաքռցիք քնից վեր կացան, որ իրանց բանը տեսնին։ Մեծ մարդիկը ու պառավ կնանիքը երեսները լվացին ու գնացին ժամ։ Ջահել տղերքը գնացին՝ որ իրենց տավարին խոտ տան ու ջուրը տանին։ Պստիկ հարսները՝ թիթըները կալած՝ քողը գլխներին քցած՝ որը տունն էր ավելում՝ որը դուռն էր սրբում, որն էլ կրակ էր անում՝ որ թոնդիրը վառի ու տան թաթարեքը տեսնի։ Ջահել աղջկերքն էլ՝ կուժերը դրին ուսին՝ որ գնան ջուր բերեն։ Իսկ մանր երեխեքն էլ՝ թոնդրի չորս կողմովը բոլորած գեռ անլվա՝ ոտները քարին էին ծեծում՝ որ հաց տան, ուտեն» (203)[1]։ Ճիշտ է, այստեղ նկարագրված է գյուղական ընտանիքի եռուզեռը առավոտյան պահին, բայց առանց գույնի ու երանգի, մինչդեռ իսկական գեղագետի պարտականությունը ոչ թե փաստերն արձանագրելն է, այլ դրանք պատկերավոր ձևով ներկայացնելը։ Ջգտելով գեղարվեստորեն կատարելագործել իր վեպը, Աբովյանը չէր կարող բավարարվել վերևվում ասածով։ Սևագրի համապատասխան էջի տողամիջերքին և լուսանցքներում նա ավելացրել է բառեր ու նախադասություններ, իսկ մաքրագրում՝ ամբողջ հատվածներ։ Ահա վերամշակումից հետո վերևի նկարագրությունը (բերում ենք կրճատումներով). «Մեծ մարդիկը միւրընեւր սանդրե-

[1] ԱեԱ № 2, թերթ 1ա։

լով, *պառավ կնանիքը* չարսավը կռնատակների տակին՝ կա-մաց կամաց տանիցը դուս էլան... ֆիր ֆրի տված *գնացին ժամ*... իրար մոտ չորը փռեցին, չոքեցին, գլուխ գլխի դրին ու սկսեցին զրից անիլ, իրանց գեղի ու տների բանը պատ-միլ, իրար հալ հարցնիլ... *չահել*՝ տան *տղերքն* էլ՝ ամառվա պես խոտ հնձելու, կալ կալսելու, բաղ փորելու, էտելու, քա-ղելու, դարման կրելու դարդ չունենալով՝ նլմկոտալով, աչք-ները նմռեցին ու քնհարամ *մտան գոմը, որ տավարին, ձիա-նացը խոտ տան, տակըները սրփեն, ջուրը տանեն, ձիանը թիմարեն ու* հետը խաղ անելով՝ էլ ետ կապեն ու գնան տուն: *Հարսնոր Հարսները*՝ աղարույր գյուղաքարնի օչմաղը մինչև ֆըրըների կեսը խոր ֆցած, ֆող ու յաշմաղի ծերը աչքերի տա-կը խոր ֆաշած՝ որ էլ երեսները չէր երեում, մեկ դարայի կամ ղաղաֆ մինթանա հաֆըներին, մով կամ կռավի չալպով զարդարած՝ մեկ մեծ գոտկով մեջքըները չորս տակ, հինգ տակ կապած՝ դշի պես կուփ կուփ վեր բռան՝ երեսներին մի ֆիչ ջուր ֆսեցին՝ փեշով սրբեցին ու որն *սկսեց տունն ավլել, որը դուռը սրբել, որն էլ չախմախին տվեց, կրակ արեց, որ թոն-դիրը վառէ ու տան թաղարները տեսնի»* ... *Այստեղ նկարագրված են տան չահել աղջիկները, որոնք զարդարված, կուժն առած, գնում են ջրի* «ու երկար ժամանակ ջրի վրա իրա հետ զրից տալուցը եդը՝ էլ եդ իրար հետ խոսալով, ծիծաղելով մեկն իրանց տունը գնաց, մյուսն իրենց» (9)[1]:

Այստեղ արդեն բնական և կենդանի գույներով է պատ-կերված՝ ծերերի երթը եկեղեցի, երգող, ուրախ տղաների աշխատանքը, որոնց Համար ձմեռվա չնչին գործը ամառվա ծանր աշխատանքի Համեմատ խաղ ու պար էր, Հարսների սրանչելի արդ ու զարդը, աղջիկների Հոգեբանությունը, ո-րոնք գնում են շտապով ջուր բերելու, սակայն երկար ժա-մանակ ջրի գլխին կանգնած զրույց են անում: Սա արդեն

---

[1] *Ընդգծված բառերն ու արտահայտությունները բնագրում չկան:*

կյանքի ճշմարիտ վերարտադրում է, ռեալիստական նկարագիր։

Մաքրագրում Աբովյանը աշխատել է նաև գաղափար տալ հայ ժողովրդի կենդանի խոսքի, նրա երգիծանքի ու հումորի մասին։ Հակառակ սևագրի, ուր ժողովրդի երգիծանքին ու հումորին քիչ տեղ էր տված, այն էլ խառնված նատուրալիստական արտահայտությունների հետ, մաքրագրում գտնում ենք ժողովրդական բազմաթիվ սրամիտ դարձվածքներ ու երգիծական ասույթներ։ Ծանոթանանք վերջինների հետ (տեղավորված են բարեկենդանի առավոտվա նկարագրությանը վերաբերող հատվածում)։ Ահա դրանցից մեկը. «Օրհնյալ է Աստված, փառք հավիտյանս շնմիչ, սրտներն ընկավ տեղը, մատներն ընկավ եղը, աչքերին բարձեցին գեղը՝ ու կուզկուզ անելով՝ մտան տաք տեղը։ Նամարդ ըլի՝ ով չասի. Աստված վերջը խեր անի» (28)։ Ահա մյուսը. «Հա՛յ դէ՛, քո՛ւր տո՛ւ, քշի, ձիդ ներս քաշի՛։ Մտնինք դուռը տեսնինք համը, ուտենք փլավը, մարսենք շլավը... (28)։ Անշուշտ սրանք մի ժամանակ տարածված ժողովրդական երգիծական ասույթների բեկորներ են, որ հետագայում վերածվել են բառախաղի։ Նրանք գաղափար են տալիս ժողովրդի մտածողության մեջ վերապրուկային ձևով մնացած անվերծանելի արտահայտությունների մասին։

Քանի որ պատմավեպից պահանջվում է դեպքերի ճշմարտացիություն ու հարազատություն, Աբովյանը աշխատել է լինել ստույգապատում, ճիշտ բացահայտել պատմական այս կամ այն դեպքերի պատճառները։ Այս ոգով Աբովյանը վերախմբագրումներ է կատարել դեռ սևագրի մեջ։ Օրինակ, ցանկանալով բացահայտել ռուս-պարսկական պատերազմի սկզբին երևանցիներին գազազեցնելու պատճառը, ձեռագրի 84բ էջի լուսանցքում նա ավելացրել է. «Ջանքի Ղզլբաշն իմացել էր, կամ խերն էր ուզում Ռսի հետ կռիվ բաց անի, ուզում էր՝ որ թե երկիրն առնեն, խալխն էլա չի կորչնի,

որ տանեն Թեհրան, իրանց ծառա շինեն, յա Թուրքացնեն. յա հողի հետ հավասար անեն։ Ա՛խ՝ հողիս դուս ա գալիս. ընչի՞ հին դարդերս էլի նորոգեցի, ընչի՞ էս բաներին ձեռք տվի» (88—89 նաև 270)։ Այս վկայությունը հաստատվում է պատմական փաստերով։ Ժամանակակիցները պատմել են, թե սարդարը պատերազմի սկզբին Երևանի հայերի մի ստվար խումբ ոմն Մաթուս աղայի գլխավորությամբ քշում է Պարսկաստան։ Գաղթականները հասնում են Արաքսի ափը։ Գետը վարարած է լինում։ Նրանք չեն կարողանում անցնել... Երբ ռուսները գրավում են Երևանը, գաղթականները վերադառնում են իրենց տները[1]։ Հիշենք նաև Ղազախի ու Բորչալուի մի քանի հարյուր գյուղական ընտանիքների բռնի Պարսկաստան քշելը[2], որոնց ազատում է Գրիգոր Մանուչարյանը։ Կամ՝ սևագրի 80ա էջի տողամիջին, ավելացված է. «Շատ անգամ վարդապետ էլ են թրատում», որը վերաբերում է պարսից խաների՝ էջմիածնում կատարած սանձարձակություններին։ Այստեղ ևս խոր ու մեկին ճշմարտություն կա։ Մատենադարանի փաստաթղթերից պարզվում է, որ պարսիկ Միրզա Ջապպարը հարբած գնալով էջմիածին (1823 թ.), ծեծել է միաբաններին և սրով մահացու վիրավորել մի վարդապետի[3]։

Պատմական ճշմարտացիության պահպանման համար է նաև, որ վեպի մաքրագրում Աբովյանը կանգ է առել հայ ժողովրդի կրած տառապանքների վրա՝ Երևանյան խանության գոյության ողջ վերջին հարյուրամյակում։

Վեպի այդ մասերը առավել շոշափելի են դարձնում հայ ժողովրդի ապրած ահավոր ողբերգությունը պարսկա-թյուր-

---

[1] СМОМПК, IV, 35.

[2] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ № 51, վավերագիր № 269։

[3] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ № 45, վավերագիր № 135։

բական գաղթիչների շարունակական արշավանքների ընթանում։ Այդ արշավանքները նա համեմատում է գազանների մրցավազքի հետ, որոնք «մեր ազգի արյունն էին ծարավել, որ իրանց անկուշտ փորին մատաղ անեն, ու մեկը ծամում էր, մյուսին տալիս, մյուսը արինը խմում» (56)։ Մեծ է պատմական բնույթի այդ հատվածների ճանաչողական արժեքը։ Աբովյանը դրանցում ուշագրավ տեղեկություններ է հաղորդում ժամանակի տնտեսական կյանքի մասին։ Օրինակ, 1804 թվին, երբ ռուսները պաշարում են Երևանը, սովը հասնում է ահավոր չափերի. «էն թանկությունն ա ըլում, որ աղի լիտրը մեկ մանեթով ճարվելիս չի՛ ըլում» (57)։ Կամ՝ խոսելով Մահմեդ խանի մասին գրում՝ է, թե նա «խալխի խարջը կոող բաշխում» է (57) և այլն։

բ) ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Գրողը կարող է վեպում հրաշալի մտքեր արտահայտել, ստեղծագործական գյուտեր կատարել, սակայն դրանք կմնան աննկատելի, եթե տեղին չլինեն գործածված կամ արտահայտված։ Ասել ամենը՝ ինչ ցանկանում ես և, միաժամանակ. գրել այնպես, որ երկը կառուցվածքային անհամաչափություններ չունենա, հեշտ չէ։ Մաքրագրում Աբովյանն աշխատել է նախ և առաջ այդ դժվարին խնդիրն իրականացնել։ Կառուցվածքային առաջին փոփոխությունը մաքրագրում վերաբերում է վեպը գլուխների բաժանելուն (նախագիրը և սևագիրը ներքին ստորաբաժանումներ չեն ունեցել)։ Առաջին երկու գլուխներում ընթերցողը ծանոթանում է հայ ժողովրդի կյանքի ու կենցաղի հետ բուն Հայաստանում, իսկ երրորդում՝ հերոսին ման ածելով զանազան վայրեր (Աբարան, Լոռի, Փամբակ, Անի), հեղինակն ամբողջացնում է նրա կյանքի պատմությունը և այդ ճանապարհով վեպի մեջ մտցնում հայ ժողովրդի գրեթե բոլոր հիմնական հատված-

ների ներկայացուցիչներին, իրենց ուրույն բնավորությամբ։

Աբովյանին ամենից ավելի երկրորդ գլուխն է զբաղեցրել։ Նախապես ծրագրած է եղել այն սկսել Այրարատյան դաշտի ամառային օրվա նկարագրությունից, իսկ մինչ այդ տեղ գտած բերդի նկարագրությունը և հեղինակային խորհրդածությունները միացնել առաջին գլխին։ Ավելի ուշ, չգոհանալով դրանով, նա երկրորդ գլուխն սկսում է բերդից, որովհետև վերջինից էին ծայր առնում պարսից բռնության բերած չարիքները։

Կառուցվածքային մյուս փոփոխությունը վերաբերում է երկրորդ գլխում առկա հեղինակային խորհրդածությունները կամ «շեղումները» վիպական հյուսվածքի հետ օրգանապես կապակցելուն։ Հակառակ նախորդ վարիանտների, մաքրագրում խուսափելով մերկ հրապարակախոսությունից և շեշտը դնելով խոսքի էմոցիոնալության վրա, նա ո՛չ միայն կարողանում է պարզ ու մեկին հասցնել իր մտքերը ընթերցողին, այլև նրան էլ վառել հայրենասիրական կրակով. «Էնքան բաները լսեցիր՝ սի՛րելի կարդացող՝ բաս ի՞նչպես չի սիրտդ վառվիլ, որ դու է՛ն ազգի որդին ես, որ էսքան տանջանք քեզ համար քաշեց, ինքը նահատակվեց, քո կաթդ ու արինդ ուրիշ ազգի հետ չխառնեց» (63)։ Այս բառերը հետևվում են այն ցնցող պատկերներին, ուր, Եղիշեի նման կրակված, Աբովյանը գովերգում է հայոց «լուսաշաղախ աղջիկների» գեղեցկությունը, ուժն ու կորովը, որոնք ատելով օտար բռնակալների լուծը, գերադասել են մահը, ուր աղշահար ձեռքով նկարագրում է հայ ժողովրդի «հոգու կարողությունն ու զորությունը», որը «գերօրինակ հսկայությամբ» դիմագրավել է օտար բռնակալների ճնշումներին ու բնաջնջմանը, ուր անդրադառնում է պարսիկների ձեռքով խոշտանգված հայ երիտասարդներին, որոնք զրկված լինելով լեզվից, ոտքերից, ձեռքերից՝ հայրենիքի ազատությունից հետո անգամ չեն կարողանում կյանքի ամենատարրական

հանույքները վայելել և պիտի մեռնեն՝ մուրազները սրտներում պահած։ Եթե մինչև իսկ հեղինակի հիշեցումը չլիներ, նախորդ զգայացունց պատկերների ազդեցությունն այնքան ուժեղ էր, որ ընթերցողը ինքնաբերաբար կարիք կզգար բացատրության. ինչո՞ւ նրանք գերադասում էին տանջանքն ու նահատակությունը փառքից ու երջանկություններից։ Ընթերցողն ավելի է լարվում, երբ կարդում է հաջորդ տողերը. «Էսպես կարծում էս, քի՞չ բան ա, հազար տարի էս օրը քաշել, էլի ազգ պահել, որդի մեծացնել, անուն, լեզու, հավատ ունենալ։ Ա՜խ՝ էս միտք անողը՝ էլ ի՞նչ սիրտ պետք է ունենա, որ իր լեզուն, իր ազգը չսիրի» (63)։ Չնայած հեղինակը դարձյալ խուսափում է որոշակի պատասխանից, սակայն արդեն կամուրջ է գցված նախորդ նկարագրության և հաջորդ խորհրդածությունների միջև։ Ապա գալիս է այլաբանությունների մի շարք, որոնց նպատակն է նախապատրաստել ընթերցողին, գլխի գցել և վերջում միայն հաղորդել իր ցանկությունները. «Ա՜խ՝ լեզուն, լեզուն, լեզուն որ չլի, մարդ ընչի՞ նման կըլի։ Մեկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն ա...» (63)։ Այսուհետև արդեն կարելի է շարունակել... Կառուցվածքային այս հետաքրքիր միջոցը (նկարագրությունից աստիճանաբար խորհրդածություններին անցնել) Աբովյանը օգտագործել է մաքրագրի այլ մասերում ևս։

Աբովյանի գործունեության շրջանում, մեզ մոտ գրողները իրենց հասարակագիտական և փիլիսոփայական ու էսթետիկական հայացքները մեծ մասամբ արտահայտել են գեղարվեստական գրականության՝ հատկապես վեպի միջոցով։ Չերնիշևսկու բառերով ասած, այն ժամանակ գրականությունը մեզ մոտ ուներ «ինչ-որ էնցիկլոպեդիական նշանակություն»[1]։ Այսպիսով, իր վեպում հեղինակային խորհրդածու-

[1] Ն. Գ. Չ ե ր ն ի շ և ս կ ի, Ռուս գրականության գոգոլյան շրջանի ուրվագծեր, Երևան, 1953, էջ 520։

թյունների միջոցով Աբովյանը սպառել է այն բոլոր հարցերը, որոնք հուզել են իրեն ու իր ժամանակի մարդկանց։ Դժվար է դրանցից որևէ մեկը օտարել վեպից, առանց գաղափարական ու գեղարվեստական վնաս հասցնելու նրան։

Վեպի տարբեր մասերն իրար հետ կապելու և անցումները պատճառաբանելու համար մաքրագրում օգտագործվում է մի ուրիշ հնարանք ևս, որը բնորոշ է ժողովրդական հեքիաթներին ու էպոսին։ Խոսքը այսուհետ ընդհատելու կամ ընդհատված պատմությունը նորից վերսկսելու ժամանակ, ասացողի՝ լսողներին արված դիմումների մասին է։ Օրինակ, վեպի երրորդ գլխում Փամբակի գաղթականների ողբալի վիճակի և ռուս-պարսկական պատերազմի առաջին ամիսներին Լոռվա սարերում կրած իր տառապանքների մասին պատմելուց հետո, ցանկանալով այդ մեծ հատվածը (124-26 էջեր) կապել հաջորդ ենթագլխի հետ, Աբովյանը ավելացրել է այս բառերը. «Հիմիկ էս թողանք, գնա՛նք էլի մեր սիրելի Աղասու մոտ, տեսնի՛նք, ո՞ւր մնաց, ու ի՞նչպես պետք է նրա-բանը վերջանա» (126)։ Եվ հետո սկսել է Աղասու փախուստի ընդհատված նկարագրությունը։

Այս հնարանքին Աբովյանը մաքրագրում դիմել է շատ անգամներ, տարբեր երանգներով. «Ես էդ եմ ղանում, էլի իմ պատմությունն անեմ» (55)։ «Ով ուզում ա իմանալ, հետս գա, գնա՛նք էլ էդ Երևան» (58)։ «Ով ուզում ա, գա» (58)։ «Լավ չի՛ սկսած բանը թողալ, ու էսպես քարոզ ասել, ես էլ գիտեմ, ամա սիրտս չի՛ դիմանում, ի՞նչ անեմ» (60)։ «Բանը երկարացավ, լսողը չի՛ նեղանա, էլի գնա՛նք մեր դժոխքը։ Հե՛րիք ա, հե՛րիք՝ սաղ կըլի ինձ, ձե՛ռք վերցրու էդ դժոխքիցը, ի՞նչ էլավ քեզ։ Ա՛խ՝ ի՞նչպես ձեռք վերցնեմ, բաս ո՞ւր թողանք մեր ազգի էն սիրուն, լուսաշաղախ աղջըկերքը...» (62)։ «Ընչանք Երևան գնալը մեկ քանի ամիս ժամանակ ունեի, էնդուր համար էսպես ճամփես ծռեցի։ Զըմեռն անց ա կացել, ամառն էկել, վա՜յ նրան՝ որ էս շուքին

գնա քնանք՝ ես պետք է գնամ, ով կուզի՝ հետս գա» (65)։ Վերջին օրինակը ավելացրած է մաքրագրի լուսանցքում[1]. դա ցույց է տալիս, որ վեպի կառուցվածքի հարցը Արոմյանին զբաղեցրել է վերջին վարիանտը արտագրելուց հետո անգամ։ Վերևի հիշեցումները, անցումները պատճառաբանելուց բացի ընթերցողին պահում են ակտիվ վիճակում։

Մաքրագրի կառուցվածքի մեջ կա մի ուրիշ նորություն ևս։ Վեպին է միացված «Զանգին»՝ առանձնահատուկ ձևով մշակելուց ու լրացնելուց հետո։

Արոմյանը աշխատել է պատճառաբանել նաև այդ։ Վեպի վերջին էջերում, Աղասու սպանության նկարագրությունից հետո, կան այսպիսի տողեր. «Ես ի՞նչ եմ, որ Աղասու սուգն անեմ, իմ բերանն ի՞նչ ա, որ լսողի սիրտը շարժի, էրի, խորովի, նրա սուգ անողը հետո կգա, ես իմ դարը պատմությունն անեմ» (184)։ Այստեղ ակնարկ կա Աղասու գերեզմանի վրա՝ Նազլուի ողբի մասին, որը նկարագրված է «Զանգիի» մեջ, իսկ վերջինի մեջ էլ Նազլուի սուգի նկարագրությունից անմիջապես հետո, գրված է. «Աղասու սուգն արին, պրծան. ա՜խ՝ նրա պես հայազգի հիշատակը, նրա պես անման հսկայի պատմությունը՝ ո՞վ չպետք է գրի» (196) և այլն։

«Զանգիի» կապը բուն վեպի հետ արտահայտվում է նրանով նաև, որ այնտեղ շարունակում են գործել երկի երկու հերոսները (Հայրություն, Նազլու), ինչպես նաև ավարտին են հասնել մի քանի հիմնական գաղափարները։

գ) ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Վեպը մշակելիս Արոմյանը մի շարք ուշագրավ փոփոխություններ է կատարել արտահայտչական միջոցների մեջ (մակդիրներ, համեմատություններ, չափազանցություններ,

[1] ԱԽԱ № 1, էջ 146։

բնանկար և սիմվոլիկա), որոնց շնորհիվ բարձրացել է երկի գեղարվեստականությունը և կենդանի ու շոշափելի են դարձել վիպական բնավորությունները ու նկարագրությունները։ Աբովյանը մի քանի անգամ փոխել է այս կամ այն համեմատությունը, մակդիրը, մինչև որ գտել է վերջնականը, կատարյալը։ Վեպի արտահայտչական միջոցների բնագավառում կատարված փոփոխությունների էության բացահայտումը սկսենք մակդիրներից։

Մակդիրների միջոցով գրողը բնորոշում, բնութագրում է նկարագրվող երևույթը կամ առարկան, ընդգծում նրա մեջ յուրահատուկն ու բնորոշը, անհատականացնում այն։ Մակդիրը միաժամանակ բացահայտում է հեղինակի վերաբերմունքը տվյալ իրողության նկատմամբ։ Մակդիրների փոփոխության օրինակներ հանդիպում են դեռ սևագրի մեջ։ Աբովյանը այնտեղ կատարել է հատկանիշների նոր վերագրումներ։ Օրինակ, Հարությունը հիշելով հանգուցյալ Աղասին, նրան կոչում է «օղորմածիկ» մակդիրով («իմ օղորմածիկ քուսահոգի հերը» 212), կամ Աղասին՝ բնորոշելու համար Տեր Մարկոսի երգեցողությունն ու ձայնը, անվանում է «ճոր-ռած, ճղլանի» («ճորռած, ճղլանի, քացախած ձենով» —217)։ Հիշյալ օղորմածիկ, ճորռած, ճղլանի մակդիրները հետագայում են ավելացվել սևագրի տողամիջերին և բնորոշում են ո՛չ միայն տվյալ անձանց, այլև արտահայտում են խոսողի վերաբերմունքը, որը Տեր Մարկոսի նկատմամբ արհամարհական է, իսկ Աղասի՝ երախտագիտական։ Սևագրում կան բավական օրինակներ էլ, ուր հին մակդիրը փոխարինված է նորով՝ համապատասխան առարկայի այս կամ այն հատկանիշը կոնկրետացնելու նպատակով։ «Սատկած գիլան» — «սոված գիլան» (243), «սոլանի աչքերն» — «արծվի աչքերն» (273), «պատարագի զանգակը»—«ժիրիգնաժամի զանգակը» (266), «սիրուն աչքը»—«կարոտ աչքը» (284) և այլն, սակայն դեպքերում մակդիրները կրճատվել են. «սոլան Սարդարին»—

«Մարգարին» (362), որը հեղինակի բացասական վերաբերմունքն է ցույց տալիս։ Ինչ խոսք, որ վեպի սևագրում, մակդիրների մեջ կատարված այս փոփոխությունները դրական են անդրադարձել երկի վրա։

Մաքրագրում մակդիրների վրա Աբովյանն ավելի է սրել իր ուշադրությունը և ամեն անգամ համահնչուն դարձրել նկարագրվող առարկայի կամ երևույթի էությունը։ Մակդիրների մի մասը բնորոշում են ժամանակաշրջանը, որի մեջ գործում են վեպի հերոսները։ Սևագրի «էս խառը ալեկոծյալ ժամանակին էր» (311) արտահայտությունը մաքրագրում հարստացվում է դառը մակդիրով. «էս խառը, դառը, ալեկոծյալ ժամանակին էր» (126)։ Կամ՝ «վա՜յ մեր օրին, արևվին» (297) — «վա՜յ մեր սև օրին, արևին» (114)։ Սև և դառը մակդիրները հաջող կերպով բնորոշում են հայ ժողովրդի ապրած անուրախ օրերն ու կրած տառապանքները՝ պարսիկների տիրապետության շրջանում։ Մի երկու տեղ Աբովյանն ավելացրել է մշտական մակդիրներ. օրինակ. «Ո՞վ արագահաս սուրբ Սարգիս, ո՞վ զինավոր սուրբ Գևորգ» (132—3), ուր արագահաս և զինավոր մակդիրները համահնչում են այդ ավանդական կերպարների ժողովրդական պատկերացմանը։ Մաքրագրում կան մակդիրների նոր վերագրման հաջողված օրինակներ էլ. «անգին, անհատ, աննման Թագուհին» (40), «տկար լեզուն ի՞նչ կարա» (39), «փիստ ձմեռվան օր» (7), «հնազանդ որդի» (10), «հզոր տերության» (=Ռուսաստանի 63), «անօգնական ազգի կամ անճար մարդի» (79), և այլն, որոնք տվյալ կոնտեքստում կենդանի են դարձնում համապատասխան առարկան կամ երևույթը։

Մակդիրների բնագավառում Աբովյանի կատարած փոփոխությունների էությունը, սակայն, ամենայն նրբությամբ բացահայտվում է վեպի հեղինակային ինքնագրերի համեմատության ժամանակ։ Ձեռագրերի համեմատությունից պարզ-

վում է, որ շատ հաճախ հին մակդիրը փոխարինվում է նորով կամ կրճատվում են կրոնական երանգ ունենալու պատճառով։ Օրինակ. «աստվածասեր կարդացողներ» (225)—«ալ՛ևելի կարդացողք» (44)։ Կամ՝ «Աստուծո ջուրը» (211)—«ջուրը» (23)։ Այս փոփոխությունները կապված են հեղինակի ընդհանուր սկզբունքների հետ, որը մաքրագրում արտահայտվել է հոգևորականության նկատմամբ եղած քննադատությունը խստացնելու միջոցով։

Մի շարք մակդիրներ փոխարինվում են նորերով, նախապես եղած անորոշությունը վերացնելու և հերոսի կամ երևույթի այս կամ այն հատկանիշը կոնկրետ ներկայացնելու նպատակով։ Օրինակ. «Աղասու լավ խասիաթը քիչ մարդիկ կունենան» (206) դարձել է. «Աղասու բարի խասիաթը, բարի սիրտն ու հոգին քիչը կունենան» (15)։ Լավը թեպետ դրական հատկանիշ է, սակայն ընդհանուր է և որոշակի ոչինչ չի ասում։ Մաքրագրի բարի մակդիրը համահնչյուն է Աղասու բնավորությանը։ Նման փոփոխություն կատարվել է նաև Սվանղուլի խանին վերագրած մակդիրների հետ։ Վերջինս սևագրում բնութագրվում էր «պատվելի, պատվական» մակդիրներով (312), որոնք խոսում էին միայն նրա հարգի անձնավորություն լինելու մասին, առանց կոնկրետացման։ Մաքրագրում դրանք փոխարինելով «օրհնած, բարեսիրտ» (127) մակդիրներով, Աբովյանը ընդգծում է ոչ միայն նրա լավ վերաբերմունքը դեպի ժողովուրդը, այլև ժողովրդի երախտագիտությունը դեպի նա։

Հին մակդիրը փոխարինվում է նորով՝ սևագրում եղած իմաստային սխալը վերացնելու նպատակով. օրինակ, պատմելով գաղթի ժամանակ գյուղացիների՝ քաղաքացիներին ցույց տված օգնության մասին, Աբովյանը գրել է. «Բայց էլի էս ողորմելի գեղցիք էին...» (268)։ Ողորմելի բառի հիմնական իմաստն է՝ խեղճ, թշվառ, մինչդեռ Աբովյանի ցանկությունն է եղել ասել՝ մարդասեր։ Մաքրագրում ողոր-

մեկի մակդիրը փոխարինելով՝ օրինած ձևով. «Բայց էլի էս օրինած գեղցիքն էին» (87), Արավյանը վերացրել է իմաստային սխալը: Թագուհու քաղցրախոսությունը սևագրում բնութագրվում էր «աղավնու լեզու» (222) արտահայտությամբ: Աղավնին ժողովուրդը օգտագործում է իբրև անմեղության սիմվոլ, բայց ոչ երբեք քաղցրախոսության: Մաքրագրում այդ արտահայտությունը դարձնելով՝ «նրա բլբուլի լեզուն» (40) Արավյանը վերացնում է հակասությունը: Բլբուլի լեզուն ժողովրդական մտածողությամբ քաղցրախոսության միակ չափանիշն է: Երբեմն քանակական շատություն արտահայտող մակդիրները փոխարինվում են որակականով: Օրինակ. «Արարանի... նազարավոր աղբյուրների համը առնելով» (296)—«Արարանի... պատվական աղբյուրների համն առնելով» (113): Երբեմն էլ նույն հերոսին վերագրած մշտական մակդիրներն են փոփոխվել: Աղասին, օրինակ, վեպում բնորոշվում է՝ հաջն, ճսկա, (43) ռաշիդ (134) և կտրիճ (224) մակդիրներով: Թագուհու առևանդման տեսարանում, երբ Աղասին ֆարաշներից փրկում է աղջկան, նրան վերագրած կտրիճ (224) մակդիրը փոխարինվում է ճնճուղ» (43) ձևով: Այստեղ հաշվի է առնված հերոսի հոգեվիճակը տվյալ պահին (նա հանգստացնում էր Թագուհուն): Մակդիրների փոփոխման վերոհիշյալ դեպքերը ցույց են տալիս, որ Արավյանը ելակետ ունենալով ռեալիստական արվեստի ըմբռնումները և ժողովրդական կենդանի մտածողությունը, կարողացել է ճշմարտացի և խորը բացահայտել յուրահատուկն ու բնորոշը առարկայի կամ երևույթի մեջ:

Մաքրագրի վրա աշխատելիս Արավյանը հետաքրքիր փոփոխություններ է կատարել նաև համեմատությունների մեջ, որոնք ընթերցողին պարզ պատկերացում են տալիս վերարտադրվող իրողության առանձին վերցրած այս կամ այն հատկանշական կողմի, ինչպես նաև գործողության կատարման ձևի կամ եղանակի մասին: Դեռ սևագրում պատահում

են գեղարվեստական կատարյալ համեմատություններ։ Այնտեղ Հասան-խանի զորքերի օղակի մեջ ընկած Եղվարդքիլիսայի գյուղացիների վիճակը Աբովյանը ներկայացրել էր այսպես. «Ինչպես մեկ կաթիլ գարնան անձրևի՝ սաստիկ մըրրիկի, քամու ձեռն ընկնի, կամ մեկ անմեղ գառը հարիր գազանի ռաստ գա ու մնա կանգնած նրանց միջի, էնպես մնացին» (99)։ Այս պատկերը սքանչելի կերպով ներկայացնում էր ժողովրդի անելանելի դրությունը։ Նա շրջապատված է բոլոր կողմերից, մահն առաջին է կանգնել և փախուստի ոչ մի ճանապարհ չունի։ Սակայն այս և ուրիշ կատարյալ համեմատությունների կողքին սևագրում կային նատուրալիստական երանգ ունեցողները ևս։ Ագահ ու ընչաքաղց Տեր Մարկոսը այնտեղ համեմատված էր սոված գիլի, մսի հոտ առած արջի հետ, կամ էլ խոսում է «փշի՛ պես անկաչները թափն թափ տալով» (205)։ Ճիշտ է, համեմատությունների մեջ ևս դրսևորվում է գրողի վերաբերմունքը, սակայն այն չպիտի լինի գեղարվեստորեն խոցելի։

Մաքրագիրը զերծ է նման թերություններից։ Այստեղ, նախ, լեզվաոճական վերախմբագրման են ենթարկված սևագրից առնված որոշ համեմատություններ։ Վերցնենք Աղասու հոգեվիճակը ցուցադրող համեմատությունը. «Ծիծաղելիս, բերնի ու պռոշի չորս կողմը էնպես գիտես թառամած վարդի տերև ըլի որ շաղը տալիս մի քիչ ուշն ա գալիս, էլ եդ ծըռրում» (326)։ Մաքրագրում վերջինս դարձել է այսպես. «Ծիծաղելիս՝ բերնի չորս կողմը՝ էնպես գիտես՝ թառամած վարդի տերև ըլի, որ շաղը տալիս, մի քիչ զվարթանում, էլ եդ ծըռրում, թուլանում էր» (141)։ Այստեղ կոնկրետացվել է համեմատելի առարկան։ «Բերանի ու պռոշի չորս կողմը» ճապաղ կապակցության տեղ իբրև համեմատելի հանդես է գալիս «բերանի չորս կողմը»։ Համեմատվող առարկայի վիճակն արտահայտող «մի քիչ ուշն ա գալիս, էլ եդ ծըռրում» կապակցության տեղ, «մի քիչ զվարթանում, էլ եդ ծըռրում, թուլանում էր»։

Թեպետ փոփոխությունները չնչին են, սակայն դրանց շնորհիվ հոգեբանորեն ավելի ընկալելի է դառնել տխրության պահին Աղասու դեմքը. Նրա բերանը համեմատվում է պոկված վարդի թառամած տերևի հետ, իսկ ծիծաղը՝ շաղի, որը թեպետ, զվարթացնում է նրան, սակայն կարճ ժամանակ անց դարձյալ իշխում են ծանր մտքերը։

Մի շարք դեպքերում համեմատվող առարկան փոխարինված է նորով։ Ընդգծելու համար, որ Աղասին համեստ, հնազանդ ու ծնողասեր որդի էր, սևագրում նա համեմատվում էր հավի ճուտի և հոմարի հետ։ «Աղասին իր հորն ու մոր առաջին էնպես էր, ինչպես մեկ հավի ճուտ» (206)։ Կամ. «Աղասին իրանց տանն էնպես էր, ինչպես մեկ հոմար» (208)։ Երկուսն էլ թույլ են և սխալ։ Հավի ճուտ կարելի է օգտագործել չնչինությունը, ծիծաղելիությունը, կամ՝ նոքար, ստրկական վիճակն ակնարկելու համար։ Վեպի վերամշակման ժամանակ վերևի համեմատությունները վերափոխված են. «Նա... հորնը մոր առաջին էնպես էր, ինչպես մեկ անմեղ գառը» (15)։ Կամ. «Աղասին իրանց տանն էնպես էր, ինչպես մեկ հարսը» (18)։ Ժողովրդական մտածողությամբ գառը՝ արդարության, անմեղության և հարսը համեստության չափանիշ են համարվում։ Աբովյանը մաքրագրում կատարելով այդ փոփոխությունները և օգտագործելով համապատասխան հատկանիշի ժողովրդական մտածողությամբ առանձնացված չափանիշը, գեղարվեստական տեսակետից ստեղծում էր կատարյալ համեմատություններ։ Կամ՝ ցանկանալով դիպուկ համեմատությամբ ցուցադրել Թագուհու մոր հոգեվիճակը դստերն հափշտակելու պահին, Աբովյանը սևագրում գրել էր. «Ձորբը կորած կովի պես՝ մեկ դես էր վազում, մեկ դեն» (220)։ Ահավոր շարիքի հանդեպ մոր անզորության և մայրական սիրո մեծ ուժի մասին իհարկե, այստեղ բավականաչափ բան է ասվում. բայց Աբովյանը չբավարարվելով դրանով, մաքրագրում, հիշյալ համեմատությունը վերափոխել է. «Ձագը կո-

ռած հավի պես մեկ դես էր վազում, մեկ դեն, մեկ գլխին տալիս, մեկ ոտին» (38)։ Սա արդեն վտանգի պահին մոր անզորությունը ցուցադրելու համար ավելի քան հաջող ու տիպական է։ Հիշենք Տուրգենևի «Ճնճղուկը» կամ Թումանյանի «Մայրը» արձակ բանաստեղծությունները, ուր պատկերված է թռչուններին հատուկ բնազդական ուժեղ զգացումը, ձագերին հափշտակելու պահին. թեպետ անզոր, սակայն մինչև վերջին հնարավորությունը նրանք մարտնչում են հակառակորդի դեմ։ Մաքրագրի համեմատությունների մեջ վերացված է նաև նատուրալիզմը։ Սևագրում, օրինակ, կնոջ ֆիզիկական թուլությունը ընդգծվում էր այսպես. «Կնիկարմատը որ կա՝ կլլից բերար ա, ՛հենց ձեռն ես ՛տալիս թե չէ՝ իրան իրան գնում ա» (214)։ Այս բացահայտ նատուրալիստական արտահայտությունը մաքրագրում փոխարինվում է՝ «Կնիկարմատն ու ձուն մեկ օրինակի են» (30) կենդանի դարձվածով, որը թեպետ կատարյալ չէ, բայց բնորոշ է ժողովրդական մտածողության համար։

Աբովյանը ստեղծել է ինքնատիպ ու հզոր համեմատություններ ևս։ Հայկական լեռնաշխարհը, ձմեռվա պահին, համեմատված է մի կողմից երիտասարդի և, մյուս կողմից, նոր ծերացած, մահվան շեմին հասած և եռին շունչը փչող ծերունու հետ. «Հենց գիտես՝ սար ու ձոր կամ նո՛ր էր ծաղկել, կամ նոր ծերացել, մահվան դուռն ընկել՝ շունչն էր մնացել՝ որ տա, ու աշխարքիս բարով մնա ասի» (7)։ Բերած օրինակները հաստատում են, որ մաքրագրում համեմատությունների խնդրում կատարված փոփոխությունները ավելի դիպուկ են բացահայտում պատկերվող իրողության կամ առարկայի այս կամ այն հատկանիշը, վիպական կերպարի հոգեվիճակն ու ապրումները տվյալ պահին և վեպի միջից օտարում են նատուրալիզմի տարրերը։

Վեպում առատորեն գործածված արտահայտչական միջոցներից մյուսը չափազանցությունն է, որի միջոցով գրողը

տարրերը կամ երևույթները, ինչպես նաև նրանց այս կամ այն հատկանիշը, գիտավորյալ խոշորացնում է՝ ընթերցողի վրա ուժեղ տպավորություն գործելու նպատակով։ Չափազանցությունների Աբովյանը դիմել է գլխավորապես երգիծական երանգ ունեցող հատվածներում։ Չափազանցության օրինակներ վեպի առաջին ինքնագրերում էլ կան։ Մաքրագրում դրանց վրա ավելանում են նորերը, ինչպես և սևագրում եղածներից մի քանիսը առավել սրվում։ Ահա գյուղացիների հագուստի նկարագրությունը սևագրից. «Պատռած, քրքրված քուրքի չուխի ծլանկները (կտորները) հազար տեղից ճլոլակ էին էլել, ու քամու ձեռքին եսիր էին դառել»։ «<Քուրքի> փեշերը ու նեղ թևերը... ոտներից կախ ընկած՝ գետին էին հասնում ու թամուզ ավելում»։ «Բաղրնի փափախի մորթին էլ՝ էր չալ ընկել ու ծերից բուրդը քամին տանում էր» (209)։ Այս երկու օրինակի մեջ էլ չափազանցությունն առկա է, սակայն մաքրագրում դրանք ավելի են ընդգծվում. «Պատռտված քուրքի չուխի ծլանկները (կտորները) հազար տեղից էնպես էին ճոլոլակ էլած ու քամու ձեռին եսիր մնացել, որ փչելիս՝ ուզում էր՝ ըն իրանց էլ հետը տանի» (19) «<Քուրքի> փեշերը ու նեղ թևերը... ոտներիցը կախ ընկած, գետինն էին հասնում ու գիպած տեղը թամուզ ավելում, հայելի շինում»։ «Բաղրնի փափախի մորթին էլ նո՝ էնպես էր չալ ընկել ու ծերիցը բուրդը դուս թափել, որ մեկ բարակ քամի կամ հով փչելիս էլ՝ ամեն մեկ մազը ըն էր տանում ու գլխըներին պար գալիս» (20)։

Ընդգծած բառերի հարևանցի դիտումն իսկ հաստատում է, որ մաքրագրի մեջ գործ ունենք չափազանցության գերազանց նմուշների հետ։ Այս չափազանցությունների նպատակը միայն վեպն աշխույժ ընթերցելի դարձնելը չէ, այլև հերքումը գյուղացիների միամիտ փիլիսոփայության, թե «տաշտումը հաց ունենամ, կարասումը գինի, ջվալումն ալիր՝ հերն անիծած՝ որ չիփ չիփլախ էլ ըլիմ, դարդ անեմ» (22)։ Աբո-

վյանը ցանկանում է ասել գյուղացիներին, որ նման փիլիսոփայությունն անհիմն ու ծիծաղելի է։ Նա դիտավորյալ խոշորացնում է երևույթը, որպեսզի գյուղացին լավ տեսնի իր թերությունը և ուղղի։

Չափազանցություններին սերտորեն առնչվում են էպիկական հնարանքները կամ դրվագները, որոնք մաքրագրում որոշակի որակ են կազմում։ Դրանց մեծագույն մասը համահընչում են մեր ժողովրդական էպոսին։

Էպիկական գունավորմամբ չափազանցության մի քանի օրինակ հանդիպում են դեռ սևագրում. պատանի Վարդանը մենամարտի բռնվելով Օքյուզ աղի հետ գետին է տապալում նրան։ «Բայց սուրն Վարդանի Օքյուզ աժդահին, որ սաղ առյուծին թե խփեր գլխին, իսկույն կտրեր, կճապատեր գետնին, միջիցն երկու կես արեց էն սհաթին. կեսն ձիու էս կողմը քաշ էլավ, կեսն մյուս կողմին գլպավ ու կպավ» (103)։ Ինչ խոսք, որ սա բավականաչափ մոտ է Դավթի երրորդ զարկի նկարագրությանը, երբ միջից երկու կես է արվում Մելիքը։ Կամ՝ Կոչոնց Վիրապը, որը հզոր ձայնով հիշեցնում է Ձենով Օհանին. նրա երգից «պատերը դղրդում էին, գետինը գրնգրնգում, օջաղը անդըհան ըլում, նրա ձենը մարդի քյալլին ցցվում։ Էնպես զորան ձեն ուներ Վիրապը, որ հինգ սհաթվա ճամփից լսվում էր» (35) և այլն։

Մաքրագրում այս օրինակներին ավելանում են նորերը, որոնցից ուշագրավ են Աղասու և նրա ձիու մտերմությունը մատնանշող պատկերները։ Ժողովրդական էպոսում, օրինակ, Ձենով Օհանը հենց ձեռքը դնում է ձիու մեջքին, սա կռանում է. կամ Դավիթը, երբ հեծնում է իր հրեղեն ձին, վերջինս սլանում է թռչունի նման։ Ահա դրանց զուգահեռները մաքրագրի մեջ ևս. Աղասին ձի հեծնելիս «որ ձեռը չէր բարձրացնում, սալան ձին կզանում էր ու մեջքը դեմ անում» (16), կամ՝ Աղասու «տան օրզանգվին առավ թե չէ, մեջքը կռացրեց ու սկսեց գլուխը խաղացնել, ոտները գետնին խփել, նալներին

կրակ տալ, խորխնչալ, փռնչալ, ու թև առնիլ, ասները գնանիցը կորիլ» (19)։

Բերված օրինակները ապացուցում են, որ Սրավյանը իսկապես իր երկն հարստացրել է էպոսին հատուկ չափազանցություններով, որոնք սակայն ոչ թե փոխառություններ են, այլ ժողովրդի կյանքն ու մտածողությունը ռեալիստորեն վերարտադրելու արդյունք։

Վեպում գործածված կարևոր արտահայտչական միջոցներից են նաև սիմվոլիկան ու բնանկարը։ Դրանցից լավագույններն են՝ Երևանի բերդի, հայկական լեռնաշխարհի ձըմեռվա և Զանգի գետի նկարագրությունները, որոնք իրենց գեղարվեստական կատարելությամբ հայ գրականության մեջ մնում են չգերազանցված։ Շնորհիվ դրանց և ուրիշների, տեսանելի ու ըմբռնելի են դառնում Հայաստանի խստաշունչ ձմեռն ու տոթակեզ ամառը, օտարի լուծը չհանդուրժող կատաղի Զանգին, Լոռվա ծաղկավանդ սարերն ու անդնդախոր ձորերը, Անիի ավերակները։ Հիշյալ բնանկարների նպատակն է ծանոթացնել ընթերցողին հայրենի երկրի հետ, անցյալի հուշարձանների նկարագրության կապակցությամբ փառաբանել հերոսության, հայրենասիրության ու անձնազոհության վեհ գաղափարները, ցույց տալ հայրենի բնաշխարհի ու հայ ժողովրդի կապը և այլն։

Նախագրում բնանկարին վերաբերող գրեթե ոչինչ չկա։ Սևագիրը, ընդհակառակը, ունի բնանկարի մի երկու օրինակ, որոնք հատկապես ընդգծում են Հայաստանի բնության մասնակցությունը ժողովրդի ու վեպի հերոսների ճակատագրին։ Այնտեղ, ուր հաղթանակ է, հաջողություն, բնությունը ժըպտում, հրճվում է, իսկ ուր արյուն, ավեր ու կոտորած՝ տըխրում ու մռայլվում։ Բնորոշ է այս տեսակետից արևածագի նկարագրությունը (Աշխարաքլիսայի պաշարման օրը)։ «Արեգակը կրակ դառած՝ Ալագյազի կողմից բարձրացավ։ Աշխարքը սրել երկրի մեջն էր ուզում մտնի, քարերը ճաթոի, որ

պարզ տեսնի մեր ազգի քաջահաղթությունն ու տղամարդությունը։ Ամպերի գլխին բոց էր վերածում, որ չհամարձակվեն նրա երեսը կալնին ու իրանց տեղը թաղ արած մնան։ Սար ու ձոր սիրտ ու գլուխ բաց էին արել, ու իրանց խոնարհությունը, իրանց ծառայությունը ցույց տալիս» (99) են։ Այստեղ բնությունն էլ լարված է, ինչպես ժողովուրդը, նա էլ է հուզվում ու ցնծում, մռնչում ու կատաղում։ Իսկ երբ պարսիկները սկսում են կոտորել անզեն բնակչությանը, Աբովյանը գրում է, թե «քար ու հող իրար կտրատում, սպանում էին» (110)։ Բնությունն ու նրա երևույթները վեպի մեջ ինքնանպատակ չեն պատկերված, ինչպես էպոսի մեջ, նրանք դարձել են վիպական գործողության մասնակից։

Սևագրում կան բնանկարի օրինակներ էլ, որոնցում աղքատ են գույները։ Դրան ապացույց կարող է ծառայել սևագրում՝ ձմեռվա սկզբնական նկարագրությունը. «Բարեկենդան էր։ Ձինն էկել՝ սար ու ձոր բռնել էր։ Գարզելա գիշերը էնպես էր ձյուն ձենը սառցրել՝ որ ամեն մեկ ոտը կոխելիս՝ հազար տեղից տրաք-տրաքում էր և ձեն էր հանում։ Արեգակը մեկ ճիգա բոյ էնա բարձրացել էր ու շողքը դաշտերի վրա քցել՝ որ էնպես էր փայլում, ինչպես զմռուխտ ու յախուտ, սարը քամին փչելիս՝ մարդի քիթ և պռունգը կպցնում պատռում էր» (203)։ Այստեղ չկա այն կենդանությունն ու պատկերավորությունը, որ հատուկ է մաքրագրին։

Ժամանակ անց, հիշյալ հատվածի տողամիջերին և լուսանցքներում Աբովյանն ավելացրել է մի շարք բառեր ու արտահայտություններ, կատարել որոշ փոփոխություններ, որոնք, մասամբ, նպաստել են բնանկարի գեղարվեստականությանը։ «Բարեկենդան էր։ Ձինն էկել՝ սար ու ձոր բռնել, դիզվել էր։ Գարզելա գիշերը էնպես էր գետինը սառցրել, որ ամեն մեկ ոտ կոխելիս՝ հազար տեղից տրաք տրաքում, ճռռճռում, ճճճում ու մարդի ջանը սոսռացնում, ձեն էր տալիս։ Արեգակը մեկ ճիգա բոյ բարձրացել, շողքը դաշտերի վրա էր

ընկել: Էնպես կանաչ, կարմիր փայլում, պսպղում էր դաշտի էրեսը, որ հենց իմանաս՝ ալմաս, զմռուխ, յախուխ ըլի ցանած: Սառը բուքը, սարերի քամին փչում, հոսան էին անում: Մարդի քիթ ու պռունգ կպցնում, պատռում, ճաքացնում: Ղուշ, գետ, աղբյուր, առու պապանձվել, լռվել էին: Բորյաքը մեկ կողմից շվացնում, բզզում, մյուս կողմից՝ ֆատացնում, փատացնում, վզվզում, աչք ու անկանջ ձնով լցնում էր» (203)։ «Ճռճռում, ճրճրում» և «ձեն էր տալիս» բառերի միջև «ու մարդի ջանը սառացնում» արտահայտությունը ավելացրած է մատիտով, հետագայում։ Ընդգծած բառերից ու արտահայտություններից երևում է, որ Աբովյանը ձգտել է բնաձայնական բառերի միջոցով ստեղծել ձմեռվա մեռած բնության ու նրա մեջ մոլեգնող բքախառն քամու տպավորությունը, բայց դա հաջողվել է մասամբ միայն։ Բացառյալ մի քանի կենդանի գույների, ձմեռվա նկարագրությունը դեռ պակասավոր է։

Այս հատվածը վերջնական մշակման է ենթարկվել մաքրագրում, որտեղ ցուցադրված են ձմեռային բնության նոր կողմեր, մեր առաջ բացվում են նոր տեսարաններ «Ամեն մեկ ծառի ճղներից, ամեն մեկ տան բաշից՝ հազար տեսակ սառցի լուլա, հազար տեսակ ձնի քուլա՝ կախ էր էկել ու բիզ բիզ իրար վրա սառել։ Հենց գիտես՝ սար ու ձոր կամ նո՛ր էր ծաղկել, կամ նոր ծերացել, մահվան դուռն ընկել՝ շունչն էր մնացել՝ որ տա, ու աշխարքիս բարով մնա ասի։ Ղուշ, գազան, անասուն, սողուն՝ որը փետացել՝ էստեղ էնտեղ վեր էր ընկել, որն էլ վաղուց, ամառվ առաջ բունը մտել՝ ձենը կտրել, պաշարը վայելում, գարնան գալուն սպասում։ Գետերի, առվների երեսները սառիցը մեկ գազ էկել, հաստացել, իրար վրա դիզվել՝ էնպես էր ջրի, աղբրի բերնին հուփ տվել, որ մոտըներին կանգնողը միմիայն նրանց խուլ ձենն էր լսում, որ սառցի տակին տխուր, տրտում, քլքլում էր ու էլ եդ էստեղ էնտեղ կամաց կամաց ձենը կտրում, պապանձվում, սառչում»

(7)։ Ձմեռն այստեղ ներկայանում է իր երկակի բնույթով. մի կողմից բերում է գեղեցկություն, թովչանք, մյուս կողմից՝ ահ և քարացածություն։ Միակ ըմբոստը Հայրենի գետակն է, որը չհայած սառցի հաստ շղթաների, իր խուլ ձայնն է հանում ու հոսում։ Այս նկարագրությանն է հաջորդում մի ուրիշ հատված, ուր դարձյալ նույն երկվությունն ենք տեսնում. մի կողմից գեղեցկություն՝ հանձին արևի տակ, ադամանդի ու այլ թանկարժեք քարերի նման ճաճանչող սարերի ու դաշտերի, մյուս կողմից՝ դառնաշունչ բուք, որ մարդկանց սարսափ, քարեքար է տալիս, ճամփից հանում, խեղդում, հալածում։ Շնորհիվ այս փոփոխությունների մաքրագրում ստեղծվել է մի հոյակապ, ռեալիստական բնանկար, որը ծանոթացնում է ընթերցողին այն բնական պայմանների հետ, որոնց մեջ ապրում ու գործում, որոնց դեմ մաքառում է հայ ժողովուրդը՝ ստրկացված օտար ու սեփական տիրողներից։ Հայրենի լեռնաշխարհի ձմեռվա նկարագրությունը սիմվոլիկ նշանակություն չունի. նա ֆոն է ծառայել հայ ժողովրդի կյանքն ու կենցաղը առավել ցայտուն ներկայացնելու համար։

Սիմվոլիկ նշանակությամբ բնանկարներ կան մաքրագրում, որոնցից ամենակատարյալը Երևանի բերդն է։ Այստեղ Աբովյանը հանճարեղորեն իրար է հյուսել սիմվոլիկան և բնանկարը։ Բերդը լինելով մի սքանչելի բնանկար, միաժամանակ սիմվոլն է պարսից գազանային բռնապետության, որը դարեր շարունակ կեղեքել ու տանջել է հայ ժողովրդին, լափել, խժռել Հայաստանի նյութական բարիքները, հարստահարել ու պարբերաբար ֆիզիկական բնաջնջման է ենթարկել հին ու ստեղծագործ ժողովրդին, մահմեդականացրել կամ Պարսկաստանի խորքերը քշել երկրի ազգաբնակությանը։ Երևանի բերդը բնաշխարհիկ չէ, հայկական չէ, նրա հետ հայ ժողովուրդը ոչ մի ավանդություն չի կապել։ «Հազարավոր ժամանակով՝ անահ, անվախ՝ պինդ երեսը լիրբ գազանի պես դեմ տված» (53) ցցվել է նա Արարատյան դաշտում, հայ ժողո-

վըրդի սրտի մեջ, Մասիսներին հանդիման, որպես օտար չարգարարի սրից առաջացած վերք, որպես օտար ու նեխվող պալար՝ հայրենի հողում։ «Պարսիկ նրան շինեց, խորամանկ, խաբեբա, թե Օսմանցի նրա հիմքը դրեց՝ կատաղի, անհաշտ. ո՛չ գիր կա, ո՛չ թարեխ։ Նրա պատմությունը խավարի միջումն ա, մարդ ուղիղ չի՛ գիտի, չի՛ լսել» (53)—գրում է Աբովյանը։ Հայ ժողովուրդը շատ անգամ ըմբոստացել է պարսիկների դեմ, դեպ Երևան են արշավել ռուսական զորքերը, սակայն անօգուտ։ Բերդը մնացել է կանգուն։ «Որքան թոփի, թոփխանի գյուլլեք էլ նրա կուշտ քամակին, նրա կակուղ դոշին, նրա բաց գլխին դիպան, ո՛չինչ չի՛ ազդեց, քյար չա՛րեց։ Կորցրած թներն էլ եդ սաղացրած, ջարդած ոսկոռներն էլ եդ պընդացրած՝ գլուխը վեր քաշեց, էլ եդ շունչ առավ, վեր կացավ, կանգնեց՝ ոտերը դզեց, ոլորեց, սարքեց, ու էլ եդ հարբա ծալով, հաթաթա տալով, իր գլուխը քարոզի, իր շվաքի հետ խաղացողի՝ թուլության, փոքրոգության, անզորության ու հիմար հանդգնության վրա ծաղր անելով, ծիծաղելով, ծափ տալով՝ պպին կանգնեց, մատը ցցեց էս հողաշեն, այլ ո՛չ Ղարաշեն բերդը, ու խենեշ դիմոք՝ իր կոտրած ոտները Զանգվի բերանը խցկելով, մնաց տեղը նստած» (53)։ Իսկապես էլ, իր դեմ ծառացած ժողովրդական ընդվզումից, իր դեմ արշավի դուրս եկած ռազմական ուժերից պարսկական ճնշումը ոչ միայն չէր թուլանում, այլ ավելի էր խստանում։ Պարսից լուծը լինելով ատելի հայ ժողովրդի համար, ատելի, զզվելի է նաև սիմվոլացված Հայաստանի համար, որը վեպում հանդես է գալիս Զանգվի կերպարով, որի ափին է թառել բերդը և որի բերանն է խցկել գազանն իր կեղտոտ ոտները։ Զանգին հայ ժողովրդի սիմվոլն է, օտար բռնությունը չհանդուրժող, ազատարաղձ ու շինարար ժողովրդի սիմվոլը։ Նա ադիշեր ցերեկ, անքուն, անդադար, գժված, կատաղած նրա բաց դոշին, նրա անիրավ սրտին՝ իր պլոկած ջրի անհերան թրովը, քարի ուբաքովը վեր հատում, զարկում ա, բայց տեսնելով՝ թե չի՛

կարում ջիգրը հանել, մրեժն առնել, նրան քանդել, գոռալով, զանգատելով, կական բառնալով, քիչ քիչ ձենը փորը քցում ու մունջ մունջ երեսը կալնում, Զանգիբասարի ծոցն ա մտնում ու հույսը կտրած, սիրտը կոտրած՝ տխուր դես ու դեն ցրվում, ցնորվում ու հազար բարի, հազար պտուղ ու արդյունք տալով, բաշխելով, համփեկն մոլորում, կորչում ու չի՛ կարում իր սիրուն քվորն էլա, Արագին մեկ խաբար տանի» (53)։ Զանգին երկակի բնավորությամբ օժտված կերպար է՝ օտար լծի նկատմամբ անհաշտ, իսկ սեփական երկրի ու ժողովրդի համար՝ սրտացավ ու շռայլ։ Նրան սիրում, նրանով են մխիթարվում հայրենի ժողովրդի զավակները, որոնք «Նրա համփեն բռնում, նրան սիրով խառնում, իրանց մեջը, իրանց հանդն են տանում, որ նրա սուրբ կաթնահամ ջրովը՝ իրանց էրված սիրտը հովացնեն, իրանց դառը քրտինքը նրանով լվանան ու նրա տված պտղովը իրանց գլուխը պահեն» (53—54)։

Սևագրում բերդի մասին ասված էր շատ քիչ բան, իսկ Զանգիի մասին՝ ոչինչ. «Էնրդ քարափի վրա՝ գլուխը բարձրացնում ա ինչպես մեկ ջինդյանա պառավ Երևանի բերդը, ու էրեսը հեռու տեղից ծածկում, որ տեսնողին դհա շուտով խաբի ու ծոցը քաշի, ու բիրադի կուլ տա» (234)։ Այս է եղել նախապես ամբողջ նկարագրությունը, որտեղ կա միայն մի խարդախ ուժ, որը թեպետ դիպուկորեն համեմատված է կախարդ պառավի՝ չարության, խարդախության սիմվոլի հետ, սակայն ինքնին շատ թույլ է պարսկական բռնությունը բնորոշելու և հայ ժողովրդի անհաշտ ազատագրական կռիվը այդ խավար ուժի դեմ ցուցադրելու համար։

Մաքրագիրն ստեղծելիս Աբովյանին չեն բավարարել բերդի մասին նախապես գրած այս մի երկու տողերը։ Նա սևագրի լուսանցքներում ավելացրել է հաստատ ու մեկին վեպի երկրորդ գլխի սկզբնական էջը, ապա, անհրաժեշտ հավելումներ ու նրբին փոփոխություններ կատարելուց և լրացումներ անելուց հետո, արտագրել (հետագա լրացումներ էին վերև-



Մի էջ «Վէրք Հայաստանիի» սևագրից։

վրում մեջբերած հատվածները)։ Տեսնենք, թե ինչպե՞ս է ըստեղծվել այս սիմվոլիկ բնանկարը։

Սիմվոլացումը կատարյալ և բնանկարը գեղարվեստական դարձնելու նպատակով Աբովյանը վարպետորեն փոխել է մի շարք բառ ու բառաձևեր և առարկաները անվանել այլաբանորեն։ Եթե նախապես սևագրի լուսանցքներում բերդն ու նրա բաժինները անվանվում էին իրենց իսկական անուններով. «Մեկ դուռն Հյուսիս, մեկ դուռն Հարավ», «Մեկ ծերը Կոնդումը, մեկ ծերը Բուլաղըղվումը» (234), հետագայում դուռ և ծեր բառերը փոխարինվում են բերան և ոտ բառերով. «Մեկ բերանը Հյուսիս, մեկը Հարավ բաց արած», «Մեկ ոտը Կոնդումը, մեկ ոտը Դամուրբուլաղի գլխին դրած» (53)։ Սակայն այստեղ նա կանգ չի առել։ Չէ՞ որ բերան և ոտ ընդարձակ իմաստ ունեցող բառեր են, չէ՞ որ ինչպես դրանք, նույնպես և նախապես եղած «ատամները վեր թափած», «պոպոզը գլխին», «երկու ձեռքով Զանգվի քարոտ զարհուրելի, սևադեմ ձորը՝ արևմտյան կողմը խոտած, գոշին կպցրած» (234) և այլ արտահայտությունները բերդի էությունը բնորոշելու համար բավարար չեն։ Դրանք անձնավորում են առարկան, բայց ինչպես հարկն է չեն բնորոշում նրա էությունը։ Անշուշտ Աբովյանը այդ է նկատի ունեցել փոխելով վերջին տողերը «թավթառ», «սուր սուր ատամները գլխին շարած», «ջուխտ ճանգերով Զանգվի՝ քարոտ, զարհուրելի, սևադեմ ձորը խոտած, գոշին կպցրած» (53) պատկերավոր արտահայտություններով։ Վերջինները բնորոշում են բերդի հրեշային էությունը։ Ժողովրդի երևակայության մեջ յոթ գլխանի դևերն են միայն պատկերվում ճանգերով, թավթառի արտաքինով ու սրած ատամներով։ Աբովյանը կատարել է այլ փոփոխություններ ևս։ Սևագրում բերդը նախապես համեմատված էր չար պառավի հետ՝ «ինչպես մեկ ջինդյանա պառավ», «էրեսը լիրբ կնգապես դեմ տված» (243)։ Երկուսն էլ՝ կախարդ պառավ և լիրբ կնիկ թույլ համեմատություններ են և պարսկական բանությանը

համազոր չեն։ Աբովյանը լուսանցքներում նախորդների տեղ դնում է նոր համեմատելիներ. «Հազար գլխանի վիշապի պես», «Երեսը լիրբ գազանի պես դեմ տված» (234), սակայն այս էլ չի բավարարել նրան։ Ճիշտ է, «չինգյանա պառավից» «Հազար գլխանի վիշապը» հաջող է, սակայն ընտրված որոշիչով քիչ գործածելի։ Ժողովուրդը հազար գլխանի անունը տվել է հարատևող բռնակալներին, որոնք նրա երևակայության մեջ նույնացվել են դևերի հետ և որոնց տապալումը միշտ պահանջել է երկար ժամանակ, մեծամեծ զրկանքներ ու զոհեր։ Այդ է նկատի ունեցել Աբովյանը խմբագրելով վերևի համեմատությունները այսպես. «Հազար գլխանի դևի պես» «պինդ երեսը լիրբ գազանի պես դեմ տված» (53)։ Երկու համեմատություններն էլ իրենց մակդիրներով հաջող են և դիպուկ։ Իսկապես որ, պարսկական բռնակալությունը դարեր շարունակ չոքել էր հայ ժողովրդի վզին և, չնայած իր դեմ ծառացած ժողովրդական ընդվզումներին և ռուսական զորքերի հաղթական արշավներին, չէր ցանկանում հրաժարվել Հայաստանից։ Ճիշտ է նկատել Աբովյանը, թե Երևանի հայերը տեղացի թյուրքերի օգնությամբ «շատ անգամ... քշել էին նրանց, ամա թրի զոռով էկել, էլ եդ երկիրը զավթել էին» (128)։ Միայն այս հաջող մակդիրները չէ, որ Աբովյանը տալիս է պարսկական բռնությանը կամ նրա սիմվոլը հանդիսացող բերդին։ Վեպում նա օգտագործել է ուրիշ մակդիրներ ևս, երբեմն էլ փոխել կամ կրճատել եղածը։ Հատկապես մաքրագրի մեջ պարսկական բռնության սիմվոլ բերդը բնորոշվում է հետևյալներով. «Ցից գլուխը բարձրացընում», «շաղացած գլուխը երկինքը ցցած», «անամոթ երեսը կոխած», «անմազ, անլեզու մարդակեր բերդը», «ագահ աչքերը գետին քցում» (53) և այլն, որոնք նախապես սևագրում չեն եղել։ Ընդգծված բոլոր մակդիրները ոչ միայն կատարյալ են դարձնում այլաբանությունը, այլև արտահայտում են այն արհա-

մարհանքը, որ կար ժողովրդի սրտում, դեպի պարսկական լուծը։

Այսպիսով, բառերը տեղին գործածելու, մակդիրները վարպետորեն վերագրելու, այլաբանությունն ու բնանկարը հաջողությամբ միահյուսելու, շարահյուսությունը ճկուն և համեմատությունները շնորհքով կատարելու հետևանքով Աբովյանի խոսքը դարձել է գեղեցիկ ու կենդանի, արտահայտությունները պատկերավոր, ասելիքը պարզ ու հստակ, նպատակը՝ ըմբռնելի։ Նրա կատարած համեմատությունների, տված մակդիրների և ստեղծած այլաբանությունների շնորհիվ մեծ ուժի է հասել գաղափարական ու գեղարվեստական տեսակետից Երևանի բերդի հոյակապ նկարագրությունը, որը համարյա չկար սևագրում։

Այս կատարյալ այլաբանական բնանկարի՝ ընթերցողի վրա գործած անջնջելի ազդեցությանը մեծապես նպաստել են նաև մաքրագրում եղած այն հատվածները, որոնցում Աբովյանը բերդի՝ պարսից բռնապետության սիմվոլի, նկատմամբ իր անձնական զգացումներն ու տպավորությունները, իր ապրած մեծ ու խոր վիշտն, իր ատելությունն է արտահայտել։ «Գնա՛նք Երևանու բերդը, օրը մթնում ա, խավարը բռնում, աչքերս սևանում, սիրտս տրորվում ու ինչ տեղ որ ծնվել եմ, է՛ն հողն էլ ա աչքիս փուշ դառել, սրտիս դանակ։ Ղուշն իր բունը սրում ա, ես իմ հողը ատում, փնովում, չունքի լսած ու տեսած բաներս կրակ են դառել, սիրտս էրում, փաթթում. չունքի Երևանու բերդի հողի ու ջրի շատ փայը՝ հե՛նց բանիր՝ Հայի արյունով ա շաղախած, ի՞նչպես անեմ, ո՞ր ջուրն ընկնեմ, որ սիրտս հովանա, յա մեռնիմ, պրծնիմ ու էս դարդերը ինձ սաղ սաղ չուտեն, չպանեն» (55—56)։ Սրանք Աբովյանի անձնական տրամադրությունները չեն միայն, այլ ողջ հայ ժողովրդի, որի համար անտանելի էր դարձել օտարի լուծը, կոտորած ու ավեր բերող հրեշային զորությունը, որ աճում ու ամրանում էր հայ ժողովրդի արցունքով ու արյունով։

Սիմվոլիկայի գերազանց նմուշ է նաև մաքրագրին կցված «Զանգին»՝ այդ հոյակապ բանաստեղծությունը։ Գետի հոսքի ու փայլքի տպավորությունը Աբովյանը ստեղծել է բնաձայնական բառերի կուտակմամբ, արագահոսությունը՝ երկարաշունչ նախադասությունների սլացքով։ Սկիզբ առնելով հայկական բարձրաբերձ լեռներից, կտրելով ու անցնելով անդունդներն ու կիրճերը, Զանգին հայ ժողովրդի հույսն ու ցանկություններն է տանում մայր Վոլգային՝ ռուս մեծ ժողովրդին, որպեսզի նա հովանավորի, պաշտպանի ու մշտապես բարի աչքով նայի Հայաստանի ու հայ ժողովրդի վրա։ «Զանգին» նախապես եղել է անկախ գործ, բաղկացած աշխարհաբար արձակ նկարագրությունից և գրաբար չափածո մասից։ Հետագայում Աբովյանը ավելացրել է նաև սյուժետային մաս, որի հիմնական գաղափարն է ամեն ինչ զոհաբերել հայրենիքի ու հայ ժողովրդի վիճակը բարվոքելու համար. «Գանձ ու հարստություն, պատիվ ու նշան, իշխանություն ու մեծություն՝ մինչև գերեզմանի դուռն են մեզ հետ ընկեր, և ո՛չ բարեկամ... Քո գո՛րծքը, քո գործքը, միայն քո անունը կպահեն։ Հայրենասիրությունը միայն քո հիշատակը կտոնի, ազգասիրությունը քո արածը՝ կենդանի կպահի, քեզ սրբի պես պաշտել կտա» (196),— կարդում ենք այնտեղ։

«Զանգի» սիմվոլիկ բանաստեղծական հատվածը նույնպես ստեղծվել է երկար ու տքնաջան աշխատանքից, լեզվաոճական բազմաթիվ փոփոխություններից հետո, որոնք իրենց էությամբ գրեթե չեն տարբերվում բերդի նկարագրության կապակցությամբ մեր բացահայտածներից։

ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ի՞նչ է իրենից ներկայացնում «Վերք Հայաստանիի» լեզուն. Բարբա՞ռ է, ժամանակի աշխարհաբա՞րը, թե՞ մի միջին բան։ Այս հարցը անհրաժեշտ է նախապես պարզել, որպեսզի ըմբռնելի լինի վեպի մշակման ժամանակ հեղինակի կատարած լեզվաոճական փոփոխությունների էությունը։

Վեպի հառաջաբանում Աբովյանը պարզ ասում է, որ գրում է «անպատիվ» հաշակված «մեր նոր լեզվով», աշխարհաբարով, «հարիր հազարի» ամենօրյա հաղորդակցման լեզվով։

«Պարապ վախտի խաղալիքի» հառաջաբանում, նույնպես, ուր Աբովյանը իր աշխարհաբար երկերի շարքում հիշում է «Վերք Հայաստանին», ասված է. «Ուզում էի, որ գրած բանս ամեն մարդ հասկանա, ու էնդուր համար աշխարհաբար գրեցի»[1]։ Սրանք ցույց են տալիս, որ հեղինակը գիտակցորեն «Վերք Հայաստանին» գրել է ժամանակի աշխարհաբարով, որ հասկանալի էր ողջ հայությանը և ո՛չ բարբառով, որին լայն զանգվածները անհաղորդ էին։

«Վերք Հայաստանիի» լեզուն իբրև այդպիսին է ըմբռնել նաև ռևոլյուցիոն-դեմոկրատ Մ. Նալբանդյանը։ Մերժելով այն սխալ կարծիքը, թե «Վերք Հայաստանիի» լեզուն բարբառային է, ոճը գերմանական, Նալբանդյանը հավաստում է, որ Աբովյանը գրել է ժամանակի աշխարհաբարով՝ առատորեն օգտագործելով ժողովրդական բառ ու բանը։ «Աբովյանի լեզ-

---

[1] ԽԱ, ԵԺ, II, 189։

մի համար կարելի է ասել այս միայն, որ շատ հաղթահարված է տեղական բարբառից, բայց այդ բանում Աբովյանցը ունեցել է յուր մասնավոր խորհուրդը... Լեզվի և ոճի ճապաղությունը հետևանք չէ բանաստեղծի գերմանագիտությանը, այլ բուն ազդեցություն տեղական ժողովրդի կյանքին ու միտք հայտնելու ձևերին։ Նույնանիշ բառերի անհամ կրկնությունք տեսնում ենք, այո՛, բայց չմոռանանք, որ Աբովյանցի խորհուրդն է գրել այնպես, որ անկիրթ ժողովուրդը չկարծե, թե գիրք է կարդում, այլ կարծե, թե մի մարդ խոսում էր յուր հետ. ի՞նչ աներ Աբովյանցը, եթե ասիացին չափազանց է ամեն բանի մեջ»[1]։

Այլևայլ առիթներով ևս անդրադառնալով «Վերք Հայաստանի» լեզվին, Նալբանդյանը կրկնել է միշտ, որ այն գրված է «հավատարիմ մնալով նոր լեզվի իրավունքին ու արտոնության»[2]։

«Վերք Հայաստանի» լեզվին տված Նալբանդյանի գնահատականից ելնելով աշխատենք պարզել, թե ի՞նչ բնույթի լեզվաոճական փոփոխություններ է կատարել Աբովյանը «Վերք Հայաստանի» վերամշակման ու վերախմբագրման ժամանակ։

Սկսենք բառապաշարի մեջ կատարված փոփոխություններից, հիմք ունենալով վեպի սևագիր ու մաքրագիր վարիանտները։

Փոփոխությունների առաջին խումբը վերաբերում է բարբառային բառերի ու ձևերի գրականացմանը։ Վեպի սևագիրը վերամշակելիս, հեղինակը բազմաթիվ դեպքերում բարբառային բառերը, ինչպես նաև բառերի գրության բարբառային ձևերը փոխում է գրականով. «Մէկ հալևոր» (225)—«մեկ ծեր մարդ» (44), «մեր կուռը» (323) — «մեր կողմը» (138),

---

[1] Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. I, Երևան, 1945, էջ 280։

[2] Նույն տեղում, հ. III, էջ 203։

«մովի փոխանը» (219)—«կանաչ մով շալվարը» (36), «խըն-կան ծաղիկ պռոշները» (223)—«խնկան ծաղիկ շրթունքը» (42), «բոզություն չեմ արել» (205)—«անառակություն մըր-բավս էլ չի՛ անց կենում» (13), «ուսի տակուցը» (241)—«ուսաբերնիցն են կտրել» 763) և շատ ուրիշները։ Սրանց մեջ ակնհայտ է բարբառային ձևերի գրականացումը։ Ահա ուղղագրական բնույթի փոփոխություններ. «եզո» (298, 280, 252 են)—«հետո» (115, 70, 98 են), «ըթնի» (327, 323 են)—«գտնի» (114, 138), «կաղնել» (208, 207, 235 են)—«կանգնել» (18, 16, 59 են), «մեննձանա» (329)—«մեծանա» (146), «Տիրոնչ ձենը հանաչելով» (217—8)—«տիրոջ ձենը լսելով» (35), «ընթի տակին» (241)—«ըթի տակին» (65) և ուրիշները։ Կամ «թեր միջումը խրած» (244)—«թեր մեջը խրած» (68), «էս օրինակին դուս թափեցան» (244)—«էնպես դուս թափեցան» (67), «չի պետք է կորցրած» (312)—կորցնել պետքը չի» (128), «շատ տեղ» (207)—«շատ անգամ» (17) և շատ ուրիշները։ Բերված օրինակները ցույց են տալիս, որ Աբովյանը վեպի լեզուն հետևողականորեն ազատել է բարբառային տարրերից և ամեն կերպ ջանացել սիստեմավորել և լայն մասսաներին հասկանալի դարձնել։ Իսկ որ այնուհանդերձ նրա մեջ մնացել են բարբառային շատ բառեր ու ձևեր, ապա դա ոչ թե «Վերք Հայաստանիի» պակասությունն է, այլ այդպիսին է եղել ժամանակի աշխարհահայացքը։

Փոփոխությունների երկրորդ խումբը վերաբերում է թյուրք-թաթարական, պարսկական և այլ օտար բառերի ու բառաձևերի հայացմանը, լեզուն նրանցից մաքրելուն։ Այս ուղղությամբ Աբովյանը աշխատել է դեռ սևագրի մշակման ժամանակ, որի էջերի վրա տեսնում ենք բազմաթիվ տեղեր, ուր օտար բառը ջնջված ու փոխարինված է հայերենով. «Ջուզի ջան» (25բ)[1]—

[1] Փակագծերում եղած այս և հաջորդ մի քանի թվերը վերաբերում են վեպի սևագրի ձեռագրին (ԱՆԱ № 2)։

«որդի ջան» (221), «մոր հալը» (26 ա)—«մոր ամեն մեկ ասա-ծըն ու արածը» (221), «իգիթը» (30 ա)—«հսկա երիտասարդը» (224), «թեզ էլավ, վրա պրծավ (96 բ)—«դուս պրծա՜վ հասավ» (281), «ձեր ջանովն փարվիլ» (122 ա)—«ձեր գրկովն փարվիլ» (301), «մեր գլխին ընդունին» (124 ա)—«մեր հավատն ընդունին (303) և ուրիշները։ Այսպիսի բան նկատում ենք նաև հետագայում՝ մաքրագրի էջերի վրա։ Վեպի վերջնական արտագրությունից հետո անգամ Աբովյանը հեռացրել է թյուրք-թաթարական մի շարք բառեր։ «Հազար չվանով չաթած» — «հազար չվանով կապած» (162), «ղվաթ բաշխեցիր»—«զորություն տվիր» (189), «մեյիդդ գերեզման»—«դագաղդ գերեզման» (196), «էս բայաթին ասեց»—«էս խաղն ասեց» (141), «հայվանն էլա»—«հավն էլա» (25) և այլն։

Բայց վեպի լեզուն օտար բառերից, ամենայն խստությամբ, Աբովյանը սկսել է մաքրել վերջին վարիանտը ստեղծելու շրջանում։ Դժբախտաբար մաքրագրի ո՛չ բոլոր էջերն են հեղինակի ձեռքով արտագրված, այնպես որ Աբովյանը հնարավորություն չի ունեցել վեպի բոլոր մասերում հավասարապես փոփոխություններ կատարել։ Այնուհանդերձ սևվագրի համեմատությամբ շատ օտար բառեր փոփոխված են մաքուր գրականով. «Բաղի տեղ» (249)—«շատ տեղ» (69), «ջերգով կանգնում» (218)—«շարքով կանգնում» (35), «պատի դրաղին կաղնած» (215)—«պատի տակին կանգնած» (31), «մեկ նաչար, խեղճ... լորի» (242)—«մեկ խեղճ, անճար լորի» (66), «ինչ թահր» (242)— «ինչ կերպ» (66), «ըղհաթի տունը կրանդեն» (312)—«բռնվածների տունը կրանդեն» (128), «վանքի հայաթը» (266)—«վանքի դուռը» (83), «Աղասուն չաթեցին» (311)—«Աղասուն կապեցին (126), «անսաս գլուխն առնի» (308)—«անպատճառ գլուխն առնի» (123), «ինքն էլ հետո սաղ սաղ հողը կմանի» (331)—«նա էլ կենդանի հետո պետք է հողը մտնի» (148), «պարսից գյամիքը» (296)—«պարսից նավերը» (114), «քանի որ սաղ եմ» (332)—«քանի

որ կենդանի եմ» (149), «հասրաթ մնացել» (333)—«կարոտ մնացել» (150, երեք անգամ), «միտքդ թամուզ...» (336)—«միտքդ հստակ» (151), «ղայիմ վեր քաշում» (213)—«սաստիկ վեր քաշում» (28), «սիրտըները նիգյարան» (324)—«տարակույս» (139), «դուք թեզ պրծաք... եթիմներիս...» (298)—«դուք շուտով պրծաք... որբերիս...» (115), «կես ջանն էլ» (205)—«կես հոգին» (14), «ղոշաղությունը» (226)—«նրա քաջությունն» (45), «իր դարդը մոռանալով» (213)—«իր ցավը մոռացավ» (29), «նրա թայդաշ աղչկերքը» (222)—«նրա ընկեր աղջկերքը» (40), «էն վախտն էր գնում» (222)—«էն ժամանակն էր գնում» (41), «մալ ու դովլաթով» (210)—«հազար բարությունով» (20) և բազմաթիվ ուրիշները։

Սևագրում եղած օտար լեզուներով արտահայտությունները ևս (ուղղակի խոսքերը) թարգմանվում են հայերեն, բացառությամբ հատ ու կենտ բառերի, որոնք պահվում են ոճավորման նպատակով. «Հայիֆ, հայիֆ՝ քի էրմանի սան» (226)—«հայի՛ֆ, հայի՛ֆ, որ Հայ ես» (45), «Սարդար՝ բաշնդա ղուրբան» (313)—«Սարդար՝ գլխիդ ղուրբան» (128), «խա՛ն բաշնդա դոնիմ» (312)—«խա՛ն գլխովդ ման տանք» (127)։ Իսկ երբ օտար լեզուներով արտահայտությունները ծավալուն են, ամբողջությամբ կրճատվել են, օրինակ՝ «Սասըն քյա՛ս, ղանղախպա, քյոփագ ուշաղի, էլա ինդի բուահթդա ղաոնն երթարամ։ Նա՞ դը չինգյանալըդ, Սարդար բույրուխ դը, գյարյաք գըն ափարախ՝ հատընդը նա՞ դը» (219—20), «գյոռն չաթլասն» (218) արտահայտությունը, ինչպես նաև թյուրք մոլլայի աղոթքի մեծագույն մասը (էջ 250)։ Դրանց վերացումը, հարկավ, դրական է անդրադարձել վեպի վրա։

Շատ դեպքերում հայերեն և օտար բառերով կազմված ոճական ձևերն ու արտահայտությունները փոխում է գրական հայերենով ու ժողովրդական արտահայտություններով։ «Մուլար տո՛ւր» (252)—«հա՛մբերիր մի քիչ» (70), «աչքերոց, գլխերոց

կըլի» (266)—«շներոց, գիլերոց կըլի» (84), «որ փչես, հազար տեղ քյալամաղ (մալաղի) կտա» (211)—«մեկ որ փչես՝ հազար տեղ գունդ ու կծիկ կըլի» (22), «քեզ դարդոտ չասատ դանք» (261)—«քեզ դարդոտ չգտնինք» (77), «սուրութմիշ անելով» (240)—«քարքաշան անելով» (62), «նրանց զուլուզ անեն» (313)—«նրանց ծառայեն» (128), «հիմքս բրիշակ էլավ» (329)—«հիմքս տակ ու վեր էլավ» (146), «Գյաորեզյու ըլին» (312)—«փչանան» (128), «հարամ ըլի» (224)— «խռով կենա» (42), «թասիր չէր անիլ» (226)—«չէր խնայիլ» (45), «էս զուռումսաղը» (212)—«էս մարդը» (26), «աղի՛զ ջա՛ն, ջանմ ջան» (317)—«մեր հոգի, մեր աչքի լիս» (133), «իրանց քեֆն արամիշ էին անում» (218)— «քեֆ էին անում» (36) և շատ ու շատ ուրիշները։

Աբովյանը օտար բառերը վերացրել է նաև արտահայտությունները վերաշարադրելու, վերափոխելու միջոցով, ըստ որում նոր շարադրանքը կատարված է այնպես, որ այլևս կարիք չզգացվի օտար բառը գործածելու. օրինակ. «էս խոսքերը մեր աղերքանցը՝ մի քիչ ղվար ավեց» (319)—«էս խոսքերը մեր աղերքանց սիրտը տասը թիզ բարձրացրեց» (134), «էլ էս երկրումը խեր չենք ունենալ» (315)—«էլ էս երկրումը կենալ չի ըլիլ» (131), «մարդի թշվառ հալը տեսնելով» (213) —«մարդի խայտառակությունը տեսավ...» (29), «տոլուն... ափրա տերտերին դեմ արեց» (217)—«տոլուն էլի տերտերին դեմ արեց» (34), «խոսքը տեղն ընկած վախտը» (307)— «որ... խոսք ա ընկնում» (123) և շատ ուրիշները։ Այս ճանապարհով վեպը ազատագրվել է՝ ղվաթ, խեր, հալը, ափրա, վախտը և այլ թյուրք-թաթարական բառերից, որը մեծապես նպաստել է նրա լեզվի մաքրությանն ու միասնությանը։ Կան սակավաթիվ դեպքեր էլ, երբ օտար բառը փոխարինվում է բարբառային ձևերով. «նյա կզարմանա» (300)—պտի զարմանա» (117), «տանկը գողանա» (223)—«գունը գողանա» (41) և այլն։ Չենք խոսում այն խոշոր հատվածների մասին,

որոնց վերափոխման, կամ դուրս թողնելու պատճառով, վեպը ազատվել է ուրիշ շատ օտար բառերից ու ձևերից։ Այս բոլորը ցույց են տալիս որ Աբովյանը վեպը մշակելիս հավատարիմ է եղել այն սկզբունքին, որ առաջադրել էր ինքը. «Մեր նոր լեզվի կեսը Թուրքի ու Պարսից բառ ա։ Բայց սրա դեղն էլ հեշտ ա, քիչ քիչ կարելի ա խատակել» (64)։ Ինչպես Աբովյանը շարունակաբար «խատակել» է վեպի լեզուն։

«Վերք Հայաստանիի» մեջ կան օտար բառերի խնդրում հակառակ փոփոխություններ էլ (հայերեն բառը փոխված է օտարով)։ Դա կատարված է նախ՝ հերոսների ուղղակի խոսքի մեջ, ոճավորման նպատակով, եթե նրանք հայեր չեն։ Սվանզուլի խանը սարդարին խնդրելով՝ ազատել քանաքեռցիներին և Աղասու կամ Թաթուհու պատճառով անմեղ ժողովրդին չպատժել, սևագրում ասում էր. «Մեկ անպիտան աղչկա խաթեր... էսքան տուն քանդում <են>։ Բաս ո՞ւր մնա քո ռահմը, որ բոլոր աշխարք տեսել ու զարմացել ա... Ընչի՞ էս սրանց կորցնում» (313)։ Մաքրագրում վերափոխել է այսպես. «Ի՞նչպես են մեկ լաչառ աղչկա խաթեր... էսքան տուն քանդում, բաս ո՞ւր մնա քո ռահմն ու ինսաֆը՝ որ ալամ աշխարք տեսել՝ զարմացել ա... ընչի՞ ես էնպես տեղը կորցնում» (128—29)։ Կամ՝ Աղասուն հետապնդող թյուրքերը Արարանի եկեղեցու մասին ասել են. «էս սրբի հետ կռիվ տալ չի ըլի» (319), որ հետո դարձրել է. «էս գիժ սրբի հետ ճալլա տալ չի ըլի» (134) և այսպես մի երկու ուրիշ տեղ։ Աբովյանը, ընդգծած բառերը փոխելով կամ ավելացնելով, պահպանել է հերոսների լեզվի ազգային երանգը։ Կան դեպքեր էլ, երբ հայերեն որոշ արտահայտություններ փոխարինված են օտար ձևերով՝ հաշվի առնելով վերջինների լայն գործածությունը. «Ցամաք հացով, ու բանջարով ենք մեր օրը անց կացնում» (264)—«հենց ցամաք հացով, ու խոտով, բանջարով ենք յոլա գնում» (81), «դեմ արին» (216—«թավազա արին» (33), «բայց թրի զոռը...» (313)—«ամա թրի զոռով» (128), «գլուխս

կծախեմ, սրան կհասցնեմ» (329)—«գլուխս կծախեմ, չեմ թողալ սրան ուրքչի ձեռին մուրդաչ» (146), «Թագավորն էլ էնպես ուռած ուռած իր պալատը չի՛ մտնիլ» (209)—«Թագավորն էլ էնպես ուռած ուռած իր հոչէ ու սարեն (պալատը) չէ՛ր մտնիլ» (19) ևն։ Ինչպես երևում է մեր բերած փոփոխություններից, նրանց համար հիմք են ծառայել կենդանի խոսակցական ձևերը։ Մաքրագրի «չոլա գնում», «քոչք ու սարա» արտահայտությունները ժողովուրդը գործածում է անգամ այժմ։

Վերջապես «Վերք Հայաստանիս»-ի մեջ կան տեղեր էլ, երբ հեղինակը այնուամենայնիվ, չի գտել որոշ բառերի համար կայուն ձև, ինչպես օրինակ՝ թեզ—շուտով, վախտ—ժամանակ, ամուր—ղայիմ, կողմիցը—դհիցը, բանց—անչախ են, որոնցից մերթ մեկն է վերցրել, մերթ մյուսը։ Սա հետևանք էր ժամանակի աշխարհաբարի միասնական սիստեմի բացակայության։ ժողովուրդը երկու ձևերն էլ հավասարապես գործածելիս է եղել, ուստի և Աբովյանը տատանվել է։

Հետաքրքրական փոփոխություններ են նկատվում նաև գրական բառերի մեջ։ Սևագրում եղած մի շարք գրական բառեր մաքրագրում փոխարինվել են ժողովրդական կենդանի ձևերով։ «Մեկ դեղ արա» (204) —«մեկ ճար արա» (13), «անհերկյուղ» (234)—«անվախ» (53), «մեր էփված հացը... ձեռ տված բանը» (266)—«մեր թխած հացը... ձեռը տված գառը» (83), «ներդաշնակ» (296)—«մեկ բերնով» (113), «մեկ հրաբուղխ սար» (235)—«մեկ կրակի սար» (59) և այլն։ Բերված օրինակներում բոլոր փոփոխություններն էլ համազոր են իրենց գրական ձևերին։ Աբովյանը դրանք կատարել է ժողովրդական ոգին պահպանելու համար։

Գրական բառը Աբովյանը փոխել է նաև գրական կամ ժողովրդական համազորով, երբ անհրաժեշտ է եղել ճշտելու սևագրում սխալ գործածված արտահայտությունը։ «Ոտովն

էին փաթաթվում» (268) դարձրել է. «ծնկներովն էին փաթաթվում» (86), «սիրտ թեք երեսից գիտել ա» (340)—«սիրտ թեք երեսից քաշել» (155), «որհնությունն կարթում» (216)—«որհնություն տալիս» (32), «էնպես ենք լսել» (264)—«էնպես ենք իմացել» (81), «իմ հողը դու ածիր» (279)—«իմ հողը դու ցրիր» (97), «աչքի լիսն էլ փչացել» (223)—«աչքերի լիսն էլ էր հատել» (42), «քրիստոսը... մեկ որ ասել էր» (265)—«մեկ որ հրամայել էր» (82), «լսողն էնպես կկարծի» (206)—«լսողն էնպես կիմանար» (14), «գիտենալ» (լավ գիտեին, հենց գիտենաս, էնպես գիտես—320, 219, 200)—«իմանալ» (լավ իմանում էին, հենց իմանաս 135, 37 և 19) և ուրիշները։

Կան դեպքեր էլ, երբ գրական բառի փոխարեն առնվում է նրա բարբառային համազորը, ելնելով վերջինի առավել լայն գործածությունից. այդ ձևերը տիպական են հայ բարբառների մեծ մասի համար։ «Եկեղեցու» (309, 319)—«ժամի» (125, 134), «նրա եղբայր Գալուստը» (307)—«սրա ախպեր Գալուստը» (122), «հայտնի ցույց տվեց» (262)—«ափաշկարա ցույց տվեց» (78), «ճանապարհի մեջտեղը» (265)—«ճամփի մեջտեղը» (83), «փնտրող» (343)— «կենող» (158), «մյուս տղերքն էլ» (317)—«էն մեկել տղերք էլ» (132), «երբ» (307, 308, 309 են)—«ինչ ժամանակ» (122, 123, 215), «ո՞ւր ա» (221)—«ի՞նչ տեղ ա» (39) և այլն։

Մի երկու տեղ էլ Աբովյանը գրական բառերի մեջ ավելացրել է ն հոգնակիացնող մասնիկը. «Աչքերը սիրով» (279)—«աչքները սիրով» (98), «զորքը կոտորեց» (306)—«զորքընները կոտորեց» (122) և այլն։ Սրանք էլ, ընդհանուր առմամբ, գրական են անդրադարձել վեպի լեզվի վրա։

Մաքրագրի մեջ կան գրական բառերը զուտ բարբառային ձևերով փոխարինելու դեպքեր էլ, որոնք թեպետ քանակապես շատ չեն, սակայն շեղում են հեղինակի հիմնական սկզբունքից.— «Մինչև բանը բանին հասնում է» (263—309)—«ընչանէ բանը բանին» (80, 124), «ձեր բարեկամը» (323)—

«ձեր արինը» (138), «իմ տան սյունն» (279)—«իմ տան սինն» (97), «միրև» (279)—«մկամ» (97) և այլն: Իսկ որոշ բառեր գործածվում են թե գրական և թե բարբառային ձևերով. երնխա—էրնխա, լինել—ըլել, պետք է—պտի, ցույց—նշանց որս—ֆորս, ուսաց—ուսի, ևն:

Այսպիսով, չնայած մասնակի շեղումների և որոշ ձևերի դեռևս ոչ հետևողական գործածության, գրական բառերի խնդրում էլ Աբովյանը հիմնականում ճիշտ ուղի է ընտրել և վեպը վերամշակելիս կանգ է առել նրանց վրա, որոնք ժողովըրդական լայն մասսաներին հասկանալի ու նրանց կողմից գործածելի են:

Սևագրում եղած գրաբար բառերի ու արտահայտությունների նկատմամբ նույնպես Աբովյանը որոշակի սկզբունք է հանդես բերել: Գրաբար բառը փոխում է աշխարհաբարով «ամենիցը առավել» (278)—«ամենից ավելի» (97), «ով կարե» (321)—«ո՞վ է կարող» (136), «քո հոգին գա հանգչի» (308) «քո հոգին գա... իջնի» (123): Քերականական ձևերը աշխարհաբարացնում է. «Զորապետքն» (235)—«զորապետները» (58—59), «քաղցր երեսոք» (219)—«քաղցր երեսով» (37), «մեր փուշ ոսկերքն» (301)—«մեր փուշ ոսկորները» (118), «երկուսը բյուրոց» (280)—«երկուսը բյուրին» (98), «Թագուհվո» (311)—«Թագուհու» (126), «հոգվո փրկություն մարմնո առողջություն» (278)—«հոգու փրկություն... մարմնի առողջություն» (97) և այլն:

Սևագրում կային գրաբար պարբերություններ ևս. «Հազար պտուղ և արդիւնք տեսեր դիմօք, հանդարտ, անմռունչ, տա, բաշխէ բնակչացն Երեւանի, որք կարօտ աչօք, անխաղըն սիրով՝ փակեալ զճանապարհ նորա՝ լանջքն, գրկին ամենուստեք զնորա ասպր, կաթնահամ հեղեղ և տանեն հանդա ի բնակութիւնս ի կալուածս և ի դաշտս իւրեանց» (235): Այս ու նման հատվածները մաքրագրում վերախմբագրվել ու թարգմանվել են աշխարհաբար (տես էջեր 53—54):

Վերևում բերված օրինակները հաստատում են, որ վեպի լեզուն և լեզվական ոճը մշակելիս, Աբովյանը ջանք է թափել որքան հնարավոր է, վերացնել, կամ փոխել գրաբար բառերն ու արտահայտությունները, անգամ հատվածները, այդ բոլորը համահնչուն դարձնելով վեպի միասնական լեզվին ու ոճին։

Սևագրի ու մաքրագրի համեմատությունը ի հայտ է բերում բազմաթիվ փոփոխություններ՝ կապված բայական ձևերի հետ։ Մաքրագրում կան շատ դեպքեր, երբ բայական պարզ ձևը փոխարինվում է հարադրականով. «տեղիցը շարժեց» (213)—«տեղիցը ժաժ էկավ» (29), «խելագարի պես» (320), «խելքը կորցրածի պես» (135), «քանի որ չէր մթնել» (241)—«քանի որ դեռ մութը վրա չէր հասել» (65), «վեր էին թափել, բռնել» (241)—«վեր էին թափել... բուն մտել» (65), «տեսնի ու լա» (255)—«տեսնի ու լաց ըլի» (72), «մոռանանք» (300), «մտքից հանենք» (117), «մեզ տեղում քնացրիք» (298)—«մեզ տանը քուն դրիք» (112), «ո՞ւմը մեկ թեք աչքով նայեցինք» (317)—«ո՞ւմը մեկ ծուռ աչքով մտիկ արինք» (132), «նայում էր» (222)—«մտիկ էր տալիս» (40), «մտքներումը մտածում էին» (223)—«միտք էին անում» (42), «էնքան տարի ծառայել էին» (270)—«էնքան տարի ծառայություն էին արել» (89) և այլն։ Կան մի երկու հակառակ օրինակներ էլ. «չիրիդ խաղ անի» (204)—«չիրիդ խաղա» (9), «ոտի տակ տալիս» (308)—«ոտնատակ տալիս» (123), «մնաց քար դառած» (267)—«մնաց քարացած» (85) և այլն։ Այս փոփոխությունները, սակայն, կատարելիս հաշվի են առնված համապատասխան կոնտեքստում իմաստային ու կապակցական հանգամանքները։

Աբովյանն այնուհետև բայը փոխարինել է համազոր ժողովրդական արտահայտություններով, օր. «սպանեն» (255)—«սուրը քաշեն» (72), «ընկեր ա կանչում» (320)—«ընկեր ա ձեն տալիս» (135), «առակը կատարեցավ» (249)—«առակը տեղն էկավ» (69), «խոտը քանդելով» (249)—«խոտը վեր ածելով»

(69), «կրակը քցեի՝ ձեն չէ՛ր տալ» (275)—«կրակը քցեիր երեսը եդ չէր դարձնիլ» (97), «աշխարքը բոլոր անսասացավ» (224)—«աշխարքն իրարուցավ գիպավ ու ձենը կտրեց» (43), «մեկ զուշ որ գլխներովս թռչում ա» (322)—«մեկ զուշ որ գլխներովս անց է կենում» (138), «աղանի ձեներն հատեինք» (300)—«աղանի ձեներն անկաչ գնենք» (117) «փորդ կճղեմ» (220)—«փորդ վեր կածեմ» (38), «տեսնում էի» (331)—«աչքովս էր ընկնում» (148) և այլն։ Այս փոփոխությունները նպաստել են վեպի լեզվի կենդանությանը։

Քերականական տեսակետից՝ Աբովյանը վեպի լեզուն մշակելիս կատարել է ուրիշ կարգի փոփոխություններ ևս։ Թվարկենք դրանք մի երկու բնորոշ օրինակներով.

Դիմորոշ հոդի տեղ օգտագործում է դերանուն. «երեսներիդ զուրբան» (300)—«ձեր երեսին զուրբան» (117), «Ու հոգիներս էլ» (298)—«ու մեր հոգին էլ» (116) և այլն։

Վերացնում է նույնիմաստ կրկնություններից մեկը: «Ծիծաղելիս՝ ծիծաղում, հրհռալիս՝ հրհռում, խնդալիս՝ խնդում» (297)։ Վերջին «խնդալիս՝ խնդում» արտահայտությունը մաքրագրում այլևս չի բերել, որովհետև նախ, բարբառային է, ապա, կրկնությունն է «ծիծաղելիս՝ ծիծաղում» արտահայտության։

Արտահայտությունները սեղմում ու փոխարինում է համազոր մեկ բառով: «Արժան չհամարի իմանալ» (307)—«մոռանալ» (123)։

Անուղղակի ասած արտահայտությունները փոխում է հաստատական ձևով, երբ առաջինները առանձին ռեական արժեք չեն ներկայացնում: «էլ ձոր չէ՛ր մնացել, էլ սար չէր մնացել՝ բոլոր հարամով լցվել էր» (270)—«սար ու ձոր հարամով, գողով, ավազակով լցվել էին» (89), կամ «հացի կտոր դառավ օխտը, ութ մանեթ, բայց էնքան հաց ո՞վ կտար, էնքան փող ո՞վ» (310)—«հացի կտոր դառավ օխտը, ութ մանեթ, էն էլ չէր ճարվում» (125—26)։

Երբ բարբառային արտահայտությունները հատուկ նպատակ չեն հետապնդում, գրականացնում է: *«Ջրել մտիք արինք, հլե աչքըներս տրաքեց»* (322)—*«Էնքան մտիկ արինք, որ աչքըներս ճամփին ջուր կտրեց»* (138)։ *Բացառություն է կազմում միայն քրդստանցի հայերի ուղղակի խոսքը:*

Օտար ծագում ունեցող տեղանունները բացատրում է «ասած» բառի հավելումով: *«Ղշլաղ գեղն էրեց»* (309)—*«Ղշլաղ* ասած *գեղն էրեց»* (125), *«Մատուշկի կարմունքը»* (306)—*«Մամուշկի* ասած *կարմունքը»* (122)։

Մի շարք բառեր, որոնք ընթերցողներից ոչ բոլորին են հասկանալի, բացատրվում են գրական բառերով: *«Ջիանոնց համար մի քիչ* եմ *ճարեն»* (316)—*«Ձիանոնց համար մի քիչ* եմ (առեյիֆ) *ճարեն»* (131), «սարախլվի *նման էին»* (261)—«սարախլվի (Պարսիկ) *նման էին»* (77), *«անթիվ* դուգմեճանցով» (244)—*«անթիվ* դուգմեճով (կոճակ)» (68), *«սպիտակ կտավե* չալման» (244)—*«սպիտակ կտավե* չալմա (գլխի փաթաթան)» (68), «կոճղի *ծերից»* (241)— «կոճղի (բլուր) *ծերից»* (65), *մի անգամ էլ հայերեն բառը՝ ռուսերենով.* «բոշակի *արժանացավ»* (306)—«բոշակի (պենսիա) *արժանացավ»* (122) *և այլն։*

Իմաստը ընդարձակելու նպատակով մի անուն (առարկա) փոխում է ժողովրդական կրկնավոր ձևերով: *«Երթիկները բաց արին»* (216)—*«Երթիկ ու դուռ բաց արին»* (32), *«պատերը վարդ են դառել, դաշտերը՝ ծաղիկ»* (226)—*«պատերը վարդ են դառել, դաշտ ու սար՝ ծաղիկ»* (45)։ *Ինչ խոսք, որ այս փոփոխությունները նպաստել են վեպի լեզվի միասնությանը։*

Մաքրագրում Աբովյանը կատարել է ոճական արժեք ունեցող բազմաթիվ փոփոխություններ ևս։ Շնորհիվ դրանց վեպը հարստացել է ժողովրդական մտածողությամբ, մշտակենդան ածերով ու դարձվածքներով, արտահայտչական գերազանց միջոցներով և հուզականությամբ:

Փոփոխությունների առաջին խումբը վերաբերում է վեպի էմոցիոնալ ուժը սաստկացնող հնարներին։ Այդ նպատակով

Աբովյանը փոխել է առանձին բառեր. «Թվանքները որ… բաց չէլան» (320)—«Թվանքները որ… չճռռացին» (135), «Համի գլուխ կտրելով» (320)—«Համի գլուխ թռցնելով» (135), «անձրևի ճանդած էր» (321)—«անձրևի նեղած էր» (136) և շատերը։ Արտահայտության սկզբից կամ վերջից հեղինակն ավելացրել է միջարկություններ (հատկապես հերոսների ուղղակի խոսքի մեջ), որոնց դերը խոսքի էմոցիոնալ ազդեցությունը ուժեղացնելու տեսակետից անառարկելի է։ «Զուլումը մեղանից պակաս չի՛ ըլում» (204)—«մեղանից զուլումը պակաս չի ըլում՝ է՜» (10), «ժամ չի՛ դառավ մեր գլխին, մեկ իշի հարսանիք դառավ» (204)—«է՜հ՝ ժամ չի դառավ մեր գլխին, մեկ իշի հարսանիք դառավ, ա՜ո» (9), «Հոգիդ միտքդ բե՛ր ու էնպես ուզածդ արա՛» (204)—«Հոգիդ միտքդ բե՛ր ու էդո ուզածդ արա՛՝ է՜, հո ճարեցիր ո՛չ. տա՜, տա՜, տա՜» (10), «ժամանակիս տղերքը հենց սալթ գժվել են» (204)—«պա՜, պա՜, պա՜… էս ժամանակիս տղե՜րքը՝ հենց սալթ գժվել, կապովին են գառել» (10) և շատերը։

Կան դեպքեր էլ, երբ սևագրի այս կամ այն հատվածը վերախմբագրելիս Աբովյանն ավելացրել է ո՛չ թե սոսկ մեկ կամ երկու, այլ տասնյակ միջարկություններ և երանգավորող բառ դարձվածքներ։ Բնորոշ է այս տեսակետից Աղասու հոր ողբը. «Աղասի ջան՝ մեկ թուր էլ ի՛նձ խփի, ինձ… վա՜յ իմ օրիս, արևիս, վա՜յ… տունս բրիշակ էլավ… բալա ջա՛ն… նոգի՛ ջան… իմ երկի՛նք, իմ գետի՛նք… իմ նռնշտա՛կ… վա՜յ… ամա՜ն… աչքս դուս էկավ… պտուղս խավարեցա՛վ… թո՛ղ քո՛ ձեռն ինչ սպանի… ո՛րդի ջան… թո՛ղ քո սուրդ տակին հոգիս տամ… սիպեր ջա՛ն՝ թո՛ղ քո ձեռիցը մահս անիմ… ջա՛նըմ ջան… աչքիս լիսը ճանիր… իմ երկնքի բարեպար աղջի, իմ սար… ի՛մ Աստված…» (44) և այլն։ Ընդգծված բառերից և ո՛չ մեկը սևագրում չկան։ Դրանց միջոցով վեպի մեջ են մտել ժողովրդական սգո երգերին հատուկ արտահայտություններն ու բացականչությունները։

խոսքի էմոցիոնալ ազդեցությունն ուժեղացնելու նպատակով հեղինակի կիրառած մյուս ձևը հատկանիշների կամ ավյալ վիճակի մասին գաղափար տվող բառաձևերի կուտակումն է։ Աբովյանը այս հնարանքին դիմել է դեռ սևագրում։ Թագուհու մասին նախապես ասված՝ «նրա ամեն մեկ ծիծաղելն էլ հրաշք էր» արտահայտությունը, հետագայում դարձվել է. «ամեն մեկ շարժմունքը, ամեն մեկ խոսքը, ամեն մեկ մտիկ տալը, նրա ամեն մեկ ծիծաղը հրաշք էր» (223)։ Ոճական այս հնարը մեծ չափով կիրառված է նաև մաքրագրում։ Օրինակ, հայ ժողովրդի տառապանքների մասին՝ «Աղջիկն ասես՝ քաշում էին, տղին ասես՝ տանում, շատ անգամ թուրքացնում, հավատից հանում, **շատ անգամ էլ գլուխը կտրում, էրում, նահատակում** (ընդգծած բառերը սևագրը չունի—38)։ Կամ, Աղասու վարպետորեն նվագելու մասին. «Մատը ձեռն առածին պես՝ քարին, փետին՝ շունչ, հոգի, **լեզու** էր տալիս» (16)։ Կամ, Թագուհու մանկական գուրգուրանքների մասին. «Դեռ ոտը քարի չէ՛ր դիպել, **դեռ մատը մեկ փուշ չէր մտել**» (40)։ Վերջապես, հայերի նկատմամբ օտար տիրողների կիրառած բռնությունների մասին. «Մեզ կրակն ա գնում, էրում, **շամփրի պես պտտում**» (83) և այլն։ Բերված օրինակներում կուտակումները միանգամայն նպատակային են և ընթերցողի վրա նրանց ունեցած էմոցիոնալ ազդեցությունը՝ անվիճելի։ Այս կետում Աբովյանը հետևել է ժողովրդական կենդանի խոսքին. ժողովուրդը արտակարգ նվագը միշտ համեմատել է անշունչ առարկաներին՝ շունչ ու հոգի տալու, ահավոր տանջանքը՝ շամփուրի պես կրակի վրա պտտացնելու հետ և այլն։

Ոճական փոփոխությունների երկրորդ խումբը վերաբերում է լեզուն առավել կենդանի դարձնող հնարներին։ Աբովյանը հաճախ ավելացրել է երանգավորող առանձին բառեր ու արտահայտություններ, որոնք նմանապես տիպական են ժողովրդական մտածողության համար։ Ծանոթանանք նախ

ավելացրած պարագայական բնույթի առանձին բառերի հետ։ «Նոքարը տուն ընկավ, նրան ավետիք տվեց» (208) — «Նոքարը ափալ թափալ տուն ընկավ, ու նրան աչքալիս տվեց» (18), «[պարսիկները] էկան ավազակի պես ու մեր տները կողոպտեցին» (306) — «ավազակի պես ճանկարծ էկան, մեր սահմանը (տները) կողոպտեցին» (121), «էլի մեր միսն են ուտում» (264) — «ախր որ մեր միսն չայլա գազանի պես ուտում են» (80), «շատի պառշները ահ ու գարդու պատռել, արինը գնում էր» (220) — «շատի պառշները ահու ճամել՝ արինը շռռալով գնում էր» (38) և այլն։ Մեջբերած օրինակներում հավելված՝ ափալ թափալ, հանկարծ, գազանի պես, շռռալով պարագայական բառերը պատկերավոր ձևով ո՛չ միայն ընթերցողի երևակայության մեջ երևույթի կատարման պատրանք են ստեղծում, այլև կենդանացնում են լեզուն, ավելի ազդու դարձնում այն։

Վեպի լեզուն կենդանացնում են նաև երանգավորող արտահայտությունները, որոնք ցույց են տալիս խոսողի կամ պատմողի վերաբերմունքը, նրա մասնակցությունը տվյալ երևույթին կամ իրողությանը. օրինակ. «Ի՞ն մեկ խոսք էլ ասում ես, գլխից հազար բռունցի են խփում» (264) — «Ին մեկ խոսք էլ ասում ես հա՝ վա՜յ քո օրին, արևին՝ գլխից էնքան բռնցկում են (մուշտում), որ աչքդ բուդ ա ընկնում» (80), «մեր ախմախ իշխանքը նստել, քեֆ են անում» (223—124) — «մեր ախմախ քեղխուդեքը նստել քեֆ են անում, ա՜յ բն մարդ են՝ հա՛» (42), «Տո հասե՛ք մի տանդրուչ մառ» (223) — «տո մեկն ու մեկդ հասե՛ք տանդրուչ մառ, անկաչարունով ավե՛լ, ա՜յ նրա տունը չքանդվի. ինչ քանդվեց» (42), «խեղճ ողորմելի մերը հո՛ էլ քար չէ՛ր մնացել, որ գլխին չի՛ տա» (220) — «ի՛նչ խեղճ, ողորմելի մերն էր անում, Աստված հեռու տանի. քար չէ՛ր մնացել՝ որ գլխին չի խփի» (38) և այլն։ Բերված օրինակների մեջ «վա՜յ քո օրին, արևին», «ա՜յ բն մարդ են՝ հա՛», «ա՜յ նրա տունը չքանդվի», «Աստված հեռու տանի»,—երանգավորող արտահայտությունները գալիս են ժողովրդական ակունքներից։

նրանց նպատակը խոսքը կենդանի ու ազդեցիկ դարձնելն է։

Վեպի լեզուն, ոճական առումով, կենդանի և գունեղ դարձնելու մյուս միջոցը, որին հաճախ է դիմել հեղինակը, հերոսների ուղղակի խոսքի մեջ ժողովրդական ոճերի ու առածատիպ դարձվածքների ներմուծումն է. «Խանի խաբար՝ ի՞նչ էլավ քեզ, մի քիչ որ համբերես՝ լեզուդ քեզ անես՝ լավ կըլի» (204)—«Տո խա՛նի խաբար՝ ի՞նչ էլավ քեզ. մի քիչ որ համբերես, լեզուդ քեզ անես, լավ չըլի՞լ. ի՞նչ ես առավոտ առավոտ էլ բերնիդ կապը կտրել» (10)։ Տերտերների գլուխն էլ տաքացած...» (204) —«Տերտերների գլուխն էլ հո՛ էս օր լավ տաքացած, ի՞նչ են մտիկ անում՝ թե գելը ոչխարը տարավ» (10)։ «Քիչ էր մնացել՝ որ սանի քարվանը գնաց, լեզուդ քեզ տրա» (212)—«Քիչ էր մնացել՝ որ սանի՝ քարվանը գնաց. պոչդ կարճացրո՛ւ, դնգի ոտը ցածացրո՛ւ, բերնիդ կապը կապի՛ր, լեզուդ քնացրո՛ւ, ու քամի ունիս՝ տա՛ր ձեր տանը փչիր. էս քամին մեզ քերիք ա, որ ոտն ու ձեռ սառցնում, փետացնում ա» (26)։ Միջանկյալ նկատենք, որ «խանի խաբար» ժողովուրդը անվանել է այն պատանիներին ու աղջիկներին, որոնց պարսից խաները բռնությամբ, քաշում, տանում էին իրենց հարեմները, անպատվում, հետո էլ փողոց շպրտում կամ սպանում։ Արտահայտությունն, այսպիսով, գաղափար է տալիս պարսիկների դաժանային տիրապետության շրջանում՝ Հայաստանում տիրող վայրագ սովորություններից մեկի մասին։

Ոճերն ու դարձվածքները առատ էին նաև նախագրում ու սևագրում, իսկ նրանցից առավել՝ մաքրագրում, որի յուրաքանչյուր էջի վրա կարելի է հանդիպել տասնյակների։ Ժողովրդական ոճերի ու դարձվածքների խնդրում հեղինակը մաքրագրում որոշակի մոտեցում է հանդես բերել։ Նա ջնջել է այն ոճերը, որոնք սևագրի մեջ օգտագործված են եղել սխալ ձևով կամ համապատասխան չեն եղել տվյալ իմաստին։ Այդ նպատակով նա փոխել է առանձին բառեր. «Շատը ահիցն էին ստապատառ լինում» (267)— «շատը ահիցն ու դողիցն էր

լեղապատառ լինում» (86), «ո՛չ փեշքաշն ա նրանց աչքը կշտացնում» (265)— «ո՛չ պատիվն ու փեշքաշները նրանց աչքը բռնում» (83), «ասեղ քցեիր, գետինը չէր առնիլ» (267)— «ասեղ քցեիր, գետինը չէր հասնիլ» (85), «իր բարեգութ ձեռի տակը հավաքեց» (241)—«իր բարեգութ ձեռի տակը բերեց» (63), «արինը աչքերնէրն առած» (320)—«արինը աչքերը կոխած» (135),« քո տունը չծակվի» (205)—«քո տունը չքանդվի» (14) և այլն։ Իսկ հաճախ փոխել է նաև ամբողջ արտահայտությունը. «Տղերքանց բախտը բաց էլավ» (209)— «տղերքանց աստղը դուս էկավ» (19), «Երկնքիցն ես խոսում» (323)— «ավետարանի կողքիցն ես խոսում» (139), «լացի ու սգի ձեն անկաջ էր առնում (310)—«լացի, սգի ձենը երկինքն էր հասել» (125), «արաղի բառն սկսեց շուռ գալ» (216)—«արաղի բառն սկսեց պտիտ գալ, ձեռնեձեռ ընկնիլ» (33) և շատ ուրիշները։

Կատարելով հիշյալ փոփոխությունները, Աբովյանը, ինչպես նշեցինք, ընտրել է ժողովրդական այնպիսի դարձվածքներ, որոնք առավել ճիշտ ու ճարիկ են տվյալ գաղափարին։

Մաքրագրում շատ են նաև լեզվական այլաբանությունները, որոնք հաճախ ամբողջ էջեր են բռնում։ Դրանց կարելի է հանդիպել թե՛ հեղինակային շեղումների մեջ և թե՛ հերոսների ուղղակի խոսքում։ Փոխանակ պարզ ու մեկին ասելու, թե ժողովրդի տնտեսական-կուլտուրական վիճակը բարվոքելու համար անհրաժեշտ է նրան լուսավորել, Աբովյանը գրում է այսպիսի այլաբանություններ. «Ասենք՝ ես չասեմ, սարի դու չե՛ս գիտել, որ երեխի ընչանք ատամները դուս չի՛ գան, կոշտ բան չի՛ պետք է տալա՞։ Դու ուզում էս անհիմքը՝ տուն շինել, կրակ չի՛ վառած՝ հաց թխել, մեր ծերը թողել ես, մառդ կրակին դեմ անում, առանց պատրուքի, ուզում էս, ճրագուն ինքն իրան քեզ լիս տա։ Կացինը դնում ես ծառի քոքին, դու քնում, յա ձեռներդ խաչում, ղրաղին կանգնում, ծառն ինքն իրան քեզ ցախ կդառնա՞» (61)։ Կամ. «Անվարել հողը թե ցանեցիր, չուրդ ու զուշը կուտի սերմդ... Մինչև գարունքը

չգա, ծառ չի՛ ծաղկիլ, առանց ամառի, պտուղ չի՛ հասնիլ» (61) են։

Այս բոլորը ոչ միայն կենդանի են դարձնում վեպի լեզուն, այլև այլաբանորեն հիմնավորում հեղինակի մտքերն ու ցանկությունները։ Մի ուրիշ տեղ, ցանկանալով ընթերցողին համոզել, որ անհրաժեշտ է մայրենի լեզուն սիրել, պաշտպանել և մաքուր խոսել, Արովյանն ասում է. «Ասենք վարդը շատ գովելի ա, բաս ընչի՞ չի մանիշակը իր ռանգը, իր հոտը նրան տալիս։ Մի՞թե վարդին տեսնողը՝ մանիշակին չի՛ սիրիլ... Միթե բլբուլի լաղը՝ կանարեյկին էլ չի՞ պետք է պահի» և այլն (63)։ Ինչո՞ւ էր Արովյանը դիմում լեզվական այլաբանություններին։ Անշուշտ վեպը ժողովրդական մտածողությամբ հագեցնելու և լեզուն կենդանի դարձնելու նպատակով։ Այլաբանությունները ժողովրդական բանավոր խոսքի առանձնահատկություններն են, ժողովրդական մտածողության ձևը հենց այդպիսին էր։

Վեպի լեզուն կենդանի ու դիպուկ դարձնելու համար մաքբագրում նորից ու նորից օգտագործած միջոցներից մյուսը առած-ասացվածքները և աֆորիզմներն են, որոնք հասնում են հարյուրների (առածներ օգտագործված կան նախորդ վարիանտներում եւս)։ Միայն 27-րդ էջում հանդիպում ենք 10-ից ավելի առած-ասացվածքների, այդ թվում՝ «Դրուստ խոսողի փափախը ծակ կլլի», «Ջուռնեն է՞ն տեղ փչի՛ր, որ պար էկող էլ ըլի»; «Գեղըցու խոսքը չվանի չե՞ն գնում», «Ամեն մարդ իր գդակն ա դզում, իր գլուխը քորում», «Աշխարքս թալան, թալան ա, նամարդը իշի փալան» և այլն։

Արովյանը երբեմն դիմել է նաև հարևան ժողովուրդների առածներին (դեռ սևագրի մեջ հանդիպում է 2 օտար առած)։ «Բիլանա բիր, բիլմիանա բին. Թուրքն ա ասել (իմացողին մեկ, չիմացողին հազար» (26), «Յոլդան չխանն գյոզի չխար (ճամփից դուս էկողի աչքը դուս կգա)» (26), «Ամեն մարդ իր գլխի տերն ա։ Քեֆ սանն, Ղյանդ Նախչվանն (քեֆը քոնը,

գյուղը տանուտերինը)» (24), «Քրդի ասածի պես՝ «էլմը զեն կիկոն էր, էլմը զեն կիկոն»: Էլ էն ջուրը, էլ էն ջաղացը» (11): Բայց և անմիջապես օտար առածները թարգմանվել են հայերեն՝ օտար բառերի խնդրում վերջում հանդես բերված հիմնական սկզբունքը չխախտելու համար: Իսկ ինչո՞ւ էր Աբովյանը դիմում դրանց: Այն պատճառով, որ ժողովուրդը հայերեն առածներին համազոր օգտագործում էր նաև թյուրքերեն և քրդերեն առածներ: Իսկ այս բոլորը արդյունք էին երկար ժամանակ օտար տիրողների լծի տակ ընկնելու և հայ ու հարևան ժողովուրդների համատեղ կեցության:

Մաքրագրում կատարված ոճական փոփոխությունների երրորդ խումբը վերաբերում է գռեհկաբանությունների ու այլ խորթ ոճի տարրերի վերացմանը, որի հետևանքով վեպի լեզուն մաքրվել է մի շարք ճապաղ ֆրազներից և նատուրալիստական արտահայտություններից:

Մաքրագիրն ստեղծելիս Աբովյանը խուսափել է ավելորդ փաստագրություններից ու թվական չափազանցություններից. «Բայազդցիք... էն քաջությունը ցույց տվին՝ որ...» շատը աստիճան (չին), մեռան, մինչև չորս հարյուր մարդ խաչ ստացան» (307)— «Բայազդցիք... էն տղամարդությունը ցույց տվին, որ շատը աստիճան, խաչ ստացավ» (123), «Երմոլովը... տասն անգամ խնդրեց» (306)— «շատ անգամ խնդրեց» (122), «Աղասին... տարին չորս անգամ սրբություն էր անում» (204)— «տարին իրեք, չորս անգամ սրբություն էլ էր անում» (11), «շատի հացին էնրան չոր չի՛ կար, որ հինգ մանեթի գին ունենար» (209)— «շատի հացին էնրան չոր չկար, որ էրկու մանեթի գին ունենար» (19), «շատի չուխի վրա հազար կարկատան կար» (209)— «շատի չուխի վրա հարիր կարկատան կար» (20), «հազար լիտրը ծուխ ասես» (213) —«մեկ բութը ծուխ ասես» (28) կալ էին տալիս քեթխուդաները և այլն:

Ինչ խոսք որ ձեռագրից առնված օրինակները բացասաբար

էին անդրադառնում երկի գեղարվեստականության վրա։ Վերջին ձևերը, քանակական շատություն արտահայտելով հանդերձ բնորոշ են ժողովրդական կենդանի խոսքին։ Եթե հինգ մանեթը, հակառակ Աբովյանի ցանկության, ցույց է տալիս, որ այնուհանդերձ քեթխուդաների շորերը բավականին լավ վիճակի մեջ են, ապա երկու մանեթը ժողովրդի կենդանի խոսքում համազոր է արժեքից զուրկ լինելու, անպետքության։ Եթե տասը լիտր ծուխը պրոզայիկ է, ապա մեկ բուռ ծուխը արտահայտում է հենց շատության իմաստը։ «Բուռը» իբրև չափի միավոր օգտագործվում է ժողովրդի կողմից։

Հեղինակը մեծ ջանք է թափել նաև վուլգար մակդիրներն ու պարագայական բնույթի բառերը վերացնելու ուղղությամբ։ Այս հավաստվում է բազմաթիվ օրինակներով. «Քոփակ տանուտերը» (216)—«անաստված տանուտերը» (32), «մեր բրխաբերան տանուտերը» (217)—«մեր մեղրաբերան տանուտերը» (35), «փռի նոտ ասես» (213)—«գոմի նոտ ասես» (28), «էս Քոփակ ծերերը կորչում էլ չեն» (208)— «մեկ կորչում էլ չեն էս անաստված ծալխորները» (19) և այլն։

Փոփոխել է նաև առանձին ոճեր ու դարձվածքներ. օրինակ. «Հաստ բերանդ բաց ես արել» (214)— «ի՞նչ ես բերնիդ կապը կտրել» (30), «բաս շան որթի ըլիմ» (319)—«բաս մարդ չեմ» (134), «Թո՛ղեք, թողեք դրա հորնը մոր գաղար» (215)—«Թողե՛ք, թողե՛ք դրա քոռ աչքն անիծեմ» (31), «շան օրը ըլի», (215)— «քո գուշմանի գլուխը չի գա» (31), «գլխին էլ շ..., մեկ բան չէ՛ր իմանալ» (218)— «որ քար էլ ադայիր գլխին՝ ձեն չէ՛ր տալ» (36)։ Կան և ավելի բացահայտ նատուրալիստականները, որ չենք բերում։ Մեջբերածները բավական են եզրակացնելու, որ Աբովյանը փոխել է անգամ ժողովրդական ծագում ունեցող ոճերն ու դարձվածքները, երբ բնույթով եղել են գռեհիկ։ Կան դեպքեր էլ, երբ գռեհիկ արտահայտությունները նա փոխարկում է համազոր ժողովրդական դարձվածքներով. Օրինակ՝ «Ուշունց տալիս» (262)—«ափեղ-

ցփեղ գլխիցը դուս տալիս, բերանը հոտացնում» (78), «թե-կուզ ուշանց էլ տաս» (217)— «վատ խոսք էլ որ ասես» (34), «մուստառ բերնով ձեն էր տալիս» (262)— «զունչը ծը-ռում, ձեն տալիս» (78), «հապալիս՝ շատն ուզում էր՝ որ ա-թարի վրա թքի, տանդրոնչ երեսին էր ընկնում» (213)— «հա-պալիս՝ երես ու միրուք էր՝ որ ներկվում էր» (28), «թքքի, կվի, փիենի միջումն» (213)— «զոմի կպրե կարասումը» (29), «կվի ու թքքի ծովիցն ազատի» (213)— «էս դժոխքիցն ազա-տի» (29), «էդ թրքող երեսդ աչքիցս տար, հեռացրու, որ քո փիս աֆաթը էլ չտեսնիմ, կորի՝ ջհանդամը» (214)— «էլ երես չի՛ գաս» (30) և շատ ու շատ ուրիշները։

Վերևում բերված բազմաթիվ օրինակները պատկերացում են տալիս այն դժվարին ճանապարհի մասին, որ անցել է Աբովյանը՝ վեպի լեզուն ու ոճը միասնականության բերելու համար։ Այդ օրինակները ցույց են տալիս, որ նա-խապես ինքնամոռաց վիճակում շարադրված «Վերք Հայաս-տանի» էջերը հետագայում հեղինակը հղկել ու մաքրել է՝ քրտնաթոր աշխատանքով։

Վերամշակված «Վերք Հայաստանի» ամեն էջից մեզ է նա-յում հայ ժողովուրդը՝ իր կենդանի լեզվով, իր պատկերավոր արտահայտություններով, կյանքից ու կենսափորձից հանած Խորիմաստ եզրահանգումներով։

ՎԵՐՋԱԲԱՆ

«Վերք Հայաստանի» ստեղծագործումից արդեն անցել են բազմաթիվ տասնամյակներ. փոխվել են՝ կյանքը, աշխարհը, մարդիկ, բայց չեն խամրել նրա պայծառ գույները։ Նա այսօր էլ մնում է որպես հայ ժողովրդի պատմության կարևորագույն շրջաններից մեկը հավերժացնող անխարդախ վավերական, հայրենասիրական գաղափարների մեծ ներշնչարան, գրական անկեղծ ու սրտագին խոսքի, ժողովրդական մտածողության մշտակենդան ձևերի անսպառ աղբյուր. «Մի գրվածք, որ ամբողջովին «հեղինակի արյունով» է շաղախված, ամբողջովին բանաստեղծություն և անկեղծ ոգևորության արտահայտություն է» (Ստ. Շահումյան)։

Հավատարիմ լինելով իր անմահ վեպում վերարտադրված իրականության ոգուն ու մանրամասներին և ճիշտ ու ժամանակին արձագանքելով արդիականության խնդիրներին, Աբովյանն իր «Վերք Հայաստանիում» կյանքի փաստը վարպետորեն բարձրացրել է գեղարվեստի աստիճանի, մասնավոր դեպքերից կատարել՝ վիթխարի ընդհանրացումներ։

Բացառիկ հանգամանքներում ստեղծվեց «Վերք Հայաստանին» և, իբրև ճշմարիտ արվեստի ստեղծագործություն՝ մնաց անկրկնելի։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան . . . . 5—12

Ինչպես նախապատրաստվեց «Վերք Հայաստանին» . . . 13—59

«Վերք Հայաստանիի» գրության ժամանակը և վարիանտները . 60—112

ա) Գրության թվականը 60

բ) Առաջին, չափածո վարիանտ (նախագիր) . . . 65

գ) Երկրորդ, արձակ վարիանտ (սևագիր) . . . 93

դ) Երրորդ և վերջին վարիանտ (մաքրագիր) . . . 106

ե) Մի երկու դիտողություն 110

Վեպի բովանդակության խորացումը և հարստացումը . . 113—159

ա) Հայաստանի տնտեսական ու կուլտուրական զարգացման ուղիները 113

բ) Ռուսաստանի պատմականորեն առաջադիմական դերի ընդգծումը 130

գ) Քաղաքի և գյուղի հակադրությունը 139

դ) Հոգևորականության մերկացումը 148

ե) Խորհրդածություններ բնության մասին . . . 156

Կերպարները և նրանց նախատիպերը . . . . . 160—199

ա) Աղասի 160

բ) Վեպի մյուս կերպարները 178

գ) Հեղինակը վեպում 191

դ) Վեպի հառաջաբանում հիշված անձնավորությունները (Ա. Սմբատյան և Գ. Թարխանյան) 197

Վեպի գեղարվեստական կատարելագործումը . . . . 200—232

ա) Ժանրն ու մեթոդը 200

բ) Կառուցվածքը 209

գ) Արտահայտչական միջոցները 213

Լեզվաոճական փոփոխություններ . . . . . . 233—254

Վերջաբան 255

ԳԻՈՆ ՀՈՎՍԵՓԻ ՀԱԿՈԲՅԱՆ

«Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի ստեղծագործական պատմությունը»։

Գլխ. խմբագիր
Հ. Բ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հրատ. խմբագիր
Ե. Մ. ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ

Տեխ. խմբագիր
Լ. Ա. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ

Կոնտրոլ սրբագրիչ
Ա. Լ. ԳՈՐՈՅԱՆ

ՎՖ 12985 ՀՍՀ № 298 Հրատ. № 1209 Պատվեր 936 Տիրաժ 2000

Հանձնված է արտադրության 3/VIII 1955 թ.։
Ստորագրված է տպագրության 3/X 1955 թ.։
Թուղթ՝ $84 \times 108^1/_{32}$։ Տպագր. 16 մամ., հրատ. 10,5 մամ.։
Գինը կազմով՝ 8 ռ. 20 կ.։

ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության հրատարակչությունների և պոլիգրաֆ արդյունաբերության Գլխավոր վարչության Պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տերյան փ. № 91։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220031486

A II / 31486